


Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

2013 ԹՎԱԿԱՆԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 3

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ 2013 ԹՎԱԿԱՆԻՆ 46

ՀՀ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ.....61

 Հարկային եկամուտներ և պետական տուրքեր 64

 Պաշտոնական դրամաշնորհներ 87

 Այլ եկամուտներ 88

ՀՀ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ.....91

Տնտեսագիտական դասակարգում.....91

 Ընթացիկ ծախսեր 92

 Ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ 94

Գործառական դասակարգում..... 95

 Ընդհանուր բնույթի պետական ծառայություններ 95

 Պաշտպանություն 115

 Հասարակական կարգ, անվտանգություն և դատական գործունեություն 117

 Տնտեսական հարաբերություններ 123

 Շրջակա միջավայրի պաշտպանություն 158

 Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություններ 166

 Առողջապահություն 172

 Հանգիստ, մշակույթ և կրոն 190

 Կրթություն 208

 Սոցիալական պաշտպանություն 227

 Հիմնական բաժիններին չդասվող պահուստային ֆոնդեր 241

ՀՀ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՊԱԿԱՍՈՒՐԴԸ 242

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՀՀ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ.....247

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՀՀ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ (գործառական դասակարգմամբ).....248

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՀՀ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ (տնտեսագիտական դասակարգմամբ).....252

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՀՀ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԴԵՖԻՑԻՏԻ (ՊԱԿԱՍՈՒՐԴԻ) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ255

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ.....260

ՏԵՂԵԿԱՆՔՆԵՐ.....1182

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ԲՆՈՒԹԱԳՐՈՂ ԱՐԴՅՈՒՆՔԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ.....1274

**2013 ԹՎԱԿԱՆԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Արդյունաբերության ոլորտ

Արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարության շրջանակներում 2013 թվականին աշխատանքներ են իրականացվել արդեն իսկ հաստատված 4 ոլորտային ռազմավարությունների (դեղագործության և բիոտեխնոլոգիաների, ճշգրիտ ճարտարագիտության, կոնյակագործության և գինեգործության) իրագործման ուղղությամբ: 2013 թվականի դեկտեմբերին հաստատվել է ևս 2 ոլորտային ռազմավարություն և 2 գործողությունների ծրագիր՝ «Հայաստանի տեքստիլ և տրիկոտաժի ոլորտի զարգացման ռազմավարությունը», «Հայաստանի կոշիկի արտադրության զարգացման ռազմավարությունը», «Ճշգրիտ ճարտարագիտության/ ճարտարագիտության ոլորտի 2012-2015թթ. գործողությունների ծրագիրը» և «Թեթև արդյունաբերության ոլորտի 2014-2016թթ. գործողությունների ծրագիրը»:

Աշխատանքներ են իրականացվել ներդրումներ կատարող արդյունաբերական ընկերություններին աջակցելու ուղղությամբ: Մասնավորապես, «Ժամանակավոր ներմուծում» մաքսային ռեժիմի երկարաձգման գործիքի միջոցով աջակցություն է ցուցաբերվել 10 ընկերությունների, իսկ ներդրումային ծրագրի շրջանակներում 300 մլն դրամը գերազանցող ներմուծման դեպքում ԱԱՀ գումարների վճարումը մինչև 3 տարի հետաձգելու գործիքի ներքո աջակցություն է տրամադրվել թվով 9 ընկերությունների:

Միջազգային սերտիֆիկացման համաֆինանսավորման գործիքի շրջանակներում բավարարվել է թվով 6 ընկերությունների 7 հայտ՝ դեղագործության, ճշգրիտ ճարտարագիտության և գինեգործության ոլորտներում:

Միջազգային ցուցահանդեսներին մասնակցության ապահովման գործիքի շրջանակներում 5 միջազգային ցուցահանդեսներում աջակցություն է ցուցաբերվել 128 տեղական ընկերությունների մասնակցության գծով:

Արտահանման զարգացման ենթակառուցվածքների կայացմանն ուղղված՝ 2013 թվականի հոկտեմբերին ՀՀ կառավարության թիվ 1129-Ա որոշմամբ հիմնադրվել է «Հայաստանի արտահանման ապահովագրական գործակալություն» ԱՓԲԸ (ՀԱԱԳ), որի հիմնական գործառույթը ապրանքներ և/կամ ծառայություններ արտահանողների ֆինանսական վնասի ապահովագրությունն է, մասնավորապես այն դեպքում, երբ օտարերկրյա գնորդը սահմանված ժամկետում չի կատարում տվյալ ապրանքի և/կամ ծառայության դիմաց վճարման իր պարտավորությունները:

Գործարար միջավայրի բարեփոխումներ

Համաշխարհային բանկի կողմից 2013 թվականի հոկտեմբերին հրապարակած՝ «Գործարարությանը զբաղվելը 2014» վարկանշային զեկույցի տվյալներով՝ Հայաստանը 189 երկրների շարքում զբաղեցնում է 37-րդ տեղը՝ զիջելով Բելգիային և առաջ անցնելով Ֆրանսիայից: Վերջին երեք տարիների (2011, 2012, 2013) զեկույցների տվյալներով Հայաստանի դիրքը բարելավվել է 24 կետով: Նշենք նաև, որ զեկույցի տվյալներով Հայաստանի գործարար միջավայրը լավագույնն է ԱՊՀ երկրների շարքում և երկրորդն է տարածաշրջանում՝ զիջելով միայն Վրաստանին:

2013 թվականի ընթացքում իրականացվել են գործարար միջավայրի բարելավման խոչընդոտների ոսումնասիրման, բացահայտման և դրանց վերացման ուղղությամբ առաջարկությունների ներկայացման աշխատանքներ:

Հաստատվել է ՀՀ-ում իրավական ակտերի ազդեցության գնահատման (RIA) համակարգի կատարելագործման հայեցակարգը և դրա արդյունավետ կիրարկման ապահովմանն ուղղված միջոցառումների ցանկը: Մշակվել է ազդեցության գնահատման մեթոդական ցուցումների ուղեցույց, որը կներառի իրավական ակտերի ազդեցության գնահատման «ծախսեր-օգուտներ» վերլուծության գործիքի մեթոդաբանությունը: Իրականացվել են իրավական ակտերի կիրարկումից առաջացող վարչարարական ծախսերի գնահատման աշխատանքներ՝ օգտագործելով վարչարարության գնահատման և կրճատման միջազգային «Ստանդարտ ծախսերի մոդել» գործիքի մեթոդաբանությունը:

ՀՀ կառավարության 2013 թվականի նոյեմբերի 14-ի թիվ 47 արձանագրային որոշմամբ հավանության են արժանացել իրական հատվածի համար ֆինանսական ռեսուրսների հասանելիության բարձրացման հայեցակարգը և գործողությունների ծրագիրը:

Փոքր և միջին ձեռնարկավորություն

Ավարտական փուլում են ՓՄՁ զարգացման նոր ռազմավարության մշակման աշխատանքները: 2013 թվականին ընդլայնվել են ՓՄՁ աջակցության ծավալները. պետական բյուջեից հատկացվել է 150.8 մլն ՀՀ դրամ:

Ծրագրի շրջանակներում վարկային երաշխավորությունների տրամադրման, սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցության, արդյունաբերական համակարգերի կառուցմանն աջակցության, գործարար տեղեկատվական, խորհրդատվական և ուսուցողական, տեղական տնտեսական զարգացման ուղղություններով աջակցություն է ցուցաբերվել 17217 ՓՄՁ սուբյեկտի: «ՓՄՁ ներդրումներ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի կողմից 2013 թվականի ընթացքում շուրջ 2.4 մլրդ ՀՀ դրամի

չափով վարկավորում է տրամադրվել 31 իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի (32 վարկ)՝ հետևյալ ոլորտային բաշխվածքով. մշակող արդյունաբերության ոլորտին՝ 22 վարկ, գյուղատնտեսության ոլորտին՝ 4 վարկ, ծառայությունների մատուցման ոլորտին՝ 4 վարկ, առևտրի ոլորտին՝ 2 վարկ: Ձեռք է բերվել թվով 80 գյուղտեխնիկա և ֆինանսական վարձակալության (լիզինգի) է հանձնվել 47 ֆիզիկական անձանց: Լիզինգի ընդհանուր գումարը կազմում է շուրջ 260 մլն ՀՀ դրամ:

Մաքսային Միությանն անդամակցության գործընթաց

Մաքսային միությանը (ՄՄ) և Միասնական տնտեսական տարածքին (ՄՏՏ) Հայաստանի անդամակցելու որոշումից հետո իրականացվում է նպատակաուղղված գործունեություն՝ անհրաժեշտ աշխատանքների կազմակերպման և համակարգման ուղղությամբ: Աշխատանքային խմբերը Եվրասիական տնտեսական հանձնաժողովի (ԵՏՀ) համապատասխան մասնագետների հետ համագործակցությամբ մշակել են ՄՄ-ին և ՄՏՏ-ին անդամակցելու ուղղությամբ իրականացվելիք միջոցառումների ծրագրի նախագծերը («ճանապարհային քարտեզը»): Վերջիններս ամփոփվել և ներկայացվել են 2013 թվականի դեկտեմբերի 12-ի ԵՏՀ նիստի քննարկմանը: 2013 թվականի դեկտեմբերի 24-ին ԵՏՀ բարձրագույն Խորհրդի նիստում հաստատվեց ՄՄ և ՄՏՏ Հայաստանի անդամակցության ճանապարհային քարտեզը: Լայնածավալ աշխատանքներ են տարվել Հայաստանի և ՄՄ ու ՄՏՏ նորմատիվաիրավական և իրավապայմանագրային դաշտի ուսումնասիրման, համեմատման, վերլուծությունների և հնարավոր խնդիրների բացահայտման ուղղությամբ: Աշխատանքներ են տարվում Հայաստանի՝ Մաքսային միությանը և Միասնական տնտեսական տարածքին անդամակցության պայմանագրի նախագծի մշակման ուղղությամբ:

Երկկողմ և բազմակողմ համագործակցություն

2013 թվականի ընթացքում կատարվել են 62 երկկողմ և 18 բազմակողմ համաձայնագրերի ուսումնասիրման, փորձաքննության, խմբագրման, տեքստերի թարգմանության, ներպետական համաձայնեցման, վավերացման գործընթացի իրականացման, ստորագրման նախապատրաստման աշխատանքներ:

Նախապատրաստվել և անց են կացվել՝

- միջկառավարական հանձնաժողովների 5 նիստեր՝ հայ-լեհական, հայ-չինական, հայ-լատվիական, հայ-բելառուսական, հայ-ուկրաինական,

- ՀՀ և Մաքսային միության, ինչպես նաև Բելառուսի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միասնական տնտեսական տարածքի միջև համագործակցության հնարավորության ուսումնասիրման հանձնաժողովի 3 նիստ,

- 2013 թվականի հունիսի 21-ին Ուրումչի քաղաքում ՀՀ էկոնոմիկայի նախարարության և ԶԺՀ Սինցյան-Ույգուրյան ինքնավար շրջանի միջև առևտրատնտեսական համագործակցության աշխատանքային խմբի առաջին նիստը:

Ստորագրվել է ՀՀ և ՌԴ մինչև 2020 թվականի երկարատև տնտեսական համագործակցության ծրագրի իրականացման միջոցառումների պլանը:

Եվրոպական Միության և ԱՀԿ ուղղությամբ՝

ԵՄ հետ խորը և համապարփակ ազատ առևտրի գոտի (ԽՀԱԱԳ) բանակցությունների մեկնարկից հետո (7 փուլերի ընթացքում) մեծածավալ աշխատանք է տարվել ապրանքների ու ծառայությունների ՀՀ-ԵՄ երկկողմ առևտրին և առևտրի կանոններին վերաբերող մի շարք ոլորտներում բանակցություններ իրականացնելու ուղղությամբ: 2013 թվականին ԽՀԱԱԳ համաձայնագիրն ամբողջությամբ բանակցվեց և համաձայնեցվեց եվրոպական կողմի հետ: Զուգահեռաբար շարունակվել է ԽՀԱԱԳ ներքո ոլորտային բարեփոխումների ծավալուն գործընթացը: Կազմակերպվել են ՀՀ-ԵՄ համագործակցության կոմիտեի և «Առևտրի, տնտեսական և համապատասխան իրավական հարցերով» ենթակոմիտեի նիստեր, մասնակցություն է ապահովվել ԵՄ Արևելյան գործընկերության «Տնտեսական ինտեգրման և ԵՄ քաղաքականություններին մոտարկման» պլատֆորմի և վերջինիս թեմատիկ պանելների աշխատանքներին:

Իրականացվել է 2012-2013թթ. Եվրոպական հարևանության քաղաքականության (ԵՀՔ) միջոցառումների ցանկով նախատեսված աշխատանքների շարունակական (եռամսյա փուլային) մոնիտորինգ: ԵՄ կողմից 2013 թվականի մարտին հրապարակված 2012 թվականի ԵՀՔ գործողությունների ծրագրի իրականացման առաջընթացի զեկույցում ամրագրվել է, որ Հայաստանն առաջընթաց է գրանցել առևտրատնտեսական համագործակցության գրեթե բոլոր առաջնային ոլորտներում: Մաքսային միությանը ՀՀ միանալու գործընթացների շրջանակներում կատարվել է ԱՀԿ ընթացակարգերի հետ համապատասխանության և ՀՀ-ԱՀԿ պարտավորությունների (մասնավորապես՝ մաքսատուրքերի մասով) համեմատական վերլուծություն:

Շարունակվել են ԽՀԱԱԳ-ին և պետական ֆինանսների կառավարման ոլորտներին վերաբերող ԵՄ բյուջետային աջակցության ծրագրերը: Դրամաշնորհի տեսքով 2013 թվականին ՀՀ պետական բյուջե է փոխանցվել մոտ 12 մլն եվրո: Արդարադատության ոլորտին վերաբերող 29 մլն

Եվրո արժեքով և կրթության ոլորտին վերաբերող 6 մլն եվրո արժեքով երկու համաձայնագիր գտնվում են ստորագրման և վավերացման տարբեր փուլերում:

2013 թվականին հաջողությամբ ավարտվել է 5 թվինինգ ծրագիր: Գործընկեր ԵՄ անդամ-պետություն են ընտրել ու պայմանագրի մշակման փուլում են 2 թվինինգ ծրագիր: Մշակվել ու ԵՄ հանձնաժողովի հաստատման են ուղարկվել 2 թվինինգ ծրագրերի նկարագրեր, ևս 2-ը վերջնականացվել են: Ամփոփվել և ավարտին է հասցվել մոտ 31 թայեքս միջոցառում: Սիգմա ծրագրի մասով իրականացվել են ծրագրեր պետական գնումների գործընթացի բարեփոխումների, պետական ներքին ֆինանսական հսկողության, քաղաքացիական ծառայության և պետական կառավարման համակարգի բարեփոխումների, ՀՀ բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովին օժանդակության ուղղությամբ: Սևծովյան ավազանի երկրների անդրսահմանային համագործակցության ծրագրի շրջանակներում ավարտվել են հայկական շահառուների մասնակցությամբ 2 ծրագրեր, իրականացման փուլում են 18-ը:

Արտաքին առևտուր

Եվրոպական խորհրդարանի միջազգային առևտրի հանձնաժողովի կողմից 2013 թվականի հոկտեմբերին հավանության է արժանացել առևտրային ռեժիմից օգտվելու հնարավորություն ընձեռող փաստաթուղթը, որով 10 երկիր, այդ թվում և Հայաստանը, հնարավորություն կունենան օգտվել այդ ռեժիմից և հայկական ծագման մեծ թվով ապրանքներ կշարունակեն ԵՄ շուկա արտահանվել գրոյական կամ նվազեցված մաքսատուրքերով:

Ազատ առևտրի ռեժիմ ունեցող երկրների ցանկը ընդլայնելու և ԱՊՀ երկրների հետ արտաքին առևտրի առկա վարչարարական խոչընդոտները նվազեցնելու ուղղությամբ՝

- 2013 թվականին լրացում է կատարվել «Ազատ առևտրի գոտու մասին» 2011 թվականի հոկտեմբերի 18-ի պայմանագրում, ըստ որի պայմանագրին միացել է նաև Ուզբեկստանը:
- Հայաստանի առաջարկությամբ ազատ առևտրի գոտու շրջանակներում մինչև 5000 ԱՄՆ դոլարի արժողությամբ ապրանքների ներմուծման ժամանակ տնտեսավարող սուբյեկտներին հնարավորություն է ընձեռվում ծագման երկրի հավաստումը կատարել ինքնահայտարարական եղանակով, առանց առևտրաարդյունաբերական պալատի կողմից տրվող CT-1 ձևի սերտիֆիկատի ներկայացման: Հարցի առնչությամբ Ծագման երկրի կանոնների մասին համաձայնագրում կատարվել է համապատասխան փոփոխություն:

Օտարերկրյա ներդրումներ

Նախաձեռնվել է ՀՀ ներդրումային քաղաքականության վերանայման գործընթացը, որի արդյունքում նախատեսվում է ներդնել ներդրումների խթանման նոր գործիքներ և բացահայտել նոր ներդրումային հնարավորություններ: Համագործակցություն է իրականացվում նաև EDMC (Ձեռնարկությունների զարգացման և շուկայի մրցունակության) ծրագրի հետ՝ ոլորտային ներդրումային ուղեցույցների մշակման ուղղությամբ: Շարունակվում են աշխատանքները կոնկրետ ներդրումային ծրագրերի իրականացման համար, այդ թվում՝ ԶՀԳ և ԱԶՀ (Ավստրիական Զարգացման Համագործակցության) հետ համատեղ կազմակերպվել կամ մասնակցություն է ցուցաբերվել գործարար համաժողովներին և գործարար համայնքի ներգրավմամբ միջոցառումներին («Հարկային և մաքսային հարցերի պարզաբանումներ սիրիահայ գործարարների համար» միջոցառում, հայ-սլովակյան, հայ-չեխական, հայ-իրանական, հայ-իրաքյան, հայ-արգենտինական գործարար ֆորումներ, հայ-լիբանանյան գործարար և հայ-ռուսական միջտարածաշրջանային ֆորումների կոորդինացման աշխատանքներ):

Մասնավոր հատվածից հավաքագրվել է տարբեր ոլորտների մոտ 20 ներդրումային ծրագիր, բերվել միասնական ձևաչափի և տարբեր կապուղիներով ներկայացվել օտարերկրյա ներդրողներին:

2013 թվականի օգոստոսի 1-ին գործարկվել է «Ալյանս» ազատ տնտեսական գոտին: 2014 թվականի ստեղծվել է ևս մեկ ազատ տնտեսական գոտի ոսկեգործության, ակնագործության և ժամագործության ոլորտներում:

Տեղեկատվական տեխնոլոգիաներ (SS) և հնովացիոն քաղաքականություն

Ինովացիոն ենթակառուցվածքների (հետազոտական, կրթական կենտրոններ, տեխնոպարկեր, լաբորատորիաներ, արքելերատորներ և այլ ենթակառուցվածքային միավորներ) ձևավորման և տարածքային համաչափ զարգացման ուղղությամբ SS ոլորտում իրականացվում են մի շարք նախաձեռնություններ, մասնավորապես՝

- ընթացքի մեջ են Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնի հիմնման և Կապանի մոբայլ լուծումների լաբորատորիայի ստեղծման ծրագրերը, ավարտվել է Գյումրու տեխնոլոգիական կենտրոնի շինարարությունը,
- հիմնվել է առաջին վենչուրային հիմնադրամը՝ ուղղված ոլորտում նորարարական գաղափարների գեներացմանն ու սկսնակ ընկերությունների ձևավորման խրախուսմանը,
- իրականացվել է ՀՀ-ում առաջին հավաստագրման կենտրոնի գործարկումը,

- իրականացվում է Ուռուցքաբանության գերազանցության հայկական կենտրոնի հիմնման ծրագիրը, որի շրջանակում 2014 թվականին շահագործման կհանձնվի ռադիոիզոտոպների արտադրության կենտրոնը,

- ՀՀ ամբողջ տարածքում շարունակվում է «Համակարգիչ բոլորի համար» ծրագրի իրականացումը:

Օրենսդրական դաշտի բարելավման, ոլորտի աջակցման և էլեկտրոնային հասարակության կայացմանն ուղղված միջոցառումների շարունակականության ապահովման նպատակով՝

- շրջանառության մեջ է դրվել ՀՀ-ում էլեկտրոնային առևտրի ոլորտի կարգավորմանն ուղղված իրավական ակտերի նախագծերի փաթեթը,

- նախաձեռնվել է ոլորտի պետական աջակցությանն ու ոլորտին արտոնությունների տրամադրմանն ուղղված օրենսդրական փաթեթի մշակման գործընթաց,

- ՀՀ կառավարություն է ներկայացվել ՀՀ-ում էլեկտրոնային հասարակության կայացմանն ուղղված 2013-2015թթ. միջոցառումների ծրագրի նախագիծը:

Ոլորտը բարձրորակ մասնագետներով զինելու և որակյալ աշխատուժով ապահովելու նպատակով՝

- շարունակվել են բարձրորակ կրթական կադրերի պատրաստման և վերապատրաստման աշխատանքները պետություն-մասնավոր համագործակցության սկզբունքով հիմնված ուսումնական կենտրոնների/լաբորատորիաների շրջանակներում, այդ թվում՝ Մայքրոսոֆթ ինովացիոն կենտրոնի, Հայ-հնդկական ՏՀՏ գերազանցության կենտրոնի, Սիսկո տարածաշրջանային ակադեմիայի ծրագրերը,

- Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանում բացվել են «mLab ECA» մոբայլ լուծումների տարածաշրջանային լաբորատորիայի նոր տարածքը և Հայկական ազգային ճարտարագիտական լաբորատորիաները (ANEL):

ՏՏ ոլորտում հեղինակավոր անդրազգային ընկերությունների ներգրավման ուղղությամբ ընթացող աշխատանքների շրջանակներում «IBM», «GFI» և «Oracle» ընկերությունների հետ ստորագրվել են փոխընթաց հուշագրեր, որոնք նախատեսում են, մասնավորապես, Հայաստանում հիմնել «IBM» նորարարական լուծումների և տեխնոլոգիաների կենտրոն, «Oracle» գերազանցության կենտրոն, «GFI» ընկերության հետ իրականացնել ինովացիոն էկոհամակարգի զարգացման, սկսնակ ՏՏ ընկերությունների ենթակառուցվածքի ստեղծման, Հայաստանը որպես տարածաշրջանային հանգույցի դիրքավորման և կարողությունների զարգացման

կրթական/հետազոտական ծրագրեր: Բանակցություններ են վարվում վերազգային այլ ընկերությունների ներգրավման ուղղությամբ:

Զբոսաշրջություն

Հաշվետու տարում կարևորվել են հյուրանոցների «5 աստղանի դեյուքս» որակավորման կարգի ներդրմանն ուղղված օրենսդրական փոփոխությունները, ՀՀ կառավարության հավանությանն արժանացած Համաշխարհային զբոսաշրջային շուկայում Հայաստանի մրցունակության բարելավմանն ուղղված միջոցառումների ծրագիրը:

ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության, Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամի, USAID EDMC ծրագրի և GIZ-ի հետ համագործակցությամբ սահմանային անցման կետերում ամբողջ տարվա ընթացքում իրականացվում է վիճակագրական հետազոտություն:

«Զբոսաշրջության աջակցության ծառայություններ» պետական ծրագրի ուղղությամբ 2013 թվականին հատկացվել է 50 մլն ՀՀ դրամ, որի ներքո ոլորտում մարդկային ռեսուրսների զարգացման, ՀՀ զբոսաշրջային արդյունքի՝ միջազգային մրցունակության բարձրացման և արտաքին շուկաներում առաջխաղացման միջոցառումներ են իրականացվել:

Ոլորտում մարդկային ռեսուրսների զարգացման նպատակով Զբոսավարների ասոցիացիաների համաշխարհային ֆեդերացայի (WFTGA) կողմից Երևանում զբոսավարների միջազգային կրթական կենտրոն հիմնելու որոշում է ընդունվել: Հյուրանոցային ծառայությունների ոլորտի Եվրոպական 35 երկրներից 150 կրթական հաստատություններ միավորող Եվրոդիպ (EURHODIP) կազմակերպության հետ համագործակցության շրջանակներում Երևանում անց է կացվել վերջինիս տնօրենների խորհրդի նիստը: Նախարարության աջակցությամբ կազմակերպվել է ամենամյա CTS միջազգային զբոսաշրջային ցուցահանդեսը Երևանում, անցկացվել են արդեն ավանդական և ճանաչելի դարձած գինու փառատոնը ՀՀ Վայոց Ձորի մարզի Արենի, Ռինդ և Եղեգնաձոր համայնքներում և «Հայոց ավանդական տոնաձիսական ուտեստների միցույթ փառատոնը» ՀՀ Լոռու մարզի Ախթալա համայնքում:

2013 թվականին հայկական զբոսաշրջային արդյունքը ներկայացվել է ավելի քան 10 հեղինակավոր միջազգային զբոսաշրջային ցուցահանդեսներում: «National Geographic Traveler» ամսագրի ռուսական տարբերակի կողմից կազմակերպված լավագույն զբոսաշրջային ուղղության մրցույթի առցանց քվեարկության արդյունքներով Հայաստանը հաղթող է ճանաչվել «Տարվա հայտնություն» անվանակարգում: ՄԱԿ Զբոսաշրջության համաշխարհային կազմակերպության Գլխավոր Ասամբլեայի 20-րդ նստաշրջանի շրջանակներում անցկացվող «Vettor Giusti»

զբոսաշրջային պաստառների մրցույթում Հայաստանի «Քարերի Սիմֆոնիա» պաստառը եվրոպական տարածաշրջանի լավագույն պաստառն է ճանաչվել:

Ստորագրման փուլում է ՀՀ էկոնոմիկայի նախարարության և ՉԺՀ Ջբոսաշրջության ազգային ադմինիստրացիայի միջև փոխըմբռնման հուշագիրը, որով Հայաստանին շնորհվում է «Երաշխավորված զբոսաշրջային երկիր» կարգավիճակ (Approved Destination Status-ADS)՝ Չինաստանից զբոսաշրջային խմբերով այցելությունների կազմակերպումն ապահովելու նպատակով: Ներկայումս քննարկվում է Իրաքի քաղաքացիների համար վիզային ռեժիմի դյուրացման հարցը: Հայաստանը մեկ տարի ժամկետով ստանձնել է ԱՊՀ անդամ պետությունների Ջբոսաշրջության Խորհրդի նախագահությունը: 2014 թվականն ԱՊՀ երկրներում հայտարարվել է Ջբոսաշրջության տարի և դրա շրջանակներում Հայաստանի նախագահությամբ Հայաստանում նախատեսվում է կազմակերպել մի շարք միջոցառումներ:

Համագործակցության համաձայնագրեր, հուշագրեր, գործողությունների ծրագրեր են ստորագրվել Իսպանիայի, Եգիպտոսի, Ուրուգվայի և Ռուսաստանի հետ:

Քաղաքացիական ավիացիայի ոլորտի բարեփոխումներ

2013 թվականին մեկնարկեցին քաղաքացիական ավիացիայի և օդային հաղորդակցության բնագավառի բարեփոխումները: Մշակվեց և 2013 թվականի հոկտեմբերի 23-ին ՀՀ կառավարության կողմից ընդունվեց Հայաստանում մրցունակ և կայուն ավիափոխադրումների ծառայությունների մատուցման ապահովման ծրագիրը, ծրագրի իրականացման միջոցառումները, որով Հայաստանը հռչակեց բաց երկնքի քաղաքականություն:

Ծրագրի իրականացմանն օժանդակելու նպատակով համագործակցություն է հաստատվել ԱՄՆ ՄՋԳ հետ: Քննարկման փուլում են ճանապարհային քարտեզը, հաղորդակցության բնագավառում միջպետական բանակցությունների վարման, քաղաքացիական ավիացիայի ոլորտը կանոնակարգող ինստիտուցիոնալ նոր կառուցվածքի նախագծման հետ կապված հարցեր, սահմանվել են նախանշված ուղղություններով աշխատանքների իրականացման ժամկետներն ու ձևաչափը: 2014 թվականին արդեն ձևավորվել են քաղաքացիական ավիացիայի ոլորտը կանոնակարգող ինստիտուցիոնալ նոր միավորները, իսկ տարվա կեսին այդ միավորներում ներդրված կլինեն անհրաժեշտ բիզնես գործընթացները:

Գյուղատնտեսություն

Հայաստանի Հանրապետության տնտեսության կարևորագույն ոլորտներից մեկը՝ գյուղատնտեսությունը, 2008-2012թթ. միջին տվյալներով ապահովել է երկրի համախառն ներքին

արդյունքի 17.9%-ը: Գյուղատնտեսության համախառն արտադրանքի արժեքը 2013 թվականին կազմել է 918.6 մլրդ դրամ, որը գերազանցել է նախորդ տարվա մակարդակը 7.1%-ով: 2013 թվականի տվյալներով գյուղատնտեսության համախառն արտադրանքի 62.4%-ը բաժին է ընկնում բուսաբուծության ճյուղին, իսկ 37.6%-ը՝ անասնապահությանը:

Ելնելով ոլորտի առանձնահատկություններից և երկրի պարենային անվտանգության խնդիրներից՝ 2013 թվականին շարունակվել է գյուղատնտեսության պետական աջակցության քաղաքականությունը՝ ուղղված ագրարային ոլորտում իրավական հիմքի կատարելագործմանը, գյուղատնտեսությունում տնտեսավարողների համար գործունեության բարենպաստ պայմանների ապահովմանը, գյուղատնտեսության սպասարկմանը, ենթակառուցվածքների ու անտառային տնտեսության զարգացմանը:

Վերջին տարիներին ծրագրավորված աջակցություն է ցուցաբերվել տնտեսավարող սուբյեկտներին բարձրորակ սերմերի, տոհմային և մթերատու բարձր հատկանիշներ ունեցող կենդանիների, հանքային պարարտանյութերի, դիզելային վառելանյութի մատչելի գներով մատակարարման, վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման և այլ ուղղություններով:

2013 թվականին շարունակվել է գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունների ավելացման միտումը: 2013 թվականին ցանքատարածությունը կազմել է 318.2 հազ. հա, որը գերազանցել է 2012 թվականի մակարդակը 14.0 հազ. հա-ով:

Վերջին տարիներին որոշակիորեն բարձրացել է այգիների ինտենսիվացման մակարդակը: Դա պայմանավորված է նաև խաղողի և պտղի իրացման հիմնախնդրի որոշակի լուծման, մասնավորապես՝ թարմ բուսաբուծական մթերքների արտահանման ծավալների ավելացմամբ:

2013 թվականին էական (7.8%) աճ է գրանցվել անասնապահական մթերքների արտադրության բնագավառում:

Գործող վերամշակող ընկերությունների կայուն գործունեության արդյունքում որոշակիորեն բարելավվել է գյուղատնտեսական մթերքների իրացման վիճակը: 2013 թվականին հնարավորություն է ստեղծվել գնելու գյուղացիական տնտեսությունների կողմից առաջարկվող պտղի, բանջարեղենի և խաղողի ողջ քանակությունը: 2013 թվականին մթերվել և վերամշակվել է 224.0 հազ. տոննա պտուղ-բանջարեղեն և խաղող՝ նախորդ տարվա 215.8 հազ. տոննայի դիմաց:

Շնորհիվ գյուղատնտեսական հումք արտադրողների և վերամշակող կազմակերպությունների միջև պայմանագրային հարաբերությունների արմատավորման, ապրանքի դիմաց վճարումները 2013 թվականին իրականացվել են գրեթե ամբողջությամբ:

2013 թվականին կտրուկ աճել է թարմ բուսաբուծական մթերքների արտահանման ծավալը՝ կազմելով 64.5 հազ տոննա: Այն գերազանցում է նախորդ տարվա մակարդակը 2.1 անգամ:

ՀՀ գյուղատնտեսության առջև ծառայած խնդիրների լուծումը բխում է ՀՀ կառավարության ծրագրից և «Գյուղի և գյուղատնտեսության 2010-2020թթ. կայուն զարգացման ռազմավարությունից»: Այդ խնդիրներից առանձնանում են՝

- տնտեսավարման ձևերի, մասնավորապես՝ գյուղատնտեսական կոոպերատիվների զարգացումը,

- պարենային ապահովության, սննդամթերքի անվտանգության և հիմնական պարենային մթերքների ինքնաբավության մակարդակի բարձրացումը,

- տեղական արտադրության գյուղատնտեսական արտադրանքների մրցունակության բարձրացումը, ըստ նպատակահարմարության ներմուծվող պարենամթերքների փոխարինումը և արտահանման ուղղվածություն ունեցող գյուղատնտեսության զարգացումը,

- սննդամթերքի անվտանգության ապահովումը,

- հողօգտագործման արդյունավետության բարձրացումը,

- բուսաբուծության զարգացումը, մասնավորապես՝ ագրոտեխնիկական առաջադիմական տեխնոլոգիաների ներդրումը, բարձր ավելացված արժեք ապահովող մշակաբույսերի մշակության ընդլայնումը, սելեկցիայի և սերմնաբուծության համակարգի զարգացումը, սերմերի որակի հսկողության գործուն մեխանիզմների կիրառումը, բույսերի պաշտպանության միջոցառումների իրականացումը,

- անասնաբուծության զարգացումը, մասնավորապես՝ տոհմային գործի զարգացման և հոտի վերարտադրության համալիր միջոցառումների իրականացումը, անասնաբուծության համակարգի բարելավումը և անասնաբուժական միջոցառումների արդյունավետության բարձրացումը, անասնապահության կերի բազայի զարգացումը,

- գյուղատնտեսության արտադրատեխնիկական սպասարկումների զարգացումը և արտադրության տեխնիկական հագեցվածության բարձրացումը,

- գյուղատնտեսական ռիսկերի մեղմացումը,

- ագրարային ոլորտի վարկավորման համակարգի կատարելագործումը,

- ագրարային ոլորտի խորհրդատվական համակարգի բարելավումը,

- գյուղատնտեսության հաշվառման համակարգի կատարելագործումը:

Վերը նշված խնդիրների լուծումը կնպաստի գյուղատնտեսությունում տնտեսավարողների համար գործունեության բարենպաստ պայմանների ստեղծմանը, արտադրության արդյունավետության բարձրացմանը:

2013 թվականին գյուղատնտեսության ոլորտում բյուջետային ծրագրերն ուղղվել են հետևյալ կոնկրետ նպատակների իրականացմանը.

- հացահատիկային տնտեսության և հացահատիկային կերային մշակաբույսերի սերմնաբուծության զարգացում ու ինքնաբավության մակարդակի բարձրացում,
- հողերի բերրիության պահպանում և բարձրացում,
- բույսերի վնասակար օրգանիզմների բազմացման, զարգացման ու տարածման հետազոտությունների և պայքարի աշխատանքների կազմակերպման միջոցով դրանց տարածման շրջանակների նվազեցում և հետագա կանխարգելում,
- գյուղատնտեսությունում տրամադրվող վարկերի մատչելիության բարձրացում (տոկոսադրույքի սուբսիդավորում),
- գյուղատնտեսությունում օգտագործվող հիմնական ռեսուրսների (հանքային պարարտանյութ, դիզելային վառելանյութ) մատչելիության բարձրացում,
- կենդանիների և մարդու համար ընդհանուր վարակիչ հիվանդություններից բնակչության պահպանություն և գյուղատնտեսական կենդանիների մթերատվության բարձրացում՝ կենդանիների վարակիչ հիվանդությունների կանխարգելիչ պատվաստումների իրականացում, տոհմասելեկցիոն աշխատանքների կազմակերպում,
- պարենային ապահովության և պարենային անվտանգության մակարդակի բարձրացում,
- անտառային տնտեսության զարգացում, անտառապահպանության արդյունավետության բարձրացում՝ անտառվերականգնման աշխատանքների ծավալների մեծացում, անտառշինական նախագծերի կազմում, անտառային տարածքներում բույսերի պաշտպանության կենտրոնացված միջոցառումների իրականացում,
- գյուղատնտեսությունում կայունացման և հետագա զարգացման նախադրյալների ստեղծում:

Սոցիալական ապահովագրություն և սոցիալական ապահովություն

2013 թվականին ոլորտում շարունակվեցին ու խորացան նախորդ տարիներին մեկնարկած բարեփոխումների ուղղությամբ աշխատանքները: Կենսաթոշակային ոլորտում ձեռնարկումները թևակոխեցին նոր փուլ, ներդրվեց կենսաթոշակային գործող համակարգի տեղեկատվական նոր շտեմարանը, ձևավորվեցին բազմաստիճան կենսաթոշակային համակարգին անցման ենթակառուցվածքները, հիմնականում ավարտին հասցվեցին ինտեգրված սոցիալական ծառայությունների փորձնական ծրագրի նախապատրաստական աշխատանքները: Զբաղվածության պետական նոր քաղաքականության իրականացման նպատակով մշակվեց և ՀՀ կառավարության կողմից հավանության արժանացավ զբաղվածության ռազմավարությունը: Ռազմավարական նոր մոտեցումներ առաջարկվեցին հաշմանդամների հիմնախնդիրների վերափմաստավորման և լուծման

ուղղությամբ: Լուրջ քայլեր կատարվեցին բժշկասոցիալական փորձաքննության գործընթացի կարգավորման ուղղությամբ:

Աշխատանք և զբաղվածություն

Զբաղվածության պետական կարգավորման ոլորտի բարեփոխումները նպատակ են հետապնդում պասիվ քաղաքականությունից անցում կատարել աշխատաշուկայի օբյեկտիվ իրավիճակից բխող ճկուն քաղաքականության, որի շրջանակներում պետական աջակցության վերջնարդյունք է սահմանված շահառուների, հատկապես, աշխատաշուկայում անմրցունակ անձանց կայուն զբաղվածության ապահովումը:

Այս նպատակով արդեն իսկ 2013 թվականին ՀՀ կառավարությունը հաստատել է «Զբաղվածության մասին» ՀՀ օրենքի հայեցակարգը: Զբաղվածության ռազմավարության գերակա նպատակների իրականացման հիմնական մեխանիզմների ամբողջական և արդյունավետ օրենսդրական ապահովման նպատակով մշակվել և 2013թ. դեկտեմբերի 11-ին ընդունվել է «Զբաղվածության մասին» ՀՀ նոր օրենքը, ըստ որի՝ նախատեսված է զբաղվածության ամենամյա պետական ծրագրի պլանավորման, իրականացման, մոնիթորինգի ու գնահատման ամբողջական ձևաչափ, որի միջոցով զբաղվածության պետական ծրագիրը հնարավոր է ենթարկել նպատակային կառավարման՝ դրված նպատակի և վերջնարդյունքի տեսանկյունից:

Կանոնակարգված է նաև աշխատանքի տեղավորման ոչ պետական կազմակերպությունների գործունեությունը՝ պետական-մասնավոր գործընկերային և փոխշահավետ համագործակցության խթանման նպատակով, հաշմանդամություն ունեցող անձանց աշխատանքի և զբաղվածության խթանման նպատակով կազմակերպությունների համար սահմանվում է աշխատատեղերի պարտադիր ապահովման նորմատիվ (քվոտա), սահմանված են անհրաժեշտ իրավական հիմքերը՝ զբաղվածության պետական ծառայության միջոցով աշխատաշուկայի վերաբերյալ ամբողջական տեղեկատվության ստացման ու տարածման, աշխատանք փնտրողներին և գործատուներին էլեկտրոնային եղանակով ծառայությունների մատուցման համար՝ ժամանակակից ՏՏ լուծումների կիրառմամբ:

Իրականացվող բարեփոխումների գործնական կիրառումն ապահովելու տեսանկյունից էապես կարևորվում են զբաղվածության ակտիվ նոր ծրագրերի փորձարկումը և դրանց արդյունավետ ներդրումը: Այս իմաստով հատկանշական է ՀՀ Արմավիրի մարզի վարչական տարածքում 2013 թվականի մայիսի 12-ին տեղացած կարկուտի հետևանքով տուժած գյուղատնտեսական նշանակության հողի սեփականատեր, վարձակալ կամ անհատույց օգտագործող հանդիսացող անձանց աջակցության շրջանակներում այդ անձանց գյուղացիական տնտեսության

վերականգնմանն ուղղված պետական աջակցությունը՝ ժամանակավոր զբաղվածության խթանման միջոցով: Ծրագրի շրջանակներում աջակցություն են ստացել 630 հող օգտագործող, իսկ 1411 անձի համար ապահովվել է ժամանակավոր զբաղվածություն՝ շուրջ երեք ամիս տևողությամբ: ՀՀ պետական բյուջեից աջակցության ընդհանուր գումարը կազմել է 119.3 մլն դրամ: Գնահատման արդյունքներով ծրագրում ներառված ընտանիքները միջին հաշվով կարողացել են վերականգնել իրենց կրած վնասը 2.2 անգամ ավելի, քան ծրագրում չներառվածները:

2014 թվականի հունվարի 1-ի դրությամբ «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալության մարզային և տարածքային կենտրոններում հաշվառվել է աշխատանք փնտրող 66269 անձ, որոնցից գործազուրկի կարգավիճակ է ստացել 55605-ը: Զբաղվածության կարգավորման պետական ծրագրերում ընդգրկվել է 15543 անձ՝ աշխատանք փնտրողների 23.5%-ը: Զբաղվածության ակտիվ ծրագրերում ընդգրկվել են 2233 աշխատանք փնտրող անձ (աշխատանք փնտրողների 3.4%-ը)՝ կանխատեսված 2207-ի փոխարեն: Աշխատանքի է տեղավորվել 12650 անձ կամ աշխատանք փնտրողների 19.1%-ը: Աշխատանքի տեղավորվածների շուրջ 28.3%-ը երիտասարդներ են, որը կազմում է տարածքային կենտրոններում հաշվառված երիտասարդների 21.8%-ը: Աշխատաշուկայում անմրցունակ անձանցից աշխատանքի է տեղավորվել 18.0%-ը՝ կանխատեսված 7.5%-ի փոխարեն:

Գործազրկության մակարդակը հանրապետությունում կազմել է 16.2% (ըստ ԱՎԾ-ի տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության)՝ 2012թ. 17.3%-ի փոխարեն:

Տարեսկզբից գործազրկության նպաստի ստացման իրավունք է ձեռք բերել շուրջ 13235 գործազուրկ: Նպաստառու գործազուրկների թվաքանակը միջին ամսական հաստատված 16618-ի փոխարեն կազմել է 10090՝ 6528 անձով պակաս:

Աշխատավարձի պետական կարգավորման նպատակով ընդունվել է «Նվազագույն աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքը, որով 2013թ. հուլիսի 1-ից նվազագույն աշխատավարձը սահմանվեց 45000 ՀՀ դրամ:

Ընդունվել է «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքի փաթեթը (թվով 35 օրենք), որով 2014թ. հուլիսի 1-ից պետական կառավարման մարմիններում կներդրվի վարձատրության միասնական համակարգ, ինչը կկանոնակարգի պետական պաշտոն զբաղեցնող անձանց վարձատրության սկզբունքների, նրանց հիմնական և լրացուցիչ աշխատավարձերի, պարգևատրման, դրամական օգնության կազմակերպման և վարձատրության հետ կապված հարաբերությունները: Փոփոխություններ և լրացումներ են կատարվել նաև ՀՀ աշխատանքային օրենսգրքում:

Ընդունվել է «Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 27-ի N 1691-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության N 1445-Ն որոշումը, որի համաձայն 2014թ. հունվարի 1-ից հետո՝ որպես սոցիալական փաթեթի պարտադիր պայման հանդիսացող ծառայություն, սահմանվում է պետության կողմից տրամադրվող (բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների) առողջապահական փաթեթը, միևնույն ժամանակ սահմանվում է կենսաթոշակի իրավունք ձեռք բերելու դեպքում սոցիալաբեթի շահառուի հաշվում առկա միջոցները կանխիկացնելու կամ այլ ուղղություններով օգտագործելու համար նրա չափսատելու մասին տեղեկանքի տրամադրման կարգը:

Կենսաթոշակային ապահովություն

ՀՀ կենսաթոշակային համակարգի բարեփոխումների կարևորագույն ուղղությունը կուտակային կենսաթոշակային բաղադրիչի ներդրումն է, որի շրջանակում 2013 թվականին.

- ձևավորվել (մշակվել, փորձարկվել և ներդրվել) են պարտադիր կուտակային բաղադրիչի գործարկումն ապահովող տեղեկատվական ենթակառուցվածքները: Իրականացված աշխատանքների արդյունքում առկա են 2014թ. հունվարի 1-ից կուտակային բաղադրիչը կիրարկելու համար անհրաժեշտ պայմանները (համապատասխան տեղեկատվական համակարգեր, տեղեկատվությունը ներկայացնելու և փոխանակելու գործիքներ, սահմանված ընթացակարգեր և այլն),

- ամբողջացվել է նորմատիվ իրավական դաշտը. անհրաժեշտ փոփոխություններ են կատարվել «Կուտակային կենսաթոշակների մասին», «Եկամտային հարկի և կուտակային վճարների անձնավորված հաշվառման մասին» ՀՀ օրենքներում և դրանից բխող՝ ՀՀ կառավարության համապատասխան որոշումներում,

- լիցենզավորվել են պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի երկու կառավարիչները: Առաջին կառավարիչի հիմնադիրները C-Quadrat Investment AG-ն և Talanx Asset Management GmbH ընկերություններն են, իսկ մյուս կառավարիչինը՝ Amundi ընկերությունը և «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈՒ ԲԱՆԿ» ՓԲԸ-ն: Համաշխարհային հոչակ վայելող ընկերությունների ներգրավվածությունը պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի կառավարման գործընթացի արդյունավետության լրացուցիչ երաշխիք է,

- ներդրվել է եկամտային հարկի և պարտադիր կուտակային վճարի անձնավորված հաշվառման համակարգը: Իրականացվել են աշխատանքներ եկամտային հարկի և պարտադիր կուտակային վճարի անձնավորված հաշվառման համակարգի՝ կուտակային վճարների գանձումն ու

անձնավորված հաշվառումն ապահովող մոդուլների մշակման, փորձարկման և հիմնական ներդրման ուղղությամբ:

Կենսաթոշակառուների շրջանում աղքատությունը և աղքատության ռիսկը նախ նվազեցնելու, ապա իսպառ բացառելու ռազմավարական խնդրի շրջանակներում մշակվել է «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը (ընդունվել է 2013թ. դեկտեմբերի 11-ին), որի համաձայն, սկսած 2014 թվականի հունվարի 1-ից, վերանայվում է կենսաթոշակի չափը հաշվարկելու կարգը:

Ընդունված իրավակարգավորումների արդյունքում ավելի առաջանցիկ տեմպերով աճում են ավելի ցածր կենսաթոշակները: 2014 թվականի հունվարի 1-ից հիմնական կենսաթոշակի չափը կազմում է 14000 դրամ, իսկ աշխատանքային ստաժի մեկ տարվա արժեքը՝ առաջին տասը տարվա համար 700 դրամ, տասը տարին գերազանցող յուրաքանչյուր տարվա համար 450 դրամ: Արդյունքում միջին աշխատանքային կենսաթոշակի չափը կկազմի շուրջ 36000 դրամ (2013թ-ին՝ շուրջ 31000 դրամ, աճը՝ շուրջ 15 տոկոս):

Կենսաթոշակի չափը հաշվարկելու կարգի փոփոխության և լրացուցիչ հատկացված միջոցների արդյունքում, 2014 թվականին շուրջ 5 անգամ կկրճատվի ծայրահեղ աղքատության շեմից ցածր կենսաթոշակ ստացողների թիվը, շուրջ 40 տոկոսով՝ աղքատության ստորին շեմից ցածր կենսաթոշակ ստացողների թիվը, շուրջ 12 տոկոսով՝ աղքատության վերին շեմից ցածր կենսաթոշակ ստացողների թիվը:

Միաժամանակ, հստակեցվել են կենսաթոշակ ստանալու իրավունքը դադարեցնելու, չվճարված կենսաթոշակը վճարելու, կենսաթոշակը լիազորագրով վճարելու պայմաններն ու կարգը:

Կապված 2014 թվականի հուլիսի 1-ից պետական համակարգում աշխատավարձերի հաշվարկման միասնական համակարգի ներդրման հետ՝ աշխատանքներ են տարվել առանձին կատեգորիայի անձանց կենսաթոշակային ապահովության խնդիրները լուծելու ուղղությամբ:

Մասնավորապես, մշակվել է «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը (ընդունվել է 2013թ. դեկտեմբերի 11-ին), որով վերանայվում է զինվորական կենսաթոշակները հաշվարկելու կարգը:

Շարունակական բնույթ են կրել նաև ՀՀ պետական բյուջեից վճարվող գումարների հասցեականության բարձրացման ուղղությամբ իրականացվող աշխատանքները, որպես հիմնական առաջնահերթություն դիտարկելով կենսաթոշակառուների տվյալների նույնականացումը:

Վերը նշված խնդիրը լուծելու նպատակով.

- 2013 թվականի հունիսի 1-ից սկսվել է «Էլեկտրոնային կենսաթոշակ» տեղեկատվական համակարգի արտադրական շահագործումը (վճարման ցուցակները ձևավորվում են տեղեկատվական համակարգում առկա տեղեկատվության հիման վրա),

- 2013 թվականի հուլիսից բնակչության պետական ռեգիստրի համակարգի տվյալները ստացվում են առցանց, մշակվել է կենսաթոշակառուների կողմից սահմանահատում իրականացնելու վերաբերյալ տեղեկատվությունն ինքնաշխատ եղանակով Սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական (ՍԷԿՏ) համակարգից ստանալն ապահովող ծրագրային գործիք, որը ներդրվել է 2014 թվականից:

Իրականացված աշխատանքների արդյունքում, «Էլեկտրոնային կենսաթոշակ» տեղեկատվական համակարգի շրջանակներում հիմնարար լուծում է ստացել կենսաթոշակառուների նոյնականացման խնդիրը՝ նվազագույնի հասցնելով կոռուպցիոն ռիսկերը, պատահական և միտումնավոր սխալների հավանականությունը:

Սոցիալական աջակցություն

Սոցիալական աջակցության բնագավառում 2013 թվականին աշխատանքներն իրականացվել են ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի ներդրման, ինչպես նաև պետական նպաստների բնագավառում՝ հասցեականության բարձրացման ուղղություններով: Ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի ներդրման շրջանակներում ձևավորվել է սոցիալական պաշտպանության ոլորտի միասնական տեղեկատվական շտեմարան, ընդլայնվել է առցանց եղանակով ստացվող տվյալների շրջանակը, այդ թվում՝ պետական նպաստների, մասնավորապես, ընտանեկան նպաստի համակարգում:

2011-2013թթ. աստիճանաբար մեծացել է նպաստառու ընտանիքների թիվը՝ պայմանավորված ընտանիքների անապահովության գնահատման մեթոդաբանության փոփոխությամբ: Այսպես, եթե 2011 թվականի դեկտեմբերին ընտանեկան նպաստ էին ստանում շուրջ 84 հազար ընտանիքներ, ապա 2012 թվականի դեկտեմբերին այն կազմել է շուրջ 101 հազար, իսկ 2013 թվականի դեկտեմբեր ամսվա ընթացքում նպաստառու ընտանիքների թիվը կազմել է շուրջ 103 հազար:

2013 թվականին ավարտվել են նախկին ԽՍՀՄ Խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 1993թ. հունիսի 10-ը դրամական ավանդ ներդրած անձանց փոխհատուցման վճարումները: 55 ՍԾՏՄ-ների կողմից հաշվառվել էին շուրջ 62 հազար անձ, իրենց 138 հազար ավանդային գրքույկներով: ՀՀ կառավարության 2013թ. սեպտեմբերի 28-ի N 1103-Ն որոշմամբ ավանդի փոխհատուցման իրավունք են ստացել սոցիալապես անապահով՝ մինչև 1924թ. դեկտեմբերի 31-ը ներառյալ ծնված, ինչպես նաև ՀՀ պաշտպանության մարտական գործողություններին մասնակցած

հաշմանդամ ճանաչված ավանդատուները: Այս ծրագրով ավանդի փոխհատուցում են ստացել շուրջ 400 ավանդատու:

2013 թվականին շարունակվել է ՀՀ կառավարության N 952-Ն որոշմամբ հաստատված ինտեգրված սոցիալական ծառայությունների տրամադրման փորձնական ծրագիրը: Իրականացվող փորձնական ծրագրի շրջանակներում գործարկվել են մեկ պատուհանի սկզբունքով գործող 19 համալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոններ (ՀՄԾՏԿ), որոնք տեղակայվել են վերանորոգված, համապատասխան տեղեկատվական տեխնոլոգիաներով զինված շենքերում, ունեն փաստաթղթաշրջանառության էլեկտրոնային միասնական համակարգ, ՀՄԾՏԿ-ներում տեղադրվել է ՀՀ քաղաքացիների սոցիալական տվյալների տեղեկատվական միասնական բանկը: Մշակվել է ինտեգրված սոցիալական ծառայությունների տրամադրման համար անհրաժեշտ մեթոդաբանությունը:

Փորձնական ծրագրի արդյունքների գնահատմամբ մշակվել է «Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքը (ՀՕ-154-Ն. 12.12.2013թ.) և ՀՀ Ազգային ժողովում է գտնվում «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքի նախագիծը:

Հաշմանդամների և տարեցների հիմնահարցեր

Հաշմանդամության բնագավառում իրականացրած քաղաքականությունն ու պետական նպատակային ծրագրերն ուղղված են հաշմանդամություն ունեցող անձանց համար հավասար պայմաններ և հնարավորություններ ապահովելուն և նրանց՝ հասարակություն ներառելուն:

Գործող օրենսդրությունը «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի դրույթներին համապատասխանեցնելու, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների և սոցիալական ներառման ապահովման նպատակով լրամշակվել է «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության և սոցիալական ներառման մասին» ՀՀ օրենքի նախագիծը:

Ընդունվել է «Անձի բազմակողմանի գնահատման՝ Առողջապահության համաշխարհային կազմակերպության ֆունկցիաների միջազգային դասակարգման սկզբունքների վրա հիմնված հաշմանդամության սահմանման մոդելի ներդրման հայեցակարգին հավանություն տալու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության արձանագրային որոշումը:

Կանոնակարգվել է լսողության խնդիրներ ունեցող երեխաներին և երիտասարդներին լսողական սարքերը հավաստագրերի միջոցով ապահովելու գործընթացը:

Հաշմանդամության ոլորտում իրականացվող պետական նպատակային ծրագրերի շրջանակներում հաշմանդամներին անվճար տրամադրվել են պրոթեզաօրթոպեդիկ պարագաներ,

սայլակներ, լտղական և ձայնաստեղծ սարքեր, աչքի պրոթեզավորում և այլ վերականգնողական պարագաներ:

Տեսողությունը կորցրած անձանց համար իրականացվել է հատուկ տառատեսակներով գրքերի պատրաստման և «Խոսող գրքերի» ձայնագրության ծրագիրը:

2013 թվականին ՀՀ կառավարության կողմից հաստատվել է «Տեսողությունից 1-ին խմբի հաշմանդամություն ունեցող աշխատանք փնտրող չգբաղված անձանց ուսուցման և աշխատատեղի հարմարեցման շրջանակներում համակարգչի տրամադրման ծրագիրը»: Այս ծրագրի նպատակն է գնահատել տեսողությունից 1-ին խմբի հաշմանդամություն ունեցող աշխատանք փնտրող անձանց աշխատանքային կարիքները, ուսուցանել «Արև» համակարգչային ծրագիրը և աջակցել նրանց աշխատանք գտնելու հարցում:

Պետական աջակցություն է ցուցաբերվել «Փրկություն» հասարակական կազմակերպությանը՝ մտավոր խնդիրներ ունեցող շուրջ 50 դեռահասի և երիտասարդի սոցիալ-վերականգնողական ծառայություններ մատուցելու համար:

«Հաշմանդամների մասնագիտական կողմնորոշման և աշխատանքային վերականգնողական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվել է աշխատանք փնտրող հաշմանդամների աշխատանքային վերականգնման և մասնագիտական վերապատրաստման ծրագիրը:

2013 թվականին շարունակվել են տարեցների սոցիալական պաշտպանության բարելավման ուղղությամբ տարվող աշխատանքները:

Միայնակ, խնամքի կարիք ունեցող տարեց և հաշմանդամ քաղաքացիներին տրամադրվում են սոցիալական սպասարկման և խնամքի ծառայություններ ինչպես շուրջօրյա՝ տուն-ինտերնատներում, այնպես էլ տնային պայմաններում և ցերեկային խնամքի կենտրոններում:

Համաֆինանսավորվել է հայ-դանիական «Հանս Քրիստիան Կոֆոեդ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող՝ ժամանակավոր կացարանում անօթևան մարդկանց շուրջօրյա խնամքի տրամադրման ծրագիրը, որի շրջանակներում ապաստան և սնունդ է տրամադրվում շուրջ 40 անօթևան մարդու:

Ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցեր

Ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի բնագավառում շարունակվում է երեխաների իրավունքների պաշտպանության համակարգի հզորացմանը, առանց ծնողական խնամքի մնացած երեխաների իրավունքների պաշտպանությանը, գենդերային քաղաքականության ներդրմանը, բռնության և թրաֆիքինգի երևույթի կանխարգելմանն ուղղված քաղաքականության իրականացումը:

2013 թվականին երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտի բարեփոխումներն ուղղված են եղել «Երեխայի իրավունքների պաշտպանության 2013-2016թթ. ռազմավարական ծրագրով» նախատեսված միջոցառումների իրականացմանը:

2013 թվականի մայիսի 20-ին ՀՀ ԱԺ-ի կողմից ընդունվել է «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքը, որի նպատակն է հասարակական կյանքի բոլոր ոլորտներում գենդերային հավասարության ապահովումը, կանանց և տղամարդկանց իրավական պաշտպանությունը գենդերային խտրականությունից, քաղաքացիական հասարակության ձևավորման աջակցումը և հասարակության մեջ ժողովրդավարական հարաբերությունների հաստատումը: Այդ ուղղությամբ շարունակվել են աշխատանքները նաև «Հայաստանի Հանրապետության գենդերային քաղաքականության 2011-2015 թվականների ռազմավարական ծրագրով» նախատեսված միջոցառումների շրջանակներում:

Հանրապետությունում թրաֆիքինգի երևույթի կանխարգելման նպատակով իրականացվել են «Հայաստանի Հանրապետությունում 2013-2015թթ. մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի կազմակերպման ազգային ծրագրով» նախատեսված միջոցառումները: Նախարարության և ԱՄՔՈՐ հասարակական կազմակերպության հետ 2011 թվականին կնքված պայմանագրի համաձայն շարունակվել է «Թրաֆիքինգի զոհերին պետական աջակցություն» ծրագրի իրականացումը, որի շրջանակներում շուրջ 20 շահառուի տրամադրվել են առաջնային օգնություն, կացարան, վերականգնողական ծառայություններ, բժշկական, սոցիալական, հոգեբանական օգնություն և իրավաբանական խորհրդատվություն:

Սոցիալական բնակարաններ

Արդեն երկրորդ տարին է մանկատան նախկին սաների և առանց ծնողական խնամքի մնացած երեխաների (ԱԾԽՄ) բնակարանային ապահովման ծրագրի հենքի վրա ոլորտում իրականացվում է նոր քաղաքականություն, մշակվել է սոցիալական բնակարաններով ապահովման նոր մոդել, որտեղ որպես հիմնական շահառու շարունակում են մնալ վերը նշված սոցիալական խմբերի երեխաները:

Բացի երեխաներից սոցիալական բնակֆոնդի բնակիչներ կարող են հանդիսանալ նաև ՀՀ կառավարության 2013թ. օգոստոսի 1-ի N 894-Ն որոշմամբ սահմանված սոցիալապես անապահով այլ խմբեր: Նախատեսվում են նաև «սատարող ընտանիքներ», որոնք պետք է օգնեն շենքի պահպանման, շահառուների հասարակություն ինտեգրման, միջանձնային փոխհարաբերությունների, կենցաղային և այլ հարցերում:

Ժողովրդագրության հիմնահարցեր

2013 թվականին կատարած աշխատանքները բխել են ՀՀ ժողովրդագրական քաղաքականության ռազմավարությամբ սահմանված հիմնական առաջնահերթություններից՝ ծնելիության և մահացության ցուցանիշների բարելավում, բնակչության առողջության պահպանում, միգրացիոն գործընթացների կարգավորում, տարածքների զարգացում և բնակչության տարածքային բաշխվածության անհամամասնության մեղմացում, որոնք ամրագրվել են ժողովրդագրական իրավիճակի բարելավման 2013 թվականի ամենամյա պետական ծրագրում:

Հանրապետությունում ծնունդների խրախուսման նոր համակարգի՝ ընտանեկան դրամազլխի ներդրման նպատակով մշակվել է «Երրորդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի ծննդյան համար ընտանիքներին պետական աջակցության տրամադրման ծրագիրը», որը հավանության է արժանացել ՀՀ կառավարության կողմից, որի համաձայն երրորդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի ծննդյան դեպքում ընտանիքը կստանա պետական աջակցության իրավունք՝ ընտանեկան դրամազլխի ձևով՝ բնակարանային պայմանների բարելավման, կրթական և առողջապահական վճարովի ծառայություններից օգտվելու համար:

Հաշվի առնելով հանրապետությունում ժողովրդագրական խնդիրները՝ որպես ազգային անվտանգության բաղադրիչ, մշակվել և շրջանառության մեջ է դրվել ժողովրդագրական իրավիճակի բարելավման ազգային ծրագիրը և դրա իրականացումն ապահովող միջոցառումների ցանկը (2014-2017թթ.):

Տարածքային կառավարում

Գնահատելով համայնքների վերաբերյալ տեղեկատվական բազայի կարևորությունը՝ 2013 թվականին մշակվել և հաստատվել է «Հայաստանի Հանրապետության համայնքների տեղեկատվական բազայի արդիականացման նպատակով Հայաստանի Հանրապետության համայնքներից տվյալների հավաքագրման, ամփոփման և համայնքների տեղեկատվական բազա էլեկտրոնային ծրագիր մուտքագրման» կարգը:

Տեղական փորձագետների համատեղ աշխատանքի արդյունքում մշակվել է մարզերի տնտեսական զարգացման ներուժի գնահատման մեթոդաբանություն: Մեթոդաբանության հիմնական նպատակը ռեսուրսային հնարավորությունները (արտադրական ենթակառուցվածքներ, արդյունաբերության և գյուղատնտեսության զարգացման հնարավորություններ և այլն) հաշվի առնելով՝ մարզի հետագա զարգացման ներուժի գնահատումն է: Մեթոդաբանության ամբողջականացման աշխատանքները կավարտվեն 2014 թվականի ընթացքում:

2013 թվականին մեկնարկել է ԵՄ-ի կողմից իրականացվող «Աջակցություն տարածքային կառավարման նախարարությանը տարածքային նպատակային զարգացման ծրագրերի կազմման գործընթացում» ծրագիրը, որն իրականացվում է ECORYS կազմակերպության կողմից ՀՀ տարածքային կառավարման նախարարության հետ համատեղ:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի սեպտեմբերի 18-ի «Հայաստանի Հանրապետության մարզերի զարգացման ծրագրերի կազմման ու իրականացման հայեցակարգին հավանություն տալու մասին» N 38 արձանագրային որոշման պահանջներին համաձայն՝ հաշվետու ժամանակահատվածում մշակվել են ՀՀ Շիրակի, Լոռու և Սյունիքի մարզերի սոցիալ-տնտեսական զարգացման երկրորդ՝ 2014-2017 թվականների քառամյա ծրագրերը:

Համայնքներում գեղեցիկային քաղաքականության արդյունավետության բարձրացման նպատակով հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է «Լավագույն համայնքապետ՝ գեղեցիկային խնդիրների լուծման ուղղությամբ» մրցանակաբաշխությունը:

Առողջապահություն

Բնակչության առողջության առաջնային պահպանում

Որպես առաջնահերթություն շարունակվել է առողջության առաջնային պահպանման ոլորտի զարգացումը՝ որպես առողջապահության համակարգի բարեփոխումների հիմք և բնակչությանը ցուցաբերվող բժշկական օգնության առավել մատչելի հիմնական օղակ:

Շարունակվել է շեշտը դրվել ամբուլատոր-պոլիկլինիկական օղակի դերի բարձրացման, կանխարգելիչ ուղղվածության ուժեղացման, բնակչության համար բուժօգնության այդ մակարդակում բժշկական օգնություն ստանալու մատչելիության ապահովման ու որակի բարելավման, ԱԱՊ ծառայություններ մատուցողների կողմից որակյալ բուժօգնության տրամադրման խրախուսման և ըստ կատարողականի փոխհատուցման մեխանիզմների ներդրման վրա: Արդյունքում իրականացվել է՝

- ամբուլատոր – պոլիկլինիկական օղակում անվճար բուժօգնության և ծառայությունների իրականացման գործընթացի շարունակականության ապահովում՝ այն բնակչության համար առավել մատչելի դարձնելու նպատակով,
- առաջնային օղակում իրականացվող բուժօգնության և մատուցվող ծառայությունների որակի վերահսկում և բարելավում,
- առավել տարածված ոչ վարակիչ հիվանդությունների վաղ հայտնաբերման, ախտորոշման ու կանխարգելման ճանապարհով բնակչության առողջության հիմնական ցուցանիշների

բարելավում, այդ հիվանդությունների բարդությունների, հաշմանդամության և մահացության ցուցանիշների կրճատում,

- բնակչի կողմից առողջության առաջնային ծառայություններ մատուցող բժշկի ազատ ընտրության գործընթացի շարունակականության ապահովում և դրա հիման վրա ընտանեկան բժշկության անկախ պրակտիկաների ստեղծում:

2013 թվականի դրությամբ հանրապետությունում գործել են 5 ընտանեկան բժշկության անհատական և խմբային անկախ պրակտիկաներ, որոնք մատուցել են առողջության առաջնային պահպանման ծառայություններ պետական պատվերի շրջանակներում:

ԱԱՊ ծառայություններ մատուցողների կողմից որակյալ բժշկական օգնության տրամադրման խրախուսման և ըստ կատարողականի փոխհատուցման նպատակով վերանայվել, լրամշակվել և հաստատվել է առողջության առաջնային պահպանման ծառայություններ մատուցողների ըստ կատարողականի ֆինանսավորման նպատակով գործունեությունը գնահատող ցուցանիշների ցանկը: Նշյալ վերանայված ցանկում ընդգրկված են թվով 30 ցուցանիշներ, նախորդ՝ 10 ցուցանիշների փոխարեն:

2013 թվականի ընթացքում իրականացվել են 2014 թվականին մեկնարկող առավել տարածված ոչ վարակիչ երեք հիվանդությունների կանխարգելմանն ուղղված զանգվածային սկրինինգային ծրագրերի նախապատրաստական աշխատանքներ: Նշյալ սկրինինգային ծրագրերն ուղղված են լինելու սրտանոթային հիվանդությունների, շաքարային դիաբետի, արգանդի վզիկի քաղցկեղի վաղ հայտնաբերմանը: Մշակվել են «Առողջության առաջնային պահպանման օղակի բժիշկների համար ոչ վարակիչ հիվանդությունների կառավարման և բուժման գործնական ուղեցույցները» և «Պացիենտների համար ոչ վարակիչ հիվանդությունների ռիսկի գործոնների կանխարգելման կրթական ծրագրերը», ինչպես նաև բժիշկների համար նախատեսված կրթական մոդուլներ:

Շտապ բուժօգնության ծառայության բարելավում

Շտապ բուժօգնության ծառայությունը հանդիսանում է առողջապահության համակարգի ամենաօպերատիվ և ամենամոբիլ կառույցը: Ծառայության բարելավման խնդրում շեշտը դրվել է մեքենաների պարկի աստիճանական նորացման և անհրաժեշտ սարքերով ու դեղերով հագեցման, կանչերի գրանցման համակարգի արդիականացման, շտապ օգնության կանչերի իրականացման տևողության հնարավորին կրճատման, մասնագետների կրթման և մատուցվող ծառայությունների որակի վերահսկման վրա: Այդ նպատակով ԱՄՆ ՄԶԳ դրամաշնորհային ծրագրի շրջանակներում մշակվել է ՇՕ տեղեկատվական-վերլուծական համակարգը, որը բաղկացած է շտապօգնության պորտալ/վեբկայքից և վերլուծական համակարգից: ՇՕ վերլուծական համակարգը իրականացնելու է

մի քանի գործառույթներ, այդ թվում՝ շտապ օգնության կանչերի էլեկտրոնային դիսպետչերիզացիա՝ կանչի ավտոմատացված գրանցում, փոխանցում և ավարտված կանչի արդյունքների ներմուծում: Համակարգը հնարավորություն կտա միօրինականացնել ՇԲԾ վերաբերյալ հավաքվող տվյալների մուտքագրումը և ունենալ միասնական տվյալների բազա, ներդնել մշտադիտարկման մեխանիզմ՝ ՇԲԾ աշխատանքների կազմակերպչական և կլինիկական ոլորտների շուրջ համապատասխան որոշումներ կայացնելու նպատակով:

Մոր և մանկան առողջության պահպանում

Մոր և մանկան առողջության պահպանումը առողջապահության ոլորտի կարևոր առաջնահերթություններից է: 2013 թվականին կարևորվել է կանանց և երեխաների բժշկական օգնության կազմակերպման անհրաժեշտ ծավալների և մատչելիության, ինչպես նաև հիվանդությունների կանխարգելման միջոցառումների ապահովումը՝ ուղղված երեխաների և մայրերի մահացության ու հիվանդացության ցուցանիշների նվազմանը:

Արդյունքում արձանագրվել է՝

- մինչև 5 տարեկան երեխաների մահացության մակարդակի կրճատում շուրջ 13%-ով,
- նորածնային հիվանդացության և մահացության կրճատում՝ նախաձննդյան խնամքի ծառայությունների մատչելիության և որակի բարելավման, նորածնային սկրինինգային համակարգի ընդլայնման, նորածինների վերակենդանացման ծառայությունների բարելավման միջոցով,
- մայրական մահացության ցուցանիշի (միջին եռամյա կտրվածքով) կրճատում շուրջ 20%-ով
- վերարտադրողական առողջության ցուցանիշների բարելավում՝ հիվանդությունների կանխարգելման և վաղ հայտնաբերման սկրինինգային ծրագրերի (նախաձննդյան ախտաբանություններ, նախաքաղցկեղային հիվանդություններ, անպտղություն և այլն) իրականացման միջոցով:

Բնակչության հիգիենիկ և համաճարակային անվտանգության ապահովում

2013 թվականի ընթացքում հանրապետությունում համաճարակային իրավիճակը որոշ վարակիչ հիվանդությունների առումով եղել է համեմատաբար հանգիստ: Չեն արձանագրվել այնպիսի վարակիչ հիվանդություններ, ինչպիսիք են սուր պոլիոմիելիտը, դիֆթերիան, կարմրուկը, կարմրախտը, խոլերան, դիկտեոցիոզները, մալարիան, այդ թվում՝ բերովի և այլն: Սակայն հիվանդացությունը դեռևս բարձր է՝ պայմանավորված սննդային գործոնով: Գրեթե 1.4 անգամ նվազել են մանրէային դիզենտերիայի դեպքերը:

Շնորհիվ Իմունականխարգելման ազգային ծրագրի արդյունավետ իրականացման հանրապետությունում չեն արձանագրվում պոլիոմելիտի դեպքեր՝ 1995 թվականից, դիֆթերիայի դեպքեր՝ 2000 թվականից, կարմրուկ և կարմրախտ հիվանդությունները՝ 2007 թվականից, իսկ խոզուկ, կապույտ հազ, փայտացում հիվանդություններն արձանագրվում են միայն եզակի դեպքերի տեսքով: Կառավարելի վարակիչ հիվանդությունների առումով նշվածը զգալի ձեռքբերում է, քանի որ եվրոպական տարածաշրջանի երկրներում նշված հիվանդություններն արձանագրվում են նույնիսկ բռնկումների ձևով (Գերմանիա, Ֆրանսիա, Իտալիա, Բուլղարիա և այլն՝ կարմրուկի բռնկումներ, Տաջիկստան, ՌԴ, Թուրքմենիա և այլն՝ պոլիոմելիտի բռնկում, ՌԴ, Թուրքիա, Պարսկաստան՝ դիֆթերիայի բռնկում):

Ղեկագործական գործունեության կազմակերպում, դեղերով և տեխնոլոգիաներով ապահովում

Բնակչությանը պատշաճ որակի բժշկական օգնության և սպասարկման ծառայություն մատուցելու գործում կարևոր նշանակություն ունի ՀՀ-ում անվտանգ, արդյունավետ և որակյալ դեղերի առկայությունը և դրանց մատչելիությունը՝ համապատասխան տեսականիով (ՀՀ հիմնական դեղերի ցանկ): 2013 թվականին կարևորվել է ՀՀ հիմնական դեղերի ցանկում առկա, բայց ՀՀ-ում չգրանցված և ցածր պահանջարկ ունեցող, սակայն կենսականորեն անհրաժեշտ դեղերի պետական գրանցումը:

Կրթություն և գիտություն

Նախադպրոցական կրթության մատչելիության մեծացումը և նախակրթարանների ստեղծումը դիտարկվում է որպես կրթության ոլորտի գերակա ուղղություն: 2013 թվականին հանրապետության 10 մարզերում ստեղծվեցին ևս 73 նախադպրոցական հաստատություններ, որոնցում ընդգրկվել են շուրջ 1800 երեխաներ: Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացված «Կրթության որակ և համապատասխանություն» վարկային երկրորդ ծրագիրը նպատակաուղղված էր նախադպրոցական կրթության ոլորտի բարելավման հիմնախնդիրների իրականացմանը, նախադպրոցական և տարրական կրթության շարունակականության ապահովմանը: Երեխաների համակողմանի զարգացման և դպրոցական կրթության համար հավասար մեկնարկային պայմաններ ստեղծելու նպատակով և ծախսարդյունավետ կրթական ծառայությունների ներդրման միջոցով նախատեսվում է մինչև 2015 թվականը նախադպրոցական տարիքային խմբի՝ 5-6 տարեկանների, ընդգրկվածությունը հասցնել մինչև 90%: Ծրագրում առաջնայնությունը տրվում է աղքատ ընտանիքներին և այն համայնքներին, որտեղ նախադպրոցական հաստատություններ չեն գործում:

2013 թվականին հանրակրթության ոլորտում իրականացված բարեփոխումներն ուղղված են եղել 12-ամյա կրթության դասագրքերի, ուսումնաօժանդակ գրականության ստեղծման և ներդրման աշխատանքներին, ինչպես նաև հանրապետության մանկավարժական և ղեկավար կադրերի կարողությունների հզորացմանը: 2011-2012 ուսումնական տարվանից հանրապետության դպրոցների 2-րդ դասարանից սկսած, ուսումնական պլանով ներդրվեց «Շախմատ» առարկան, որի դասավանդումն ավարտվում է 4-րդ դասարանում: ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին տպագրվել և հանրապետության բոլոր դպրոցներին են տրվել Հայաստանի Շախմատի ակադեմիայի հրատարակած «Շախմատ» առարկայի 4-րդ դասարանի դասագիրքն ու խնդրագիրքը: Ամփոփվել է 2-4-րդ դասարանների «Շախմատ» առարկայի դասագրքերի և խնդրագրքերի հրատարակումը և ըստ կարգի՝ դրանք կվերահրատարակվեն երեք տարի հետո: Նոր՝ բեռնաթափված ուսումնական ծրագրերով հանրապետության 96 դպրոցներում իրականացվել է հիմնական դպրոցի 20 անուն դասագրքերի փորձարկում, որից հետո դրանք լրամշակվել են, հրատարակվել և առաքվել են դպրոցներ: Հանրապետության գյուղական հիմնական փոքր, քաղաքային միջնակարգ մեծ և ավագ դպրոցներում իրականացվել է փորձնական վարկանիշավորում: Մրցունակ կրթական և գիտական համակարգի իրավական հիմք ապահովելու նպատակով երաշխավորված նվազագույն 9-ամյա կրթությունից անցում է կատարվելու անվճար 12-ամյա կրթությանը, որի նպատակով վերանայվել են մի շարք իրավական ակտեր: Հանրակրթության որակի բարելավման տեսանկյունից կարևորվում են տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրման խնդիրները, որի նպատակով ընդունվել է «Հայաստանի Հանրապետությունում ուսումնական համակարգիչների արտադրության զարգացման հայեցակարգը»:

2013 թվականի գերակա ուղղություններից է եղել նաև ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների համար որակյալ հիմնական կրթություն ստանալու հնարավորության ընդլայնումը: Իրականացված աշխատանքների արդյունքում ՀՀ Արագածոտնի և Արմավիրի մարզերի եզրիական համայնքների դպրոցներին են տրամադրվել «Եզդիերեն» 4-րդ, 5-րդ և 10-րդ դասարանների դասագրքեր: Միաժամանակ, մանկավարժական կադրերի մասնագիտական որակավորման բարձրացման նպատակով կազմակերպվել են ազգային փոքրամասնությունների դպրոցների 20 ուսուցիչների վերապատրաստման դասընթացներ:

Կրթության բնագավառի զարգացումներում կարևոր տեղ է տրվել մասնագիտական կրթության ոլորտին: Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման ներկա փուլում էական նշանակություն ունեն մասնագիտական կրթության ապահովումն ու մատչելիությունը, որը հանրապետության տնտեսական աճի, աղքատության ու անհավասարության մեղմման կարևորագույն գործոններից մեկն է: Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին

մասնագիտական կրթության ոլորտի բարեփոխումներն ուղղված են եղել մասնագիտական կրթության որակի բարելավմանը, աշխատաշուկայի պահանջներին և միջազգային չափանիշներին համապատասխան կադրերի պատրաստման կարողությունների հզորացմանը: Նախնական և միջին մասնագիտական կրթության ոլորտի 2013 թվականի գերակա խնդրի լուծմանն ուղղված քայլերն են եղել մասնագիտական կրթության և ուսուցման (ՄԿՈՒ) համակարգի մարդկային ռեսուրսների կարողությունների շարունակական հզորացումը, կառավարման արդյունավետության բարձրացումը. ուսումնական հաստատությունների մանկավարժական կադրերի և ղեկավար անձնակազմի վերապատրաստումը, ինչպես նաև ՄԿՈՒ 4 հաստատություններում մասնագիտական կողմնորոշման և կարիերայի գործուն կենտրոնների ստեղծումը: Մշակվել են եվրոպական չափանիշներին համապատասխան նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների և որակավորումների 17 պետական կրթական չափորոշիչներ, համապատասխան ուսումնական պլաններ ու մոդուլային ծրագրեր: Մշակված չափորոշիչները ստացել են դրական փորձագիտական եզրակացություն ոլորտային հանձնաժողովների կողմից: ՄԿՈՒ ուսումնական հաստատությունների կարողությունների հզորացման նպատակով վերապատրաստվել են 1089 ուսումնական հաստատությունների դասախոսներ և արտադրական ուսուցման վարպետներ, 60 տնօրեններ և տնօրենի տեղակալներ, չափորոշիչներ մշակող 26 փորձագետներ, ՄԿՈՒ հաստատությունների կառավարման խորհուրդների 60 անդամներ: Միաժամանակ, ՄԿՈՒ համակարգի համար մշակվել և հաստատվել են 12 անուն ուսումնական ձեռնարկներ և ուսումնամեթոդական նյութեր, որոնք ներկայացված են տպագրության: 2013 թվականին ՀՀ ԿԳ նախարարության և Հայ ոսկերիչների համաշխարհային ասոցիացիայի միջև կնքվել է համագործակցության հուշագիր, որն իր հերթին կարևորում է մասնագիտական կրթության և ուսուցման շարունակական զարգացումը, ուսումնական հաստատություն-գործատու գործընկերային կապերի ամրապնդումը, հաստատությունների շրջանավարտների զբաղվածության ապահովումը: Եվրոպական կրթական հիմնադրամի հետ համատեղ իրականացվել են աշխատանքներ 12 տարածաշրջանային քոլեջներում կարիերայի կենտրոնների ներդրման և գործարկման ուղղությամբ: Տարածաշրջանային պետական քոլեջների կարիերայի կենտրոնների պատասխանատուների համար կազմակերպվել է սեմինար-ուսուցում: Մշակվել և հաստատվել է նաև «Մասնագիտական ուսումնական հաստատություններում կարիերայի կենտրոնների զարգացման» ուղեցույց ձեռնարկը, որով նախատեսվում է պլանավորել և իրականացնել կարիերայի ուղղորդման աշխատանքները քոլեջներում:

2013 թվականին բարձրագույն մասնագիտական կրթության ոլորտի գերակա խնդիրն է եղել կրթության որակի, մատչելիության և մրցունակության խթանումը, որը պայմանավորված էր

Հայաստանում տեխնոլոգիաների և նորարարության զարգացմամբ, գիտելիքահեն հասարակության կազմավորմամբ, բարձրագույն կրթության ֆինանսավորման համակարգի բարելավմամբ, ինչպես նաև ճանաչելի դարձնել ՀՀ բարձրագույն կրթական համակարգը Եվրոպական կրթական տարածքում: Մշակվել և 2014 թվականին հաստատվել են ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունների ազգային վարկանիշավորման համակարգի մեթոդաբանությունը, ցուցանիշները, հաշվարկի մեխանիզմները, և բարձրագույն ուսումնական հաստատությունների կողմից լրացվել են փորձնական վարկանիշավորման համար անհրաժեշտ տվյալների ցանկերը: Իրականացվել է 20 բարձրագույն ուսումնական հաստատությունների փորձնական վարկանիշավորում, որի արդյունքում ստեղծվել է բարձրագույն կրթություն տրամադրող հաստատությունների վերաբերյալ համապարփակ և թափանցիկ դասակարգման համակարգ՝ ԲՈՒՀ-երի հաշվետվողականությունը և թափանցիկությունը բարձրացնելու նպատակով:

Բարձրագույն տեխնոլոգիական կրթության ոլորտում ժամանակակից լաբորատորիաներ ստեղծելու նպատակով իրականացվել են Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի 10-րդ մասնաշենքի շահագործման աշխատանքները, որի արդյունքում մասնաշենքն ամբողջությամբ համալրվել է համապատասխան գույքով և լաբորատոր սարքավորումներով: 2013-2014թթ. ուսումնական տարվա սեպտեմբերից լաբորատորիաներում անցկացվում են ուսումնական պարապմունքներ: 2013 թվականի սեպտեմբերին ԲՈՒՀ-երի հետ կնքվել են նորարարական ծրագրերի իրականացման դրամաշնորհային պայմանագրեր:

Վերանայվել է ընդունելության քննությունների համակարգը՝ իրականացվել են միասնական քննությունների համակարգչային ադապտիվ թեստավորման միջոցով կազմակերպման հնարավորության վերլուծական հետազոտումներ և տրվել է ներդրման ծախսերի ֆինանսական գնահատականը:

2013 թվականին մեկնարկել է «Պետության կողմից ուսանողական նպաստի ձևով ուսման վճարի մասնակի փոխհատուցում տրամադրելու մասին» գործընթացը, որի նպատակով սահմանվել է միջին որակական գնահատականի շեմ՝ բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով 75%: Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ ծրագիրն իրականացվում է առաջին անգամ, համապատասխան հրամանով միջին որակական գնահատականների շեմերը նվազեցվել են՝ սահմանվելով բակալավրի կրթական ծրագրով՝ 40%, մագիստրոսի կրթական ծրագրով՝ 50%: Արդյունքում հնարավորություն է ընձեռվել պետության կողմից ուսման վարձի մասնակի փոխհատուցում իրականացնել 845 ուսանողի համար:

Միաժամանակ, իրականացվել է սոցիալապես անապահով ուսանողների համար բարձրագույն կրթության մատչելիության մեխանիզմների մշակման գործընթացը: «Կրթության մասին» և

«Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքներում կատարվել են համապատասխան փոփոխություններ և լրացումներ, համաձայն որոնց՝ հնարավորություն է ընձեռվում ԲՈՒՀ-երի միջոցների հաշվին ուսման վարձի փոխհատուցում իրականացնել սոցիալապես խոցելի խմբերի ուսանողներին և ստեղծել հավասար ֆինանսական աջակցության պայմաններ՝ միևնույն կարգավիճակ ունեցող ուսանողների համար: Սահմանվել է նաև ուսման վարձի առավելագույն շեմ՝ ըստ կրթական աստիճանների, մասնագիտությունների և հավատարմագրման արդյունքների, ինչպես նաև ՀՀ կառավարության լիազոր մարմնի կողմից հաստատված հատուկ սոցիալական ծրագրերի:

Բարձրագույն մասնագիտական կրթության ոլորտի գերակա խնդրի լուծմանն ուղղված քայլերից է բարձրագույն կրթության կառավարման տեղեկատվական համակարգի շահագործումը, որի նպատակներն են մասնագիտական կրթության համակարգի գործունեության արդյունավետության բարձրացումը և մասնագիտական կրթության համակարգում կառավարման կարողությունների զարգացումը՝ կառավարման բոլոր օղակներում հավաստի տեղեկատվության վրա հիմնված որոշումներ կայացնելու նպատակով:

«Կրթության որակ և համապատասխանություն» վարկային երկրորդ ծրագրի շրջանակներում ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում իրականացվել են մասնագիտական կրթության կառավարման տեղեկատվական համակարգի (ՄԿԿՏՀ-ի) մշակման, տեղադրման, ինչպես նաև այդ հաստատությունների ներկայացուցիչների վերապատրաստման աշխատանքներ:

ԲՈՒՀ-երի ինքնուրույնությունը մեծացնելու նպատակով իրականացվել է մեկ բարձրագույն ուսումնական հաստատության անցում կազմակերպաիրավական նոր ձևի: Իրականացված աշխատանքների արդյունքում նախատեսվում է «Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության կարգավիճակը վերակազմակերպել «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամի: Իրականացվել են նաև Հայաստանի Հանրապետությունում Բոլոնիայի քարտուղարության գործունեության ապահովման աշխատանքները:

Սպորտի և երիտասարդության հարցեր

Սպորտի և երիտասարդության ոլորտում պետական քաղաքականության իրականացումը ենթադրում է մի շարք հիմնական խնդիրների լուծում, որոնք ներկայումս գտնվում են կառավարության ուշադրության կենտրոնում՝ զանգվածային ֆիզկուլտուրային-առողջարարական՝ համայնքային, տարածաշրջանային, մարզային և հանրապետական միջոցառումների, փառատոների անցկացում, հաշմանդամների տարբեր խմբերի շրջանում ֆիզկուլտուրային-

առողջարարական աշխատանքների հետագա բարելավում, հաշմանդամ մարզիկների, աշխարհի և Եվրոպայի առաջնություններին հանրապետության մարզիկների մասնակցությանն աջակցություն, ֆիզիկական կուլտուրայի, սպորտի և առողջ ապրելակերպի արմատավորման քարոզմանն ուղղված համալիր միջոցառումների և ծրագրերի իրականացում, ոլորտը կարգավորող իրավական ակտերի մշակման գործընթացի կազմակերպում, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում բարեփոխումներ կատարելու, Եվրախորհրդի ծրագրերին, սպորտի եվրոպական խարտիայի պահանջներից բխող հիմնահարցերին, խնդիրներին ծանոթացնելու նպատակով հանրապետական, մարզային, համայնքային սեմինար-խորհրդակցությունների անցկացում, բնակչության, մասնավորապես՝ ուսումնական հաստատություններում ֆիզիկական դաստիարակության անընդհատությանը, հայրենիքի պաշտպանությանը պատրաստ երիտասարդության դաստիարակությանը նպաստող միջոցառումների անցկացում:

ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության համակարգում գործող 25 մանկապատանեկան մարզադպրոցների, ինչպես նաև պետական աջակցություն ստացող Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտեի, «Հայաստան», «Սևան», «Դինամո» հասարակական կազմակերպությունների 23 մանկապատանեկան մարզադպրոցների հիմնական խնդիրներն են մատաղ սերնդի առողջության պահպանումն ու ամրապնդումը, ընտրված մարզաձևերում մարզական հերթափոխի պատրաստումը, պարապոլների մարզական ունակությունների կատարելագործումը, Հայաստանի Հանրապետության հավաքական թիմերի համալրումը, միջազգային ասպարեզում վերջիններիս արդյունավետ մրցունակության ապահովումը: Նշված խնդիրները, ինչպես նաև կրտսեր մասնագետների պատրաստման հարցերը կոչված են լուծելու օլիմպիական հերթափոխի պետական մարզական 2 քոլեջները:

Կառավարության քաղաքականության առաջնահերթ ուղղությունն են համարվում մարզական հերթափոխի պատրաստման համակարգի պահպանումն ու զարգացումը, մատուցվող ծառայությունների բարելավումը, դրանց որակի և արդյունավետության բարձրացումը, ինչն իր հերթին կնպաստի երեխաների և պատանիների շրջանում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասսայականացման զարգացմանը:

Բարձրագույն սպորտի մեծ նվաճումների բնագավառում 2013 թվականին ՀՀ կառավարության իրականացրած քաղաքականությունն ուղղված է՝

- սպորտի բարձրագույն նվաճումների քաղաքականության ապահովմանը,
- սպորտի զարգացման նպատակային ծրագրերի մշակմանն ու իրագործմանը,
- մարզիչ-մանկավարժների վերապատրաստման աշխատանքների կազմակերպմանը,

• օլիմպիական շարժման զարգացմանը, Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտեի և մարզական ֆեդերացիաների գործունեությանն աջակցմանը,

• մարզաձևերի զարգացման համար անհրաժեշտ նյութատեխնիկական բազայի ամրապնդմանն ու զարգացմանը,

• միջազգային, այդ թվում՝ սփյուռքի հետ կապերի ամրապնդմանը,

• մարզաձևերի հավաքական թիմերի գիտամեթոդական աշխատանքների ապահովմանը,

• միջպետական մարզական հարաբերությունների զարգացմանը:

2013 թվականին մարզական միջոցառումների անցկացման համար պետական բյուջեից հատկացվել է 929.7 մլն դրամ: Անցկացվել են Հայաստանի Հանրապետության 92 առաջնություններ, որոնց մասնակցել են 9640 մարզիկներ: Աշխարհի և Եվրոպայի առաջնություններին, գավաթի խաղարկություններին և միջազգային մրցումներին նախապատրաստվելու նպատակով մարզաձևերի Հայաստանի Հանրապետության հավաքականներում ընդգրկված 2900 մարզիկների համար կազմակերպվել են 122 ուսումնամարզական հավաքներ: Տարբեր մարզաձևերից Հայաստանի Հանրապետության հավաքական թիմերի 1900 մարզիկներ մասնակցել են աշխարհի և Եվրոպայի 156 առաջնությունների և միջազգային մրցաշարերի, այդ թվում՝ ֆրանկոֆոնյան խաղերին՝ նվաճելով 143 մեդալ, որից 31-ը ոսկե, 45-ը՝ արծաթե, 67-ը՝ բրոնզե:

2013 թվականի Եվրոպայի երիտասարդական ձմեռային և ամառային փառատոններին տարբեր մարզաձևերից Հայաստանի Հանրապետության երիտասարդական հավաքական թիմերից մասնակցել է 41 մարզիկ:

2013 թվականի հոկտեմբերին Երևանում կայացած աթլետիկայի Բալկանյան երկրների ֆեդերացիաների ասոցիացիայի տարեկերջյան գալա մրցանակաբաշխությանը մասնակցել է 13 երկիր՝ 48 ներկայացուցչով:

Զանգվածային և մանկապատանեկան սպորտի բնագավառում կառավարության իրականացրած քաղաքականությունն ուղղված է՝

• տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների մարզական ոլորտի աշխատանքների ակտիվացմանը,

• մարզական ակտիվի ներուժի օգտագործմանը, մարզական միջոցառումներում գյուղական երիտասարդության ներգրավմանը,

• հասարակության լիարժեք անդամներ հաշմանդամ-մարզիկների համար սպորտով զբաղվելու համապատասխան պայմանների ստեղծմանը:

Երիտասարդական ոլորտում ՀՀ կառավարության կողմից տարվող պետական քաղաքականությունը ենթադրում է զարգացնել մարզերում իրականացվող երիտասարդական

պետական քաղաքականությունը, բարձրացնել հասարակական, քաղաքական զարգացումներին նրանց մասնակցության աստիճանը, նպաստել երիտասարդության գործունեությունն ապահովող իրավական դաշտի զարգացմանը, երիտասարդության շրջանում հոգևոր-մշակութային և գիտական մակարդակի բարձրացմանը, ազատ ժամանցի ակտիվ և նպատակային կազմակերպմանը, ուսումնասիրել առկա սոցիալ-տնտեսական հիմնախնդիրները և բարելավել երիտասարդների կենսապայմանները, հայտնաբերել և խրախուսել տաղանդավոր երիտասարդներին, նպաստել երիտասարդության շրջանում հայրենասիրական դաստիարակության, քաղաքացիական գիտակցության բարձրացմանը, ակտիվացնել, զարգացնել համագործակցությունը միջազգային երիտասարդական կառույցների հետ, ստեղծել պայմաններ երիտասարդությանն անհրաժեշտ տեղեկատվությամբ ապահովելու համար, ստեղծել պայմաններ նրանց լիակատար ինքնադրսևորման համար:

Պետական երիտասարդական քաղաքականության ոլորտի 2013 թվականի ռազմավարական ուղղվածությունը հանգում է հետևյալ նպատակների իրականացմանը՝

- զարգացնել մարզերում իրականացվող երիտասարդական պետական քաղաքականությունը (մարզային երիտասարդական կենտրոնների գործունեության ապահովում և համայնքային երիտասարդական կենտրոնների ստեղծում, գյուղական և սահմանամերձ շրջանների երիտասարդության զարգացմանն ուղղված միջոցառումների իրականացում),

- բարձրացնել հասարակական-քաղաքական զարգացումներին նրանց մասնակցության աստիճանը,

- նպաստել երիտասարդության գործունեությունն ապահովող իրավական դաշտի զարգացմանը, երիտասարդության շրջանում հոգևոր-մշակութային և գիտական մակարդակի բարձրացմանը, ազատ ժամանցի ակտիվ և նպատակային կազմակերպմանը,

- ուսումնասիրել առկա սոցիալ-տնտեսական հիմնախնդիրները և բարելավել երիտասարդների կենսապայմանները,

- հայտնաբերել և խրախուսել տաղանդավոր երիտասարդներին,

- նպաստել երիտասարդության շրջանում հայրենասիրական դաստիարակության, քաղաքացիական գիտակցության բարձրացմանը,

- ակտիվացնել և զարգացնել համագործակցությունը միջազգային երիտասարդական կառույցների հետ,

- ստեղծել պայմաններ երիտասարդությանն անհրաժեշտ տեղեկատվությամբ ապահովելու համար,

- ստեղծել պայմաններ նրանց լիակատար ինքնադրսևորման համար:

Էներգետիկա և բնական պաշարներ

ՀՀ Էներգետիկայի և բնական պաշարների ոլորտներում ՀՀ կառավարության 2013 թվականի գերակա խնդիրների իրականացման արդյունքները բերված են ստորև:

ՀՀ-ում նոր միջուկային էներգաբլոկի կառուցման ֆինանսավորումն ապահովելուն ուղղված աշխատանքների իրականացում: Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետությանը ՀՀ կառավարության երաշխիքով վարկային միջոցների տրամադրման սահմանափակումները՝ Հայաստանի Հանրապետությունը ՀՀ-ում նոր միջուկային էներգաբլոկի կառուցման ծրագրի ֆինանսավորման համար ՀՀ մասնաբաժնի չափով շարունակում է բանակցությունները միջազգային ներդրող կազմակերպությունների հետ:

Իրան-Հայաստան 400 կՎ լարման էլեկտրահաղորդման օդային գծի կառուցում: Ծրագրի մեկնարկ է ընդունվել 12.08.2012թ.-ը: 2013 թվականի ընթացքում «Բնապահպանական փորձաքննություն» ՊՈԱԿ-ի կողմից էլեկտրահաղորդման գծի նախագծի վերաբերյալ տրվել է բնապահպանական փորձաքննական դրական եզրակացություն, պայմանով, որ ամբողջովին պետք է փոխհատուցվի օդային գծի կառուցման ժամանակ ՀՀ պետական անտառային տնտեսությանը պատճառված վնասը: Օբյեկտի շինարարության ազդեցությունը շրջակա միջավայրի վրա մեղմացնելու նպատակով «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ն պետք է անտառապատում իրականացնի այդ նպատակով հատկացված տարածքներում: 2013 թվականին «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ն համապատասխան մարզպետարանների և համայնքների հետ աշխատանքներ է իրականացրել հողերի կատեգորիաները փոխելու և դրանց մի մասը սեփականության իրավունքով ձեռք բերելու ուղղությամբ: Իրականացվել են շուրջ 45 կմ մուտքային ճանապարհների կառուցման, 60 000 մ³ հողային, 60 հենարանների նախահիմքերի փորման և 241 տոննա հենարանների նախահիմքերի ցցաձողերի ներկրման աշխատանքներ: Իրանի Արտահանման Զարգացման Բանկը տևական ժամանակ կասեցրել է ծրագրի ֆինանսավորումը, որի հետևանքով աշխատանքները հետ են ընկել սահմանված ժամանակացույցից: ՀՀ կառավարությունը ՀՀ կենտրոնական բանկի հետ համատեղ քայլեր է ձեռնարկում հարցը կարգավորելու ուղղությամբ:

Վրաստան-Հայաստան տարանցիկ էներգափոխանակման վերաբերյալ համաձայնագրի կնքում: 2013 թվականի մայիսի 24-ին ֆինանսական համաձայնագիր է ստորագրվել Գերմանիայի վերակառուցման և զարգացման բանկի (KfW) և ՀՀ ֆինանսների և ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարությունների միջև՝ Հայաստան-Վրաստան 400 կՎ էլեկտրահաղորդման գծի կառուցման ծրագրի շրջանակներում դրամաշնորհի հաշվին խորհրդատվական-փորձագիտական ծառայությունների ֆինանսավորման համար:

ՀՀ գազաքիմիական ճյուղի վերակառուցման ծրագրի իրականացման միջոցառումների համակարգում: Ծրագրի միջոցառումների իրականացման մոնիթորինգի, ծրագրի ընթացիկ և նպատակային ցուցանիշների համադրման և ծրագրի արդյունավետության գնահատման ուղղությամբ 2013 թվականին ուսումնասիրվել է «Նաիրիտ Գործարան» ՓԲԸ-ում իրականացված «Ջակոբս» (Jacobs) ընկերության կողմից մշակված ՏՏՀ փաստաթուղթը: ՀՀ կառավարության 2013թ. հուլիսի 25-ի N 802-Ն որոշմամբ փոփոխություններ են կատարվել ՀՀ կառավարության 2011թ. սեպտեմբերի 8-ի «Հայաստանի Հանրապետության գազաքիմիական ճյուղի վերակառուցման ծրագիրը հաստատելու մասին» N 1372-Ն որոշման մեջ, որով երկարաձգվել է ՀՀ գազաքիմիական ճյուղի վերակառուցման ծրագրի իրականացման միջոցառումների կատարումը, և 2013 թվականի դեկտեմբերին կնքվել է համաձայնագիր Ռոսնեֆտ ընկերության հետ Նաիրիտ գործարանի բազայի վրա նոր տիպի կաուչուկ արտադրելու համար:

Ջրային տնտեսություն

Ջրային տնտեսության ոլորտում ՀՀ կառավարության 2013 թվականի գործունեության հիմքում ընկած էին ՀՀ ջրային օրենսգրքի, ջրի ազգային ծրագրի և ջրի ազգային քաղաքականության հիմնադրույթները, ինչպես նաև ՀՀ կառավարության ջրային ոլորտի բարեփոխումներին նվիրված որոշումները, գերակա խնդիրներն ու միջոցառումները, որոնցով հաստատված են համակարգի հիմնական ծրագրային դրույթները և ուղղությունները:

Հաշվետու ժամանակահատվածում շարունակվել են աշխատանքները՝ համակարգում կառուցվածքային փոփոխությունների, ջրամատակարարման տևողության ավելացման ու ջրի որակի բարելավման, մասնավոր կառավարման պայմանագրերի վերահսկման, մատակարարված ջրի դիմաց վճարների գանձման մակարդակի բարձրացման, համակարգում կորուստների նվազեցման և ընկերությունների գործունեության արդյունավետության բարձրացման, ջրաչափական սարքերի տեղադրման և փոխարինման, բյուջետային, վարկային և դրամաշնորհային միջոցների արդյունավետ օգտագործման և նոր վարկային ու դրամաշնորհային միջոցների ներգրավման, Մարմարիկի ջրամբարի և Գավառ, Մարտունի, Վարդենիս քաղաքներում կոյուղու մաքրման կայանների շահագործման հանձնման, ինչպես նաև այլ ուղղություններով:

Ջրային տնտեսության ոլորտում 2013 թվականի ընթացքում կատարվել են հետևյալ հիմնական աշխատանքները:

Կնքված պայմանագրերի շրջանակներում ապահովվել է «Հայջրմուղկոյուղի», «Լոռի-ջրմուղկոյուղի», «Շիրակ-ջրմուղկոյուղի» և «Նոր Ակունք» փակ բաժնետիրական ընկերությունների արդյունավետ տնտեսական բնականոն գործունեությունը: ՀՀ կառավարության 14.07.2011թ. N 972-Ա

որոշմամբ Ֆրանսիական Սաուր կազմակերպության հետ կնքվել է «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի գործադիր մարմնի լիազորությունները մասնավոր կառավարչին հանձնելու կառավարման պայմանագրի գործողության ժամկետը մինչև 2013 թվականի դեկտեմբերի 31-ը երկարաձգելու պայմանագիր: ՀՀ կառավարության 2012 թվականի հուլիսի 19-ի N912-Ա որոշման համաձայն ստորագրվել է «Լոռի-ջրմուղկոյուղի», «Շիրակ-ջրմուղկոյուղի», «Նոր Ակունք» ՓԲԸ-ներում մասնավոր կառավարչի՝ «Էմ Վի Վի դեկոն», «Ջի Էմ Բի Էյ Էմ Վի Վի Էներջի Էյ Ջի» և «Էյ-Ի-Ջի-Սերվիս» ընկերությունների կոնսորցիումի կառավարման պայմանագիր լրացում N2-ը, որով կառավարման պայմանագրի գործողության ժամկետը երկարաձգվել է մինչև 2013 թվականի դեկտեմբերի 31-ը: Նշված ընկերությունների մասով ապահովվել է նաև Համաշխարհային բանկի, Ասիական Զարգացման բանկի, Վերակառուցման և Զարգացման Եվրոպական բանկի, KfW բանկի վարկային և դրամաշնորհային ներդրումային ծրագրերի համապատասխան չափաբաժիններով իրականացումը: ՀՀ կառավարության 05.12.2013թ. «Հայջրմուղկոյուղի», «Լոռի-ջրմուղկոյուղի», «Շիրակ-ջրմուղկոյուղի» և «Նոր Ակունք» փակ բաժնետիրական ընկերությունների մասնավոր կառավարման շարունակությունն ապահովելու մասին» N 1366-Ա որոշման հիման վրա «Հայջրմուղկոյուղի», «Լոռի-ջրմուղկոյուղի», «Շիրակ-ջրմուղկոյուղի» և «Նոր Ակունք» փակ բաժնետիրական ընկերությունների մասնավոր կառավարման շարունակականության ապահովման նպատակով կնքվել են համապատասխան պայմանագրեր:

Ոռոգում ջրառ իրականացնող «Սևան-Հրազդանյան-ջրառ» և «Ախուրյան-Արաքս-ջրառ» (ավարտվել է «Դեբետ-Աղստև-ջրառ» ՓԲԸ-ի միացման ձևով վերակազմակերպման գործընթացը) ՓԲԸ-ների, ինչպես նաև ոռոգման ջուր մատակարարող 42 ջրօգտագործողների ընկերությունների գործունեությունների արդյունքներով ապահովվել է կայուն ջրամատակարարում և ընկերություններն ունեցել են ֆինանսական կայուն վիճակ:

Աբու Դաբի հիմնադրամի և ՀՀ կառավարության համաֆինանսավորման շրջանակներում իրականացվել են Արփա-Սևան թունելի անհապաղ վերականգնողական աշխատանքներ: Արդյունքում հնարավորություն է ստեղծվել լուծել թունելի առավել վտանգավոր հատվածների անվտանգ շահագործման հարցը:

Համակարգի կազմակերպությունների հիմնական գործունեության վերլուծությունը ցույց է տալիս, որ իրագործվում են հաստատված ծրագրերը՝ տալով զգալի դրական տեղաշարժեր: 2013 թվականին համակարգի գանձումը կազմել է շուրջ 21.16 մլրդ դրամ՝ 2012 թվականի 20.33 մլրդ դրամի փոխարեն կամ ավել է գանձվել շուրջ 837 մլն դրամ: Խմելու ջրի մասով գանձվել է շուրջ 16.72 մլրդ դրամ՝ 2012 թվականի 16.3 մլրդ դրամի դիմաց կամ ավել է գանձվել շուրջ 420 մլն դրամ, իսկ ոռոգման ոլորտում գանձվել է 4.44 մլրդ դրամ՝ 2012 թվականի 4.03 մլրդ դրամի դիմաց կամ ավել է

գանձվել շուրջ 410 մլն դրամ: Խմելու ջրի ոլորտում գանձման տոկոսը 2013 թվականին կազմել է 98.07%, իսկ ոռոգման ոլորտում՝ 85.7%:

2013 թվականի ընթացքում ջրային տնտեսության համակարգի կազմակերպությունների կողմից ՀՀ պետական բյուջե են փոխանցվել շուրջ 7.27 մլրդ դրամի հարկեր, տուրքեր և պարտադիր վճարներ (նշված գումարի մեջ ներառված է նաև ՀՀ կառավարության որոշմամբ գույքի առանձնացման ժամանակ հաշվարկված և վճարված ԱԱՀ-ի գումարը), որը 2012 թվականի համեմատությամբ ավել է 135 մլն դրամի չափով: Եթե խմելու ջրի ոլորտի բոլոր կազմակերպությունները նախկինում սուբսիդավորվում էին, ապա ներկայումս միայն «Երևան Զուր» ՓԲԸ-ի մասով նշենք, որ այն ոչ միայն չի սուբսիդավորվում, այլև ՀՀ պետական բյուջե է վճարել շուրջ 2.73 մլրդ դրամի հարկեր, տուրքեր և վճարներ:

2013 թվականի ընթացքում «Երևան Զուր», «Հայջրմուկոյուղի», «Լոռի-ջրմուկոյուղի», «Շիրակ-ջրմուկոյուղի» և «Նոր Ակունք» ՓԲԸ-ների սպասարկման տարածքներում տեղի են ունեցել ջրամատակարարման տևողության ավելացումներ՝ ապահովելով ՀՀ կառավարության գերակա խնդիրներով դրված պահանջը:

2013 թվականին Սևանա լճից օրենքով սահմանված կարգով բաց է թողնվել լրացուցիչ 169.95 մլն մ³ ջուր: Սևանա լիճ է տեղափոխվել 134.58 մլն մ³ ջրաքանակ, որը 2012 թվականի համեմատ ավել է 56.46 մլն մ³-ով: Սևանա լճի մակարդակը 2012 թվականի համեմատ ավել է 5 սմ-ով՝ կազմելով 1900.16 մ:

2013 թվականի ընթացքում կառուցվել, վերականգնվել և վերանորոգվել են շուրջ 664.8 կմ խողովակաշարեր, ջրանցքներ և ջրատարներ, այդ թվում՝ խմելու և կոյուղու ջրագծեր՝ 613 կմ, ոռոգման ջրանցքներ և ջրատարներ՝ 51.8 կմ:

Շահագործվել են Մարմարիկի ջրամբարը, ինչպես նաև Գավառ, Մարտունի և Վարդենիս քաղաքների կոյուղու մաքրման կայանները: Վերակառուցման և զարգացման եվրոպական և Եվրոպական ներդրումային բանկերի «Հայաստանի փոքր համայնքների ջրային ծրագրի» շրջանակներում նախատեսվում է իրականացնել ջրահեռացման բարելավման աշխատանքներ, այդ թվում՝ Զերմուկ և Դիլիջան քաղաքներում կեղտաջրերի մաքրման կայանների կառուցում:

Ջրամբարաշինության և ենթակառուցվածքների արդիականացման ծրագրերի նախապատրաստման ուղղությամբ, այդ թվում՝ առաջնահերթ 4 ջրամբարաշինական ծրագրերի մասով (Կապս, Վեդի, Մաստարա, Եղվարդ) իրականացվել են վերականգնման և վերանորոգման աշխատանքներ:

Ապահովվել է Հայաստանի Հանրապետությունում 2013 թվականի մայիսի 12-19-ը Ջրի Եվրոպական Երիտասարդական 11-րդ պառլամենտի անցկացման և կազմակերպման իրականացումը:

KfW բանկի, Եվրամիության և Եվրոպական ներդրումային բանկի հետ նախատեսվել է իրականացնել լայնամասշտաբ ծրագրեր՝ շուրջ 73.0 մլն Եվրոյի չափով, որից 18.0 մլն Եվրոն նախատեսվել է հատկացնել դրամաշնորհի տեսքով: Ոռոգման ոլորտում Համաշխարհային բանկի հետ նախատեսվում է իրականացնել էլեկտրաէներգիայի ծախսի նվազեցման միջոցով մատակարարվող ոռոգման ջրի ինքնարժեքի նվազեցմանն ուղղված համապատասխան ծրագրեր: Եվրասիական բանկի հետ նախատեսվել է սկսել նոր ծրագիր՝ ներտնտեսային ցանցերը կարգի բերելու ուղղությամբ:

Իրականացման փուլում է ջրային տնտեսության ոլորտի հետագա զարգացման և կառավարման բարեփոխումների ծրագրի մշակումը: Ընթացքի մեջ են նաև չհաշվառվող ջրի նվազեցման, կեղտաջրերի կառավարման, ինչպես նաև սակագնային և սուբսիդավորման ռազմավարությունների մշակման աշխատանքները:

Պայմանագրի կնքման գործընթացում են ջրամատակարար կազմակերպությունների սպասարկման դաշտից դուրս գտնվող բնակավայրերում ջրամատակարարման կառավարման բարելավման ուղղված ուսումնասիրությունների իրականացման աշխատանքները:

Ջրային տնտեսության ոլորտում վերը նշված աշխատանքների իրականացման արդյունքում խմելու և ոռոգման ջրերի մատակարարման, ինչպես նաև ջրահեռացման ոլորտներում 2013 թվականի ընթացքում ապահովվել է համակարգերի հուսալի և անվտանգ շահագործումը, բարելավվել է խմելու և ոռոգման ջրամատակարարումը, իրականացվել է համակարգի անվտանգ շահագործումը, կրճատվել են կորուստները, ապահովվել է էներգախնայողությունը, բարելավվել է ծառայությունների մատուցման որակը, ապահովվել է ջրամատակարարման տևողության ավելացումը:

Տրանսպորտ և կապ

2013 թվականի հունվարի 18-ին ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության, «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ի և «ՌԱՍԻԱ ՖԶԷ»-ի միջև կնքված՝ Հարավային երկաթուղու կառուցման ծրագրի շրջանակներում «ՌԱՍԻԱ ՖԶԷ»-ի կողմից արդեն ներկայացվել է երկաթգծի շինարարության ծրագիրը և տնտեսական հիմնավորումը: Ներկայացված տարբերակով ծրագրի ինքնածախսաձածկումը կտևի մոտ 24 տարի՝ 3.5 միլիարդ դոլար արժողությամբ, իսկ երկաթգծի շինարարությունը կտևի մոտ 6 տարի: Երկաթգծի երկարությունը կազմելու է 305 կմ,

պետք է ունենա 19.6 կմ ընդհանուր երկարությամբ 86 կամուրջ և 102.3 կմ ընդհանուր երկարությամբ 60 թունել:

Աշխատանքներ են տարվել Հայաստանի Հանրապետության Տիեզերական գործակալության և սեփական արբանյակի ստեղծման նախագծի իրականացման ուղղությամբ: Նախապատրաստվել են Հեռահաղորդակցության միջազգային միությունում ՀՀ-ին հատկացված ուղեծրային դիրքի գրանցման համար անհրաժեշտ փաստաթղթերը: Ներկայացվել է համապատասխան հայտ:

«Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի կողմից Հյուսիսային միջանցքի արդիականացման ծրագրի շրջանակներում մեկնարկել են Հայաստանի և Վրաստանի միջև գտնվող Բագրատաշենի սահմանային հսկողության անցակետի տարածքում նոր կամրջի կառուցման բաղադրիչի իրականացման աշխատանքները:

Հաստատվել է «Հայավտոկայարան» փակ բաժնետիրական ընկերության գործունեության բարելավման, ավտոկայարանային համակարգի արդիականացման և կառավարման ծառայությունների ձեռքբերման գործընթացի և գործառույթային (ֆունկցիոնալ) նախնական բնութագիրը:

Պեպական եկամուտների քաղաքականություն

2013 թվականին մշակվել և ՀՀ կառավարության կողմից հաստատվել են հարկային և մաքսային օրենսդրության վերանայման ռազմավարական սկզբունքների ուղեցույցը և ռազմավարական սկզբունքներից բխող միջոցառումների իրականացման ժամանակացույցը, «Գույքահարկի հարկման համակարգի արդյունավետության բարձրացման ուղիները» հայեցակարգը:

«Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 36.4-րդ հոդվածով սահմանված՝ երաշխիքային ֆոնդի կողմից ստացվող եկամուտների որոշ տեսակներից շահութահարկից ազատման արտոնությունը 2013 թվականի հաշվետու ժամանակաշրջանում ստացված եկամուտների մասով ևս կիրառելի դարձնելու նպատակով մշակվել և ընդունվել է «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքը:

Գործատուների կողմից հարկային մարմին ներկայացվող գրանցման հայտում և (կամ) եկամտային հարկի ամփոփ հաշվարկում ներառվելիք՝ անձին վերաբերող տեղեկատվությունը օրենսդրությամբ որպես սահմանափակ օգտագործման ենթակա տեղեկատվություն սահմանված լինելու դեպքում, նշյալ անձանց համար գրանցման հայտեր և եկամտային հարկի ամսական ամփոփ

հաշվարկներ ներկայացնելու, ինչպես նաև մինչև 2013 թվականի հունվարի 1-ը պարտադիր սոցիալական ապահովության վճարներ հաշվարկելու և վճարելու պարտավորությունից ազատված գործատուների համար 2013 թվականի հունվարի 1-ից հետո աշխատավարձերի վերահաշվարկման պահանջի մասով բացառություն սահմանելու նպատակով մշակվել և ընդունվել է «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքը:

Ոչ ռեզիդենտ կազմակերպությունների կողմից ՀՀ պետական արտարժույթային պարտատոմսերում կատարվող ներդրումները խթանելու նպատակով մշակվել և ընդունվել է «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքը:

«Դիվիզանի միջազգային դպրոց» ծրագրի իրագործմանը նպաստելու նպատակով մշակվել և ընդունվել են «Դիվիզանի միջազգային դպրոց ծրագրի շրջանակներում հարկային և մաքսային արտոնություններ տրամադրելու մասին» ՀՀ օրենքը և դրա կիրարկումն ապահովող ենթաօրենսդրական ակտերը:

2014 թվականի հունվարի 1-ից ծխախոտի արտադրանքի հարկումը հարկման հաստատագրված վճարների համակարգից հարկման ընդհանուր համակարգ տեղափոխելու կապակցությամբ ընդունվել է «Հայաստանի Հանրապետությունում ծխախոտի արտադրանքի առավելագույն մանրածախ գնի մակնշման կարգը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի ապրիլի 28-ի թիվ 540-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշումը:

2014 թվականի հունվարի 1-ից «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովելու նպատակով ընդունվել է «Աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարումների ցանկը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշումը:

2013 թվականին նախաստորագրվել է «Հայաստանի Հանրապետության կառավարության և Գերմանիայի Դաշնային Հանրապետության կառավարության միջև եկամուտների կրկնակի հարկումը բացառելու և հարկումից խուսափելը կանխելու մասին» համաձայնագիրը, կայացել են նույն համաձայնագրի նախագծի շուրջ Իսրայելի կառավարության հետ՝ բանակցությունների առաջին և Սլովակիայի Հանրապետության կառավարության հետ՝ բանակցությունների 2-րդ փուլը:

Կազմակերպվել են ՀՀ կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 21-ի «Գանգատարկման խորհուրդ ստեղծելու և վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովների որոշումների քննարկման կարգը հաստատելու մասին» թիվ 1361-Ն որոշմամբ ստեղծված գանգատարկման միջգերատեսչական խորհրդի թվով 22 նիստեր, որոնց ընթացքում քննարկվել են ՀՀ ԿԱ ՊԵԿ գանգատարկման հանձնաժողովների կողմից քննարկված, սակայն

մերժված կամ մասնակի բավարարված թվով 83 դիմում-գանգատ և դրանց վերաբերյալ տրվել են համապատասխան եզրակացություններ:

Ներքին աուդիտի ոլորտ

2013 թվականին ներքին աուդիտի ոլորտում շարունակվել են «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովող ենթաօրենսդրական ակտերի մշակման և համակարգի ներդրման աշխատանքները: Մասնավորապես.

- մշակվել և 2013 թվականի օգոստոսի 8-ին հաստատվել է «Կազմակերպությունների ներքին աուդիտի որակի երաշխավորման նպատակով կազմակերպության գործունեության հետ չառնչվող անձանց կողմից կազմակերպության ներքին աուդիտի համակարգի գնահատումների իրականացման, ինչպես նաև ստուգում իրականացնող մարմինների և արտաքին աուդիտի մարմնի հետ ներքին աուդիտի համագործակցության կարգերը հաստատելու մասին» ՀՀ կառավարության թիվ 896-Ն որոշումը,

- մշակվել է «Ներքին աուդիտորի որակավորման կարգը և հանրային հատվածում ներքին աուդիտ իրականացնելու համար կազմակերպություններին ներկայացվող հիմնական պահանջները հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որը ՀՀ կառավարության կողմից հաստատվել է 2014 թվականին:

- «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի համաձայն ՀՀ ֆինանսների նախարարության կողմից կազմակերպվել են շարունակական մասնագիտական վերապատրաստման դասընթացներ՝ գործող որակավորված ներքին աուդիտորների համար, և ներքին աուդիտորների որակավորման բարձրացման դասընթացներ՝ հանրային հատվածի սկսնակ ներքին աուդիտորների համար: 2013 թվականի ընթացքում կազմակերպվել են ՀՀ ֆինանսների նախարարի կողմից սահմանված թեմաներով շարունակական մասնագիտական վերապատրաստման թվով 15 դասընթացներ (30 ժամ տևողությամբ յուրաքանչյուր որակավորված ներքին աուդիտորի համար), որոնց ընթացքում վերապատրաստում են անցել թվով 192 որակավորված ներքին աուդիտորներ: Իսկ հանրային հատվածի սկսնակ ներքին աուդիտորների համար 2013 թվականի ընթացքում կազմակերպվել են ներքին աուդիտորների որակավորման բարձրացման թվով 15 դասընթացներ, որոնց ընթացքում վերապատրաստում են անցել թվով 175 ներքին աուդիտորներ:

Պեպական գնումների ոլորտ

Առաջին անգամ մշակվել և հրապարակվել են «Գնումների գործընթացում օգտագործվող փաստաթղթերի օրինակելի ձևերը», ինչը բավական հեշտացնում է պետական պատվիրատուների գործողությունները գնման ընթացակարգերի կազմակերպման հարցում և փոքրացնում հավանականությունը տեխնիկական սխալներ գործելու առումով:

Հստակեցվել են գնումների մասնակից կազմակերպություններին ներկայացվող ֆինանսական որակավորման պահանջները: 2013 թվականին խոշոր կազմակերպություններին պետական գնումներին մասնակցելու հնարավորություն է ընձեռվել միայն այն դեպքում, եթե վերջիններս ունեն արտաքին աուդիտորի կողմից իրենց ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ չձևափոխված կարծիք արտահայտող եզրակացություն: Այսպես, 940 խոշոր ընկերությունից միայն 510-ը, որոնք իրենց ֆինանսական հաշվետվություններում ամբողջությամբ բացահայտել են անհրաժեշտ տեղեկատվությունը, իրավունք ունեցան մասնակցելու պետական գնումներին: Այսինքն, պետությունը խրախուսում է ամբողջությամբ թափանցիկ աշխատանք որդեգրած խոշոր կազմակերպությունների մասնակցությունը պետական գնումներին:

Մշակվել և ներդրվել է Գնումների Միասնական Անվանացանկը (CPV), կամ այլ կերպ ասած գնումների անվանացանկի կողավորման մեխանիզմը: Նախկինում պետության կողմից կատարվող գնումների մասով ըստ գնման առարկաների հաշվառում և վիճակագրություն իրականացնելը բավական բարդ և գրեթե անիրականանալի աշխատանք էր այն պարզ պատճառով, որ միևնույն գնման առարկան տարբեր պատվիրատուներ կարող էին բնութագրել կամ անվանել տարբեր կերպ: Եվ նման դեպքերում հարկավոր էր իմանալ տվյալ գնման առարկայի բոլոր հնարավոր բնութագրումները, որպեսզի հնարավոր լիներ առանձնացնել պետական համակարգում այդ գնման առարկայի վերաբերյալ տեղեկատվությունը: Նոր ներդրված համակարգով այս խնդիրն ամբողջությամբ լուծվում է, քանի որ այն միասնական է բոլոր պատվիրատուների համար, ինչպես նաև պարունակում է համապատասխան կողավորում:

ՀՀ կառավարության որոշմամբ հաստատվել են հիմնական սպառման շուրջ 350 անուն ապրանքների տեխնիկական բնութագրերն ու առավելագույն գները, որով արգելվում է ՀՀ պետական կառավարման մարմիններին ձեռք բերել նշված տեխնիկական բնութագրերի պարամետրերից տարբերվող կամ առավելագույն գները գերազանցող ապրանքներ: Նախկինում պետական մարմինները միևնույն գնման առարկան՝ օրինակ թուղթը, կարող էին պլանավորել ցանկացած տեսակի և որակի, ուստի նաև ցանկացած գնով, ինչը տվյալ համակարգի ներդրմամբ բացառվեց:

2013 թվականին պետական կառավարման մարմինների կողմից իրականացվող գնումների բոլոր պայմանագրերը հասանելի են ինտերնետում ցանկացած հետաքրքրված անձի համար, ինչի արդյունքում բարձրանում է գնումների գործընթացի թափանցիկությունը:

Կազմվել և հրապարակվել է պայմանագրային պարտավորությունները ոչ պատշաճ կարգով կատարած կամ չկատարած կազմակերպությունների ցանկը (սև ցուցակ), որոնք այսուհետ իրավունք չունեն մասնակցել ՀՀ պետական մարմինների ու այլ պատվիրատուների կողմից կազմակերպված գնման գործընթացներին:

ՀՀ կառավարության 05.12.2013թ. թիվ 1370-Ն որոշմամբ հաստատվել է էլեկտրոնային ձևով գնումների կատարման կարգը: Նշված որոշման համաձայն՝ 2014 թվականի հունվարի 1-ից ՀՀ հանրապետական գործադիր մարմինների, տարածքային կառավարման մարմինների և պետության հիմնարկների կողմից շրջանակային համաձայնագրերի միջոցով գնումները նույնպես իրականացվում են էլեկտրոնային ձևով:

Ավտոմատացվել է պետական կառավարման մարմինների կողմից գնումների իրականացման ընթացքում կնքված պայմանագրերի գրանցման գործընթացը՝ ստեղծվել է գնումների պայմանագրերի էլեկտրոնային շտեմարան: Մշակվել և հաստատվել են ռիսկերի գնահատման և հրապարակված տեղեկությունների մոնիթորինգի իրականացման կարգերը: Ըստ այդմ, այսուհետ ընտրանքային կարգով ուսումնասիրության են ենթարկվում պետական մարմինների գնումների հայտարարությունները և տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև արդեն իսկ կնքված պայմանագրերը, որոնք պետական մարմինները ներկայացնում են գրանցման գանձապետարան:

Հուլիս-դեկտեմբեր ամիսներին փորձաքննվել են 517 հրավեր հայտարարություններ, որոնցից 240-ում կամ 46%-ում հայտնաբերվել են անհամապատասխանություններ, և դրանց գծով մրցույթները կասեցվել են՝ մինչև անհամապատասխանությունների շտկումը:

Մոնիթորինգի ընթացքում 2013 թվականի հունիս-դեկտեմբեր ամիսներին ուսումնասիրվել է ՀՀ ֆինանսների նախարարություն գրանցման ներկայացված 3607 պայմանագիր, որոնցից 799-ի կամ 22%-ի գրանցումը մերժվել է այնտեղ գտնված թերությունների պատճառով: Պարբերաբար կատարվում են ուսումնասիրություններ տարվա ընթացքում ՀՀ պետական մարմինների կողմից կատարված գնումների գործարքների նկատմամբ, և վերհանված թերությունները կամ շեղումները ներկայացվում են դրանք թույլ տված մարմնի ղեկավարին, որոնք միջոցներ են ձեռնարկում դրանք շտկելու ուղղությամբ: Նշենք, որ այս 7 ամիսների ընթացքում նկատվել է բարելավում, մասնավորապես՝ եթե հունիսին բացահայտված թերությունների արդյունքում մերժված պայմանագրերի տեսակարար կշիռը դիտարկվածների մեջ կազմում էր 60.9%, ապա դեկտեմբերին այն կազմել է 10.4%:

	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր
Դիտարկվածների քանակ	348	193	281	222	209	462	1892
Մերժվածների քանակ	212	92	107	52	53	86	197
Տեսակարար կշիռը	60.9%	47.7%	38.1%	23.4%	25.3%	18.6%	10.4%

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ 2013 ԹՎԱԿԱՆԻՆ**

2013 թվականի տարեկան տվյալների ամփոփումը ցույց տվեց, որ տնտեսության զարգացման միտումները շարունակվում են, սակայն նախորդ տարվա համեմատ ավելի դանդաղ տեմպերով՝ հիմնականում պայմանավորված շինարարության ոլորտի անկմամբ: Այդուհանդերձ, տնտեսական դրական զարգացումների ամրապնդման հիմք է շարունակում հանդիսանալ արտահանումը, որի աճը տեղի է ունենում արտաքին պահանջարկի դանդաղման պայմաններում, վերջինս հիմնականում ուղեկցվում է արդյունաբերության աճի բարձր տեմպերով: Տնտեսության ներքին կարողությունների օգտագործման արդյունավետության բարձրացման մասին է վկայում արդյունաբերության ոլորտում արտադրողականության աճի բարձր տեմպերի պահպանումը, ինչին դրական նպաստում է շարունակում ունենալ կառավարության կողմից որդեգրված արդյունաբերական արտահանման խթանմանն ուղղված ակտիվ տնտեսական քաղաքականության իրականացումը:

Տարվա ընթացքում արդյունաբերության աճի բարձր տեմպերը պահպանվել են հիմնականում ի հաշիվ մշակող արդյունաբերության արտադրանքի ծավալների էական ավելացման: Շարունակել է աճել նաև արտաքին առևտրաշրջանառությունը՝ հիմնականում արտահանման աճի բարձր տեմպերի պահպանման պայմաններում: 2013 թվականին միջին գնաճը կազմել է 5.8%: Արձանագրվել է պետական բյուջեի եկամուտների անվանական շուրջ 13.2% աճ, իսկ ծախսերի գծով արձանագրվել է 13.6% աճ: Հարկաբյուջետային քաղաքականությունը 2013 թվականի արդյունքներով ամբողջական պահանջարկի վրա թողել է զսպող ազդեցություն:

Համախառն պահանջարկ: 2013 թվականին վերջնական սպառումն իրական արտահայտությամբ աճել է 3.3%-ով: Վերջնական սպառման կառուցվածքում պետական և մասնավոր սպառման տեսակարար կշիռները 2013 թվականին կազմել են համապատասխանաբար 13.8 և 86.2 տոկոս, ընդ որում իրական արտահայտությամբ պետական սպառումը նախորդ տարվա համեմատ աճել է 13.4%-ով, իսկ մասնավորը՝ 1.5%-ով:

Կապիտալ ներդրումները իրական արտահայտությամբ կրճատվել են 5%-ով՝ հիմնականում մասնավոր ներդրումների կրճատման հաշվին, որը համապատասխանում է շինարարության ոլորտի զարգացումներին: Պետական և մասնավոր ներդրումների կրճատումը կազմել է համապատասխանաբար 6.5 և 4.7 տոկոս:

Ներդրումների կրճատումը պայմանավորված էր ծառայությունների, գյուղատնտեսության, փոքր ինչ նաև արդյունաբերության (բացառությամբ հանքագործական արդյունաբերության) և շինարարության ոլորտներում իրականացվող ներդրումների կրճատմամբ: Մասնավորապես,



ծառայությունների ոլորտում ներդրումները¹ նվազել էր շուրջ 6%-ով, գյուղատնտեսության ոլորտում՝ 51%-ով, արդյունաբերության մեջ՝ 11%-ով, իսկ շինարարության ոլորտում՝ 65%-ով:

2013 թվականին ապրանքների և ծառայությունների արտահանման իրական ծավալները դրամային արտահայտությամբ աճել են 16.3%-ով՝ պայմանավորված հիմնականում արդյունաբերության արտահանող ճյուղերում արտադրական կարողությունների առավել արդյունավետ օգտագործմամբ: Մյուս կողմից, ապրանքների և ծառայությունների ներմուծումը իրական արտահայտությամբ աննշան՝ 0.7% աճ է արձանագրել՝ հիմնականում պայմանավորված տնօրինվող իրական եկամուտների աճի տեմպերի դանդաղմամբ:

Այսպիսով՝ համախառն պահանջարկի շուրջ 3.5% աճին հիմնականում նպաստել է արտաքին պահանջարկը, որը գործընկեր երկրներում տնտեսական աճի սպասվածից ավելի ցածր տեմպերի արձանագրման պայմաններում վկայում է արտահանման մրցունակության բարելավման մասին:

Համախառն առաջարկ: 2013 թվականին գրանցվել է ՀՆԱ-ի իրական արտահայտությամբ 3.5% աճ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ: Ընդ որում տնտեսական աճին ամենամեծ՝ 2.3 տոկոսային կետ նպաստումն է ունեցել ծառայությունների ճյուղը, իսկ գյուղատնտեսության և արդյունաբերության ճյուղերը նպաստել են տնտեսական աճին համապատասխանաբար՝ 1.6 և 0.8 տոկոսային կետերով: Շինարարությունը 1.5 տոկոսային կետով բացասական նպաստում է ունեցել տնտեսական աճին:

Գծապատկեր 1. 2012-2013 թվականներին տնտեսության ճյուղերի ավելացված արժեքների նպաստումները ՀՆԱ-ի իրական աճին, տոկոսային կետ:



¹ Ներդրումների ճյուղային կառուցվածքի ցուցանիշները վերաբերում են ներդրումների՝ կապիտալ շինարարությանն ուղղվող մասին:

Արդյունաբերություն²: 2013 թվականին արձանագրվել է արդյունաբերական արտադրանքի ծավալի 6.8% իրական աճ: Վերջինիս հիմնականում նպաստել է մշակող արդյունաբերության 7.7% աճը: Մշակող արդյունաբերության աճը էապես պայմանավորված էր խմիչքների արտադրության 17.9%, հիմնային մետաղների արտադրության՝ 9.2% և ծխախոտի արտադրության 19.6% աճերով: Հատկանշական է, որ կառավարության որդեգրած նոր արդյունաբերական քաղաքականությունը³ տալիս է իր արդյունքները, մասնավորապես՝ դեղագործական արդյունաբերությունը ճգնաժամից հետո սկսել է աճել արագացող տեմպերով: Նախորդ տարվա նկատմամբ 2013 թվականին դեղագործությունը աճել է 29.9 %-ով, ընդ որում՝ իրացման մեջ արտահանման մասնաբաժինը նախորդ տարվա նկատմամբ աճել է 2.2 տոկոսային կետով: Զգալիորեն՝ 15%-ով աճել է նաև ոսկերչական արտադրատեսակների արտադրությունը:

Գյուղատնտեսություն: 2013 թվականին գյուղատնտեսության համախառն թողարկումն աճել է իրական արտահայտությամբ 7.1%-ով, որին հիմնականում՝ 6.1 տոկոսային կետով նպաստել է բուսաբուծության ենթաճյուղի 6.6% աճը: Անասնաբուծության ճյուղը աճել է 7.8%-ով, որը հիմնականում պայմանավորված էր կաթի արտադրության՝ 6.3% և մսի արտադրության 12.7% աճերով: Զվի արտադրությունում արձանագրվել է 6.5% նվազում, իսկ ձկնորսությունն իրական արտահայտությամբ աճել է 1.3 անգամ:

Շինարարություն: Ֆինանսավորման բոլոր աղբյուրների հաշվին իրականացված շինարարության ծավալները 2013 թվականին կազմել են 442.3 մլրդ. դրամ՝ իրական արտահայտությամբ նվազելով 8.1%-ով: Շինարարության ծավալների անկմանը հիմնականում նպաստել է կազմակերպությունների միջոցների հաշվին իրականացված շինարարության 21.4%-ով կրճատումը: Բնակչության միջոցների հաշվին իրականացված շինարարությունը միակն է, որը դրական՝ 31.9% աճի ցուցանիշ է արձանագրել⁴:

Ըստ տնտեսության ճյուղերի աճել են հիմնականում անշարժ գույքի հետ կապված գործունեությանը և հանքագործական արդյունաբերությանն ուղղվող շինարարությունների մասնաբաժինները (տե՛ս Գծապատկեր 2):


Նվազել են հիմնականում տրանսպորտին, էլեկտրականության, գազի, լավորակ օդի մատակարարմանը և ջրամատակարարմանը ուղղվող շինարարությունների մասնաբաժինները:

² Այսուհետ ներկայացված են ճյուղերի համախառն թողարկումների ցուցանիշները:

³ Կոնյակագործության, գինեգործության, ոսկերչության, դեղագործության զարգացման և այլ ծրագրեր:

⁴ Մարդասիրական օգնությամբ իրականացվող շինարարության աճ ևս արձանագրվել է, սակայն վերջինիս կշիռը ընդհանուր շինարարության մեջ նշանակալի չէ:

Գծապատկեր 2. 2012-2013թթ. շինարարության ծավալներն ըստ տնտեսության ճյուղերի



Ծառայություններ և առևտուր: 2013 թվականին մատուցված ծառայությունների ծավալը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ իրական արտահայտությամբ աճել է 3.6%-ով, որին հիմնականում նպաստել են ֆինանսական և ապահովագրական գործունեության (2.2 տոկոսային կետ), տեղեկատվության և կապի (2.2 տոկոսային կետ), կացության և հանրային սննդի կազմակերպման (1.0 տոկոսային կետ) ենթաճյուղերի համապատասխանաբար 9.5%, 10.2% և 16.6% աճը: Բացասական է նպաստել հիմնականում տրանսպորտի ենթաճյուղը (3.0 տոկոսային կետ), որը պայմանավորված էր օդային տրանսպորտի 78.8% նվազմամբ:

2013 թվականի առևտրի շրջանառությունն ընթացիկ գներով կազմել է 2331 մլրդ դրամ, որը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ, համադրելի գներով աճել է 1.2%-ով:

Տրանսպորտ և կապ: 2013 թվականին հանրապետությունում ընդհանուր օգտագործման տրանսպորտով բեռնափոխադրումների ծավալը 2012 թվականի նույն ժամանակաշրջանի համեմատ աճել է 1.9%-ով: Այն պայմանավորված էր ավտոմոբիլային տրանսպորտով բեռնափոխադրումների 7.0% աճով: Ընդհանուր օգտագործման տրանսպորտի մյուս բոլոր տեսակներով բեռնափոխադրումների ծավալները նվազել են: Ամենախոշոր բացասական նպաստումն է ունեցել երկաթուղային տրանսպորտով բեռնափոխադրումների 5.3% նվազումը: Երկաթուղային տրանսպորտով բեռնափոխադրումների նվազումը բացատրվում է արտահանված բեռների ծավալի 7.3%, ներկրված բեռների ծավալի 8% և ներհանրապետական բեռնափոխադրումների 2.5%

կրճատմամբ: Կրճատվել է նաև օդային (15.4%) և մայրուղային խողովակաշարային (3.6%) բեռնափոխադրումների ծավալները:

2013 թվականի կապի ծառայություններից ստացված հասույթը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի նկատմամբ աճել է 8.9%-ով:

Գներ և սակագներ: 2013 թվականին գնաճը միջինում կազմել է 5.8%, որը հիմնականում պայմանավորված էր պարենային ապրանքների (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ) գների 5.8% (նպաստումը գնաճին՝ 3.1 տոկոսային կետ), ոչ պարենային ապրանքների գների 4.6% (նպաստումը գնաճին՝ 0.7 տոկոսային կետ) և ծառայությունների սակագների 6.4% աճով (նպաստումը գնաճին՝ 1.9 տոկոսային կետ):

2013 թվականն ավարտվել է 5.6% 12-ամսյա գնաճով, որը հիմնականում պայմանավորված էր պարենային ապրանքների (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ) գների 4.0%, ոչ պարենային ապրանքների գների՝ 3.5% և ծառայությունների սակագների 9.7% աճով:

Աշխատանքի շուկա: 2013 թվականին գործազրկության մակարդակը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ նվազել է 1.1 տոկոսային կետով՝ կազմելով 16.2%:


2013 թվականի միջին ամսական անվանական աշխատավարձը 2012 թվականի նույն ժամանակահատվածում գրանցված ցուցանիշի նկատմամբ աճել է 6.0%-ով՝ կազմելով 158239 դրամ⁵: Միջին ամսական անվանական աշխատավարձի ցուցանիշները պետական և ոչ պետական հատվածներում աճել են համապատասխանաբար 5.4 և 7.2 տոկոսով՝ կազմելով 139032 և 185630 դրամ: Իրական աշխատավարձը 2012 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 0.2%-ով:

Արտաքին հատված: Շարունակում են արտահայտվել արտահանման խթանման ուղղությամբ ՀՀ կառավարության քաղաքականության դրական արդյունքները՝ 2013 թվականին նախորդ տարվա համեմատ արձանագրվել է արտահանման աճի տեմպերի արագացում: Արտահանման աճի հետ մեկտեղ տարեսկզբից ավելացել են նաև Հայաստան ներհոսող ընթացիկ տրանսֆերտները (13.8% աճ) և գործոնային եկամուտները (27.8% աճ)՝ նպաստելով ընթացիկ հաշվի պակասուրդի⁶ կրճատմանը մինչև ՀՆԱ-ի 10.5 տոկոսը և նախորդ տարվա ցուցանիշը բարելավելով 1.7 տոկոսային կետով (տե՛ս Գծապատկեր 3):

⁵ 2012 թվականի միջին ամսական աշխատավարձի ցուցանիշները վերահաշվարկվել են 2013 թվականի նույն ցուցանիշի հետ համադրելության ապահովման նպատակով՝ հիմք ընդունելով 2013 թվականից «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի ազդեցությունը:

⁶ Ներկայացված են վճարային հաշվեկշռի վերանայված տվյալները, որոնք հրատարակվել են ս.թ. մարտի վերջին:

Գծապատկեր 3. Ընթացիկ հաշվի դինամիկան (մլն ԱՄՆ դոլար)



Այնուհանդերձ, 2013 թվականին ապրանքների գծով արտաքին առևտրի բացասական մնացորդը նախորդ տարվա համեմատ աճել է 5.9%-ով (130.9 մլն ԱՄՆ դոլարով) և կազմել ՀՆԱ-ի 22.5 տոկոսը՝ նախորդ տարվա 22.2%-ի դիմաց:

ՀՆԱ-ի նկատմամբ ապրանքների և ծառայությունների արտահանման կշիռը (միջին հակումը) 2013 թվականին կազմել է 27.0% (2012 թվականին՝ 26.7%): Ապրանքների և ծառայությունների ներմուծումը 2013 թվականին կազմել է ՀՆԱ-ի 50.7%-ը՝ նախորդ տարվա 50.4%-ի դիմաց:

Արտաքին առևտուր (դոլարային արտահայտությամբ)⁷: Արտաքին ապրանքաշրջանառությունը 2013 թվականի արդյունքներով կազմել է 5956.8 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա համեմատ աճելով 5.6%-ով: Հաշվետու ժամանակահատվածում տեղի է ունեցել դոլարային արտահայտությամբ արտահանման և ներմուծման ծավալների աճ. արտահանումն աճել է 7.2%-ով՝ կազմելով 1480.0 մլն ԱՄՆ դոլար, իսկ ներմուծումը՝ 5.1%-ով և կազմել է 4476.8 մլն ԱՄՆ դոլար:

Ներմուծում: Ներմուծման աճը հիմնականում պայմանավորված էր տարվա ընթացքում բնակչության իրական տնօրինվող եկամուտների, այդ թվում՝ աշխատողների դրամական փոխանցումների աճով: 2013 թվականին ներմուծման 5.1% աճին հիմնականում նպաստել է «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախումբը՝ 2.7 տոկոսային կետով: Մեծ է նաև «Հանքահումքային արտադրանք» և

⁷ Արտահանումը՝ ՖՕԲ, ներմուծումը՝ ՍԻՖ գներով:

«Պատրաստի սննդի արտադրանք» ապրանքախմբերի նպաստումը (համապատասխանաբար 1.0 և 0.9 տոկոսային կետերով):

Տարվա ընթացքում արձանագրվել է ներդրումային բնույթի ապրանքների («Մեքենաներ, սարքավորումներ, մեխանիզմներ», «Սարքեր և ապարատներ» և «Տարբեր արդյունաբերական ապրանքներ» ապրանքային խմբեր) ներմուծման 0.4% նվազում, որը 0.1 տոկոսային կետով հակազդել է ներմուծման աճին, ընդ որում, այդ ապրանքների տեսակարար կշիռը ընդհանուր ներմուծման մեջ կազմել է 17.0%՝ 0.9 տոկոսային կետով զիջելով նախորդ տարվա նույն ժամանակահատվածի մակարդակին (17.9%):

Ապրանքների լայն տնտեսական դասակարգմամբ (BEC) վերլուծության արդյունքները⁸ նույնպես վկայում են «Կապիտալ ապրանքների» ներմուծման կրճատման մասին (2.2%-ով), այդ թվում՝ հիմնականում նվազել է արդյունաբերական նշանակության տրանսպորտային սարքավորումների ներմուծումը: Տարվա ընթացքում տեղի է ունեցել միջանկյալ սպառման և վերջնական սպառման ապրանքների ներմուծման դոլարային ծավալների աճ (համապատասխանաբար՝ 6.8 և 5.1%-ով):

Արտահանում: Շարունակում են արտահայտվել արտահանման խթանման ուղղությամբ ՀՀ կառավարության քաղաքականության և համաշխարհային տնտեսության դանդաղ վերականգնման պայմաններում արտահանման աշխուժացման և ծավալների վերականգնման ձեռքբերումները: Գործընկեր երկրներում տնտեսական աճի սպասվածից ավելի ցածր տեմպերի պայմաններում արտաքին պահանջարկի աճը վկայում է արտահանման մրցունակության բարելավման և արտահանող ճյուղերում արտադրական կարողությունների առավել արդյունավետ օգտագործման մասին:


2013 թվականի արդյունքներով արտահանման 7.2% աճի ամենաբարձր՝ 4.0 տոկոսային կետը պայմանավորվել է «Պատրաստի սննդի արտադրանք» ապրանքախմբի արտահանման ծավալների 21.5% ավելացմամբ: Արտահանման աճին նպաստել են նաև «Կենդանի կենդանիներ և կենդանական ծագման արտադրանք» (1.5 տոկոսային կետով), «Մանածագործական իրեր» (1.4 տոկոսային կետով), «Բուսական ծագման արտադրանք» (1.2 տոկոսային կետով) և «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» (1.1 տոկոսային կետով) ապրանքախմբերը: Արտահանման աճին 2.4 տոկոսային կետով հակազդել է կառուցվածքում մեծ կշիռ ունեցող «Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» ապրանքախմբի արտահանման նվազումը:

⁸ Ապրանքների լայն տնտեսական դասակարգման (BEC) տվյալները ՀՀ ֆինանսների նախարարության գնահատականներն են:

Ապրանքների լայն տնտեսական դասակարգման (BEC) վերլուծության արդյունքները վկայում են «Վերջնական սպառման ապրանքների» նկատմամբ արտաքին պահանջարկի բավարարմանն ուղղված արտահանման աճի մասին (մոտ 32%-ով), այդ թվում՝ աճել է հիմնականում տնային տնտեսությունների սպառման համար մթերքների ու խմիչքների, ինչպես նաև կարճաժամկետ օգտագործման սպառողական այլ ապրանքների արտահանումը: Տարվա ընթացքում տեղի է ունեցել նաև կապիտալ ապրանքների և միջանկյալ սպառման ապրանքների արտահանման դոլարային ծավալների աճ (համապատասխանաբար՝ 28.5 և 0.5 տոկոսով):

Նորմալացված առևտրային հաշվեկշիռ⁹: Տնտեսական անվտանգությունը բնութագրող ցուցանիշներից է նորմալացված առևտրային հաշվեկշռի գործակիցը, որը հիմնականում պայմանավորված դոլարային արտահայտությամբ արտահանման առաջանցիկ աճով՝ հետճանաժամային տարիներին բարելավվել և 2012 թվականին կազմել է -0.51: 2013 թվականին բարելավման միտումը շարունակվել է, և նորմալացված հաշվեկշռի գործակիցը կազմել է -0.5 (տե՛ս Գծապատկեր 4):


Գծապատկեր 4. Նորմալացված առևտրային հաշվեկշռի գործակիցը



Ներմուծման ծածկման գործակից: 2013 թվականին ներմուծման ծածկման գործակիցը նախորդ տարվա համեմատ աճել է 0.4 տոկոսային կետով. արտահանման հաշվին ֆինանսավորվել է ներմուծման 53.4% (տե՛ս Գծապատկեր 5):

⁹ Նշված ցուցանիշը հաշվարկվում է որպես առևտրային հաշվեկշռի և ապրանքաշրջանառության հարաբերակցություն և ցույց է տալիս թե միավոր արտաքին ապրանքաշրջանառության մեջ որքան զուտ արտահանված ապրանք կա:

Գծապատկեր 5. Ներմուծման ծածկման գործակիցը¹⁰, տոկոսներով




Ներճյուղային առևտուր: 2013 թվականի ՀՀ ներճյուղային¹¹ առևտրի մակարդակի վերլուծությունը վկայում է «Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր», «Պատրաստի սննդի արտադրանք», «Թանկարժեք ու կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» և «Արվեստի ստեղծագործություններ» ապրանքախմբերի գծով հիմնականում երկկողմանի արտաքին առևտրի մասին (տե՛ս Գծապատկեր 6): Ընդ որում, նշված խմբերի երկկողմանի արտաքին առևտուրը վերջին տարիներին համեմատաբար կայուն է:

¹⁰ Ներմուծման ծածկման գործակիցը հաշվարկված է որպես ապրանքների և ծառայությունների արտահանման և ներմուծման հարաբերակցություն (ՖՕԲ գներով):

¹¹ Ներճյուղային առևտուրը տեղի է ունենում, երբ երկիրը և ներմուծում, և արտահանում է առանձին ճյուղում արտադրվող ապրանքատեսակները: Ներճյուղային առևտրի գործակիցը իրենից ներկայացնում է արտահանման և ներմուծման բացարձակ արժեքով փոքրի հարաբերակցությունը մեծին: '0' նշանակում է լրիվ միակողմանի, իսկ '1' լրիվ երկկողմանի առևտուր:

Գծապատկեր 6. 2013 թվականի ներծյուղային առևտուրը



Գծապատկերում դրական և բացասական նշանները տրամադրում են լրացուցիչ տեղեկատվություն և պայմանավորված են համապատասխան ապրանքախմբերի արտաքին առևտրային հաշվեկշռի դրական կամ բացասական մնացորդով: «Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» և «Արվեստի ստեղծագործություններ» (երկկողմանի առևտուր) ապրանքախմբերի դրական առևտրային մնացորդը վկայում է մեր երկրի կողմից այդ ապրանքատեսակների գծով արտաքին աշխարհի պահանջարկը բավարարելու մասին:

Մնացած ապրանքախմբերով տեղի է ունեցել մեծ մասամբ միակողմանի առևտուր՝ ներքին պահանջարկը բավարարելու ուղղությամբ (բացասական առևտրային մնացորդ):


Արտաքին առևտուրն ըստ գործընկեր երկրների: 2013 թվականին ՀՀ արտաքին առևտրաշրջանառության 30.0%-ը բաժին է ընկել ԱՊՀ և 27.8%-ը՝ ԵՄ երկրներին: ՀՀ խոշոր առևտրային գործընկեր-երկրների շրջանակում ընդգրկված էին Չինաստանը (առևտրաշրջանառության 7.6%), Գերմանիան (6.1%), Իրանը (4.9%), ԱՄՆ-ն (3.8%), Բուլղարիան (3.7%), Թուրքիան (3.6%), Բելգիան (3.4%), ինչպես նաև ԱՊՀ երկրներից՝ Ռուսաստանը (24.3%) և Ուկրաինան (4.1%): Վերջիններիս բաժին է ընկել ՀՀ և ԱՊՀ երկրների միջև 2013 թվականի ընթացքում կատարված ապրանքաշրջանառության շուրջ 94.4%-ը: Հանրապետության թվով 38 հիմնական գործընկեր երկրները մեծ մասամբ (մոտ 80%-ը) հանդիսանում են ԱՀԿ անդամ պետություններ:

Երկկողմանի փոխարժեք: Նախորդ տարվա ընթացքում ձևավորված ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի փոխարժեքի արժեզրկման միտումները 2013 թվականի տարեսկզբից շարունակվել են: Այնուհանդերձ, արժեզրկումը տեղի է ունեցել ավելի դանդաղ տեմպերով, ինչի արդյունքում 2013

թվականի տարեվերջին՝ դեկտեմբեր ամսին փոխարժեքը կազմել է 405.32 դրամ 1 ԱՄՆ դոլարի դիմաց, որը նախորդ տարվա դեկտեմբերին ձևավորված միջին փոխարժեքի (405.54) նկատմամբ արժևորվել է 0.06 տոկոսով:

Իսկ տարեկան միջին փոխարժեքը կազմել է 409.6 դրամ մեկ ԱՄՆ դոլարի դիմաց (2012-ին՝ 401.8). նախորդ տարվա միջինի նկատմամբ գրանցվել է ԱՄՆ դոլարի համեմատ դրամի անվանական արժեքի 1.9% արժեզրկում՝ 2012 թվականի համապատասխան ցուցանիշի 7.3% արժեզրկման դիմաց: Ըստ էության, փոխարժեքի նման վարքագիծը համաշխարհային և ներքին տնտեսության զարգացումների արդյունք էր: Ընդ որում, տարվա անցած ամիսներին դրամի արժեզրկմանը մասամբ նպաստել է նաև տարեսկզբից դիտարկվող կապիտալի ներհոսքի դանդաղումը՝ հիմնականում օտարերկրյա ներդրումների տեսքով:

Գծապատկեր 7. Դրամ/ԱՄՆ դոլար միջին փոխարժեքի փոփոխության (կուտակային) դինամիկան (նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ,%)




2013 թվականի հունվար-դեկտեմբերին ՀՀ դրամն արժեզրկման միտում է դրսևորել նաև եվրոյի նկատմամբ: Այսպես, ընթացիկ տարվա հունվար-դեկտեմբեր ամիսներին ձևավորված դրամ/եվրո միջին փոխարժեքը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ արժեզրկվել է 5.1%-ով: Իսկ ռուսական ռուբլու նկատմամբ ՀՀ դրամը միջին հաշվով տարվա ընթացքում արժևորվել է 0.5%-ով:

Արդյունավետ փոխարժեք: Արտաքին առևտրի տեսանկյունից առավել կարևոր արժույթներից բաղկացած «զամբյուղի» նկատմամբ ՀՀ ազգային արժույթը 2013 թվականի նախորդ տարվա համեմատ արժևորվել է 0.4%-ով (անվանական արդյունավետ փոխարժեք), ինչը նշանակում է, որ ՀՀ

դրամն արժևորվել է (դրամի դիրքերը ուժեղացել են) հիմնական արժույթների միավորված գնի համեմատ, քանի որ վերոնշյալ «զամբյուղում» ընդգրկված մնացած երկրների արժույթները միջին հաշվով դոլարի նկատմամբ արժեզրկվել են ավելի շատ (մոտ 2.4%-ով), քան ՀՀ դրամը (1.9%-ով): Հիմնականում պայմանավորված անվանական արդյունավետ փոխարժեքի վարքագծով՝ իրական արդյունավետ փոխարժեքի 2013 թվականի միջին արժեվորումը կազմել է 1.5%¹² (տե՛ս Գծապատկեր 8), ինչը կարող է իր բացասական ազդեցությունը թողնել երկրի ընթացիկ հաշվի վրա:

Գծապատկեր 8. Իրական արդյունավետ փոխարժեքի ամսական միջին շարժընթացը



Ֆինանսական շուկա: 2013 թվականի տարեվերջին փողի բազան կազմել է 888 մլրդ դրամ՝ տարեկազմի նկատմամբ աճելով 29.8%-ով: Ընդ որում, զուտ արտաքին ակտիվներն աճել են 50.3%-ով, իսկ զուտ ներքին ակտիվները նվազել են 2.3%-ով:

Նույն ժամանակահատվածում փողի բազայում ԿԲ-ից դուրս կանխիկը աճել է 1.5%-ով (տեսակարար կշիռը փողի բազայում կազմել է շուրջ 50.3%), իսկ պարտադիր պահուստները դրամով և արտարժույթով՝ 82%-ով (տեսակարար կշիռը փողի բազայում կազմել է շուրջ 49.3%):

2013 թվականի տարեվերջին փողի զանգվածը կազմել է 1545.3 մլրդ դրամ՝ տարեկազմի նկատմամբ աճելով 15%-ով:

¹² Հաշվարկներում օգտագործվել են ՀՀ կենտրոնական բանկի պաշտոնական կայքի 2014թ. ապրիլի 2-ի դրությամբ տվյալները:

Փողի զանգվածում բանկային համակարգից դուրս կանխիկը գրեթե չի փոխվել, դրամային ավանդները ապահովել են փողի զանգվածի աճի 9.3 տոկոսային կետը, իսկ արտարժույթային ավանդները՝ 7 տոկոսային կետը¹³:

2013 թվականի ընթացքում դոլարայնացման մակարդակը փոքր-ինչ նվազել է. նախորդ տարվա 63.22 %-ի դիմաց դոլարային ավանդների կշիռն ընդհանուր ավանդների մեջ կազմել է 60%:

Առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներից և ոչ ռեզիդենտներից ներգրավված ավանդները 2013 թվականին նախորդ տարվա նկատմամբ ավելացել են 33%-ով: Առևտրային բանկերի մինչև մեկ տարի ժամկետով դրամով ներգրավված ավանդների տոկոսադրույքները 2013 թվականին միջին հաշվով կազմել են 10.16%՝ 2012 թվականի 9.55%-ի համեմատ:

Առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին և ոչ ռեզիդենտներին տրված վարկերը 2013 թվականին նախորդ տարվա նկատմամբ ավելացել են 12.%-ով¹⁴ (նշենք որ վարկերի 62.1%-ը կազմում են արտարժույթով վարկերը): Առևտրային բանկերի՝ դրամով տրամադրված վարկերի տոկոսադրույքները 2013 թվականին միջին հաշվով կազմել են 16%՝ 2012 թվականի 17.23%-ի համեմատ:

Հատուկ ուշադրության է արժանի նաև այն, որ առևտրային բանկերի՝ մինչև մեկ տարի ժամկետով դրամով ներգրավված ավանդների և վարկերի տոկոսադրույքների միջև սպրեդը 2013 թվականին 2012 թվականի նկատմամբ նվազել է 1.33 տոկոսային կետով՝ կազմելով 5.84 տոկոսային կետ:

2013 թվականին ՀՀ պետական պարտատոմսերի շուկայական տոկոսադրույքները նվազել են 0.3 տոկոսային կետով: Այսպես, եթե 2012 թվականին տեղաբաշխված պետական արժեթղթերի միջին եկամտաբերությունը կազմել է 12.9%, ապա 2013 թվականին այն կազմել է 12.6%: Նույն ժամանակահատվածում տեղաբաշխված պետական արժեթղթերի ծավալը կազմել է 109.8 մլրդ դրամ, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 122.3 մլրդ դրամի դիմաց, իսկ միջին ժամկետայնությունը՝ 1909 օր, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 1722 օրվա համեմատ:

2013 թվականին պետական (շուկայական) պարտատոմսերի նկատմամբ պահանջարկը գերազանցել է թողարկման ցուցանիշը 2.33 անգամ, իսկ տեղաբաշխում/թողարկում հարաբերակցության միջին մեծությունը կազմել է 0.96:

¹³ Նշենք, որ փողի ագրեգատներում ոչ ռեզիդենտների ավանդները չեն ընդգրկվում:

¹⁴ Ընդգրկված չեն կուտակված տոկոսները: Վարկերի մեջ ներառված են նաև ֆակտորինգային, լիզինգային գործառնությունները և ռեպո համաձայնագրերը:

Աղյուսակ 1. Ֆինանսական շուկայի տոկոսադրույքները 2013 թվականի ընթացքում

Ամիսներ	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII
Առևտրային բանկերի վարկեր*	16.09	15.52	17.08	16.47	16.04	16.73	16.07	16.55	15.08	15.57	14.99	15.04
Առևտրային բանկերի ավանդներ*	9.98	10.33	9.99	10.02	10.04	10.19	10.08	10.33	10.02	9.98	10.55	10.42
ՀՀ ԿԲ ռեպո գործառնություններ	8.00	8.00	8.00	8.00	8.00	8.00	8.00	8.5	8.5	8.5	8.0	7.5

* Հաշվարկված է մինչև մեկ տարի ժամկետով, միայն դրամով տրամադրված վարկերի և ներգրավված ավանդների համար (առանց միջբանկային շուկայի):

Հարկաբյուջետային հատված

2013 թվականին հարկաբյուջետային քաղաքականությունը պահպանել է հետճգնաժամային հատվածում ձևավորված զսպող ուղղվածությունը՝ նպատակադրելով շարունակել պակասուրդի աստիճանական կրճատմանն ու պարտքի կայունությանն ուղղված պետական քաղաքականության միջոցառումների իրականացումը:

2013 թվականի արդյունքներով պետական բյուջեի ընդհանուր եկամուտները կազմել են ՀՆԱ-ի 25.1%-ը նախորդ տարվա 23.7%-ի դիմաց, իսկ հարկային եկամուտները՝ ՀՆԱ-ի 23.5%-ը նախորդ տարվա 22%-ի դիմաց: Նախորդ տարվա նկատմամբ պետական բյուջեի եկամուտների անվանական աճը կազմել է 13.2%, իսկ հարկային եկամուտներինը՝ 14%: Ընդ որում, հարկային եկամուտների աճը պայմանավորվել է հիմնականում եկամտային հարկի (ներառյալ եկամտահարկը և պարտադիր սոցիալական ապահովության վճարները), ավելացված արժեքի հարկի և բնապահպանական ու բնօգտագործման վճարների աճով, ինչպես նաև 2013 թվականից մեկ նոր հարկատեսակի՝ շրջանառության հարկի ներդրմամբ:


ՀՆԱ-ի նկատմամբ պետական բյուջեի ծախսերի ցուցանիշը 2013 թվականի արդյունքներով նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ աճել է 1.6%-ային կետով՝ կազմելով 26.8%: Ընթացիկ ծախսերը կազմել են ՀՆԱ-ի 23.8%-ը նախորդ տարվա 21.9%-ի դիմաց, իսկ ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը կազմել են ՀՆԱ-ի 3%-ը՝ նախորդ տարվա 3.3%-ի դիմաց: Ընդ որում, նախորդ տարվա նկատմամբ ընթացիկ ծախսերն աճել են 16%-ով՝ պայմանավորված հիմնականում այլ ծախսերի, աշխատավարձի և ապրանքների ու ծառայությունների գծով ծախսերի աճով: Իսկ ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը նվազել են 3.1%-ով:

2013 թվականին պետական բյուջեի պակասուրդը կազմել է ՀՆԱ-ի 1.7%-ը, նախորդ տարվա 1.5%-ի դիմաց: Պակասուրդի մակարդակը պահպանվել է պետական պարտքը կայունացնող

մակարդակում, ինչը հնարավորություն է տվել 0.2 տոկոսային կետով կրճատել ՀՆԱ-ի նկատմամբ արտաքին պետական պարտքի մակարդակը, որը 2013 թվականին կազմել է 37.4%: Իսկ ընդհանուր պետական պարտքը 2013 թվականի արդյունքներով կազմել է ՀՆԱ-ի 44.1%-ը՝ նախորդ տարվա 43.9%-ի դիմաց:

Հարկաբյուջետային ազդակը: 2013 թվականի արդյունքներով գրանցվել է 0.7% զսպող հարկաբյուջետային ազդակ, ընդ որում՝ եկամուտների գծով գրանցվել է 1.6% զսպող, իսկ ծախսերի գծով՝ 0.9% ընդլայնող ազդակ:


Գծապատկեր 9. Հարկաբյուջետային ազդակը 2011 թվականից եռամսյակներով:



ՀՀ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետության 2013 թվականի պետական բյուջեով, ելնելով 6.2% տնտեսական աճի կանխատեսումից, ծրագրվել էր ստանալ ավելի քան 1032.8 մլրդ դրամ եկամուտներ, որից 1015.3 մլրդ դրամը՝ սեփական եկամուտների, 17.5 մլրդ դրամը՝ արտաքին պաշտոնական դրամաշնորհների տեսքով: «Հայաստանի Հանրապետության 2013 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 11-րդ կետի և 11-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներից ելնելով՝ պետության դրամական միջոցների համախմբված հաշվառման նպատակով պետական բյուջեի ծրագրային և փաստացի ցուցանիշներում ներառվել են նաև ՀՀ պետական հիմնարկների համար բացված արտաբյուջետային հաշիվների համապատասխան շրջանառությունը, ինչպես նաև առանց սահմանափակման պետական բյուջեից կատարվող վճարումները: Նշված միջոցները ներառյալ, ինչպես նաև հաշվի առնելով կառավարության լիազորությունների շրջանակներում կատարված մյուս փոփոխությունները՝ ՀՀ պետական բյուջեի եկամուտների ծրագիրն ավելացվել է շուրջ 41 մլրդ դրամով (4%-ով) և կազմել 1073.8 մլրդ դրամ, որից 1053.8 մլրդ դրամը՝ սեփական եկամուտների, 20.0 մլրդ դրամը՝ պաշտոնական դրամաշնորհների գծով: 2013 թվականի փաստացի եկամուտները կազմել են շուրջ 1071.4 մլրդ դրամ, որոնք նախորդ տարվա ցուցանիշը գերազանցել են 125.2 մլրդ դրամով կամ 13.2%-ով, իսկ ծրագրային ցուցանիշը կատարվել է 99.8%-ով: Հարկային եկամուտների և պետական տուրքերի տարեկան ծրագիրը կատարվել է 100%-ով, այլ եկամուտները 8.2%-ով գերազանցել են ճշտված ծրագրային ցուցանիշը, իսկ պաշտոնական դրամաշնորհների կատարողականը կազմել է 66.2% կամ կանխատեսվածից պակաս է ստացվել 6.8 մլրդ դրամ: Նշենք, որ պետական հիմնարկների արտաբյուջետային եկամուտները կազմել են շուրջ 31.2 մլրդ դրամ կամ նախատեսվածի 98.5%-ը: Առանց արտաբյուջետային միջոցների՝ պետական բյուջեի եկամուտները կազմել են 1040.2 մլրդ դրամ՝ ապահովելով 99.8% կատարողական: Հարկային եկամուտների և պետական տուրքերի կատարողականը առանց արտաբյուջետային միջոցների կազմել է 100%, այլ եկամուտները ճշտված ծրագրային ցուցանիշը գերազանցել են 19.9%-ով, իսկ պաշտոնական դրամաշնորհների կատարողականը կազմել է 60.9%:

Գծապատկեր 10. ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի եկամուտները




Հաշվետու տարում ՀՆԱ-ի նկատմամբ պետական բյուջեի եկամուտների հարաբերակցությունը կազմել է 25.11%, որը 1.44 տոկոսային կետով գերազանցել է նախորդ տարվա ցուցանիշը և 2.35 տոկոսային կետով՝ կանխատեսված ցուցանիշը¹⁵:

2012 թվականի համեմատ պետական բյուջեի եկամուտների 13.2%-ով աճը գերազանցապես պայմանավորված է հարկային եկամուտների 13.9%-ով կամ 119.1 մլրդ դրամ աճով: Հարկ է նշել, որ նախորդ տարվա համեմատ աճ է արձանագրվել նաև մյուս եկամտատեսակների գծով, մասնավորապես՝ այլ եկամուտներն աճել են 16.3%-ով (8 մլրդ դրամով), պետական տուրքերը՝ 14.5%-ով (3.5 մլրդ դրամով): Միևնույն ժամանակ պաշտոնական դրամաշնորհները նվազել են 28.9%-ով (5.4 մլրդ դրամով):


¹⁵ ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի ուղերձում բյուջեի եկամուտներ/ՀՆԱ կանխատեսված ցուցանիշը կազմել է 22.76%:

Գծապատկեր 11. « Կետական բյուջեի եկամուտների կատարողականը 2012-2013թթ.



Հարկային եկամուտների համեմատաբար բարձր աճի արդյունքում 2012 թվականի համեմատ 2013 թվականի կետական բյուջեի եկամուտներում 0.6 տոկոսային կետով ավելացել է հարկային եկամուտների և կետական տուրքերի, 0.1 տոկոսային կետով՝ այլ եկամուտների տեսակարար կշիռը, իսկ պաշտոնական դրամաշնորհների գծով նույն ցուցանիշը նվազել է 0.7 տոկոսային կետով:


Գծապատկեր 12. « Կետական բյուջեի եկամուտների կառուցվածքը



Հարկային եկամուտներ և պետական տուրքեր

ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի եկամուտների 93.4%-ն ապահովվել է հարկային եկամուտների և պետական տուրքերի հաշվին, որոնք կազմել են 1000.9 մլրդ դրամ և 100%-ով կատարել կառավարության լիազորությունների շրջանակներում ճշտված տարեկան ծրագիրը: Նշված գումարից ավելի քան 973.6 մլրդ դրամը կազմել են հարկային եկամուտները, 27.3 մլրդ դրամը՝ պետական տուրքերը: Դիտարկելով հարկային եկամուտների և պետական տուրքերի ամսական շարժը՝ կարելի է արձանագրել, որ 2013 թվականին հարկային եկամուտներն ունեցել են հիմնականում կայուն վարքագիծ, տարվա բոլոր ամիսներին արձանագրվել է մուտքերի աճ նախորդ տարվա համապատասխան ամիսների համեմատ: Բացի այդ, հարկ է նշել, որ տարվա ընթացքում ամբողջությամբ ապահովվել է եռամսյակային ծրագրերի կատարումը:

Գծապատկեր 13. ՀՀ պետական բյուջեի հարկային եկամուտները և պետական տուրքերը՝ ըստ ամիսների, 2012-2013թթ.



2013 թվականին ՀՆԱ-ի նկատմամբ հարկային եկամուտների և պետական տուրքերի հարաբերակցության ցուցանիշը կազմել է 23.5%՝ 1.6 տոկոսային կետով գերազանցելով կանխատեսված և 1.5 տոկոսային կետով՝ նախորդ տարվա համապատասխան ցուցանիշները: Հարկային սահունության գործակիցը 2013 թվականին կազմել է 2.1 (ՀՆԱ-ի աճի յուրաքանչյուր տոկոսային կետին բաժին է ընկել հարկերի 2.1 տոկոսային կետով աճ)՝ 2012 թվականի 2.2-ի դիմաց¹⁶:

2012 թվականի համեմատ հարկային եկամուտները և պետական տուրքերն աճել են 14%-ով կամ 122.6 մլրդ դրամով, որի գերակշիռ մասը՝ 119.1 մլրդ դրամը, բաժին է ընկնում հարկերին: Ընդ

¹⁶ 2012 թվականի ցուցանիշը վերանայվել է՝ հարկային եկամուտներում ներառելով պարտադիր սոցիալական ապահովության վճարները:

որում, նախորդ տարվա համեմատ աճ է արձանագրվել գրեթե բոլոր հարկատեսակների գծով, բացառությամբ հաստատագրված վճարների: Աճի հիմնական աղբյուր են հանդիսացել ավելացված արժեքի հարկը, բնապահպանական ու բնօգտագործման վճարները, շահութահարկը և մաքսատուրքը: Բացի այդ, 2013 թվականից հարկային օրենսդրության մեջ կատարված փոփոխությամբ նախկինում սահմանված եկամտահարկի և պարտադիր սոցիալական ապահովության վճարների փոխարեն ներդրվել է մեկ միասնական՝ եկամտային հարկ, որի գծով անցած ժամանակահատվածում պետական բյուջե է մուտքագրվել շուրջ 251.1 մլրդ դրամ: 2013 թվականի ընթացքում նախորդ տարվա պարտավորությունների գծով ՀՀ պետական բյուջե են մուտքագրվել 17.6 մլրդ դրամ պարտադիր սոցիալական ապահովության վճարներ և 5.8 մլրդ դրամ եկամտահարկ: Եկամտային հարկից ստացված մուտքերը՝ հաշվետու տարում մուտքագրված եկամտահարկի և պարտադիր սոցիալական ապահովության վճարների հետ միասին (որոնք մուտքագրվել են նախորդ տարվա պարտավորությունների գծով) 24.4%-ով կամ 53.8 մլրդ դրամով գերազանցել են նախորդ տարի մուտքագրված եկամտահարկի և պարտադիր սոցիալական ապահովության վճարների մուտքերը:

2013 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ մտած «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով ուժը կորցրած են ճանաչվել «Եկամտահարկի մասին» և «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքները: «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, մասնավորապես՝

1) սահմանվել են, որ հարկային գործակալների միջոցով հարկվող եկամուտներ ստանալու դեպքերում ֆիզիկական անձանց կողմից ստացված եկամուտները եկամտային հարկով հարկվում են հետևյալ դրույքաչափերով՝

- ա) մինչև 120 հազար դրամ հարկվող եկամտի համար՝ 24.4 տոկոս,
- բ) 120 հազար դրամից 2 մլն դրամ հարկվող եկամտի համար՝ 29280 դրամին գումարած 120000 դրամը գերազանցող գումարի 26 տոկոսը,
- գ) 2 մլն դրամից ավելի հարկվող եկամտի համար՝ 518080 դրամին գումարած 2 մլն դրամը գերազանցող գումարի 36 տոկոսը:

Միաժամանակ, ֆիզիկական անձանց կողմից ստացված այլ եկամուտների (ռոյալթիներ, տոկոսներ, վարձավճարներ և այլն), ինչպես նաև առանց «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված ձևով գրավոր պայմանագիրը կնքելու դեպքում հարկային գործակալի կողմից վճարվող եկամուտների հարկման դրույքաչափերի փոփոխություններ վերոնշյալ օրենքով չեն կատարվել:

2) զինծառայողների դրամական եկամուտները հանվել են նախկինում նվազեցվող եկամուտներ համարվող եկամուտների ցանկից, և սահմանվել է, որ զինծառայողներին վճարվող

դրամական եկամուտները հարկվում են եկամտային հարկով՝ օրենքով սահմանված ընդհանուր կարգով.

3) սահմանվել է, որ նոտարները և «Հաստատագրված վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ հաստատագրված վճարներով հարկվող և (կամ) «Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հավելված 7-ի ցանկում ընդգրկված և (կամ) «Շրջանառության հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով շրջանառության հարկով հարկվող գործունեության տեսակների մասով անհատ ձեռնարկատերերը եկամտային հարկը հաշվարկում և վճարում են ամսական 5 հազար դրամի չափով, որը նրանց համար համարվում է եկամտային հարկի գծով վերջնական հարկային պարտավորություն: Միաժամանակ, սահմանվել է, որ «Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հավելված 1-ի ցանկում ընդգրկված գործունեության տեսակների մասով եկամտային հարկ չի հաշվարկվում և չի վճարվում (նախկինում նշված ցանկում ներառված գործունեության տեսակներով զբաղվող անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձինք իրենց ցանկությամբ կարող էին վճարել ամսական 5 հազար դրամ պարտադիր սոցիալական ապահովության վճար).

4) 2013 թվականի հունվարի 1-ից վերացվել է ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող անհատ ձեռնարկատերերի կողմից մինչև 2013 թվականի հունվարի 1-ը վճարվող նվազագույն եկամտահարկի համակարգը, ինչի արդյունքում սահմանվել է, որ 2013 թվականի հունվարի 1-ից անհատ ձեռնարկարկատեր համարվող ֆիզիկական անձինք եռամսյակային պարբերականությամբ կվճարեն միայն եկամտային հարկի կանխավճարներ՝ 2012 թվականի համար հաշվարկված եկամտային հարկի գումարի 18.75 տոկոսի չափով: Ընդ որում սահմանվել է, որ եթե մինչև 2013 թվականի առաջին եռամսյակի համար կանխավճարի վճարման վերջնաժամկետը հարկ վճարողը չի հաշվարկել 2012 թվականի եկամտահարկի գումարը, ապա 2013 թվականի առաջին եռամսյակի համար եկամտային հարկի առաջին կանխավճարը չպետք է պակաս լինի 2012 թվականի ընթացքում հաշվարկված կանխավճարի չափից:

Միաժամանակ, սահմանվել է, որ անհատ ձեռնարկատեր հանդիսացող ֆիզիկական անձինք հաստատագրված վճարներով և (կամ) արտոնագրային վճարներով և (կամ) շրջանառության հարկով հարկվող գործունեության և նոտարական գործունեության տեսակներից ստացված եկամուտների մասով եկամտային հարկի կանխավճարներ չեն վճարում:

5) վերանայվել են քաղաքացիաիրավական պայմանագրերի շրջանակներում աշխատանքներ կատարող և ծառայություններ մատուցող ֆիզիկական անձանց կողմից ստացված եկամուտների հարկման մոտեցումները:

2013 թվականից ներդրվել է ևս մեկ նոր հարկատեսակ՝ շրջանառության հարկը, որի գծով հաշվետու տարվա ընթացքում ՀՀ պետական բյուջե է մուտքագրվել շուրջ 13.4 մլրդ դրամ: Նշված մուտքերից 9.2 մլրդ դրամը գանձվել է առևտրական (առք ու վաճառքի) գործունեությունից, 2.3 մլրդ դրամը՝ այլ գործունեության (եկամուտների) տեսակներից, 1.1 մլրդ դրամը՝ արտադրական գործունեությունից, 562.1 մլն դրամը՝ ռեզիդենտների կողմից ստացված պասիվ եկամուտներից և 223.6 մլն դրամը՝ նոտարական գործունեությունից ստացված եկամուտներից:


2013 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ մտած «Շրջանառության հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանվել է, որ Հայաստանի Հանրապետությունում շրջանառության հարկ վճարող են համարվում այն անձինք (Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ համարվող առևտրային կազմակերպությունները, անհատ ձեռնարկատերերը և նոտարները (այդ թվում՝ նոր ստեղծված (պետական գրանցում ստացած կամ հաշվառված) հարկ վճարողները), որոնց՝ նախորդ օրացուցային տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով մատակարարված ապրանքների և մատուցված ծառայությունների (կատարված աշխատանքների) իրացումից հասույթը՝ առանց ավելացված արժեքի հարկի, չի գերազանցել 58.35 մլն դրամը: «Շրջանառության հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանվել է, որ շրջանառության հարկով հարկվող օբյեկտ է համարվում հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում շրջանառության հարկ վճարողի կողմից մատակարարված ապրանքների և մատուցված ծառայությունների (կատարված աշխատանքների) իրացման շրջանառությունը (իրացումից հասույթը), ինչպես նաև ստացվող այլ եկամուտները:

Միաժամանակ, «Շրջանառության հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանվել են շրջանառության հարկի հետևյալ դրույքաչափերը.

- 1) առևտրական (առք ու վաճառքի) և արտադրական գործունեությունից եկամուտների դեպքում՝ 3.5 տոկոս,
- 2) վարձակալությունից եկամուտների, տոկոսների, ռոյալթիների, ակտիվների (այդ թվում՝ անշարժ գույքի) օտարումից եկամուտների դեպքում՝ 10 տոկոս,
- 3) նոտարական գործունեությունից եկամուտների դեպքում՝ 20 տոկոս,
- 4) այլ գործունեության (եկամուտների) տեսակներից եկամուտների դեպքում՝ 5 տոկոս:

«Շրջանառության հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանվել է նաև, որ շրջանառության հարկ վճարող առևտրային կազմակերպությունները շահութահարկի կանխավճարներ և նվազագույն շահութահարկի վճարումներ չեն կատարում:

Գծապատկեր 14. « Կետական բյուջեի հարկային եկամուտների կառուցվածքը, 2013-2012թթ.



2013 թվականին հարկային եկամուտների և պետական տուրքերի 40.2%-ն ապահովվել է ավելացված արժեքի հարկի հաշվին, որը կազմել է շուրջ 401.9 մլրդ դրամ: Նշված գումարից 249.7 մլրդ դրամը ստացվել է « Կետական բյուջեի հարկումից, 152.2 մլրդ դրամը՝ ապրանքների և ծառայությունների ներքին շրջանառությունից: Նախորդ տարվա համեմատ պետական բյուջե մուտքագրված ԱԱՀ-ն աճել է 8.7%-ով կամ 32.2 մլրդ դրամով: Հարկ է նշել, որ ԱԱՀ-ի մուտքերի աճն ապահովվել է և՛ ներմուծման, և՛ ներքին շրջանառության աճի հաշվին: Մասնավորապես, ապրանքների ներմուծումից ստացված ավելացված արժեքի հարկը նախորդ տարվա ցուցանիշը գերազանցել է 10.1%-ով, իսկ ներքին շրջանառության գծով մուտքերի աճը կազմել է 7.9%: ԱԱՀ-ի աճի պատճառներ են հանդիսացել ներմուծման ծավալների 5.1% աճը, գնաճը և տնտեսավարող սուբյեկտների կողմից իրացման ծավալների աճը: ԱԱՀ-ի մուտքերի վրա ազդեցություն են ունեցել նաև «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխությունները:

Մասնավորապես՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության ՀՕ-230-Ն օրենքով (ուժի մեջ է 2013 թվականի հունվարի 1-ից) հստակեցվել է, որ սուբսիդիաները, սուբվենցիաները, դրամաշնորհները կամ այլ ձևով ստացվող գումարները չեն հարկվում ավելացված արժեքի հարկով, եթե դրանց դիմաց այդ գումարները ստացողների մոտ, ըստ էության, ապրանքներ մատակարարելու կամ ծառայություններ մատուցելու պարտավորություն չի առաջանում:

2012 թվականի դեկտեմբերի 19-ին Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից ընդունված՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության ՀՕ-240-Ն օրենքով (ուժի մեջ է մտել 2013 թվականի հունվարի 1-ից)՝

1) սահմանվել է, որ ավելացված արժեքի հարկով չեն հարկվում՝

ա) իրավաբանական անձանց կանոնադրական կամ բաժնետիրական կապիտալում անձին պատկանող բաժնեմասի և փայի նկատմամբ սեփականության իրավունքի՝ այլ անձի փոխանցման գործարքները (այլ ոչ թե իրավաբանական անձի, իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկության նկատմամբ սեփականության իրավունքի փոփոխման (այդ թվում՝ սեփականաշնորհման) գործարքները),

բ) պետության կամ համայնքի կողմից իրավաբանական անձանց կանոնադրական կամ բաժնետիրական կապիտալում գույքի ներդրման գործարքները,

գ) հողամասից կամովին հրաժարվելու դեպքում քաղաքացու կամ իրավաբանական անձի հողամասը որպես համայնքային սեփականություն՝ համայնքին, կամ որպես պետական սեփականություն՝ պետությանը փոխանցելու գործարքները,

դ) հողամասի, այլ անշարժ գույքի փոխանակության գործարքները, երբ գործարքի կողմ է հանդիսանում պետությունը և (կամ) համայնքը,

2) սահմանվել է, որ իրավաբանական անձի կանոնադրական կամ բաժնետիրական կապիտալում ֆիզիկական անձանց պատկանող շենքի, բնակարանի, առանձնատան կամ այլ շինության (այդ թվում՝ անավարտ (կիսակառույց)) ներդրումն ազատվում է ավելացված արժեքի հարկից, եթե այդ ներդրմանը համապատասխանող՝ ֆիզիկական անձին պատկանող բաժնեմասը մինչև ներդրումը կատարելու պահին հաջորդող երեք տարին լրանալը չի օտարվել այլ անձի,

3) սահմանվել է, որ վերամշակման կամ նորոգման նպատակով Հայաստանի Հանրապետության ներքին տարածքից արտահանված ապրանքների ներմուծման դեպքում ավելացված արժեքի հարկով հարկվող շրջանառություն է համարվում ապրանքների վերամշակումից կամ նորոգումից հետո ներմուծման մաքսային արժեքի և դրանց արտահանման ժամանակ հայտարարագրված մաքսային արժեքի տարբերության, ինչպես նաև օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկված մաքսատուրքի և ակցիզային հարկի հանրագումարը (նախկինում վերամշակման կամ նորոգման նպատակով Հայաստանի Հանրապետության ներքին տարածքից արտահանված ապրանքների ներմուծման դեպքում ապրանքների վերամշակումից կամ նորոգումից հետո ներմուծման մաքսային արժեքի և դրանց արտահանման ժամանակ հայտարարագրված մաքսային արժեքի տարբերությունը որպես ավելացված արժեքի հարկով հարկվող շրջանառություն ընդունվում էր միայն այն ժամանակ, երբ անհնար էր լինում որոշել ապրանքի վերամշակման կամ նորոգման արժեքը),

4) սահմանվել է, որ Հայաստանի Հանրապետությունում որպես ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող չգրանցված (չհաշվառված) օտարերկրյա անձի կողմից Հայաստանի Հանրապետությունում ավելացված արժեքի հարկով հարկվող գործարք իրականացվելու (ներառյալ՝

այդ անձի սեփականությունը հանդիսացող ապրանքներ ներմուծվելու) դեպքերում այդ գործարքների մասով պայմանագրային հարաբերությունների կողմ հանդիսացող՝ ավելացված արժեքի հարկ վճարող համարվող կամ ավելացված արժեքի հարկի վճարման պարտավորություն կրող անձանց կողմից կատարված գործարքից առաջացող ավելացված արժեքի հարկի գումարը պահելու և պետական բյուջե փոխանցելու պարտավորությունը չի տարածվում արտոնագրային կամ հաստատագրված վճար կամ շրջանառության հարկ վճարող անձանց և անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց վրա,

5) սահմանվել է, որ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի դրույթները չեն տարածվում հրապարակային պայմանագրի համաձայն ապրանքներ մատակարարող կամ ծառայություններ մատուցող անձանց վրա, եթե հրապարակային պայմանագրով առևտրային զեղչերի կիրառման օրվան նախորդող առնվազն երկու աշխատանքային օր առաջ հարկային մարմին է ներկայացրել վերադաս հարկային մարմնի կողմից սահմանված ձևի հայտարարություն՝ առևտրային զեղչեր կիրառելու վերաբերյալ,

6) ուժը կորցրած են ճանաչվել անմիջապես ներմուծող և (կամ) անմիջական արտադրող համարվող հարկ վճարողների ավելացված արժեքի հարկով հարկվող շրջանառության որոշման՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 12-րդ մասով սահմանված մոտեցումները,

7) հստակեցվել է, որ արտարժույթի առուվաճառքի գործունեության մասով ավելացված արժեքի հարկով հարկվող շրջանառություն է համարվում արտարժույթի վաճառքի և ձեռքբերման արժեքների դրական տարբերությունը,

8) սահմանվել է, որ եթե անձը օրենքի խախտմամբ իրեն չի համարել ավելացված արժեքի հարկ վճարող կամ ավելացված արժեքի հարկ վճարող համարվող անձն ավելացված արժեքի հարկով հարկվող գործարքների գծով դուրս գրված հաշվարկային փաստաթղթում ավելացված արժեքի հարկի գումարի առանձնացում չի կատարել կամ հաշվարկային փաստաթուղթ դուրս չի գրել և, միաժամանակ, նշված դեպքերում ավելացված արժեքի հարկ վճարող համարվող անձն ավելացված արժեքի հարկի գումարը չի արտացոլել ավելացված արժեքի հարկի հաշվարկի համապատասխան տողերում, ապա ավելացված արժեքի հարկի գումարը հաշվարկվում է ավելացված արժեքի հարկի 20 տոկոս դրույքաչափի կիրառմամբ,

9) վերանայվել է «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածով սահմանված՝ ծառայությունների մատուցման վայրի սահմանումը: Մասնավորապես սահմանվել է, որ բացառությամբ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածով սահմանված դեպքերի, ծառայության մատուցման վայր է համարվում ծառայություն մատուցող կազմակերպության պետական գրանցման

կամ անհատ ձեռնարկատիրոջ հաշվառման վայրը, իսկ դրանց բացակայության դեպքում՝ կազմակերպության հիմնադիր փաստաթղթում նշված վայրը կամ կազմակերպության մշտական ստորաբաժանման գտնվելու վայրը, եթե ծառայությունները մատուցվում են անմիջականորեն այդ ստորաբաժանման միջոցով, իսկ ծառայությունն անհատ ձեռնարկատիրոջ կողմից մատուցվելու դեպքում՝ նրա բնակության վայրը,

10) սահմանվել է, որ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 4-րդ պարբությանը նշված ծառայությունների դեպքում ծառայությունների մատուցման վայր է համարվում ծառայություն ստացող կազմակերպության պետական գրանցման կամ անհատ ձեռնարկատիրոջ հաշվառման վայրը, իսկ դրանց բացակայության դեպքում՝ կազմակերպության հիմնադիր փաստաթղթում նշված վայրը կամ կազմակերպության մշտական ստորաբաժանման գտնվելու վայրը, եթե ծառայությունները ստացվում են անմիջականորեն այդ ստորաբաժանման միջոցով, իսկ ծառայությունն անհատ ձեռնարկատիրոջ կողմից ստացվելու դեպքում՝ նրա բնակության վայրը,

11) սահմանվել է, որ մեկից ավելի անձանց ընդհանուր սեփականությունը հանդիսացող գույքի օտարման դեպքում ավելացված արժեքի հարկի շեմը կիրառվում է մեկ անգամ՝ անկախ պայմանագրով գույք օտարող կողմում հանդես եկող անձանց թվաքանակից կամ այդ գույքի նկատմամբ սեփականություն ունեցողների թվաքանակից,

12) հարկային մարմնում որպես ավելացված արժեքի հարկ վճարող հաշվառված չհամարվելու ժամանակաշրջանում ավելացված արժեքի հարկ վճարողների կողմից հարկային հաշիվներ դուրս գրելու դեպքերի համար սահմանվել է տուգանք՝ դուրս գրված հարկային հաշիվներում առանձնացված ավելացված արժեքի հարկի գումարի տասը տոկոսի չափով,

13) սահմանվել է, որ հարկային մարմին ներկայացված ավելացված արժեքի հարկի հաշվարկներով պետական բյուջե վճարման ենթակա ավելացված արժեքի հարկի գումարը պակաս ցույց տալու կամ պետական բյուջեից հաշվանցման ենթակա գումարն ավել ցույց տալու դեպքերում (երբ պարզվում է, որ փաստացի իրականացված գործարքի գծով առաջացող պարտավորությունը նվազեցնելու նպատակով գործարքի իրական պայմաններին համապատասխանող՝ դուրս գրված հարկային հաշիվը հարկ վճարողի կողմից անվավեր է ճանաչվել), պակաս հաշվարկված՝ պետական բյուջե վճարման ենթակա ավելացված արժեքի հարկի գումարների կամ պետական բյուջեից ավել հաշվանցված գումարների նկատմամբ հաշվարկվում է տուգանք այդ գումարների 100 տոկոսի չափով:

«Ծխախոտի արտադրանքի համար հաստատագրված վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության ՀՕ-127-Ն օրենքով 2012 թվականի համեմատությամբ բարձրացվել են ԱՏԳ ԱԱ

2402 20 900 11, 2402 20 100 11, 2402 90 000 13, 2402 20 900 12, 2402 20 100 12, 2402 90 000 14 ծածկագրերին դասվող ծխախոտի արտադրանքի հաստատագրված վճարի դրույքաչափերը:

2013 թվականին ակցիզային հարկից պետական բյուջեի մուտքերը կազմել են 52.1 մլրդ դրամ: Մասնավորապես՝ հանրապետություն ներմուծվող ենթաակցիզային ապրանքների հարկումից ստացվել է 37.5 մլրդ դրամ: Հանրապետությունում արտադրվող ենթաակցիզային ապրանքների հարկումից պետական բյուջեի մուտքերը կազմել են 14.6 մլրդ դրամ: 2012 թվականի համեմատ ակցիզային հարկի մուտքերն աճել են 5.6%-ով կամ 2.8 մլրդ դրամով: Ընդ որում, տեղական արտադրության ենթաակցիզային ապրանքների հարկումից ստացված մուտքերը նախորդ տարվա համեմատ նվազել են 9.4%-ով, իսկ Հայաստանի Հանրապետություն ներմուծվող ապրանքների գծով մուտքերը՝ ավելացել 12.9%-ով:

«Ակցիզային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության ՀՕ-250-Ն օրենքով (ուժի մեջ է մտել 2013 թվականի հունվարի 1-ից)՝

1) ակցիզային հարկով հարկվող ԱՏԳ ԱԱ 2206 00 390, 2206 00 590 և 2206 00 890 ապրանքային ծածկագրերին դասվող պտղային, հատապտղային, մրգային և այլ գինիների համար ակցիզային հարկի դրույքաչափը սահմանվել է տեղական արտադրության դեպքում՝ բացթողնման գնի (առանց ավելացված արժեքի հարկի և ակցիզային հարկի), իսկ ներմուծման դեպքում՝ մաքսային արժեքի 10 տոկոսի, բայց ոչ պակաս, քան 1 լիտրի համար 100 դրամի չափով՝ նախկինում ներքին արտադրանքի 1 լիտրի համար սահմանված 25 դրամի, իսկ ապրանքների ներմուծման դեպքում՝ 1 լիտրի համար սահմանված 270 դրամի փոխարեն,

2) ԱՏԳ ԱԱ 2208 20, 2208 30, 2208 40 ծածկագրերին դասվող ապրանքատեսակների համար սահմանվել են ակցիզային հարկի հաշվարկման այլ մոտեցումներ: Մասնավորապես՝ սահմանվել է, որ նշյալ ծածկագրերին դասվող ապրանքատեսակների մասով ակցիզային հարկի հաշվարկման համար հիմք է ընդունվում ոչ միայն դրանց բացթողնման գինը (մաքսային արժեքը), այլ նաև Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով նշյալ ապրանքատեսակների շերտի վրա մակնշված՝ այդ ապրանքների հնեցման աստիճանը: Միաժամանակ, սահմանվել է, որ նշյալ ապրանքատեսակների շերտի վրա հնեցման աստիճանի վերաբերյալ մակնշման բացակայության դեպքում ակցիզային հարկը հաշվարկվում է բացթողնման գնի (մաքսային արժեքի) 50 տոկոսի չափով, բայց ոչ պակաս, քան 1 լիտրի համար 22000 դրամ,

3) ակցիզային հարկի արտոնություն է սահմանվել 40 տոկոս և բարձր սպիրտայնությամբ չջալցված կոնյակի՝ կոնյակ արտադրող այլ անձանց օտարման նկատմամբ,

4) սահմանվել է, որ ԱՏԳ ԱԱ 2710 19 710-2710 19 980 ապրանքային ծածկագրերին դասվող բոլոր տեսակի քսայուղերը համարվում են ենթաակցիզային ապրանքներ: Նշված

ապրանքատեսակների համար ակցիզային հարկի դրույքաչափ է սահմանվել տեղական արտադրության դեպքում բացթողման գնի, իսկ ներմուծման դեպքում՝ մաքսային արժեքի 10 տոկոսը, բայց ոչ պակաս, քան 1 կգ-ի համար 400 դրամը:

Ներքին արտադրության ենթակցիզային ապրանքներից ստացված մուտքերի անկումը հիմնականում պայմանավորված է ծխախոտի հաստատագրված վճարների նվազմամբ: ՀՀ-ում արտադրվող ապրանքներից ակցիզային հարկն աճել է հիմնականում գարեջրի, խաղողի գինիների, մրգային և այլ սպիրտային խմիչքների իրացման ծավալների ավելացման արդյունքում: Ներմուծվող ապրանքների մասով ակցիզային հարկն աճել է նաև գարեջրի, 25.0 մլն դրամ և ավելի մաքսային արժեք ունեցող կամ մինչև 2 տարին ներառյալ թողարկման տարեթիվ և 4500 սմ³ և ավելի շարժիչի աշխատանքային ծավալ ունեցող թեթև մարդատար ավտոմեքենաների ներմուծման ծավալների ավելացման հաշվին:

ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի փաստացի հարկային եկամուտների և պետական տուրքերի 12.4%-ն ապահովվել է շահութահարկի հաշվին՝ կազմելով շուրջ 124.6 մլրդ դրամ: Նախորդ տարվա համեմատ շահութահարկի մուտքերն աճել են 5%-ով կամ 5.9 մլրդ դրամով: Շահութահարկի աճը հիմնականում պայմանավորված է ոչ ռեզիդենտից աղբյուրի մոտ, օտարերկրյա ներդրումներով ձեռնարկությունների և ֆինանսավարկային կազմակերպությունների կողմից վճարված շահութահարկի աճով: Միաժամանակ, նվազագույն շահութահարկի մասով մուտքերը նվազել են՝ պայմանավորված 2013 թվականի հունվարի 1-ից շրջանառության հարկի ներդրմամբ, որի արդյունքում մինչև 58.35 մլն դրամ իրացման շրջանառություն ունեցող հարկ վճարողները 2013 թվականի հունվարի 1-ից դադարեցին վճարել նվազագույն շահութահարկ:

«Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության ՀՕ-238-Ն օրենքով (ուժի մեջ է մտել 2013 թվականի հունվարի 1-ից):

1) սահմանվել է, որ ոչ ռեզիդենտի հայաստանյան աղբյուրներից ստացված եկամուտներ են համարվում Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս Հայաստանի Հանրապետության ռեզիդենտին կամ այլ ոչ ռեզիդենտի՝ Հայաստանի Հանրապետությունում հաշվառված առանձնացված ստորաբաժանմանը մատուցված՝ խորհրդատվական, իրավաբանական, հաշվապահական, կառավարման, փորձագիտական, մարքեթինգային, գովազդային, թարգմանչական, ինժեներական և համանման այլ ծառայություններից ստացված եկամուտները: Ընդ որում, նշված եկամտատեսակների համար ոչ ռեզիդենտի շահութահարկի դրույքաչափը սահմանվել է 20 տոկոս,

2) սահմանվել է, որ հարկային գործակալները աղբյուրի մոտ ոչ ռեզիդենտի շահութահարկի գումարը պահում են ոչ միայն ոչ ռեզիդենտին փաստացի եկամուտ վճարելու դեպքերում, այլ նաև այլ

գույքով, դեբիտորական և կրեդիտորական պարտքերի հաշվանցման, պարտքերի վերաձևակերպման կամ պարտքերի նորացման, ինչպես նաև հայաստանյան աղբյուրներից ստացման ենթակա եկամուտների մասով հարկային գործակալի նկատմամբ ոչ ռեզիդենտի կողմից հարկային գործակալ չհանդիսացող անձին պահանջի իրավունքի զիջման դեպքերում:

Հաշվետու տարվա ընթացքում պետական բյուջե մուտքագրված մաքսատուրքը կազմել է ավելի քան 46.3 մլրդ դրամ՝ ապահովելով հարկերի և տուրքերի 4.6%-ը: Հիմնականում ներմուծման ծավալների ավելացման հետևանքով նախորդ տարվա համեմատ մաքսատուրքի գծով բյուջետային մուտքերն աճել են 7.6%-ով կամ 3.3 մլրդ դրամով:

2012 թվականի դեկտեմբերի 5-ի «Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով (ՀՕ-224-Ն) (ուժի մեջ է մտել 2013 թվականի հունվարի 6-ից) վերանայվել են մաքսատուրքի դրույքաչափերը: Մասնավորապես՝

1) վերախմբագրվել է Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգրքի 199-րդ հոդվածը, ինչի արդյունքում հետագա արտահանման պարտավորությամբ Հայաստանի Հանրապետություն ներմուծված ապրանքները և տրանսպորտային միջոցները սահմանված ժամկետում չարտահանելու կամ հետագա ներմուծման պարտավորությամբ արտահանված ապրանքները և տրանսպորտային միջոցները սահմանված ժամկետում Հայաստանի Հանրապետություն չներմուծելու դեպքերի համար սահմանված՝ մաքսային արժեքի 10 տոկոսի չափով տուգանքը փոխարինվել է խախտման օրվա դրությամբ այդ ապրանքների և տրանսպորտային միջոցների համար «Ներմուծում՝ ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով նախատեսված մաքսային վճարների մեծության 50 տոկոսի, բայց ոչ պակաս, քան 50 հազար դրամի չափով տուգանքով՝ տուգանքի մեծությունը կապելով խախտման հետևանքով պետական բյուջե պակաս վճարված մաքսային վճարների մեծության հետ,

2) վերախմբագրվել է Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգրքի 199.1-ին հոդվածի 1-ին կետը, ինչի արդյունքում օրենսգրքով արգելված դեպքերում մաքսային հսկողության տակ գտնվող ապրանքներն ու տրանսպորտային միջոցները բնական մաշվածության հետևանքով առաջացած փոփոխություններից բացի այլ փոփոխությունների ենթարկելու դեպքերի համար սահմանված՝ մաքսային արժեքի 10 տոկոսի չափով տուգանքը փոխարինվել է այդ ապրանքների և տրանսպորտային միջոցների համար «Ներմուծում՝ ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով նախատեսված մաքսային վճարների մեծության 50 տոկոսի, բայց ոչ պակաս, քան 50 հազար դրամի չափով տուգանքով՝ տուգանքի մեծությունը կապելով խախտման հետևանքով պետական բյուջե պակաս վճարված մաքսային վճարների մեծության հետ,

3) ամբողջությամբ վերախմբագրվել է Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգրքի 203-րդ հոդվածը, ինչի արդյունքում ապրանքները և տրանսպորտային միջոցները չհայտարարագրելու կամ ոչ իրենց անվամբ հայտարարագրելու կամ հայտարարագրման ժամանակ ոչ ճշգրիտ տեղեկություններ նշելու դեպքերի համար սահմանված՝ մաքսային արժեքի չափով տուգանքը փոխարինվել է՝

ա) 50 հազար դրամի չափով տուգանքով, եթե խախտման արդյունքում չի առաջանում մաքսային վճարների (բացառությամբ մաքսավճարի) պակաս հաշվարկում կամ չհաշվարկում, ոչ սակագնային կարգավորման միջոցների չկիրառում, ինչպես նաև եթե խախտումը չի բնութագրվում հանցագործության հատկանիշներով,

բ) պակաս վճարված մաքսային վճարների մեծության 50 տոկոսի չափով տուգանքով (գանձելով նաև պակաս վճարված մաքսային վճարները), եթե խախտման արդյունքում առաջանում է մաքսային վճարների պակաս հաշվարկում կամ չհաշվարկում, ինչպես նաև եթե խախտումը չի բնութագրվում հանցագործության հատկանիշներով,

գ) այդ ապրանքների և տրանսպորտային միջոցների մաքսային արժեքի չափով տուգանքով, եթե առաջանում է ոչ սակագնային կարգավորման միջոցների չկիրառում՝ հանցագործության հատկանիշների բացակայության դեպքում,

դ) մաքսային արժեքի 10 տոկոսի չափով տուգանքով, եթե արդյունքում չեն առաջանում մաքսային վճարներ (բացառությամբ մաքսավճարի), սակայն կատարված խախտման արդյունքում մաքսային հայտարարագրում արտացոլվում են ապրանքների արտահանման երկրում կամ Հայաստանի Հանրապետությունում ձեռք բերված և մաքսային սահմանով տեղափոխված կամ տեղափոխվող ապրանքների ձեռքբերման արժեքներից կամ քանակներից բարձր կամ ցածր արժեքներ կամ քանակներ, ինչպես նաև եթե խախտումը չի բնութագրվում հանցագործության հատկանիշներով:

2013 թվականի մարտի 20-ին Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից ընդունված՝ «Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության ՀՕ-17-Ն օրենքով (ուժի մեջ է մտել 2013 թվականի ապրիլի 26-ից) ԱՏԳ ԱԱ 0602 10 100 ծածկագրին դասվող խաղողի կտրոնների, ԱՏԳ ԱԱ 0602 20 ծածկագրին դասվող պատվաստված կամ չպատվաստված պտղատու տեսակի ծառերի, թփերի և թփուտների, ԱՏԳ ԱԱ 0713 10 100 ծածկագրին դասվող ցանքի համար ոլոռի և ԱՏԳ ԱԱ 0713 33 100 ծածկագրին դասվող ցանքի լրբու համար սահմանվել է մաքսատուրքի 0 տոկոս դրույքաչափ՝ նախկին 10 տոկոս դրույքաչափի փոխարեն:

2013 թվականին պետական բյուջե են մուտքագրվել ավելի քան 11 մլրդ դրամ հաստատագրված վճարներ (առանց ծխախոտի արտադրանքի համար սահմանված

հաստատագրված վճարների)՝ ապահովելով հարկային եկամուտների ու պետական տուրքերի 1.1%-ը: Նշված ցուցանիշը նախորդ տարվա համեմատ նվազել է 25.7%-ով՝ հիմնականում պայմանավորված նախկինում հաստատագրված վճար վճարող հարկատուների նախորդ տարիներին վճարված հաստատագրված վճարի մուտքերից այլ հարկատեսակներին հաշվանցումով, ինչպես նաև «Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխություններով (07.12.2011թ. ՀՕ-313-Ն), որոնց համաձայն 2012 թվականի ապրիլի 1-ից հաստատագրված վճարով հարկվող գործունեության մի քանի տեսակներ տեղափոխվեցին արտոնագրային վճարների և ընդհանուր հարկման դաշտ, մասնավորապես, հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեությունը, վարսավիրական ծառայությունների մատուցման գործունեությունը, ավտոտեխսպասարկման կայանների գործունեությունը, ավտոկանգառների գործունեությունը:

2013 թվականին ՀՀ պետական բյուջե են մուտքագրվել շուրջ 35.1 մլրդ դրամ բնապահպանական և բնօգտագործման վճարներ՝ կազմելով հարկերի և տուրքերի 3.5%-ը: Նշված գումարից 10.1 մլրդ դրամը կազմել են բնապահպանական վճարները, 25 մլրդ դրամը՝ բնօգտագործման վճարները: Նախորդ տարվա համեմատ նշված եկամուտներն աճել են 34.2%-ով կամ 8.9 մլրդ դրամով՝ հիմնականում պայմանավորված արդյունահանված մետաղական օգտակար հանածոների և դրանց վերամշակման արդյունքում ստացված արտադրանքի իրացման համար վճարվող ռոյալթիի և այլ պետություններում գրանցված տրանսպորտային միջոցներից օդային ավազան վնասակար նյութեր արտանետելու համար գանձվող վճարների աճով:

2013 թվականին ջրօգտագործման վճարը կազմել է շուրջ 181 մլն դրամ՝ նախորդ տարվա համեմատ նվազելով 21.2%-ով կամ 48.6 մլն դրամով, որի հիմնական պատճառ է հանդիսացել ջրերի արդյունահանման ծավալների նվազումը:

Պինդ օգտակար հանածոների, բացառությամբ մետաղական օգտակար հանածոների մարված պաշարների, ստորերկրյա քաղցրահամ ու հանքային ջրերի և աղի արդյունահանված պաշարների համար բնօգտագործման վճարի մուտքը կազմել է 1.7 մլրդ դրամ, որը նախորդ տարվա համեմատ նվազել է 20.8%-ով կամ 447.6 մլն դրամով:

Ամրակայված աղբյուրներից օդային ավազան վնասակար նյութերի արտանետման համար բնապահպանական վճարի մուտքերը կազմել են շուրջ 211 մլն դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 26.3%-ով կամ 44 մլն դրամով, որի հիմնական պատճառ է հանդիսացել ամրակայված աղբյուրներից օդային ավազան վնասակար նյութերի արտանետման ծավալների աճը:

Ավտոմեքենաներից, գյուղմեքենաներից և լողամիջոցներից վնասակար նյութեր արտանետելու համար բնապահպանական վճարի մուտքերը կազմել են շուրջ 771.5 մլն դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 1.1%-ով կամ 8 մլն դրամով:

Ջրային ավազան վնասակար նյութերի և միացությունների արտանետման դիմաց բնապահպանական վճարի մուտքերը կազմել են 253.1 մլն դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 14.2%-ով կամ 31.4 մլն դրամով:

Շրջակա միջավայրում արտադրության և սպառման թափոնների սահմանված կարգով տեղադրման համար բնապահպանական վճարը կազմել է 97.5 մլն դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 53.8%-ով կամ 34.1 մլն դրամով:

Հայաստանի Հանրապետությունում արտադրվող-իրացվող ապրանքների շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների դիմաց բնապահպանական վճարի մուտքերը կազմել են 638.7 մլն դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով մոտ 12.9 անգամ կամ 589.1 մլն դրամով:

Շրջակա միջավայրին վնաս պատճառող ՀՀ ներմուծվող ապրանքների համար վճարված բնապահպանական վճարը կազմել է 2.3 մլրդ դրամ՝ նախորդ տարվա համեմատ նվազելով 1%-ով կամ 24.2 մլն դրամով:

Մաքսային մարմինների կողմից գանձվող ավտոտրանսպորտային միջոցների օդային ավազան վնասակար նյութերի արտանետման դիմաց վճարված բնապահպանական վճարը կազմել է շուրջ 5.8 մլրդ դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 35%-ով կամ 1.5 մլրդ դրամով, որը պայմանավորված է այլ պետություններում հաշվառված՝ ՀՀ մուտք գործող ավտոտրանսպորտային միջոցների և, մասնավորապես, թողարկման ավելի հին տարեթիվ ունեցող ավտոմեքենաների թվաքանակի աճով:

Կենսապաշարների օգտագործման վճարները կազմել են 275.8 մլն դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 66%-ով կամ 109.6 մլն դրամով:

2013 թվականին արդյունահանված մետաղական օգտակար հանածոների և դրանց վերամշակման արդյունքում ստացված արտադրանքի իրացման համար վճարվող ռոյալթիից ստացված մուտքերը կազմել են 22.8 մլրդ դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 45.5%-ով կամ 7.1 մլրդ դրամով: Աճը հիմնականում պայմանավորված է «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխությամբ (28.11.2011թ. ՀՕ-284-Ն, ուժի մեջ է մտել 01.01.2012թ.), որի արդյունքում 2013 թվականին ռոյալթիների վճարումներ են կատարել ՀՀ մետաղական օգտակար հանածոների հանքավայրեր շահագործողները, որոնք 2012 թվականի ընթացքում ռոյալթիների կանխավճարներ չեն կատարել, քանի որ 2011 թվականին չեն հանդիսացել ռոյալթի վճարողներ:

Հաշվետու տարվա ընթացքում պետական բյուջե են մուտքագրվել 14.7 մլրդ դրամի այլ հարկեր՝ կազմելով հարկերի և տուրքերի 1.5%-ը: Մասնավորապես՝ 6.8 մլրդ դրամ են կազմել արտոնագրային վճարները, որոնք նախորդ տարվա համեմատ աճել են 19.9%-ով կամ 1.1 մլրդ դրամով, որի հիմնական պատճառը 2013 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ մտած օրենսդրական

փոփոխություններն են, մասնավորապես՝ տվյալ հարկատեսակով հարկվող գործունեության տեսակների ընդլայնումը: 2012 թվականի դեկտեմբերի 19-ին ՀՀ ԱԺ կողմից ընդունված՝ «Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության ՀՕ-243-Ն օրենքով (ուժի մեջ է մտել 2013 թվականի հունվարի 1-ից)՝

1) անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց մասով վերանայվել է արտոնագրային վճար վճարող համարվելու համար հիմք ընդունվող տարեկան իրացման շրջանառության շեմի մեծությունը: Մասնավորապես, նախկինում գործող 6 միլիոն դրամ շեմի փոխարեն սահմանվել է 9 միլիոն դրամ շեմ,

2) «Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի թիվ 1 հավելվածում ներառված գործունեության տեսակներով զբաղվող ֆիզիկական անձանց համար ևս նախատեսվել է մեկից ավել ամիսների համար արտոնագիր ստանալու դեպքերում արտոնագրային վճարի չափը նվազեցնող գործակից,

3) հստակեցվել է, որ «Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված տուգանքը կիրառվում է նաև նույն օրենքով սահմանված գործակիցներից ցածր գործակիցներ կիրառելու հետևանքով արտոնագրային վճարը պակաս հաշվարկելու դեպքերում: Միաժամանակ սահմանվել է, որ հարկային մարմնի կողմից խախտումն արձանագրվելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, նույն գործունեության տեսակի գծով նույն խախտումը թույլ տալու դեպքերում արտոնագրային վճար վճարողից գանձվում են տվյալ ժամանակահատվածի համար պակաս վճարված արտոնագրային վճարը և տուգանք՝ պակաս վճարված արտոնագրային վճարի գումարի չափով: Բացի այդ, հստակեցվել է նաև, որ առանց արտոնագրի գործունեություն իրականացնելու դեպքերում որպես գործունեության նվազագույն ժամանակահատված հիմք է ընդունվում երեք ամիսը,

4) սահմանվել է, որ «Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի թիվ 7 հավելվածում նշված գործունեության տեսակով (տեսակներով) զբաղվելու դեպքում արտոնագրային վճարը նույն օրենքի թիվ 8 հավելվածով սահմանված ժամկետում չվճարելու դեպքում կիրառվում է «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածով սահմանված չափով տույժ՝ գործունեության իրականացման ժամանակահատվածի առաջին օրվանից սկսած,

5) ուժը կորցրած է ճանաչվել «Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հավելվածը, ինչի արդյունքում՝

ա) առևտրի իրականացման վայրերից դուրս գտնվող՝ Երևան քաղաքում՝ 7մ², այլ վայրերում՝ 10մ² առևտրական տարածքը չգերազանցող կրպակի միջոցով առևտրական գործունեությունը և

համակարգչային խաղերի կազմակերպման գործունեությունը տեղախափոխվել են հարկման ընդհանուր համակարգ,

բ) վերանայվել են նախկինում անհատ ձեռնարկատեր հանդիսացող ֆիզիկական անձանց կողմից իրականացվող՝ թեթև մարդատար մեքենայով ուղևորափոխադրման, բիլիարդ խաղի կազմակերպման, սեղանի թենիս խաղի կազմակերպման, վարսավիրական ծառայությունների մատուցման, ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման գործունեության տեսակների համար սահմանված արտոնագրային վճարների դրույքաչափերը,

6) արտոնագրային վճարների համակարգում են ներառվել մետաղադրամով շահագործվող ավտոմատների միջոցով սննդի առևտրի կազմակերպման գործունեությունը, մետաղադրամով շահագործվող ավտոմատների միջոցով խաղերի կազմակերպման գործունեությունը, ատամնաբուժական գործունեությունը, ատամնատեխնիկական գործունեությունը, անշարժ գույքի առքուվաճառքի կամ վարձակալության միջնորդային գործունեությունը,

7) սահմանվել է, որ արտոնագրային վճարի հարկման օբյեկտ չեն համարվում հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեությունը, եթե այդ գործունեությունը կազմակերպվում է 600մ² գերազանցող սպասարկման սրահի մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտում,

8) վերանայվել են բացառապես հանդիսությունների, արարողությունների կամ համանման այլ միջոցառումների համար նախատեսված սրահներում հանրային սննդի ոլորտում գործունեություն իրականացնելու համար օրական կտրվածքով արտոնագրային վճար վճարող համարվելու մոտեցումները: Մասնավորապես, սահմանվել է, որ օրական կտրվածքով արտոնագրային վճար վճարող կարող են համարվել այն հանրային սննդի օբյեկտները, որոնք գործունեություն են իրականացնում հանդիսությունների, արարողությունների կամ համանման այլ միջոցառումների կազմակերպման համար նախատեսված՝ 100 մ² և ավելի մակերես ունեցող սրահում, և որոնց՝ հանրային սննդի գործունեության իրականացման տվյալ վայրի սրահների ընդհանուր մակերեսը չի գերազանցում 600 մ²,

9) սահմանվել են (վերանայվել են) գործունեության որոշ տեսակների մասով արտոնագրային վճարի հաշվարկման համար հիմք ընդունվող գործակիցներ: Մասնավորապես՝

ա) սահմանվել են սեզոնայնության հետ կապված գործակիցներ բացօթյա վայրերի միջոցով հանրային սննդի ոլորտում գործունեություն իրականացնելու համար,

բ) բացառապես հանդիսությունների, արարողությունների կամ համանման այլ միջոցառումների կազմակերպման համար նախատեսված սրահների միջոցով հանրային սննդի ոլորտում Երևան քաղաքում իրականացվող գործունեության համար սահմանվել է նոր գործակից, որը հավասար է 3-ի,

գ) սահմանվել է 5 գործակից (նախկինում սահմանված էր 3) հետտապար և անհատական կամ համույթային համանման այլ ցուցադրումներ ունեցող հանրային սննդի գործունեության իրականացման վայրերի համար:

2013 թվականի ավելի քան 1 մլրդ դրամ են կազմել ռադիոհաճախականության օգտագործման թույլտվության տրամադրման (գործողության ժամկետի երկարաձգման) վճարները՝ նախորդ տարվա 176.8 մլն դրամի դիմաց: Աճը պայմանավորված է ՀՀ հանրային ծառայությունների հանձնաժողովի կողմից տրված թույլտվությունների քանակի աճով: Շուրջ 3.5 մլրդ դրամ է մուտքագրվել ճանապարհային վճարների գծով, որոնք նախորդ տարվա համեմատ աճել են 8.3%-ով կամ շուրջ 267.3 մլն դրամով՝ պայմանավորված այլ պետություններում գրանցված տրանսպորտային միջոցներով ավտոմոբիլային ճանապարհներից օգտվելու համար սահմանված ճանապարհային վճարի աճով: 886.4 մլն դրամ են կազմել հարկային օրենսդրության խախտման համար «Հարկերի մասին» ՀՀ օրենքով սահմանված տուգանքները, 523.9 մլն դրամ՝ հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարները, 646.6 մլն դրամ՝ «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքով սահմանված դրոշմապիտակների ձեռք բերման վճարները, 5.4 մլն դրամ՝ կոնցեսիոն վճարը, և շուրջ 1.5 մլրդ դրամ՝ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նյութական խրախուսման ֆոնդի եկամուտները: Նախորդ տարվա համեմատ այլ հարկերի փաստացի ցուցանիշն աճել է 21.3%-ով կամ 2.6 մլրդ դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է արտոնագրային վճարների, ռադիոհաճախականության օգտագործման թույլտվության տրամադրման (գործողության ժամկետի երկարաձգման) վճարների և հարկային օրենսդրության խախտման համար «Հարկերի մասին» ՀՀ օրենքով սահմանված տուգանքների աճով, ինչպես նաև մի շարք ընդհանրապես դրոշմավորման պահանջի սահմանման հետ կապված՝ դրոշմապիտակների ձեռք բերման դիմաց կատարված վճարումներով: ՀՀ տարածքում արտադրված կամ ՀՀ տարածք ներմուծված՝ շալցված կամ ցանկացած այլ ձևով տարայավորված մի շարք ապրանքների վրա օտարման ցանկացած փուլում դրոշմապիտակների պարտադիր առկայությունը սահմանվել է «ՀՀ առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքում կատարված 2013 թվականի հուլիսի 7-ից ուժի մեջ մտած փոփոխությամբ (19.12.2012թ., ՀՕ-252-Ն):

2012 թվականի դեկտեմբերի 19-ին ՀՀ ԱԺ կողմից ընդունված՝ «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության ՀՕ-237-Ն օրենքով (ուժի մեջ է մտել 2013 թվականի հունվարի 1-ից) «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15 հոդվածի «թ» կետով նախատեսված տեղեկությունները չփակցնելու կրկնական փաստն արձանագրելու դեպքերի համար նախատեսված տուգանքի չափը 500 հազար դրամից նվազեցվել է մինչև 100 հազար դրամ: Մեկ տարվա

ընթացքում անապրանք փաստաթուղթ դուրս գրելու և ձեռքբերելու դեպքերի համար սահմանվել է տուգանքի նվազագույն չափ՝ 2 միլիոն դրամի չափով:

2012 թվականի դեկտեմբերի 19-ին ՀՀ ԱԺ կողմից ընդունված՝ «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության ՀՕ-244-Ն օրենքով՝

1) ավելի խիստ տուգանքներ են սահմանվել «Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն, արտոնագրային վճարների օբյեկտ չհամարվող հանրային սննդի օբյեկտում գործունեության իրականացնող տնտեսավարող սուբյեկտների կողմից թույլ տրված հսկիչ-դրամարկղային մեքենաների գրանցման կարգի և (կամ) շահագործման կանոնների խախտումների համար,

2) սահմանվել է, որ հսկիչ-դրամարկղային մեքենաների գրանցման կարգի և (կամ) շահագործման կանոնների խախտումների համար կիրառվող տուգանքի հաշվարկման համար հիմք է ընդունվում ոչ թե տվյալ խախտումն արձանագրելու ամսվան նախորդող ամսվա ընթացքում տվյալ առևտրի իրականացման վայրում տեղադրված հսկիչ-դրամարկղային մեքենաների միջոցով արձանագրված շրջանառության 2 տոկոսը, այլ խախտումն արձանագրելու ամսվան նախորդող եռամսյակի ընթացքում արձանագրված շրջանառության 0.7 տոկոսը:

«Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան հաշվարկված՝ նախորդ տարվա համախառն եկամտի 1 միլիարդ դրամի շեմը գերազանցած կազմակերպությունների համար սահմանվել է հինգ միլիոն դրամի չափով տուգանք «Հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված համակարգչային ծրագրերով չվարելու կամ հարկային մարմնի կողմից պետական բյուջեի հետ փոխհարաբերությունների ճշտության ստուգման ընթացքում ստուգում իրականացնող պաշտոնատար անձանց գրավոր պահանջով դրան հաջորդող աշխատանքային օրը հաշվապահական հաշվառման համակարգչային ծրագրի միջոցով ստեղծված ֆայլի պատճենը (ստուգման հանձնարարականով ընդգրկվող ժամանակահատվածի մասով) ստուգում իրականացնող պաշտոնատար անձանց էլեկտրոնային կրիչով չտրամադրելու համար:

Ավելացված արժեքի հարկ վճարողների մոտ սահմանված կարգով իրականացվող ստուգումների կամ «ներմուծում ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով ներմուծված ապրանքների մաքսային արժեքի 100 միլիոն դրամի շեմը գերազանցած հարկ վճարողի մոտ իրականացվող չափագրման արդյունքներով Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով պատրաստի արտադրանքի, ապրանքների մատակարարման կամ պահպանման վայրերում պատրաստի արտադրանքի, ապրանքների մնացորդի պակասորդ հայտնաբերվելու դեպքերի համար սահմանվել են տուգանքներ պակասորդի գնի (արժեքի) 50

տոկոսի չափով մեկ տարվա ընթացքում խախտման առաջին դեպքի համար և 100 տոկոսի չափով՝ մեկ տարվա ընթացքում խախտումը կրկնելու համար:

2013 թվականի ընթացքում ՀՀ պետական բյուջե են մուտքագրվել շուրջ 27.3 մլրդ դրամ *պետական գործընկերությունների*՝ ապահովելով պետական բյուջեի հարկերի ու տուրքերի 2.7%-ը: Պետական տուրքի փաստացի մուտքերը 8.6%-ով կամ 2.2 մլրդ դրամով գերազանցել են ՀՀ կառավարության լիազորությունների շրջանակներում ճշտված ծրագիրը: Վերջինս հիմնականում պայմանավորված է լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելու նպատակով լիցենզիաներ տալու, դատարան տրվող հայցադիմումների, դիմումների ու գանգատների, դատարանների վճիռների և որոշումների դեմ տրվող վճռաբեկ բողոքների համար, ինչպես նաև դատարանի կողմից տրվող փաստաթղթերի պատճեններ (կրկնօրինակներ) տալու, օրենքով սահմանված այլ ծառայությունների և գործողությունների, հյուպատոսական ծառայությունների կամ գործողությունների և պետական գրանցման համար գանձված տուրքերի համեմատաբար բարձր կատարողականով, որը կազմել է համապատասխանաբար 132.5, 120, 102.1, 107.9 և 103.4 տոկոս: Նշենք, որ պետական տուրքի բոլոր տեսակները գերազանցել են ՀՀ կառավարության լիազորությունների շրջանակներում ճշտված ծրագիրը, բացառությամբ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու և Հայաստանի Հանրապետության քաղաքացիության փոփոխման համար և ֆիզիկական անձանց տրվող իրավաբանական նշանակություն ունեցող փաստաթղթերի, որոշակի ծառայությունների կամ գործողությունների համար վճարվող տուրքերի, որոնք ստացվել են ծրագրի համապատասխանաբար 56.5%-ի և 99.5%-ի չափով:

Նախորդ տարվա համեմատ պետական տուրքի մուտքերն աճել են 14.5%-ով կամ 3.5 մլրդ դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է օրենքով սահմանված այլ ծառայությունների և գործողությունների, դատարան տրվող հայցադիմումների, դիմումների ու գանգատների, դատարանների վճիռների և որոշումների դեմ տրվող վճռաբեկ բողոքների, ինչպես նաև դատարանի կողմից տրվող փաստաթղթերի պատճեններ (կրկնօրինակներ) տալու և լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելու նպատակով լիցենզիաներ տալու համար գանձվող տուրքերի աճով:

2013 թվականին դատարան տրվող հայցադիմումների, դիմումների ու գանգատների, դատարանների վճիռների և որոշումների դեմ տրվող վճռաբեկ բողոքների, ինչպես նաև դատարանի կողմից տրվող փաստաթղթերի պատճեններ (կրկնօրինակներ) տալու համար պետական բյուջե է վճարվել 2.2 մլրդ դրամ (որից շուրջ 996.9 մլն դրամը կազմում են պետական կառավարման մարմինների կողմից վճարված և պետական բյուջեից փոխհատուցված գումարները)՝ 20%-ով գերազանցելով կանխատեսված ցուցանիշը: Նախորդ տարվա համեմատ նշված մուտքերն աճել են 49.6%-ով կամ 734.8 մլն դրամով:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու և Հայաստանի Հանրապետության քաղաքացիության փոփոխման համար վճարվող տուրքերը կազմել են 30.2 մլն դրամ՝ ապահովելով 56.5% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված մուտքերն աճել են 29.1%-ով կամ 6.8 մլն դրամով՝ պայմանավորված ՀՀ քաղաքացիություն ստանալու համար դիմողների քանակի աճով:

Հյուպատոսական ծառայությունների կամ գործողությունների դիմաց պետական բյուջե է վճարվել 2.1 մլրդ դրամ՝ ապահովելով 107.9% կատարողական: 2012 թվականի համեմատ նշված տուրքերն աճել են 4.3%-ով կամ 87.7 մլն դրամով, ինչը պայմանավորված է մատուցված հյուպատոսական ծառայությունների քանակի աճով:

Պետական տուրքերի 15.1%-ը բյուջե է վճարվել պետական գրանցումների դիմաց՝ կազմելով 4.1 մլրդ դրամ, որը 3.4%-ով գերազանցում է նախատեսված ցուցանիշը և 6.6%-ով՝ նախորդ տարվա փաստացի մուտքերը: Ծրագրի գերազանցումը հիմնականում պայմանավորված է լիցենզառուներին տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության համապատասխան նմուշի փաստաթուղթ տրամադրելու համար գանձված տուրքի ծրագրի գերազանցմամբ: Նշված տուրքի գծով պետական բյուջե է մուտքագրվել շուրջ 887.7 մլն դրամ՝ 27.7%-ով (192.7 մլն դրամով) գերազանցելով նախատեսված ցուցանիշը և 15.1%-ով (116.7 մլն դրամով) նախորդ տարվա փաստացի մուտքերը՝ պայմանավորված տեխնիկական զննություն անցնող տրանսպորտային միջոցների թվաքանակի աճով: Նախորդ տարվա համեմատ պետական գրանցման համար գանձված տուրքերի աճը պայմանավորված է նաև ավտոմեքենայի պետական համարանիշ տալու, կորցրած պետական համարանիշը վերականգնելու, գյուղատնտեսական ինքնագնաց մեքենայի գրանցման, պետական համարանիշ տալու, ինչպես նաև կորցրած պետական համարանիշը վերականգնելու, ջրային փոխադրամիջոցների գրանցման համար տուրքերի աճով՝ պայմանավորված ավտոմեքենայի պետհամարանիշներում օգտագործվող նոր՝ թվով 3 տառերի ավելացման արդյունքում ավտոմոբիլների հաշվառման համարանիշերը նորով փոխանակման պահանջարկի աճով:

«Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում կատարվել է փոփոխություն, որի համաձայն համապատասխանության գնահատման մարմնի նշանակման համար սահմանվել է բազային տուրքի 120-ապատիկի չափով պետական տուրք (լրացումն ուժի մեջ է մտել 2013 թվականի հունիսի 15-ից):

Մշակութային արժեքների արտահանման կամ ժամանակավոր արտահանման իրավունքի վկայագիր տրամադրելու դիմաց 2013 թվականին պետական բյուջե է վճարվել շուրջ 1.2 մլն դրամ, որը 21.6%-ով գերազանցում է նախատեսվածը և 11.8%-ով զիջում է նախորդ տարվա փաստացի մուտքերը: 2013 թվականին մշակութային արժեքների արտահանման համար տրամադրված

վկայագրերի և դրանց կրկնօրինակների քանակը կազմել է 230՝ նախատեսված 190-ի և 2012 թվականի 263-ի դիմաց:

Գյուտերի, օգտակար մոդելների, արդյունաբերական նմուշների, ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների, ֆիրմային անվանումների, ինտեգրալ միկրոսխեմաների տոպոլոգիաների իրավական պահպանության հետ կապված գործողությունների համար հաշվետու տարում ՀՀ պետական բյուջե է վճարվել շուրջ 323.5 մլն դրամ պետական տուրք՝ 18.2%-ով գերազանցելով կանխատեսված և 9.6%-ով՝ նախորդ տարվա համապատասխան ցուցանիշները, ինչը պայմանավորված է հայտատուների թվի ավելացմամբ:

Ֆիզիկական անձանց տրվող իրավաբանական նշանակության փաստաթղթերի, որոշակի ծառայությունների կամ գործողությունների համար 2013 թվականին գանձվել է շուրջ 2.7 մլրդ դրամ՝ 0.5%-ով զիջելով կանխատեսված ցուցանիշը և 7.4%-ով՝ նախորդ տարվա փաստացի մուտքերը, որը հիմնականում պայմանավորված է ՀՀ կառավարության 2012 թվականի հոկտեմբերի 4-ի «Եվրոպական միության անդամ պետությունների և եվրոպական միության շենգենյան դրույթները կիրառող եվրոպական միության ոչ անդամ պետությունների քաղաքացիների ՀՀ մուտքի վիզայի պահանջից ազատելու մասին» թիվ 1255-Ն որոշման ընդունմամբ, համաձայն որի 33 երկրների քաղաքացիների համար սահմանվել է ՀՀ առանց մուտքի վիզայի այցելության ռեժիմ: Հետևաբար, վերջիններս ազատվել են մուտքի վիզայի համար սահմանված պետական տուրքի վճարումից:

«Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում կատարված փոփոխություններով օրենքի 15-րդ հոդվածի 1-ին կետը վերախմբագրվել է, մասնավորապես՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացու կենսաչափական տվյալներ պարունակող էլեկտրոնային անձնագիր տրամադրելու (փոխանակելու) համար սահմանվել է բազային տուրքի 60-ապատիկի չափով, 16 տարին չլրացած Հայաստանի Հանրապետության քաղաքացու կենսաչափական տվյալներ պարունակող էլեկտրոնային անձնագիր տրամադրելու (փոխանակելու) համար՝ բազային տուրքի 30-ապատիկի չափով, օտարերկրյա պետություններում վավերական՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագիր տրամադրելու (փոխանակելու) համար՝ բազային տուրքի 65-ապատիկի չափով, 16 տարին չլրացած Հայաստանի Հանրապետության քաղաքացուն օտարերկրյա պետություններում վավերական անձնագիր տրամադրելու (փոխանակելու) համար՝ բազային տուրքի 30-ապատիկի չափով, օտարերկրյա պետություններում Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի վավերականության ժամկետը մինչև երկու տարի ժամկետով երկարաձգելու համար՝ բազային տուրքի 10-ապատիկի չափով, օտարերկրյա պետություններում Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի վավերականության ժամկետը երկու տարուց ավելի ժամկետով երկարաձգելու համար՝ բազային տուրքի 20-ապատիկի չափով, Հայաստանի Հանրապետություն վերադարձի վկայական տալու համար՝ անձնագրի

կորստյան դեպքում, եթե առկա չէ Հայաստանի Հանրապետության քաղաքացու ինքնությունը հավաստող այլ փաստաթուղթ՝ բազային տուրքի 30-ապատիկի չափով, ժամկետանց կամ այլ պատճառով օգտագործման համար ոչ պիտանի անձնագրի կամ Հայաստանի Հանրապետության քաղաքացու ինքնությունը հավաստող այլ փաստաթղթի հիմքով Հայաստանի Հանրապետություն վերադարձի վկայական տալու համար՝ բազային տուրքի 10-ապատիկի չափով, Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերում Հայաստանի Հանրապետություն վերադարձի վկայական տալու, հյուպատոսական հաշվառման վերցնելու և հյուպատոսական հաշվառումից դուրս գալու համար՝ բազային տուրքի 10-ապատիկի չափով պետական տուրքեր: Միաժամանակ, ուժը կորցրած է ճանաչվել օտարերկրյա պետություններում մշտական բնակության թույլտվություն ստանալու նպատակով Հայաստանի Հանրապետության քաղաքացիների միջնորդագրերը ձևակերպելու համար սահմանված բազային տուրքի 60-ապատիկի չափով պետական տուրքը (փոփոխությունն ուժի մեջ է մտել 2013 թվականի հուլիսի 1-ից):

Օրենքով սահմանվել է, որ Հայաստանի Հանրապետության քաղաքացու կենսաչափական անձնագիր տալու համար պետական տուրքի վճարումից չեն ազատվում 16 տարին լրանալուց հետո առաջին անգամ անձնագիր ստացող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները և աղքատության ընտանեկան նպաստ ստացող ընտանիքի անդամ՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիները (լրացումն ուժի մեջ է մտել 2013 թվականի հուլիսի 1-ից):

Հաշվետու տարում պետական բյուջե մուտքագրված պետական տուրքերի 18.7%-ը ստացվել է լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելու նպատակով լիցենզիաներ տալու համար: Նշված աղբյուրից պետական բյուջե է մուտքագրվել 5.1 մլրդ դրամ՝ 32.5%-ով գերազանցելով կանխատեսված և 15.2%-ով՝ նախորդ տարվա մուտքերը, որը հիմնականում պայմանավորված է վիճակախաղերի, շահումներով խաղերի բնագավառի յուրաքանչյուր վայրում խաղատան կազմակերպման համար գանձված մուտքերի աճով: Նշված մուտքերը կազմել են 1.3 մլրդ դրամ՝ կանխատեսված 125 մլն դրամի դիմաց, այսինքն՝ ծրագիրը գերազանցել են մոտ 10.5 անգամ, իսկ նախորդ տարվա ցուցանիշը՝ 4.7 անգամ, որը պայմանավորված է նրանով, որ թվով 3 խաղատան կազմակերպման լիցենզիաները տրամադրվել են 2014 թվականի հունվարի 1-ից, սակայն պետական տուրքը վճարվել է 2013 թվականի չորրորդ եռամսյակում: Լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելու նպատակով լիցենզիաներ տալու համար գանձված պետական տուրքերի վրա ազդեցություն են ունեցել նաև «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում կատարված փոփոխությունները: Այսպես, «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում կատարված փոփոխությամբ օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության թույլտվության տրամադրման

համար սահմանվել է բազային տուրքի 50-ապատիկի չափով պետական տուրք (լրացումն ուժի մեջ է մտել 2013 թվականի հունվարի 1-ից): Հինգ աստղ «Դելյուքս» հյուրանոցի համար սահմանվել է բազային տուրքի 1500-ապատիկի չափով պետական տուրք (լրացումն ուժի մեջ է մտել 2013 թվականի ապրիլի 6-ից): Ուժը կորցրած է ճանաչվել ձայնային ծառայությունների մատուցման ու սովյալների հաղորդման և ինտերնետ հասանելիության ծառայությունների մատուցման համար յուրաքանչյուրի մասով սահմանված բազային տուրքի 100-ապատիկի չափով պետական տուրքը: Հանվել է նաև վերոնշյալ գործունեության տեսակներից յուրաքանչյուրը հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի շահագործման համար սահմանված գործունեության տեսակի հետ միաժամանակ իրականացվելու դեպքում դրանց համար սահմանված պետական տուրքի դրույքաչափերից առավելագույնը կիրառելու վերաբերյալ դրույթը (փոփոխությունն ուժի մեջ է մտել 2013 թվականի հունիսի 15-ից): «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածը վերախմբագրվել է, մասնավորապես, էլեկտրաէներգետիկական համակարգում նոր արտադրական հզորությունների կառուցման (վերակառուցման) ժամանակահատվածի համար սահմանվել է բազային տուրքի 100-ապատիկի չափով պետական տուրք, գազամատակարարման համակարգում նոր արտադրական հզորությունների կառուցման (վերակառուցման) համար նույնպես սահմանվել է բազային տուրքի 100-ապատիկի չափով պետական տուրք (փոփոխությունն ուժի մեջ է մտել 2013 թվականի հուլիսի 27-ից):

2013 թվականին օրենքով սահմանված այլ ծառայությունների և գործողությունների համար գանձվել են շուրջ 10.7 մլրդ դրամ պետական տուրքեր՝ ապահովելով 102.1% կատարողական: Նախորդ տարվա համեմատ օրենքով սահմանված այլ ծառայությունների և գործողությունների համար գանձված տուրքերն աճել են 21.5%-ով կամ շուրջ 1.9 մլրդ դրամով: Ծրագրի գերազանցումը, ինչպես նաև նախորդ տարվա համեմատ մուտքերի աճը մեծ մասամբ պայմանավորված է նշված խմբում մեծ տեսակարար կշիռ ունեցող՝ օդային տրանսպորտով ֆիզիկական անձանց ելքի համար բյուջե մուտքագրված տուրքերի ավելացմամբ: Հաշվետու տարում նշված մուտքերը կազմել են շուրջ 7.7 մլրդ դրամ՝ 2.7%-ով գերազանցելով կանխատեսված և 19.2%-ով՝ նախորդ տարվա փաստացի ցուցանիշը: Նախորդ տարվա համեմատ օրենքով սահմանված այլ ծառայությունների և գործողությունների համար գանձված տուրքերի աճը պայմանավորված է նաև «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում կատարված փոփոխություններով, որոնց համաձայն սև մետաղի թափոնների և ջարդոնի, սև մետաղից պատրաստված խողովակների և դրանց կցամասերի յուրաքանչյուր տոննայի արտահանման համար սահմանվել են բազային տուրքի 80-ապատիկի չափով, իսկ գունավոր մետաղների ջարդոնի յուրաքանչյուր տոննայի արտահանման համար՝ բազային տուրքի 100-ապատիկի չափով պետական տուրքեր (լրացումն ուժի մեջ է մտել 2013 թվականի հունվարի 7-ից): Նշված մուտքերը կազմել են 1.3 մլրդ դրամ, որից սև մետաղի

թափոնների և ջարդոնի, խողովակների և դրանց կցամասերի, սև մետաղական կոնստրուկցիաների արտահանման համար տուրքերը կազմել են շուրջ 800.7 մլն դրամ, իսկ գունավոր մետաղի թափոնների և ջարդոնի արտահանման համար տուրքերը՝ 507.7 մլն դրամ: Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում կատարված մեկ այլ փոփոխությամբ դատավորների թեկնածությունների ցուցակի համալրման որակավորման քննությունների համար սահմանվել է բազային տուրքի երեսնապատիկի չափով պետական տուրք (լրացումն ուժի մեջ է մտել 2013 թվականի օգոստոսի 3-ից):

Պաշտոնական դրամաշնորհներ

2013 թվականին արտաքին աղբյուրներից տրամադրվել են շուրջ 13.3 մլրդ դրամ պաշտոնական դրամաշնորհներ՝ կազմելով տարեկան ճշտված ծրագրի 66.2%-ը, այսինքն՝ կանխատեսվածից պակաս է ստացվել շուրջ 6.8 մլրդ դրամ: Շեղումն առաջացել է նպատակային ծրագրերի կատարման աստիճանով պայմանավորված՝ դրամաշնորհային միջոցները չստանալու կամ նախատեսվածից պակաս ստանալու հանգամանքով, որոնց շրջանակներում ստացվել է կանխատեսված գումարի 38.7%-ը՝ 4.6 մլրդ դրամ: Ցածր կատարողականը հիմնականում պայմանավորված է Եվրոպական միության Հարևանության ներդրումային ծրագրի և Եվրոպական միության աջակցությամբ իրականացվող ՀՀ պետական սահմանի «Բագրատաշեն», «Բավրա» և «Գոգավան» անցման կետերի արդիականացման դրամաշնորհային ծրագրերի, ինչպես նաև Եվրամիության աջակցությամբ իրականացվող Հայաստանի փոքր համայնքների ջրային ծրագրի կատարման աստիճանով պայմանավորված՝ դրամաշնորհային միջոցները չստանալու հանգամանքով: Միաժամանակ նշենք, որ հաշվետու ժամանակահատվածում տարբեր նպատակային ծրագրերի շրջանակներում ստացվել են նախատեսվածից ավել և չնախատեսված միջոցներ՝ 769.3 մլն դրամի չափով:

Հաշվետու ժամանակահատվածում նպատակային դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում շուրջ 1.4 մլրդ դրամ (նախատեսվածից 7.4%-ով ավելի) հատկացվել է Գերմանիայի զարգացման վարկերի բանկի, 1.2 մլրդ դրամ (նախատեսվածի 98.9%-ը)՝ Համաշխարհային բանկի, շուրջ 552 մլն դրամ (նախատեսվածի 7.6%-ը)՝ Եվրոպական միության, 270.8 մլն դրամ (նախատեսվածից 37.1%-ով ավելի)՝ Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի, 239.9 մլն դրամը (նախատեսվածի 91.9%-ը)՝ ԱՄՆ-ի, 222.8 մլն դրամ (նախատեսվածի 70.9%-ը)՝ ՄԱԶԾ-ի, 122.5 մլն դրամ (նախատեսվածից 24.8%-ով ավելի)՝ Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի, 48.5 մլն դրամը (նախատեսվածի 100%-ը)՝ Ավստրիայի զարգացման գործակալության

կողմից: 615.9 մլն դրամ, կամ նախատեսված ամբողջ ծավալով ստացվել է հացահատիկային և կերային մշակաբույսերի արտադրության զարգացման ծրագրի շրջանակներում:

2013 թվականին 6.2 մլրդ դրամ է ստացվել ոչ նպատակային ծրագրերի շրջանակներում՝ կազմելով ծրագրի 107.3%-ը: Մասնավորապես՝ 5.2 մլրդ դրամ է ստացվել ՀՀ-ԵՄ գործողությունների 2007-2010թթ. ծրագրի շրջանակներում նախատեսված միջոցառումների ֆինանսավորման համար: Նշված գումարից 2.6 մլրդ դրամը ստացվել է 2009թ. ազգային գործողությունների ծրագրի շրջանակներում՝ մասնագիտական կրթության և ուսումնական (ՄԿՈՒ) բարեփոխման շարունակության և զբաղվածության հայեցակարգի մշակման նպատակով, 2.5 մլրդ դրամը՝ 2010թ. ազգային գործողությունների ծրագրի շրջանակներում, որպես աջակցություն ՀՀ կառավարությանը՝ ուղղված ԵՀԲ գործողությունների ծրագրի իրականացմանը և ապագա Ասոցիացման համաձայնագրի գծով նախապատրաստական աշխատանքներին: Ավելի քան 1 մլրդ դրամ ստացվել է ԵՄ պարենային ապահովության ծրագրի շրջանակներում, որը 2013 թվականի պետական բյուջեում նախատեսված չէ:

2013 թվականի ընթացքում 2.4 մլրդ դրամ է ստացվել ՀՀ պետական մարմինների արտաբյուջետային ծրագրերի շրջանակներում, որը կազմել է ծրագրի 108%-ը: Դրանց հիմնական մասը՝ 2.3 մլրդ դրամը, դոնորների կողմից հատկացվել է առողջապահական համակարգին:

Նախորդ տարվա համեմատ պաշտոնական դրամաշնորհներից պետական բյուջեի մուտքերը նվազել են 28.9%-ով կամ 5.4 մլրդ դրամով:

Այլ եկամուտներ

2013 թվականին ՀՀ պետական բյուջե են մուտքագրվել ավելի քան 57.2 մլրդ դրամ այլ եկամուտներ, որը կազմում է բյուջեի եկամուտների 5.3%-ը՝ նախորդ տարվա 5.2%-ի դիմաց: Այլ եկամուտները 8.2%-ով կամ 4.3 մլրդ դրամով գերազանցել են կառավարության լիազորությունների շրջանակներում ճշտված ծրագրով սահմանված ցուցանիշը, ինչը հիմնականում պայմանավորված է բանկերում և այլ ֆինանսավարկային հաստատություններում բյուջեի ժամանակավոր ազատ միջոցների տեղաբաշխումից և դեպոզիտներից ստացվող տոկոսավճարների և օրենքով ու իրավական այլ ակտերով սահմանված՝ պետական բյուջե մուտքագրվող այլ եկամուտների բարձր ցուցանիշով, որոնք համապատասխանաբար 3 և 1.9 անգամ գերազանցել են ծրագիրը: Այլ եկամուտներից 27.3 մլրդ դրամը կազմել են պետական հիմնարկների արտաբյուջետային մուտքերը, որոնք ապահովվել են 97.7%-ով:

Հաշվետու տարում 59.3 մլն դրամ է մուտքագրվել ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի ծախսերի նկատմամբ եկամուտների գերազանցումից՝ 100%-ով ապահովելով կանխատեսված և 80.1%-ով զիջելով նախորդ տարվա ցուցանիշը:

Պետական սեփականություն հանդիսացող գույքի վարձակալության դիմաց 2013 թվականին ՀՀ պետական բյուջե է մուտքագրվել շուրջ 839.1 մլն դրամ՝ 1.1%-ով գերազանցելով ծրագիրը: Նախորդ տարվա համեմատ նշված եկամուտներն աճել են 1.2%-ով կամ 9.8 մլն դրամով: Մասնավորապես՝ 832.6 մլն դրամ է մուտքագրվել գույքի (բացառությամբ հողի) վարձակալության վարձավճարներից, 1.6 մլն դրամ՝ պետական պահուստի հողերի վարձակալության և օգտագործման դիմաց գանձվող վարձավճարներից, 4.8 մլն դրամ՝ պետական անտառների և անտառային հողերի օգտագործման վճարներից: Նախորդ տարվա համեմատ պետական սեփականություն հանդիսացող գույքի վարձակալության վարձավճարների աճը պայմանավորված է ձեռնարկությունների և գույքի (բացառությամբ հողի) վարձակալության վարձավճարների 5.8% աճով: Պետական պահուստի հողերի վարձակալության և օգտագործման դիմաց գանձվող վարձավճարները և պետական անտառների և անտառային հողերի օգտագործման վճարները նախորդ տարվա համեմատ նվազել են համապատասխանաբար 90.3 և 81.2 տոկոսով:

Հաշվետու տարում բանկերում և այլ ֆինանսավարկային հաստատություններում բյուջեի ժամանակավոր ազատ միջոցների տեղաբաշխումից և դեպոզիտներից ստացվել են 7.1 մլրդ դրամ տոկոսավճարներ՝ 204%-ով գերազանցելով ծրագրված ցուցանիշը և 35.8%-ով՝ նախորդ տարվա մուտքերը: Ծրագրվածից ավել եկամուտների ստացումը պայմանավորված է հետևյալ հանգամանքներով.

- 2013 թվականի ՀՀ պետական բյուջեի կատարման ընթացքում պետական բյուջեի ծախսերը պակաս են կազմել ՀՀ կառավարության կողմից հաստատված եռամսյակային համամասնություններով նախատեսված ծրագրերից,
- գանձապետական միասնական հաշվի կառավարումից սպասվող եկամուտների կանխատեսման ժամանակ հաշվի չեն առնվել Եվրապարտատոմսերի տեղաբաշխումից ստացված միջոցները, որոնց մի մասը ևս ավանդադրվել է:

Իրավաբանական անձանց բաժնետիրական կապիտալում կատարված ներդրումներից ստացվել են 726.3 մլն դրամի շահաբաժիններ՝ 95.5%-ով ապահովելով ծրագրային ցուցանիշը և 23%-ով զիջելով նախորդ տարվա ցուցանիշը:

Պետության տված վարկերի օգտագործման դիմաց 2013 թվականին ստացվել են շուրջ 5.9 մլրդ դրամ տոկոսավճարներ, որից 5.7 մլրդ դրամը (ծրագրի 90.9%-ը) ստացվել է ռեզիդենտներին, իսկ 186.5 մլն դրամը (ծրագրի 100%-ը)՝ ոչ ռեզիդենտներին տրամադրված վարկերի օգտագործման դիմաց: Նախորդ տարվա համեմատ ռեզիդենտներին տրամադրված վարկերի օգտագործման

դիմաց տոկոսավճարները նվազել են 14.5%-ով կամ 968.6 մլն դրամով, իսկ ոչ ռեզիդենտներին տրամադրված վարկերի օգտագործման դիմաց տոկոսավճարները՝ աճել 1.3%-ով կամ 2.4 մլն դրամով:

2013 թվականի ընթացքում պետական բյուջե են մուտքագրվել ավելի քան 894.9 մլն դրամ ոչ պաշտոնական դրամաշնորհներ՝ գրեթե ամբողջությամբ (99.9%-ով) ապահովելով ծրագրային ցուցանիշը:

Իրավախախտումների համար գործադիր և դատական մարմինների կողմից կիրառվող պատժամիջոցներից մուտքերը կազմել են ավելի քան 11.5 մլրդ դրամ՝ կազմելով ծրագրի 100.5%-ը և 35%-ով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը:

Ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից ստացված եկամուտները կազմել են 26.5 մլրդ դրամ՝ 94%-ով ապահովելով տարեկան ծրագրային ցուցանիշը: Շեղումը հիմնականում պայմանավորված է ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանության արտաբյուջետային ծրագրերի շրջանակներում և ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի մուտքերի ցածր կատարողականով, ինչը պայմանավորված է 2013 թվականին գործարքների թվի նվազմամբ և նախատեսվածից ցածր գներով կնքված պայմանագրերով:

Օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ պետական բյուջե մուտքագրվող այլ եկամուտների գծով պետական բյուջե է մուտքագրվել 3.6 մլրդ դրամ՝ 94.6%-ով գերազանցելով ծրագրի կատարումը:

ՀՀ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ

ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի մասին օրենքով նախատեսվել էր 1,152.6 մլրդ դրամ ծախսերի կատարում: Տարվա ընթացքում, հաշվի առնելով «ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 11-րդ կետի և 11-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջները, պետության դրամական միջոցների համախմբված հաշվառման նպատակով, պետական բյուջեի ծրագրային և փաստացի ցուցանիշներում ներառվել են նաև ՀՀ պետական հիմնարկների համար բացված արտաբյուջետային հաշիվների համապատասխան շրջանառությունը, ինչպես նաև առանց սահմանափակման պետական բյուջեից կատարվող վճարումները: Նշված միջոցները, ինչպես նաև պետական բյուջեում փոփոխություններ կատարելու վերաբերյալ օրենքով և օրենքով ՀՀ կառավարությանը վերապահված լիազորությունների շրջանակներում կատարված փոփոխությունները ներառյալ՝ ՀՀ պետական բյուջեի ծախսերի ծրագիրը կազմել է շուրջ 1,258.2 մլրդ դրամ՝ ավելանալով 105.6 մլրդ դրամով (9.2%-ով): Վերջինիս դիմաց փաստացի ծախսերը կազմել են 1,142.9 մլրդ դրամ՝ ապահովելով պետական բյուջեի ծախսային ծրագրերի շրջանակներում պետական մարմինների կողմից սահմանված կարգով ստանձնած պարտավորությունների ամբողջական և ծրագրի 90.8% կատարողական: Շեղումը հիմնականում պայմանավորված է արտաքին աջակցությամբ իրականացվող ծրագրերի կատարողականով (41.1%), առանց որոնց ծախսերի կատարողականը կազմում է 98.6%, ինչպես նաև որոշ ծրագրերով նախատեսված միջոցների տնտեսմամբ և առանձին ծրագրերի շրջանակներում գնումների հետ կապված վճարումների հետաձգմամբ: Պետական հիմնարկների արտաբյուջետային միջոցների հաշվին 2013 թվականին կատարվել են 31.9 մլրդ դրամի ծախսեր՝ կազմելով ծրագրի 91.9%-ը:

2013 թվականին նախորդ տարվա համեմատ ՀՆԱ-ի անվանական մեծության 6.7% աճի պայմաններում ՀՀ պետական բյուջեի ծախսերն ավելացել են 13.6%-ով, ինչը հանգեցրել է ՀՆԱ-ի նկատմամբ ծախսերի հարաբերակցության աճին. այն կազմել է 26.8%՝ կանխատեսված 25.4%-ի¹⁷ և 2012 թվականի 25.2%-ի դիմաց:

Տնտեսագիտական դասակարգում

ՀՀ 2013 պետական բյուջեի փաստացի ծախսերի շեղումը ծրագրից կազմել է 9.2% կամ 115.3 մլրդ դրամ, որից 92.6 մլրդ դրամը բաժին է ընկել ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններին, 22.7 մլրդ դրամը՝ ընթացիկ ծախսերին: Նախորդ տարվա համեմատ պետական բյուջեի ծախսերն աճել են 13.6%-ով (136.8 մլրդ դրամով)՝ պայմանավորված ընթացիկ ծախսերի աճով: Արդյունքում 2012 թվականի համեմատ բյուջետային ծախսերի կազմում 1.8

¹⁷ ՀՀ 2013 թվականի բյուջետային ուղերձում կանխատեսված ցուցանիշ:

տոկոսային կետով նվազել է ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունների տեսակարար կշիռը և համապատասխանաբար՝ ավելացել ընթացիկ ծախսերի կշիռը: ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի ծախսերն ունեցել են հետևյալ կառուցվածքը՝ դրանց 88.8%-ն ուղղվել է ընթացիկ ծախսերին և 11.2%-ը՝ ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններին:

Ընթացիկ ծախսեր

ՀՀ 2013 թվականի պետական բյուջեից ընթացիկ ծախսերի ֆինանսավորմանը տրամադրվել է 1,015.4 մլրդ դրամ, որը կազմում է տարեկան ծրագրի 97.8%-ը՝ հիմնականում պայմանավորված այլ ծախսերի և նպաստների ծախսերի ծրագրից շեղումներով:

Հաշվետու տարում ընթացիկ ծախսերի 9.9%-ը՝ շուրջ 101 մլրդ դրամ, տրամադրվել է պետական հիմնարկների աշխատողների աշխատանքի վարձատրությանը: Նշված ծախսերի գծով օգտագործվել է տարեկան նախատեսված միջոցների 99.1%-ը: Նախորդ տարվա համեմատ աշխատանքի վարձատրության ծախսերն ավելացել են 17.1%-ով: Աճը հիմնականում պայմանավորված է այն հանգամանքով, որ «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքով զինծառայողների դրամական եկամուտները հանվել են նախկինում նվազեցվող եկամուտներ համարվող եկամուտների ցանկից, և սահմանվել է, որ զինծառայողներին վճարվող դրամական եկամուտները հարկվում են եկամտային հարկով՝ օրենքով սահմանված ընդհանուր կարգով:

2013 թվականին ծառայությունների և ապրանքների ձեռքբերման նպատակով պետական բյուջեից տրամադրվել է 215.4 մլրդ դրամ կամ բյուջեի ընթացիկ ծախսերի 21.2%-ը: Նշված ծախսերի տարեկան ծրագիրը կատարվել է 98.1%-ով: Նախորդ տարվա համեմատ ծառայությունների և ապրանքների ձեռքբերման ծախսերն ավելացել են 5.2%-ով՝ հիմնականում պայմանավորված նյութերի և պայմանագրային այլ ծառայությունների ձեռքբերման ծախսերի աճով:

Հաշվետու տարվա ընթացքում պետական պարտքի սպասարկման նպատակով պետական բյուջեից տրամադրվել է ավելի քան 46.7 մլրդ դրամ կամ ծրագրված միջոցների 99.7%-ը, որը կազմել է ընթացիկ ծախսերի 4.6%-ը: Ներքին պետական պարտքի սպասարկման ծախսերը կազմել են 29.9 մլրդ դրամ կամ կանխատեսված ցուցանիշի 99.8%-ը: Արտաքին պարտքի սպասարկմանը հաշվետու տարում ուղղվել է 16.8 մլրդ դրամ կամ կանխատեսվածի 99.4%-ը: Նախորդ տարվա համեմատ պետական պարտքի սպասարկման ծախսերն ավելացել են 14.9%-ով կամ 6.1 մլրդ դրամով: Մասնավորապես՝ 28.8%-ով (6.7 մլրդ դրամով) աճ է արձանագրվել ներքին պարտքի սպասարկման ծախսերում, իսկ արտաքին պարտքի սպասարկման ծախսերը նվազել են 3.5%-ով (603.5 մլն դրամով): Ներքին պետական պարտքի սպասարկման ծախսերի աճը պայմանավորված է ներքին պարտքի ծավալի աճով, իսկ արտաքին պարտքի սպասարկման ծախսերի անկումը

պայմանավորված է 6-ամսյա ԱՄՆ դոլարի LIBOR, 6-ամսյա EURIBOR, SDR տոկոսադրույքների նվազմամբ, արտաքին վարկերի՝ ծրագրից պակաս ստացումներով, ինչպես նաև այն հանգամանքով, որ 2013թ. հոկտեմբերին ՌԴ նկատմամբ պարտքի ամբողջական մարման արդյունքում տնտեսվել է երկու ամսվա տոկոսավճար:

2013 թվականին ՀՀ պետական բյուջեից տրամադրվել են 25 մլրդ դրամի սուբսիդիաներ՝ կազմելով ընթացիկ ծախսերի 2.5%-ը, որից 20.3 մլրդ դրամը հատկացվել է պետական կազմակերպություններին, 4.7 մլրդ դրամը՝ ոչ պետական կազմակերպություններին: Հատկացված սուբսիդիաներից 7.6 մլրդ դրամը տրամադրվել է հանգստի, մշակույթի և կրոնի, 5.2 մլրդ դրամը՝ սոցիալական պաշտպանության, 4.6 մլրդ դրամը՝ տնտեսական հարաբերությունների բնագավառներին: Սուբսիդիաների ծրագիրը կատարվել է 98.6%-ով: 2012 թվականի համեմատ պետական բյուջեից տրամադրված սուբսիդիաների գումարն աճել է 18.6%-ով, ընդ որում, 29.9%-ով ավելացել են ոչ պետական հատվածին, 16.2%-ով՝ պետական հատվածին կատարված հատկացումները:

2013 թվականին ՀՀ պետական բյուջեից տրամադրված դրամաշնորհները կազմել են 122.8 մլրդ դրամ՝ ապահովելով 98.9% կատարողական և ընթացիկ ծախսերի 12.1%-ը: Մասնավորապես՝ 121.2 մլրդ դրամ է տրամադրվել պետական հատվածի այլ մակարդակներին, 1.7 մլրդ դրամ՝ միջազգային կազմակերպություններին: Պետական բյուջեից համայնքների բյուջեներին համահարթեցման սկզբունքով տրվող դոտացիաները հատկացվել են նախատեսված ամբողջ ծավալով՝ կազմելով 36.2 մլրդ դրամ, որը 11.6%-ով կամ 3.8 մլրդ դրամով գերազանցել է նախորդ տարվա մակարդակը: 9.4 մլրդ դրամի սուբվենցիաներ են տրամադրվել համայնքների բյուջեներին՝ 99.7%-ով կատարելով ծրագիրը: 2012 թվականի համեմատ պետական բյուջեից տրամադրված դրամաշնորհներն աճել են 8.9%-ով՝ հիմնականում պայմանավորված պետական հատվածի այլ մակարդակներին տրամադրված ընթացիկ դրամաշնորհների աճով:

Հաշվետու տարում պետական բյուջեի ընթացիկ ծախսերի 29%-ը կամ 294.9 մլրդ դրամը կազմել են սոցիալական նպաստները և կենսաթոշակները, որոնց տարեկան ծրագիրը կատարվել է 98.7%-ով: Նշված հատկացումներից 96.7 մլրդ դրամն ուղղվել է նպաստների, 198.3 մլրդ դրամը՝ կենսաթոշակների ծախսերի ֆինանսավորմանը, որոնք կատարվել են համապատասխանաբար 96.3 և 99.9 տոկոսով: Նախորդ տարվա համեմատ սոցիալական նպաստների և կենսաթոշակների ծախսերն աճել են 2.2%-ով կամ 6.4 մլրդ դրամով: Մասնավորապես՝ 5.8%-ով ավելացել են նպաստները, 0.5%-ով՝ կենսաթոշակները: Նպաստների աճը հիմնականում պայմանավորված է պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների սոցիալական փաթեթի ծառայությունների և երեխաների կամ ընտանեկան նպաստների գծով ծախսերի աճով:

2013 թվականի պետական բյուջեի ընթացիկ ծախսերի 20.6%-ը կամ 209.5 մլրդ դրամը կազմել են այլ ծախսերը, որոնց տարեկան ծրագիրը կատարվել է 94.7%-ով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 72.3%-ով՝ հիմնականում պայմանավորված «Հայռուսգազարդ» ՓԲԸ-ին մատակարարված գազի արժեքի փոխհատուցման նպատակով հատկացված միջոցներով և պաշտպանության ծախսերի աճով:

Ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ

2013 թվականին պետական բյուջեի ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունները կազմել են 127.5 մլրդ դրամ կամ ընդհանուր ծախսերի 11.2%-ը և տարեկան ծրագրի 57.9%-ը: Ծրագրից շեղումը հիմնականում արձանագրվել է շենքերի և շինությունների շինարարության և այլ մեքենաների ու սարքավորումների գծով ծախսերում: 2012 թվականի համեմատ ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունների ցուցանիշը նվազել է 2.3%-ով, ընդ որում ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը նվազել են 3.1%-ով, իսկ ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքերը՝ 41.7%-ով:

2013 թվականին ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը կազմել են 129.1 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրի 58.2%-ը: Նշված գումարից 106.4 մլրդ դրամը՝ նախատեսվածի 58.1%-ը, օգտագործվել է շենքերի և շինությունների ձեռքբերման, շինարարության և կապիտալ վերանորոգման, 19.6 մլրդ դրամը՝ նախատեսվածի 56%-ը, մեքենաների և սարքավորումների ձեռքբերման, պահպանման և հիմնանորոգման, 3.1 մլրդ դրամը՝ նախատեսվածի 84.7%-ը, այլ հիմնական միջոցների ձեռքբերման նպատակով: Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի կատարողականը կապված է արտաքին աջակցությամբ իրականացվող ծրագրերի կատարողականի հետ, առանց որոնց նշված ցուցանիշը կազմում է 97.2%: 2012 թվականի համեմատ ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը նվազել են 3.1%-ով կամ 4.1 մլրդ դրամով՝ հիմնականում պայմանավորված շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգման և այլ մեքենաների ու սարքավորումների ձեռքբերման, պահպանման և հիմնանորոգման ծախսերի նվազմամբ: Միևնույն ժամանակ շենքերի և շինությունների շինարարության ծախսերն աճել են 27%ով կամ 15.6 մլրդ դրամով:

Հաշվետու տարվա ընթացքում 1.6 մլրդ դրամ է մուտքագրվել ոչ ֆինանսական ակտիվների օտարումից՝ կանխատեսված 1.6 մլրդ դրամի և նախորդ տարվա 2.7 մլրդ դրամի դիմաց: Նշված գումարից 298.2 մլն դրամը ստացվել է հողի, 1.3 մլրդ դրամը՝ այլ ակտիվների օտարումից:

Գործառական դասակարգում

Ընդհանուր բնույթի պետական ծառայություններ

ՀՀ 2013 թվականի պետական բյուջեից 188.1 մլրդ դրամ է տրամադրվել ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների ծախսերին՝ ապահովելով ծրագրի 88.9% կատարողական: Շեղումը հիմնականում պայմանավորված է արտաքին աջակցությամբ իրականացվող ծրագրերի, մասնավորապես՝ Եվրոպական միության ու այլ դոնորների և Եվրոպական միության Հարևանության ներդրումային ծրագրի աջակցությամբ իրականացվող ՀՀ պետական սահմանի «Բագրատաշեն», «Բավրա» և «Գոգավան» անցման կետերի արդիականացման ծրագրի կատարողականով: 2013 թվականի համեմատ ոլորտի ծախսերն աճել են 17.2%-ով կամ 27.6 մլրդ դրամով: Աճի հիմնական մասը բաժին է ընկնում ՀՀ պետական արժեթղթերի սպասարկման, Եվրոպական միության և այլ դոնորների աջակցությամբ իրականացվող ՀՀ պետական սահմանի «Բագրատաշեն», «Բավրա» և «Գոգավան» անցման կետերի արդիականացման ծրագրի, ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նյութական խրախուսման և համակարգի զարգացման ֆոնդի, Համայնքների բյուջեներին ֆինանսական համահարթեցման սկզբունքով դոտացիաների տրամադրման և ԱԺ ընդունած օրենքների կիրարկման արդյունքում համայնքների բյուջեների եկամուտների կորուստների փոխհատուցման ծախսերին:

«Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում» դասի ծախսերը հաշվետու տարում կազմել են շուրջ 14.5 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրի 97%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 1.5%-ով:

2013 թվականին ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի և պատգամավորների պահպանման համար նախատեսված միջոցներն օգտագործվել են նախատեսված ողջ ծավալով՝ կազմելով 2.8 մլրդ դրամ: Նախորդ տարվա համեմատ դրանք աճել են 4%-ով՝ հիմնականում պայմանավորված աշխատանքի վարձատրության, ներկայացուցչական և արտասահմանյան գործուղումների ծախսերի աճով:

Հաշվետու տարում ՀՀ վերահսկիչ պալատի պահպանմանը հատկացվել է 903.8 մլն դրամ կազմելով ծրագրի 97%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն ավելացել են 5.2%-ով, ինչը հիմնականում պայմանավորված է աշխատանքի վարձատրության ծախսերի աճով:

Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանմանը տրամադրվել է շուրջ 7 մլրդ դրամ՝ կազմելով ծրագրի 97.1%-ը: Հատկացված միջոցներով իրականացվել է ՀՀ նախագահի և կառավարության

աշխատակազմերի, ինպես նաև մարզպետարանների պահպանումը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն էական փոփոխություն չեն կրել:

« Նախարարությունների պահպանման ծախսերը՝ նախարարների աշխատակազմերի մասով, 2013 թվականին կազմել են 1 մլրդ դրամ, իսկ նախարարությունների (« տարածքային կառավարման նախարարության, « արդարադատության նախարարության և « սփյուռքի նախարարության) աշխատակազմերի մասով՝ 855.5 մլն դրամ, և ապահովել համապատասխանաբար 94.9% և 94.8% կատարողական: Նշված ծրագրերում առկա են տնտեսումներ, իսկ նախորդ տարվա համեմատ դրանք էական փոփոխության չեն ենթարկվել:

Վարչական օբյեկտների շինարարությանը տրամադրվել է 111.2 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 96.5%-ը: Հատկացված միջոցներով իրականացվել են « Նախագահի աշխատակազմի ավտոտնտեսության տարածքի շինարարական աշխատանքներ: Նախագծահետազոտական ծախսերի գծով առկա են տնտեսումներ:

Վարչական օբյեկտների հիմնանորոգմանը տրամադրվել է 365.6 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 85.9%-ը, ինչը հիմնականում պայմանավորված է նախատեսված աշխատանքների ծավալների փոփոխությամբ:

Հաշվետու տարվա ընթացքում 600.6 մլն դրամի սուբվենցիա է հատկացվել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի պահպանմանը՝ ապահովելով ծրագրի 100%-ը և 2.7%-ով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը, ինչը հիմնականում պայմանավորված է աշխատավարձերի, էլեկտրաէներգիայի և գազի սակագների բարձրացմամբ:

« վերահսկիչ պալատի պահուստային ֆոնդի գծով նախատեսված 18.6 մլն դրամը օգտագործվել է 99.7%-ով և 8.2%-ով գերազանցել նախորդ տարվա ցուցանիշը:

« Ազգային ժողովի աշխատակազմի և գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների կարողությունների զարգացմանը տրամադրվել են համապատասխանաբար 52.2 և 296.8 մլն դրամ՝ կազմելով ծրագրի 98% և 94.2%-ը: Հատկացված միջոցներով « Նախագահի, Ազգային ժողովի, կառավարության և մարզպետարանների աշխատակազմերի համար ձեռք են բերվել համակարգչային ծրագրեր, վարչական սարքավորումներ, տնտեսական գույք և այլն: « Ազգային ժողովի աշխատակազմի կարողությունների զարգացման նպատակով 2012 թվականին միջոցներ չէին նախատեսվել, իսկ գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների կարողությունների զարգացման ծախսերն ավելացել են 17.7%-ով՝ հիմնականում պայմանավորված այն հանգամանքով, որ 2012 թվականին մարզպետարանները սույն ծրագրում ընդգրկված չեն եղել:

Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների կարողությունների զարգացման ծրագրի շրջանակներում (նախարարությունների աշխատակազմերի մասով) « արդարադատության նախարարությանը տրամադրվել է 8.6 մլն դրամ՝ կազմելով ծրագրի 34.4%-ը: Տնտեսումը պայմանավորված է այն հանգամանքով, որ վարչական սարքավորումները ձեռք են բերվել անվանացանկում նախատեսվածից ցածր գներով, իսկ տրանսպորտային սարքավորումների համար նախատեսված 15 մլն դրամը չի օգտագործվել, որով էլ պայմանավորված՝ նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերը նվազել են 48.8%-ով:

Նախատեսված ողջ ծավալով իրականացվել են « Կառավարության գործունեության գնահատականների, կյանքի որակի և համայնքային կարիքների գնահատման հետազոտությունների ծախսերը, որոնք կազմել են 107 մլն դրամ: Այս ծրագրով իրականացվել են մի շարք սոցիոլոգիական հետազոտություններ այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են՝ քաղաքական ուժերի, կուսակցությունների և գործիչների վարկանիշերը նախընտրական և հետընտրական շրջաններում, համայնքային զարգացման և ենթակառուցվածքների զարգացման միտումները, ինչպես նաև հեռահաղորդակցության ոլորտի զարգացման ռազմավարության մշակում: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 3.2%-ով:

« Կառավարության աշխատակազմի «Օրենսդրության կարգավորման ազգային կենտրոն» ծրագրերի իրականացման գրասենյակին հատկացվել է 7 մլն դրամ՝ կազմելով ծրագրի 59.9%-ը: Տնտեսումը, ինչպես նաև 2012 թվականի համեմատ 9% անկումը պայմանավորված է գնումների մրցույթների արդյունքում սահմանված գներից ավելի ցածր գներով ձեռքբերումներով:

Արտաբյուջետային միջոցների հաշվին գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման նպատակով իրականացվել են 189.9 մլն դրամի ծախսեր՝ կազմելով ծրագրի 97.1%-ը: « արդարադատության նախարարության տվյալ արտաբյուջետային ծրագրի շրջանակներում մատուցվում են իրավաբանական անձանց պետական գրանցման, անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման, քաղաքացիական կացության ակտերի գրանցման և ապոստիլ դնելու վճարովի ծառայություններ:

«Ավստրիայի զարգացման գործակալություն» ընկերության աջակցությամբ իրականացվող «Հայաստանի Հանրապետությունում կարգավորիչ գիյոտին» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում նախատեսված 136.6 մլն դրամի միջոցներն ամբողջությամբ օգտագործվել են: Ծրագրի համաձայն 2013 թվականի ընթացքում ուսումնասիրվել են ձեռնարկատիրական, մաքսային, հարկային, սոցիալական հարցերի, մշակույթի, արտաքին գործերի և միջազգային հարաբերությունների ոլորտները կարգավորող իրավական ակտերը և համապատասխան բիզնես

գործընթացները, և ՀՀ տնտեսական ոլորտը կարգավորող իրավական ակտերի բարեփոխումների խորհրդի քննարկմանն են ներկայացվել առաջարկվող փոփոխությունների իրավական ակտերի փաթեթները: Փաթեթների ընդունմամբ ուժը կորցրած կճանաչվեն և կբարելավվեն բազմաթիվ իրավական ակտեր և կկրճատվեն բիզնես գործընթացներ՝ դյուրացնելով ընթացակարգերը, պարզեցնելով ու բարձրացնելով քաղաքացիներին մատուցվող ծառայությունների որակը և, որ ամենակարևորն է, նպաստելով բիզնեսի և քաղաքացիների համար ծախսերի էական կրճատմանը:

Ֆինանսական և հարկաբյուջետային հարաբերությունների դասի ծրագրերին հաշվետու տարում տրամադրվել է շուրջ 55.3 մլրդ դրամ՝ կազմելով նախատեսվածի 76.7%-ը: Շեղումը, որը կազմել է 16.8 մլրդ դրամ, հիմնականում պայմանավորված է Եվրոպական միության և այլ դոնորների և Եվրոպական միության Հարևանության ներդրումային ծրագրի աջակցությամբ իրականացվող ՀՀ պետական սահմանի «Բագրատաշեն», «Բավրա» և «Գոգավան» անցման կետերի արդիականացման ծրագրի ցածր կատարողականով: Նախորդ տարվա համեմատ նշված դասի ծախսերն աճել են 32.1%-ով կամ 13.4 մլրդ դրամով՝ հիմնականում պայմանավորված Եվրոպական միության և այլ դոնորների աջակցությամբ իրականացվող ՀՀ պետական սահմանի «Բագրատաշեն», «Բավրա» և «Գոգավան» անցման կետերի արդիականացման ծրագրի մեկնարկով, ինչպես նաև ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նյութական խրախուսման և համակարգի զարգացման ֆոնդի և ավելացված արժեքի հարկի վերադարձի ծախսերի աճով:

Ֆինանսական և հարկաբյուջետային հարաբերությունների դասում ընդգրկված գործադիր իշխանության մարմինների պահպանման ծրագրին տրամադրվել է 11.6 մլրդ դրամ, որն իրականացվել է 99.3%-ով: Միջոցներն ուղղվել են ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի պահպանմանը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 6.2%-ով կամ 680.7 մլն դրամով՝ հիմնականում պայմանավորված համակարգչային ծառայությունների և աշխատանքի վարձատրության ծախսերի աճով:

Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանմանը (նախարարությունների աշխատակազմերի մասով) տրամադրվել է շուրջ 1.5 մլրդ դրամ, որի կատարողականը կազմել է 90.8%: Միջոցներն ուղղվել են ՀՀ ֆինանսների նախարարության պահպանմանը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 5.2%-ով: ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակիցների խրախուսման նպատակային ֆոնդը կազմել է 436.4 մլն դրամ կամ նախատեսվածի 100%-ը: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերը նվազել են 14.1%-ով:

ՀՀ պետական պարտքի կառավարման գործընթացի հրապարակայնության ապահովման նպատակով 2013 թվականին ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է 32.4 մլն դրամ՝ կազմելով

նախատեսվածի 99.6%-ը: Ծրագրի միջոցով իրականացվում են պետական պարտատոմսերի թողարկման, պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորման վերաբերյալ կիսամյակային և տարեկան հաշվետվությունների, հեռուստատեսային և ռադիո հաղորդումների, հայտարարությունների պատրաստման և տարածման (հեռարձակման) աշխատանքները: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերը նվազել են 34%-ով:

Ակցիզային դրոշմանիշերի ձեռքբերման ծախսերը կազմել են 532.3 մլն դրամ ապահովելով 99.3% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 37.1%-ով, որը պայմանավորված է 2012 և 2013 թվագրումներով ոչ ալկոհոլային խմիչքների և տեղական արտադրության ծխախոտի ակցիզային դրոշմանիշերի մնացորդների առկայությամբ, որի հետևանքով ալկոհոլային խմիչք տեսակի ակցիզային դրոշմանիշեր պատվիրվել են մասնակի, իսկ ծխախոտ տեսակի ակցիզային դրոշմանիշեր ու էլեկտրոնային կրիչների դրոշմապիտակներ ընդհանրապես չեն պատվիրվել:

Մաքսային ծառայությունում կինոլոգիական կենտրոնի ստեղծման ծրագիրն իրականացվել է առաջին անգամ՝ կազմելով 98.5 % կամ 212.8 մլն դրամ:

Հաշվետու տարում ՀՀ գանձապետական համակարգի վճարահաշվարկային սպասարկումն ապահովելու նպատակով պետական բյուջեից տրամադրվել է 201.6 մլն դրամ՝ կազմելով ծրագրի 94.2%-ը, որը պայմանավորված է բանկերի կողմից կանխիկ դրամի սպասարկման տոկոսադրույքի իջեցմամբ և կանխիկի սպասարկման կրճատմամբ: 2012 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 35.9%-ով՝ պայմանավորված այն հանգամանքով, ՀՀ ֆինանսների նախարարության առանձին գործառույթների ավտոմատացման համար մշակված և ներդրված ծրագրային ապահովումների հետագա զարգացման, ինչպես նաև որոշ դեպքերում դրանք միմյանց ինտեգրելու նպատակով անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերել ծրագրային ապահովումների նոր մոդուլներ:

Նախատեսված ողջ ծավալով օգտագործվել են ավելացված արժեքի հարկի վերադարձի համար նախատեսված միջոցները, որոնք կազմել են 25.1 մլրդ դրամ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 10.9%-ով:

Էլեկտրոնային գնումների համակարգի ներդրման գծով նախատեսված շուրջ 5 մլն դրամը չի օգտագործվել՝ պայմանավորված այն հանգամանքով, որ էլեկտրոնային գնումների համակարգի սպասարկման ծառայությունները, համաձայն ՀՀ ֆինանսների նախարարության և «ԷԿԷՆԳ» ՓԲԸ-ի միջև 2013 թվականի մարտի 21-ին կնքված ծրագրի իրականացման համաձայնագրի, մատուցվում են անվճար: 2012 թվականից գնումների ոլորտում բարեփոխումների իրականացման EBRD-UNCITRAL ծրագրի անմիջական մասնակցությամբ քայլեր են իրականացվում ՀՀ-ում գնումների էլեկտրոնային համակարգում առկա թերությունների վերացման համար: Տարվող աշխատանքների արդյունքում 2012 թվականի դեկտեմբերին ՎՋԵԲ-ի կողմից մշակվել է «ՀՀ-ում էլեկտրոնային

գնումների բարեփոխման ամփոփման 2013-2015թթ. ճանապարհային քարտեզը», որտեղ մանրամասն ներկայացված են համակարգի անխափան աշխատանքն ապահովելու համար անհրաժեշտ քայլերը:

Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների կարողությունների զարգացմանը տրամադրվել է 754.9 մլն դրամ, որի կատարողականը կազմել է 98.9%: Միջոցները տրամադրվել են ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեին:

Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների կարողությունների զարգացմանը (նախարարությունների աշխատակազմերի մասով) տրամադրվել է 124 մլն դրամ, որի կատարողականը կազմել է 86.4%: Միջոցները տրամադրվել են ՀՀ ֆինանսների նախարարությանը: Տնտեսումը պայմանավորված է այն հանգամանքով, որ պետական բյուջեով նախատեսված որոշ ապրանքատեսակների գներն ավելի բարձր էին, քան հետագայում ՀՀ կառավարության 18/04/2013թ. N441-Ն որոշմամբ սահմանված գները: Պետք է նշել նաև, որ համակարգչային ցանցի և սերվերային տեխնիկայի արդիականացման, այդ թվում՝ տվյալների պահպանման համակարգի ներդրման արդյունքում նախատեսված որոշ սարքավորումների ձեռքբերման անհրաժեշտությունը վերացել է:

Հարկային վարչարարությանն օժանդակության նպատակով վիճակահանության անցկացման և պարզևավճարների տրամադրման նպատակով օգտագործվել է 998.8 մլն դրամ կամ նախատեսվածի 99%-ը: Նշված ծախսերը նախորդ տարվա համեմատ աճել են 3.6%-ով:

ՀՀ պետական սահմանի «Բագրատաշեն», «Բավրա» և «Գոգավան» անցման կետերի արդիականացման ծրագրի շրջանակներում Եվրոպական միության Հարևանության ներդրումային ծրագրի և Եվրոպական միության աջակցության գծով նախատեսված միջոցները՝ համապատասխանաբար 4.1 մլրդ և 1.5 մլրդ դրամի չափով, չեն օգտագործվել, իսկ Եվրոպական միության և այլ դոնորների աջակցության մասով օգտագործվել են 35.2%-ով՝ կազմելով 5.5 մլրդ դրամ:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նյութական խրախուսման և համակարգի զարգացման ֆոնդի ծախսերը կազմել են 8.2 մլրդ դրամ կամ նախատեսվածի 93.2%-ը: Նախորդ տարվա համեմատ դրանք աճել են 91.1%-ով:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնից ձեռք բերվող հարկային հաշիվների ձևերի տպագրությանը տրամադրվել է 20.5 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 36.6%-ը և 51.7%-ով զիջելով 2012 թվականի մակարդակը: Ծախսերի նվազումը պայմանավորված է նրանով, որ հարկ վճարողների մի մասը հարկային հաշիվները դուրս է գրում էլեկտրոնային տարբերակով:

Արտաբյուջետային միջոցների հաշվին ՀՀ ֆինանսների նախարարության կարողությունների զարգացման ծրագիրը, որի համար նախատեսվել էր 47.1 մլն դրամ, չի իրականացվել, քանի որ ծրագիրը USAID կողմից չի ֆինանսավորվել:

Հաշվետու տարում 12.1 մլրդ դրամ է տրամադրվել *արտաքին հարաբերությունների* դասի ծրագրերին, որը կազմել է նախատեսված հատկացումների 98.9%-ը: Արտաքին հարաբերությունների ծախսերը 2012 թվականի համեմատ ավելացել են 14.1%-ով՝ հիմնականում պայմանավորված ՀՀ դեսպանությունների և ներկայացուցչությունների պահպանման ծախսերի աճով:

Արտաքին հարաբերությունների ծախսերից 7.5 մլրդ դրամ պետական բյուջեի հաշվին և 769 մլն դրամ՝ արտաբյուջետային միջոցների հաշվին ուղղվել է ՀՀ դեսպանությունների և ներկայացուցչությունների պահպանմանը՝ կազմելով նախատեսվածի համապատասխանաբար 99.6% և 100%ը:

Նախատեսված ողջ ծավալով իրականացվել են նաև դեսպանությունների շենքերի գնման ծախսերը, որոնք կազմել են 34 մլն դրամ: Գումարն ուղղվել է Բրյուսելում ՀՀ դեսպանության շենքի գնման նպատակով վերցված վարկի գծով 2013 թվականի չափաբաժնի մարմանը: Նշված ծախսերը 2012 թվականի համեմատ էապես չեն փոխվել:

Միջազգային կազմակերպություններին Հայաստանի Հանրապետության անդամակցության վճարների գծով ծախսերը կազմել են 1.6 մլրդ դրամ (99.8%): Ներկայումս Հայաստանի Հանրապետությունը անդամակցում է իննսունմեկ միջազգային կազմակերպությունների և ԱՊՀ կառույցների: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 11.9%-ով՝ հիմնականում պայմանավորված դրամի փոխարժեքի աճով:

Արտասահմանյան պատվիրակությունների ընդունելությունների և արտասահմանյան պաշտոնական գործուղումների նպատակով հաշվետու տարում օգտագործվել է համապատասխանաբար 389.6 մլն դրամ և 514.9 մլն դրամ, որոնք կատարվել են 97.4%-ով և 97.2%-ով և համապատասխանաբար 25.9%-ով ու 6.8%-ով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը:

ՀՀ արտաքին գործերի նախարարության աշխատակազմի «Պետական արարողակարգի ծառայություն» գործակալության պահպանմանը հատկացվել է 148 մլն դրամ (95.5%): Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն էապես չեն փոփոխվել:

Գործադիր իշխանության, պետական կառավարման մարմինների պահպանման (նախարարությունների աշխատակազմերի մասով) ծրագրի շրջանակներում ՀՀ արտաքին գործերի նախարարությանը տրամադրվել է շուրջ 1.1 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրի 93.9% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 21.4%-ով՝ հիմնականում

պայմանավորված ԵԽ-ում ՀՀ նախագահության հետ կապված ծախսերով, ինչպես նաև այն հանգամանքով, որ ՀՀ արտաքին գործերի նախարարության աշխատակազմը համալրվել է 10 նոր լրացուցիչ կցորդի հաստիքով:

Հայաստանի Հանրապետությանը սուվերեն վարկանիշ շնորհելու կապակցությամբ կազմակերպությունների մատուցած ծառայությունների դիմաց վճարման ծախսերը կազմել են 82.8 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 99.8% կատարողական: Ծրագիրը նախատեսված է ՀՀ տնտեսական, քաղաքական և ֆինանսական ցուցանիշների գնահատման, գնահատականների հիման վրա վարկանիշի շնորհման նպատակով վարկանիշ շնորհող հեղինակավոր միջազգային ընկերությունների հետ արդյունավետ համագործակցության իրագործման համար: Ծրագրի նպատակն է միջնաժամկետ և երկարաժամկետ հեռանկարում ներքին և արտաքին աղբյուրներից պետական բյուջեի պակասուրդի կայուն, հուսալի և ոչ ռիսկային ֆինանսավորման համար բարենպաստ պայմանների և միջավայրի ապահովումը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 2 անգամ՝ հիմնականում պայմանավորված այն հանգամանքով, որ 2012 թվականին այս նպատակով նախատեսված միջոցներն ամբողջությամբ չէին օգտագործվել:

Հաշվետու տարում 397.9 մլն դրամ է տրամադրվել *աշխատակազմի (կադրերի) գծով ընդհանուր բնույթի ծառայությունների* դասի ֆինանսավորմանը՝ կազմելով ծրագրի 93.3%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է Եվրոպական հարևանության և գործընկերության գործիքի ներքո իրականացվող Սևծովյան ավազանի երկրների համատեղ գործողությունների 2007-2013թթ. դրամաշնորհային ծրագրի պակաս կատարմամբ: 2012 թվականի համեմատ տվյալ դասի ծախսերն էական փոփոխության չեն ենթարկվել:

Տվյալ դասում ընդգրկված՝ գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման ծախսերը կազմել են 188 մլն դրամ՝ ապահովելով տարեկան ծրագրի 96.9% կատարողական: Միջոցներն ուղղվել են ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի պահպանմանը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն էական փոփոխության չեն ենթարկվել:

Քաղաքացիական ծառայության կադրերի ռեզերվում գտնվող քաղաքացիական ծառայողների վարձատրության հետ կապված ծախսերը կազմել են 51 մլն դրամ կամ նախատեսվածի 99.8%-ը և 17.6%-ով զիջել նախորդ տարվա ցուցանիշը:

Քաղաքացիական կացության ակտերի գրանցման ծառայության գործունեության կազմակերպման բնագավառում պետության կողմից համայնքի ղեկավարին պատվիրակված լիազորությունների իրականացման ֆինանսավորման նպատակով հաշվետու տարվա ընթացքում պետական բյուջեից տրամադրվել է 155.4 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 97.7%-ը: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերն աճել են 5.5%-ով:

Պետական մասնակցության առևտրային կազմակերպություններում լիազոր ներկայացուցիչների պահպանման ծախսերի գծով 2013 թվականին նախատեսվել է 224.1 հազ. դրամ, որը չի օգտագործվել:

Եվրոպական հարևանության և գործընկերության գործիքի ներքո իրականացվող Սևծովյան ավազանի երկրների համատեղ գործողությունների 2007-2013թթ. դրամաշնորհային ծրագիրը իրականացվել է 15.6%-ով՝ կազմելով 3.5 մլն դրամ, որը պայմանավորված է ծրագրի իրականացումը 2014 թվական:

«Ծրագրման և վիճակագրական ընդհանուր ծառայություններ» դասի ծախսերը հաշվետու տարում կազմել են 1.1 մլրդ դրամ կամ նախատեսվածի 97.6%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է տնտեսումներով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 2.2%-ով՝ հիմնականում պայմանավորված մարդահամարի գծով ծախսերի կրճատմամբ:

Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման ծախսերը կազմել են 635.1 մլն դրամ կամ ծրագրի 97.8%-ը: Միջոցները հատկացվել են ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության պահպանմանը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 2.5%-ով:

Պետական վիճակագրական տեղեկատվության հավաքագրման ծախսերը կազմել են 341.3 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 97%-ը: Շեղումը տնտեսման արդյունք է: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերն աճել են 19%-ով՝ հիմնականում պայմանավորված աշխատանքի վարձատրության ծախսերի աճով:

Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի խթանման ծառայությունների հատկացումները կազմել են 80 մլն դրամ կամ նախատեսվածի 100%-ը: 2012 թվականի համեմատ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի խթանման ծառայությունների ծախսերն աճել են 7.1%-ով՝ պայմանավորված որոշ ապրանքների և ծառայությունների գնաճով: Ծրագրի շրջանակներում ամբողջությամբ փոփոխվել են ՏՀՏ ոլորտի հետազոտության անցկացման մոտեցումները, իրականացվել է ոլորտում գործող ՏՀՏ ընկերությունների ցանկի ճշգրտում, մշակվել է Հայաստանում գործող կազմակերպությունների ուղեցույցը, որտեղ ներառված են մոտ 200 ընկերություններ: 2013 թվականի հոկտեմբերի 4-ից 6-ը Երևանի մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտի «Երևան Էքսպո» կենտրոնում տեղի է ունեցել 9-րդ ամենամյա միջազգային տեխնոլոգիական «Դիջիթեք Էքսպո 2013» ցուցահանդեսը: 2013 թվականի դեկտեմբերի 5-6-ը «Արմենիա Մարիթ» հյուրանոցում տեղի է ունեցել Գիտության և տեխնոլոգիաների ձեռներեցության (STEP) ծրագրի ամենամյա վենչուրային համաժողովը, որի ընթացքում ներկայացվել են «Գաղափարից դեպի շուկա» դրամաշնորհային մրցույթի 1-ին փուլի արդյունքում տեղեկատվական, բարձր և բիոտեխնոլոգիաների, ինչպես նաև ճարտարագիտության

ուլորտների 67 ծրագրերից ընտրված 25 ներդրումային ծրագրերը: Համաժողովի ավարտին՝ 2013 թվականի դեկտեմբերի 6-ին, ամփոփվել և հայտարարվել են դրամաշնորհային մրցույթի 5 հաղթողները: 2013 թվականի ընթացքում կազմակերպվել են չորս «ՏՀՏ լիդերներն առանց փողկապների» խորագրով հանդիպում-քննարկումներ: Կազմակերպվել է «Խելացի լուծումներ՝ խելացի երկրների համար» խորագիրը կրող 6-րդ ամենամյա «Դիջիթեք Բիզնես» ֆորումը: 2013 թվականի հոկտեմբերի 4-ին Երևանի մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտում, «Դիջիթեք Էքսպո 2013» ցուցահանդեսին զուգահեռ, ՀՀ վարչապետի բարձր հովանու ներքո տեղի է ունեցել «Արմթեք 2013» Հայաստանի բարձր տեխնոլոգիաների 6-րդ ամենամյա համաժողովը, որին մասնակցել է ավելի քան 250 մասնակից: Հայ-հնդկական ՏՀՏ ուսումնական կենտրոնում կազմակերպվել են 59 կարճաժամկետ և երկարաժամկետ դասընթացներ (1816 ժամ ընդհանուր տևողությամբ), որոնց մասնակցել է շուրջ 522 մասնակից: Կենտրոնում կազմակերպվել են նաև 11 սեմինարներ (25 ժամ ընդհանուր տևողությամբ), որոնց մասնակցել է շուրջ 313 մասնակից: Մայքրոսոֆթ ինովացիոն կենտրոնում (ՄԻԿ) կազմակերպվել են 41 երկարաժամկետ դասընթաց (741 ժամ ընդհանուր տևողությամբ)՝ ներգրավելով առավել քան 790 ուսանող: ՄԻԿ-ի կողմից կազմակերպվել է նաև 4 սեմինար, որոնց մասնակցել է շուրջ 220 մասնակից: 2013 թվականի ՄԻԿ-ի կողմից կազմակերպված պրակտիկայի ծրագրերի շնորհիվ մոտ 50 ՏՏ ոլորտի ուսանող/երիտասարդ մասնագետ ստացել են աշխատանքի հնարավորություն առաջատար մասնավոր կազմակերպություններում: «Ինթել» ընկերության հետ ստորագրված հուշագրում ամրագրված ուղղությունների իրականացման նպատակով ձևավորվել է համատեղ աշխատանքային խումբ: «Նեյշնլ Ինսթրումենթս»-ի հետ համագործակցության շրջանակում 2013 թվականի սեպտեմբերին ՀՊՃՀ-ում տեղի է ունեցել Հայկական ազգային ճարտարագիտական լաբորատորիայի (ANEL) պաշտոնական բացման արարողությունը: «Նոկիա» ընկերության հետ համատեղ իրականացվել է Մոբայլ լուծումների տարածաշրջանային լաբորատորիաների ծրագիրը: 2013 թվականի կնքվել են 3 փոխըմբռնման հուշագրեր «ԱյբիԷմ», «ՋիԷՖԱյ» և «Օրակլ» վերազգային ընկերությունների հետ: Շարունակվել է համագործակցությունը «Դ-Լինկ» ընկերության հետ՝ Գյումրիում տարածաշրջանային կենտրոնի հիմնման ուղղությամբ: Շարունակվել են բանակցությունները նաև «Սիսկո» ընկերության հետ՝ Հայաստանում «Սիսկո» լուծումների լաբորատորիայի հիմնման ծրագրի իրականացման շուրջ:

2011 թվականի մարդահամարի աշխատանքների ամփոփման ծախսերը կազմել են 37.2 մլն դրամ կամ նախատեսվածի 95.1%-ը: «Միջազգային համադրումներ» ծրագրի ծախսերը կազմել են 1.9 մլն դրամ կամ նախատեսվածի 94.5%-ը: «Մարդահամար-2011» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում ծախսերը կազմել են 3.7 մլն դրամ կամ նախատեսվածի 97.7%-ը:

Ընդհանուր բնույթի այլ ծառայությունների դասին հաշվետու տարում ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է 813.7 մլն դրամ, որից 335.8 մլն դրամը՝ գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների (328.9 մլն դրամը՝ ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության, 6.9 մլն դրամը՝ այլ մարմինների), 4.3 մլն դրամը՝ Գեղարքունիքի մարզի Արծվաշեն համայնքի ղեկավարի աշխատակազմի պահպանմանը, որոնց կատարողականը կազմել է համապատասխանաբար 97% և 99.9%: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն ավելացել են համապատասխանաբար 4%-ով և 4.5%-ով:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին պետական աջակցությունը տրամադրվել է նախատեսված ողջ ծավալով՝ կազմելով 149.3 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն էապես չեն փոփոխվել:

Պետական աջակցությունը «Սպասարկում» ՊՈԱԿ-ին կազմել է 301.7 մլն դրամ կամ ծրագրի 98.1%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 23.8%-ով:

ՄԱԶԾ-ի կողմից իրականացվող ՀՀ տարածքային զարգացման հայեցակարգից բխող ծրագրերի մշակման և իրականացման աջակցության դրամաշնորհային ծրագիրն իրականացվել է նախատեսված ողջ ծավալով՝ կազմելով 22.6 մլն դրամ, որից 20.4 մլն դրամը՝ դրամաշնորհի հաշվին, 2.2 մլն դրամը՝ համաֆինանսավորման հաշվին:

2012 թվականի համեմատ ընդհանուր բնույթի այլ ծառայությունների դասի ծախսերն աճել են 13.5%-ով՝ հիմնականում պայմանավորված «Սպասարկում» ՊՈԱԿ-ին պետական աջակցության և ՄԱԶԾ-ի կողմից իրականացվող ՀՀ տարածքային զարգացման հայեցակարգից բխող ծրագրերի մշակման և իրականացման աջակցության դրամաշնորհային ծրագրի ծախսերի ավելացմամբ:

2013 թվականին «Ընդհանուր բնույթի հետազոտական աշխատանք» դասին ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է 8.7 մլրդ դրամ, որը կազմել է նախատեսված ցուցանիշի 97.7%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 13.1%-ով՝ հիմնականում պայմանավորված գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանման ու զարգացման և «ՔԵՆԴԼ» սինքրոտրոնային հետազոտությունների ինստիտուտ» հիմնադրամին պետական աջակցության ծախսերի աճով:

Գիտաաշխատողներին գիտական աստիճանների համար 2013 թվականին ՀՀ պետական բյուջեից տրամադրվել են 352 մլն դրամ հավելավճարներ՝ ապահովելով 79.8% կատարողական և 12.3%-ով զիջելով նախորդ տարվա ցուցանիշը՝ պայմանավորված հավելավճար ստացող գիտնականների թվի նվազմամբ:

«Գիտական և գիտատեխնիկական գործունեության հիմնարար և կարևորագույն նշանակություն ունեցող կիրառական հետազոտություններ» ծրագրի շրջանակներում 10.8 մլն դրամ

տրամադրվել է ՀՀ սփյուռքի նախարարությանը, որի հաշվին իրականացվել է սփյուռքին վերաբերող 9 թեմաների գիտական հետազոտությունների պատվեր: Միջոցներն օգտագործվել են նախատեսված ծավալով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 92.1%-ով՝ պայմանավորված այն հանգամանքով, որ 2012 թվականին միջոցներ էին հատկացվել նաև ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեին՝ 125.7 մլն դրամի չափով:

«Ա. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա» հիմնադրամի գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանման ու զարգացման և գիտական ներուժի արդիականացման ծրագրի ծախսերը կազմել են 708 մլն դրամ՝ ամբողջությամբ ապահովելով ծրագրային ցուցանիշը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն ավելացել են 6.4%-ով՝ հիմնականում պայմանավորված գազի և էլեկտրաէներգիայի սակագների աճով:

Ազգային արժեք ներկայացնող գիտական օբյեկտների պահպանության համար նախատեսված միջոցները նույնպես 100%-ով օգտագործվել են՝ կազմելով 779.1 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն ավելացել են 32.3%-ով՝ հիմնականում պայմանավորված Մատենադարանի պահպանման և սպասարկման ծախսերի ավելացմամբ:

Ամբողջությամբ կատարվել են նաև «ՔԵՆԴԼ» սինքրոտրոնային հետազոտությունների ինստիտուտ» հիմնադրամին պետական աջակցության ծախսերը, որոնք կազմել են 312.9 մլն դրամ: «Քենդլ» սինքրոտրոնային հետազոտությունների ինստիտուտ» հիմնադրամում կատարվում են աշխատանքներ՝ ուղղված 3-րդ սերնդի սինքրոտրոնային ճառագայթման աղբյուրի ստեղծմանը: Այն հնարավորություն կտա հիմնարար և կիրառական գիտական հետազոտություններ իրականացնել ֆիզիկայի, քիմիայի, կենսաբանության, նյութագիտության, նանոէլեկտրոնիկայի և այլ բնագավառներում: 2013 թվականին ավարտվել են «Քենդլ» նախագծի առաջին փուլի՝ AREAL լազերային գծային արագացուցչի կառուցման աշխատանքները, և նախատեսվում է, որ այն կսկսի լրիվ ծավալով շահագործվել 2014 թվականին:

Գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքների պահպանման ու զարգացման ծախսերը կազմել են 6.6 մլրդ դրամ կամ նախատեսվածի 98.3%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն ավելացել են 10.8%-ով՝ հիմնականում պայմանավորված գիտաժողովների թվի ավելացմամբ:

Ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների գծով հետազոտական և նախագծային աշխատանքների դասի ծախսերը հաշվետու տարում կազմել են շուրջ 1.1 մլրդ դրամ կամ նախատեսվածի 87.1%-ը: 2012 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 7.3%-ով՝ հիմնականում պայմանավորված գիտական և գիտատեխնիկական նպատակային-ծրագրային հետազոտությունների ծախսերի աճով: Խմբի ծախսերի զգալի մասը՝ 886.3 մլն դրամ, տրամադրվել է նշված ծրագրին, որն օգտագործվել է 84.9%-ով: 2013 թվականի հուլիսի 12-ին ՀՀ ԿԳՆ գիտության

պետական կոմիտեի կողմից հայտարարվել է գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում կիրառական արդյունքի ձեռքբերմանն ուղղված գիտական թեմաների հայտերի մրցույթ՝ ոչ բյուջետային աղբյուրներից համաֆինանսավորման սկզբունքով: Նշված պայմանագրերը կնքվել են դեկտեմբեր ամսին, արդյունքում՝ գիտական թեմաների ֆինանսավորումը սկսվել է ավելի ուշ և նախատեսված միջոցներն ամբողջությամբ ծախսելու հնարավորություն չի եղել:

Տվյալ դասում ընդգրկված՝ գիտական և գիտատեխնիկական նպատակային-ծրագրային հետազոտություններին հատկացումներն իրականացվել են ամբողջությամբ, որոնք կազմել են 178.3 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 32.3%-ով՝ պայմանավորված 2 նոր նպատակային ծրագրերի ավելացմամբ:

Ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների (այլ դասերին չպատկանող) դասի ծախսերը հաշվետու տարում կազմել են 11.2 մլրդ դրամ կամ նախատեսվածի 66.8%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է արտաքին աջակցությամբ իրականացվող վարկային ծրագրերի, ինչպես նաև «Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի ստորաբաժանումների կողմից մատուցվող ծառայություններից ստացվող եկամուտների հաշվին կոմիտեի համակարգի պահպանման ծախսերի կատարողականով: Նախորդ տարվա համեմատ այլ դասերին չպատկանող ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների դասի ծախսերն աճել են 15.9%-ով, ինչը հիմնականում պայմանավորված է Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող էլեկտրոնային հասարակության և մրցունակության համար նորարարության ծրագրի շրջանակներում կատարված ծախսերի աճով, ինչպես նաև 2013 թվականին «Նախագահի ընտրությունների անցկացմամբ:

Հաշվետու տարվա ընթացքում 649.8 մլն դրամ է տրամադրվել այս դասում ընգրկված պետական կառավարման մարմինների՝ «Հանրային ծառայությունների կարգավորման հանձնաժողովի և «Կենտրոնական ընտրական հանձնաժողովի պահպանմանը, որը կազմել է ծրագրի 96.2%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 12.1%-ով՝ հիմնականում պայմանավորված աշխատանքի վարձատրության ծախսերի աճով: «Նախագահի ընտրություններին տրամադրվել է 1.3 մլրդ դրամ՝ կազմելով ծրագրի 93.3%-ը:

Փորձաքննությունների ծառայությունների ձեռքբերման նպատակով «Հատախազությանը և «Արդարադատության նախարարությանը տրամադրվել է 371.9 մլն դրամ՝ կազմելով ծրագրի 99.9%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 31.7%-ով՝ հիմնականում պայմանավորված փորձաքննությունների քանակի ավելացմամբ: Եվս 1.7 մլն դրամ օգտագործվել է «Արդարադատության նախարարության արտաբյուջետային միջոցներից՝ կազմելով նախատեսվածի 98.8%-ը:

Հետևյալ 3 ծրագրերն իրականացվել են նախատեսված ծավալով: Աճուրդների կազմակերպման և անցկացման աշխատանքներին տրամադրվել է 22.1 մլն դրամ՝ 4.5%-ով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը: Պետական գույքի հաշվառման, գույքագրման, ուսումնասիրությունների և գնահատման աշխատանքների իրականացման ծախսերը կազմել են 36.3 մլն դրամ, որոնք նախորդ տարվա համեմատ աճել են 3.9%-ով: Սեյսմիկ պաշտպանության ազգային ծառայությանը տրամադրվել է 474.6 մլն դրամ, որը 8.5%-ով գերազանցել է նախորդ տարվա ցուցանիշը՝ հիմնականում պայմանավորված աշխատավարձի, էլեկտրաէներգիայի և գազի սակագների բարձրացմամբ:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող պետական հատվածի բարեփոխումների երկրորդ վարկային ծրագրի շրջանակներում օգտագործվել է 896 մլն դրամ կամ նախատեսվածի 51.7%-ը, ընդ որում վարկի միջոցներից օգտագործվել է 722.1 մլն դրամ, կառավարության համաֆինանսավորման հաշվին՝ 173.9 մլն դրամ: Ծրագրի նպատակն է կատարելագործել հանրային հատվածի կառավարման իրականացումը և ծառայությունների մատուցումը՝ քաղաքականության մշակման ոլորտում գերատեսչական հզորությունների ուժեղացման, մարդկային կապիտալի արդյունավետությունն առավելագույնի հասցնելու և ներքին աշխատանքային հոսքերի և արտաքին հաղորդակցության համար տեղեկատվական համակարգերի ստեղծման միջոցով: Մշակված գնումների ժամանակացույցի և այլ փաստաթղթերի հիման վրա 2013 թվականին իրականացվել են գնումների բնականոն ընթացքի համար անհրաժեշտ աշխատանքներ: Վարկային միջոցներից ՀՀ 2013 թվականի պետական բյուջեով նախատեսվածից պակաս օգտագործումը պայմանավորված է այն հանգամանքով, որ 2013 թվականին չեն իրականացվել հետևյալ գնումները.

- Հայաստանի Առողջապահական Միասնական Տեղեկատվական Համակարգի մատակարարում և տեղադրում (ՀԱՄՏՀ),
- ՀՀ Ֆինանսների նախարարության համար համակարգչային սարքավորումների ձեռքբերում,
- քաղաքացիական կացության ակտերի գրանցման համար նախատեսված էլեկտրոնային կառավարման համակարգի համար սարքավորումների ձեռքբերում,
- ՀՀ դատախազությունում էլեկտրոնային փաստաթղթաշարժի և տեղեկատվության կառավարման միասնական համակարգի առաջին փուլի իրականացման համար սարքավորումների ձեռքբերում:

ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի ստորաբաժանումների կողմից մատուցվող ծառայություններից ստացվող եկամուտների հաշվին կոմիտեի համակարգի պահպանման ծախսերը կազմել են շուրջ 3 մլրդ դրամ կամ ծրագրի 86.5%-ը:

Շեղումը պայմանավորված է ծախսերի տնտեսման և որոշ պայմանագրեր ավելի ցածր արժեքով կնքելու հանգամանքով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 3.5%-ով՝ հիմնականում պայմանավորված աշխատանքի վարձատրության ծախսերի ավելացմամբ:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Երևան քաղաքի պինդ աղբի կառավարման նպատակով պետական մասնավոր համագործակցության կառույցի համար գործարքի խորհրդատվական աջակցության դրամաշնորհային ծրագրի շրջանակներում օգտագործվել է 2.4 մլն դրամ (98.5%), ընդ որում դրամաշնորհի միջոցներից՝ 1.9 մլն դրամ, կառավարության համաֆինանսավորման հաշվին՝ 0.5 մլն դրամ: Ծրագրի նպատակն է աջակցություն ցուցաբերել Երևան քաղաքի երկու գոտիների աղբահավաքման և սանիտարական մաքրման համար կոնցեսիայի գործարքների, ինչպես նաև Երևան քաղաքի Նուբարաշենի աղբանոցի նախագծման-ֆինանսավորման-կառուցման-շահագործման (ՆՖԿՇ) գործարքի նախապատրաստման և իրականացման գործին: Ծրագրի շրջանակներում 2013 թվականին իրականացվել են Երևան քաղաքի աղբի կառավարման համակարգի բարելավման վերաբերյալ առաջարկությունների վերանայման և բարելավման աշխատանքներ: Ծրագիրն ավարտվել է, և բոլոր նախատեսված աշխատանքներն իրականացվել են:

ԱՄՆ կառավարության աջակցությամբ իրականացվող «Հազարամյակի մարտահրավեր» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում օգտագործվել է 110 մլն դրամ կամ նախատեսվածի 96.4%-ը: 2013 թվականին շարունակվել է ծրագրի Ջրից դեպի շուկա բաղադրիչի իրականացումը: Ծրագրով նախատեսված աշխատանքները կատարված են, և ծրագրից 3.6% շեղումը հանդիսանում է պահպանման ծախսերի խնայողություն:

Տվյալ դասում ընդգրկված պետական կառավարման մարմինների կարողությունների զարգացմանը տրամադրվել է 34 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 88.6%-ը, որը պայմանավորված է տնտեսումներով: Միջոցները տրամադրվել են ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովին: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերն աճել են 161.1%-ով:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Ազգային ժողովի քաղաքականության ձևավորման և հանրության հետ երկխոսության կարողությունների հզորացման դրամաշնորհային ծրագրի իրականացման համար ծախսվել է 198.5 մլն դրամ կամ նախատեսվածի 97.5%-ը, ընդ որում, դրամաշնորհի միջոցների հաշվին՝ 153.6 մլն դրամ, կառավարության համաֆինանսավորման հաշվին՝ 44.9 մլն դրամ: Ծրագրի նպատակն է Ազգային ժողովի քաղաքականության ձևավորումը և հանրության հետ երկխոսության կարողությունների հզորացումը: 2013 թվականին ծրագրի շրջանակներում իրականացվել են աշխատանքներ հետևյալ ուղղություններով.

- Ազգային ժողովում քաղաքականության ձևավորման կարողությունների ստեղծում,
- Ազգային ժողովի գրադարանի արդիականացում,

- արդյունավետ հաղորդակցություն ընտրողների, հանրության և լրատվամիջոցների հետ: Ծրագիրն ավարտվել է, և բոլոր նախատեսված աշխատանքներն իրականացվել են:

« Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի ստորաբաժանումների կողմից մատուցվող ծառայություններից ստացվող եկամուտների հաշվին կոմիտեի համակարգի կարողությունների զարգացմանը տրամադրվել է 653 մլն դրամ կամ նախատեսվածի 94.4%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն էապես չեն փոփոխվել:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող էլեկտրոնային հասարակության և մրցունակության համար նորարարության վարկային ծրագրի շրջանակներում օգտագործվել է 2.4 մլրդ դրամ կամ նախատեսվածի 60.6%-ը, որից վարկի միջոցներից՝ 2.2 մլրդ դրամ, կառավարության համաֆինանսավորման հաշվին՝ 208.5 մլն դրամ: Ծրագիրն ուղղված է էլեկտրոնային հասարակության և ինովացիոն ծրագրի նախապատրաստմանը օժանդակելուն, նպատակներն են՝ տնային տնտեսությունների, բիզնեսի և պետական կազմակերպությունների համար համացանցի, համակարգիչների և էլեկտրոնային ծառայությունների մատչելիությունը և հասանելիությունը, գիտելիքահեն և տեխնոլոգիահեն հատվածի ծավալների ու տվյալ հատվածում զբաղվածության աճը, ինչպես նաև հասանելիությունը շուկաներին, ֆինանսներին, հմտություններին:

Ծրագիրը բաղկացած է հետևյալ բաղադրիչներից.

- էլեկտրոնային հասարակության ենթակառուցվածքների զարգացում,
- ձեռնարկությունների ինովացիոն ենթակառուցվածքների խթանում,
- ծրագրի կառավարում և իրականացում:

2013 թվականին մշակված գնումների ժամանակացույցի և այլ փաստաթղթերի հիման վրա իրականացվել են գնումների բնականոն ընթացքի համար անհրաժեշտ աշխատանքներ: Ծրագրի կատարողականը հիմնականում պայմանավորված է նրանով, որ 2013 թվականին.

- հավաստագրման կենտրոնի (ՀԿ) ծրագրային ապահովման համակարգի վերջնական գործարկումը և ընդունումը պատվիրատուի կողմից ավելի շատ ժամանակ է պահանջել, և նախատեսված վերջին փուլի ծառայությունների դիմաց վճարումները տեղափոխվել են 2014 թվական,

- ծրագրի շրջանակում 2013 թվականի նոյեմբերին պլանավորված էր ավարտել Գյումրու տեխնոլոգիական կենտրոնի հիմնանորոգման աշխատանքների իրականացումը, սակայն պայմանագրի ժամկետը երկարաձգվել է մինչև տարվա վերջ, ուստի վերջին ամսվա ընթացքում իրականացրած աշխատանքների դիմաց վճարումը կատարվել է 2014 թվականին,

- 2013 թվականի սեպտեմբերին Կենտրոնական բանկում գրանցվել է Գրանատուս վենչուրային հիմնադրամը: Քանի որ ֆինանսական գործառնական ձեռնարկը հաստատվել է ՀԲ-ի

կողմից 2013 թվականի դեկտեմբերին, ուստի ծրագրով նախատեսված ներդրումները տեղափոխվել են 2014 թվական,

- Մոբայլ լուծումների տարածաշրջանային լաբորատորիայի /mLab/ և Գյումրու տեխնոլոգիական կենտրոնի համար սարքավորումների ձեռք բերման նպատակով հայտարարված մրցույթները չեղյալ են համարվել և տեղափոխվել 2014 թվական:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ստանդարտների 2-րդ ռազմավարության իրականացման դրամաշնորհային ծրագրի իրականացման համար ծախսվել է 303 մլն դրամ կամ նախատեսվածի 100%-ը: Ծախսերից 204.1 մլն դրամը կատարվել է դրամաշնորհային միջոցների, 98.9 մլն դրամը՝ կառավարության համաֆինանսավորման հաշվին: Ծրագրի նպատակն է դաշտ նախապատրաստել հաշվեգրման հիմունքով հանրային հատվածի հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների (ՀՀՀՀՄՍ / IPSAS) ներդրման համար: 2013 թվականին իրականացվել են ծրագրով նախատեսված հետևյալ աշխատանքները.

- Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ստանդարտների և ձեռնարկի լիարժեք իրականացում պիլոտային հիմունքով,
- Հաշվապահական հաշվառման ավտոմատացված համակարգի մշակում և իրականացում,
- Ծրագրի աուդիտ:

Ծրագիրն ավարտվել է, և նախատեսված բոլոր աշխատանքներն իրականացվել են:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Հայաստանի կառավարության ֆիսկալ կառավարման և կարողությունների բարելավման համար դրամաշնորհային ծրագրի շրջանակներում օգտագործվել է 214.6 մլն դրամ (97.4%), ընդ որում, դրամաշնորհային միջոցներից օգտագործվել է 170.1 մլն դրամ, կառավարության համաֆինանսավորման հաշվին՝ 44.5 մլն դրամ: Ծրագրի շրջանակներում աջակցություն է տրամադրվել ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ մակրոֆիսկալ կանխատեսման և վերլուծության, ինչպես նաև ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեին՝ արդյունավետ կառավարման համար կարողությունների ստեղծման ուղղությամբ: Ծրագիրն ավարտվել է, և նախատեսված բոլոր աշխատանքներն իրականացվել են:

Երևան քաղաքի ավագանու անդամների ընտրություններին տրամադրվել է 373 մլն դրամ, որը կազմել է 96.7%: Տնտեսումը կապված է տեղամասային ընտրական հանձնաժողովների կազմերը համապատասխան անդամներով չհամալրվելու հետ:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Հարկային վարչարարության արդիականացման ծրագրի իրականացման համար ծախսվել է 85.7 մլն դրամ կամ նախատեսվածի 3.4%-ը: Ծախսերից 69.4 մլն դրամը կատարվել է վարկային միջոցների, 16.3 մլն դրամը՝ կառավարության համաֆինանսավորման հաշվին: Ծրագրի նպատակն է օժանդակել Հայաստանի

Եկամուտների վարչարարության համապարփակ արդիականացմանը: Ծրագրի շրջանակներում ֆինանսավորվում են ՊԵԿ-ի հիմնական ՏՀՏ ենթակառուցվածքում հույժ կարևոր ներդրումները, որպեսզի ՊԵԿ-ին հնարավորություն ընձեռվի արդիականացնել իր բիզնես գործընթացները, ընդլայնվի էլեկտրոնային կառավարման կիրարկումը, այդ թվում՝ նաև հարկային հայտարարագրերի էլեկտրոնային եղանակով ներկայացումը, ինչպես նաև առավել թիրախավորված, ռիսկի վրա հիմնված պարտավորությունների իրականացման ռազմավարության ներդրումը՝ հիմնվելով պարտավորությունների կամավոր իրականացման վրա: Ծրագիրը բաղկացած է հետևյալ բաղադրիչներից.

- ինստիտուցիոնալ զարգացում և փոփոխության կառավարում,
- գործընթացի արդիականացում և պարտավորությունների կատարման կառավարում,
- ՏՏ ենթակառուցվածքի և համակարգերի արդիականացում,
- ծրագրի կառավարում և իրականացում:

Ծրագրի կատարողականը պայմանավորված է նրանով, որ 2013 թվականին հետաձգվել է ՊԵԿ սերվերային սենյակի և բիզնեսի շարունակականության կառավարման համար նախատեսված ՏՏ սարքավորումների, ինչպես նաև ՊԵԿ ուսումնական կենտրոնի համար նախատեսված տպագրական սարքավորումների գնման մրցութային գործընթացը (վերջինս գտնվել է Համաշխարհային բանկի կողմից ուսումնասիրման փուլում): ՊԵԿ կողմից վերանայվել է հարկային տեսչությունների և սպասարկման սրահների կահավորման համար անհրաժեշտ գույքի և հարկային տեսչությունների համար նախատեսված համակարգչային տեխնիկայի քանակը՝ հաշվի առնելով ՊԵԿ-ում 2013 թվականին իրականացված կառուցվածքային փոփոխությունները, մասնավորապես՝ հարկային տեսչությունների թվի կրճատումը: Գումարը վերաբաշխվել է ծրագրի համապատասխան բաղադրիչների այլ միջոցառումների ուղղությամբ:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող հանրային հատվածի վերահսկողության (Վերահսկիչ պալատի) կարողությունների զարգացման դրամաշնորհային ծրագրի շրջանակներում նախատեսված 4.6 մլն դրամը չի օգտագործվել: Ծրագրի նպատակն էր աջակցել պետական հատվածի արտաքին աուդիտի կողմից կարողության ստեղծման ռազմավարության ու գործողությունների ծրագրի ընդունմանը և աուդիտի ստանդարտացված մեթոդների մշակմանն ու կիրառմանը:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող ՀՀ ֆինանսների նախարարության կարողությունների զարգացման դրամաշնորհային ծրագրի գծով նախատեսված 3.1 մլն դրամը նույնպես չի օգտագործվել: Ծրագրի նպատակն էր հզորացնել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության համապատասխան վարչությունների կարողությունները, որոնք

պատասխանատու են ֆինանսական շուկայի զարգացման և փողերի լվացման դեմ պայքարի քաղաքականությունների համար:

Չի կատարվել նաև Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Հայաստանի կառավարության կարգավորող բարեփոխումների գրասենյակի կարողությունների զարգացման դրամաշնորհային ծրագիրը, որի շրջանակներում նախատեսված էին 20.9 մլն դրամի ծախսեր: Ծրագրի նպատակն էր հզորացնել ՀՀ կառավարության կարգավորիչ բարեփոխումների ստորաբաժանման կարողությունները, որը պատասխանատու է գործարարների և քաղաքացիների գործունեության վրա ազդող իրավական նորմերի գույքագրման, վերանայման և անօգուտ կամ ավելորդ հանդիսացողների վերացման կամ պարզեցման միջոցով Կարգավորիչ «գիլյոտինի» ծրագրի իրականացման համար:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Հայաստանի հանրային ֆինանսական կառավարման հզորացման դրամաշնորհային ծրագրի գծով նախատեսված 14.8 մլն դրամի ծախսերը նույնպես չեն կատարվել: Ծրագրի նպատակն է քաղաքականության վրա հիմնված բյուջետավորման խորացման և Հայաստանում պետական ներդրումների կառավարման համակարգի հզորացումը:

Վերոհիշյալ չորս ծրագրերի շրջանակներում 2013 թվականին նախատեսված աշխատանքները տեղափոխվել են 2014 թվական:

Ընտրական վարչարարության փորձի ուսումնասիրման, ընտրական վարչարարության բարձրացման, կենտրոնական ընտրական հանձնաժողովի վերազինման և ընտրական օրենսդրությանը վերաբերող նյութերի հրապարակման աշխատանքներին արտաբյուջետային միջոցներից տրամադրվել է 11.8 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 47%-ը: Տնտեսումը պայմանավորված է գործուղումների և այցերի կրճատմամբ:

2013 թվականին *պետական պարտքի* գծով գործառնությունների դասի ծախսերը կատարվել են 99.7%-ով և կազմել 46.7 մլրդ դրամ: Նշված գումարից 29.7 մլրդ դրամը տրամադրվել է պետական արժեթղթերի (գանձապետական պարտատոմսերի) սպասարկմանը, որի կատարողականը կազմել է 100%: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 29.5%-ով՝ պայմանավորված ներքին պարտքի ծավալների աճով:

Օտարերկրյա պետություններից, միջազգային կազմակերպություններից և այլ արտաքին աղբյուրներից ստացված վարկերի սպասարկմանը տրամադրվել է 16.8 մլրդ դրամ՝ կազմելով նախատեսվածի 99.4%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 3.5%-ով՝ պայմանավորված 6-ամսյա ԱՄՆ դոլարի LIBOR, 6-ամսյա EURIBOR, SDR տոկոսադրույքների նվազմամբ, արտաքին վարկերի՝ ծրագրից պակաս ստացումներով, ինչպես նաև այն

հանգամանքով, որ 2013թ. հոկտեմբերին ՌԴ նկատմամբ պարտքի ամբողջական մարման արդյունքում տնտեսվել է երկու ամսվա տոկոսավճար:

Մուրհակների սպասարկմանը տրամադրվել է 17 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 100%-ը: 174.3 մլն դրամ է տրամադրվել «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ-ի նկատմամբ պարտավորությունների սպասարկմանը, որը կազմել է նախատեսվածի 80.6%-ը՝ պայմանավորված 6-ամսյա ԱՄՆ դոլարի LIBOR-ի կանխատեսումային և 2013 թվականի ընթացքում փաստացի ձևավորված փոխարժեքների տարբերությամբ:

Նախորդ տարվա համեմատ պետական պարտքի գծով գործառնությունների ծախսերն աճել են 14.9%-ով:

2012 թվականին ՀՀ պետական բյուջեից *կառավարության տարբեր մակարդակների միջև իրականացվող ընդհանուր բնույթի տրանսֆերտները* ֆինանսավորվել են ողջ ծավալով՝ կազմելով 36.2 մլրդ դրամ: Նշված գումարը տրամադրվել է համայնքների բյուջեներին ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաների և Ազգային ժողովի ընդունած օրենքների կիրարկման արդյունքում համայնքների բյուջեների եկամուտների կորուստների փոխհատուցման ֆինանսավորմանը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 11.6%-ով:

Պաշտպանություն

2013 թվականին պաշտպանության բնագավառում ՀՀ պետական բյուջեի ծախսերը կազմել են 182 մլրդ դրամ՝ 98.8%-ով ապահովելով ծրագրի կատարումը: Նախորդ տարվա համեմատ ոլորտի ծախսերն աճել են 19.1%-ով՝ հիմնականում պայմանավորված ռազմական կարիքների բավարարման ծախսերի ավելացմամբ:

Հաշվետու տարում *ռազմական պաշտպանության* դասի ծախսերը կազմել են 175.4 մլրդ դրամ՝ կազմելով ծրագրի 98.8%-ը: Նշված գումարից 175.1 մլրդ դրամն ուղղվել է ռազմական կարիքների բավարարմանը, որը կազմում է ծրագրի 98.8%-ը: ՀՀ ռազմական կցորդների պահպանմանը տրամադրվել է 307 մլն դրամ՝ կազմելով ծրագրի 91.2%-ը: ՀԱՊԿ-ում ՀՀ զինված ուժերի ներկայացուցչի ծախսերը կազմել են 35 մլն դրամ կամ ծրագրի 60.1%-ը: 2012 թվականի համեմատ ռազմական պաշտպանության ծախսերն ավելացել են 19.7%-ով:

Արտաքին ռազմական օգնությանը տրամադրվել է 143.8 մլն դրամ կամ ծրագրված միջոցների 98.3%-ը: Այս դասում ներառված՝ ՆԱՏՕ-ում Հայաստանի Հանրապետության առաքելությունում պաշտպանության հարցերով պետական խորհրդականի պահպանման ծախսերը կազմել են 51.6 մլն դրամ՝ ապահովելով 98.5% կատարողական: ՆԱՏՕ-ում (ռազմավարական հրամանատարությունների) ռազմական համագործակցության վարչությունում Հայաստանի Հանրապետության փոխգործակցության սպայի պահպանման ծախսերը կազմել են 40.4 մլն դրամ՝ ապահովելով 96.2% կատարողական: ՆԱՏՕ-ում Հայաստանի Հանրապետության առաքելությունում Հայաստանի Հանրապետության ռազմական ներկայացուցչի պահպանման նպատակով տրամադրվել է 42.2 մլն դրամ՝ ապահովելով 99.7% կատարողական: Երևանում ՆԱՏՕ-ի հասարակական տեղեկատվական կենտրոնի շենքի վարձակալության նպատակով բյուջեից հատկացումները կազմել են 9.6 մլն դրամ, որոնք ամբողջությամբ օգտագործվել են:

Արտաքին ռազմական օգնության ծախսերը 1.5%-ով գերազանցել են 2012 թվականի ցուցանիշը:

Պաշտպանության ոլորտում հեղափոխական և նախագծային աշխատանքների դասում ներառված «Գիտական և գիտատեխնիկական գործունեության նպատակային-ծրագրային հետազոտություններ» ծրագրի շրջանակներում կատարվող հատուկ գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքների գծով պետական բյուջեի ծախսերը կազմել են 1.4 մլրդ դրամ՝ ապահովելով 99.5% կատարողական և նախորդ տարվա համեմատ ավելանալով 12%-ով:

Պաշտպանության (այլ դասերին չպատկանող) ծախսերին տրամադրվել է շուրջ 5.1 մլրդ դրամ կամ ծրագրվածի 97.7%-ը, որից 4.8 մլրդ դրամը (ծրագրվածի 100%-ը) կազմել են պաշտպանության բնագավառի այլ ծախսերը, 44.8 մլն դրամ (ծրագրվածի 100%-ը)՝ զորակոչիկներին վարորդական

իրավունքի վկայականների տրման և քննությունների ընդունման, 82.4 մլն դրամ՝ (ծրագրվածի 86.9%-ը)՝ հումանիտար ականազերծման և փորձագիտական ծառայությունների կազմակերպման ծախսերը: Այլ ծախսերի գծով՝ արտաբյուջետային միջոցների հաշվին օգտագործվել է 189 մլն դրամ՝ կազմելով ծրագրի 63.9%-ը: Նախորդ տարվա համեմատ տվյալ դասի ծախսերն աճել են 5.2%-ով, ինչը հիմնականում պայմանավորված է պաշտպանության բնագավառի այլ ծախսերի աճով:

Հասարակական կարգ, անվտանգություն և դատական գործունեություն

Հասարակական կարգի, անվտանգության և դատական գործունեության բնագավառներին ՀՀ 2013 թվականի պետական բյուջեից տրամադրվել է 91.4 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրային հատկացումների 97.2%-ը: Նախորդ տարվա համեմատ խմբի ծախսերն աճել են 19.2%-ով կամ 14.7 մլրդ դրամով՝ հիմնականում պայմանավորված ոստիկանության և Ազգային անվտանգության դասերի ծախսերի աճով:

Բաժնի ծախսերի 72.5%-ը կամ 66.3 մլրդ դրամ կազմել են հասարակական կարգի և անվտանգության խմբի ծախսերը, որոնց ծրագիրը կատարվել է 98.1%-ով: Նշված գումարից 49.5 մլրդ դրամը կազմել են ոստիկանության, 16.8 մլրդ դրամը՝ Ազգային անվտանգության դասի ծախսերը, որոնք կատարվել են համապատասխանաբար 97.6%-ով և 99.4%-ով:

Նախորդ տարվա համեմատ հասարակական կարգի և անվտանգության խմբի ծախսերն աճել են 24.5%-ով կամ 13 մլրդ դրամով: 2012 թվականի համեմատ ոստիկանության դասի ծախսերն աճել են 24.2%-ով, որն էլ հիմնականում պայմանավորված է «Հասարակական կարգի պահպանության ապահովման և ճանապարհային ոստիկանության կողմից արձանագրված խախտումների համար վարչական տուգանքների գանձումներից, գրանցման-քննական ծառայությունների դիմաց վճարումներ և այլ վճարովի ծառայություններ» ծրագրի ծախսերի աճով:

ՀՀ անձնագրերի բլանկների տպագրության ծախսերը կազմել են 425 մլն դրամ կամ նախատեսվածի 99.2%-ը և 147.9%-ով գերազանցել նախորդ տարվա ցուցանիշը՝ պայմանավորված ՀՀ քաղաքացու կենսաչափական տվյալներ պարունակող էլեկտրոնային անձնագրերի և նույնականացման քարտերի տպագրությամբ:

Հասարակական կարգի պահպանության ապահովմանը հաշվետու տարում տրամադրվել է 27.6 մլրդ դրամ՝ ապահովելով 99.8% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 15.1%-ով՝ հիմնականում պայմանավորված աշխատանքի վարձատրության ծախսերի աճով: Վերջինս կապված է «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի ընդունման հետ, որով զինծառայողների դրամական եկամուտները հարկվում են եկամտային հարկով՝ օրենքով սահմանված ընդհանուր կարգով:

Պետավտոտրանսպորտի ձեռքբերման համար պետական բյուջեից տրամադրվել է 236.2 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը չեն փոփոխվել:

ՀՀ պետական կառավարման մարմինների և կազմակերպությունների շենքերի և շինությունների, ինչպես նաև կարևորագույն նշանակության օբյեկտների պահպանության ծախսերը նույնպես ամբողջությամբ կատարվել են՝ կազմելով 1.5 մլրդ դրամ: Նախորդ տարի այս նպատակով

հատկացված միջոցներն ընդգրկված էին հասարակական կարգի պահպանության ապահովման ծախսերում:

2013 թվականին 7.3 մլրդ դրամի ծախսեր են կատարվել ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանության ստորաբաժանումների կողմից պայմանագրային հիմունքներով պահպանության և անվտանգության գծով իրականացվող ծառայությունների դիմաց ստացվող արտաբյուջետային միջոցների հաշվին, որոնք կազմել են նախատեսվածի 89.6%-ը և 16.4%-ով (1 մլրդ դրամով) գերազանցել նախորդ տարվա ցուցանիշը:

Ճանապարհային ոստիկանության կողմից արձանագրված խախտումների համար վարչական տուգանքների գանձումներից, գրանցման-քննական ծառայությունների դիմաց վճարումների և այլ վճարովի ծառայությունների ծախսերը կազմել են 11.6 մլրդ դրամ կամ նախատեսվածի 98.4%-ը, որոնք նախորդ տարվա համեմատ աճել են 34.6%-ով:

Քաղաքացիներին բժշկական օգնության և սպասարկման վճարովի ծառայությունների մատուցման նպատակով տրամադրվել է 6.1 մլն դրամ կամ նախատեսվածի 42.6%-ը, որոնք նախորդ տարվա համեմատ նվազել են 24.3%-ով: Տվյալ կատարողականի պատճառ է հանդիսացել առանձին առարկաների գնման համար հայտարարված մրցույթների չկայանալու հանգամանքը, ինչպես նաև հիվանդների քանակի նվազմամբ՝ «Պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով նախատեսված «Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների սոցիալական փաթեթով ապահովում» ծրագրում ընդգրկված քաղաքացիների՝ այլ բժշկական հիմնարկներում սպասարկվելու հանգամանքով:

ՀՀ քաղաքացու անձնագիր տալու կամ փոխանակելու վճարովի ծառայության մատուցումից ստացվող միջոցներն օգտագործվել են 86.3%-ով՝ կազմելով 670.2 մլն դրամ՝ պայմանավորված ՀՀ քաղաքացիների կողմից սեղմ ժամկետներում քաղաքացու անձնագիր և նույնականացման քարտ ստանալու համար դիմողների կանխատեսվող թվի չապահովմամբ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 44.4%-ով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը:

2013 թվականի ընթացքում Ազգային անվտանգության բնագավառին ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է 16.8 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրային հատկացումների 99.4%-ը: 2012 թվականի համեմատ Ազգային անվտանգության ծախսերն աճել են 25.2%-ով կամ 3.4 մլրդ դրամով: Մասնավորապես 14.1 մլրդ դրամ հատկացվել է Ազգային անվտանգության ապահովման ծրագրին, որն օգտագործվել է 99.6%-ով: 2012 թվականի համեմատ տվյալ ծախսերն աճել են 25.1%-ով՝ հիմնականում պայմանավորված պայմանագրային զինծառայողների փաստացի քանակի ավելացմամբ: Պետական պահպանության ապահովման ծախսերի կատարողականը կազմել է 2.3 մլրդ դրամ կամ 99.3%: Նախորդ տարվա համեմատ պետական պահպանության ապահովման ծախսերն աճել են 29.9%-ով՝ հիմնականում պայմանավորված «Եկամտային հարկի մասին» ՀՀ

օրենքի ընդունման արդյունքում աշխատանքի վարձատրության ծախսերի աճով: ՀՀ Ազգային անվտանգության խորհրդի աշխատակազմի պահպանման նպատակով օգտագործվել է 367.3 մլն դրամ (99.2%): Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը գրեթե չեն փոփոխվել: ՀՀ կառավարական կապի անվտանգության ապահովման նպատակով իրականացվել են 43.1 մլն դրամի ծախսեր, որոնք ապահովել են ծրագրի 59.7% կատարողական և 31.7%-ով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը: Պետական պահպանության ապահովումը (պայմանագրային հիմունքներով ծառայություններ մատուցելու դիմաց ստացվող միջոցների հաշվին) կազմել է 12.6 մլն դրամ (80.2%): Վերջինս իրականացվում է 2013 թվականից:

Հայաստանի փրկարար ծառայության համակարգի պահպանման նպատակով հաշվետու տարում ծախսվել է 5.7 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրային հատկացումների 98.9%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 22.7%-ով: Այս դասում ընդգրկված գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման (նախարարությունների աշխատակազմերի մասով) ծախսերը կազմել են 655 մլն դրամ՝ ապահովելով 97.5% կատարողական: Միջոցներն ուղղվել են ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմի պահպանմանը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 12.8%-ով: Նախարարության «Ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի պահպանմանը տրամադրվել է 23.1 մլն դրամ՝ ապահովելով 65% կատարողական, քանի որ պետական հիմնարկը նորաստեղծ է, և դեռ համալրված չեն բոլոր հաստիքները: Հայաստանի փրկարար ծառայության համակարգի ստորաբաժանումների պահպանման ծախսերը կատարվել են 99.3%-ով՝ կազմելով 5 մլրդ դրամ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 23.5%-ով՝ հիմնականում պայմանավորված աշխատանքի վարձատրության ծախսերի աճով:

Դատարանների դասի ծրագրերին ՀՀ 2013 թվականի պետական բյուջեից տրամադրվել է 7.7 մլրդ դրամ՝ 88.6%-ով ապահովելով ծրագրի կատարումը: Ծրագրից շեղումը հիմնականում պայմանավորված է Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Դատաիրավական բարեփոխումների երկրորդ ծրագրի լրացուցիչ ֆինանսավորման ծրագրի կատարողականով: 2012 թվականի համեմատ դատարանների ծախսերը նվազել են 5.6%-ով, ինչը հիմնականում պայմանավորված է ՀԲ աջակցությամբ իրականացվող Դատաիրավական բարեփոխումների երկրորդ ծրագրի և վերջինիս հուլանդական դրամաշնորհային ծրագրի ավարտով:

Հաշվետու տարվա պետական բյուջեից 5.9 մլրդ դրամ տրամադրվել է ՀՀ դատարանների պահպանմանը՝ կազմելով նախատեսվածի 97.6%-ը և 5.5%-ով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը: 382 մլն դրամ է տրամադրվել ՀՀ սահմանադրական դատարանի պահպանմանը՝ կազմելով նախատեսվածի 97.9%-ը և 1.8%-ով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը:

Հաշվետու տարում 768.2 մլն դրամ է տրամադրվել դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության պահպանմանը, որը կազմել է նախատեսվածի 93.5%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 20.7%-ով՝ հիմնականում պայմանավորված աշխատանքի վարձատրության ծախսերի աճով:

« սահմանադրական դատարանի և « դատարանների պահուստային ֆոնդերից օգտագործվել է համապատասխանաբար 7.8 մլն դրամ և 98.2 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի համապատասխանաբար 99.6%-ը և 78.7%-ը:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող դատաիրավական բարեփոխումների երկրորդ վարկային ծրագրում ճապոնական դրամաշնորհային ծրագրի շրջանակներում կատարվել են 276.9 մլն դրամի ծախսեր, որից 216 մլն դրամ՝ դրամաշնորհային, 60.9 մլն դրամ՝ համաֆինանսավորման միջոցներից: Ծրագրի 24.8% գերազանցումը պայմանավորված է այն հանգամանքով, որ օգտագործվել են նաև ծրագրի սկզբին հատուկ հաշվին դրված կանխավճարային միջոցները: Դրամաշնորհային ծրագիրն ավարտվել է 2013 թվականի հուլիսին: Ծրագրի շրջանակներում 2013 թվականին իրականացվել են հետևյալ աշխատանքները.

- իրականացվել են հեղինակային և տեխնիկական հսկողության աշխատանքներ Կապան քաղաքի դատարանի համար,
- դատաիրավական օրենսդրության մշակման ծառայություններ,
- բյուջետավորման ցուցանիշների ծրագրերի ներդրման ծառայություններ,
- ինստիտուցիոնալ զարգացման, տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման ծառայություններ,
- դատաիրավական բարեփոխումների վերաբերյալ հանրային իրազեկման ծառայություններ,
- դատաիրավական բարեփոխումների արդյունքների գործնական կիրառման կոմունիկացիոն գործիքների և նյութերի մշակում:

2013 թվականին « սահմանադրական դատարանի կարողությունների զարգացման ծախսերը կատարվել են 71.7%-ով՝ կազմելով 1.8 մլն դրամ: Տնտեսումը պայմանավորված է մրցույթների արդյունքում սարքավորումների ավելի ցածր գներով ձեռքբերմամբ:

Դատաիրավական բարեփոխումների երկրորդ ծրագրի լրացուցիչ ֆինանսավորման ծրագրի շրջանակներում 2013 թվականին կատարվել են 285.1 մլն դրամի ծախսեր կամ նախատեսվածի 26%-ը, որից վարկային միջոցներից՝ 188.3 մլն դրամ, կառավարության համաֆինանսավորման հաշվին՝ 96.8 մլն դրամ: Նշված միջոցներն օգտագործվել են դատաիրավական բարեփոխումների երկրորդ ծրագրի շրջանակներում, իսկ վերջինիս լրացուցիչ ֆինանսավորման ծրագիրը

Համաշխարհային բանկի կողմից չի հաստատվել: 2013 թվականի ընթացքում ծրագրի շրջանակներում հիմնականում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

- ավարտվել և շահագործման է հանձնվել Կապան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի նորակառույց շենքը,
- իրականացվել է Կապան քաղաքի դատարանի շենքի կահույքի մատակարարում,
- Կապան քաղաքի դատարանի շենքի համար անվտանգության համակարգերի՝ հսկիչ անցակետերի մատակարարում և տեղադրում,
- Կապան քաղաքի դատարանի ՏՏ սարքավորումների՝ սկաներ, տպիչ, համակարգիչներ, սերվեր և դատական նիստերի ձայնագրող սարքերի մատակարարում, տեղադրում, միացում և փորձարկում,
- շերտավարագույրների ձեռքբերում Կապան քաղաքի դատարանի գրասենյակի համար:

Հաշվետու տարում պետական բյուջեից 522.9 մլն դրամ է տրամադրվել *իրավական պաշտպանության* դասի ծրագրերին՝ կազմելով նախատեսվածի 96.9%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը գրեթե չեն փոփոխվել:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի պահպանման ծախսերը 2013 թվականին կազմել են 168.8 մլն դրամ կամ նախատեսվածի 96.8%-ը: 2012 թվականի համեմատ նշված ծախսերը փոփոխության չեն ենթարկվել:

Հանրային պաշտպանի գրասենյակի պահպանման ծախսերը կատարվել են նախատեսված ծավալով՝ կազմելով 260 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ դրանք աճել են 44.5%-ով՝ պայմանավորված այն հանգամանքով, որ հանրային պաշտպանների կողմից նախկինում միայն քրեական գործերով էր ցույց տրվում անվճար իրավաբանական օգնություն, իսկ 2012 թվականի կեսից՝ նաև քաղաքացիական գործերով, որի հետ կապված՝ հանրային պաշտպանների թիվն ավելացել է 18-ով:

Դատավարություններին ընդգրկված թարգմանիչների, փորձագետների և վկաների վարձատրության փոխհատուցման ծախսերը կազմել են 15.2 մլն դրամ (98.2%)՝ 77.5%-ով զիջելով նախորդ տարվա ցուցանիշը՝ պայմանավորված դատական գործերի թարգմանչական աշխատանքների ծավալների նվազմամբ:

Անվճարունակության գործերով կառավարիչներին իրենց մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման ծախսերը կազմել են 9.1 մլն դրամ (60.6%)՝ 38.4%-ով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը:

Հայաստանի Հանրապետությունում 2012-2013 թվականների ընտրությունների ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի կարողությունների զարգացման ծրագրին տրամադրվել է 69.7 մլն դրամ (93.2%), որով նախատեսվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի

աշխատակազմի 6 մարզային ներկայացուցչությունների և «թեժ գծի» ծառայության ստեղծումն ու հետագա 19 ամիսների ընթացքում դրանց գործարկումը, որի նպատակն է Հայաստանում 2012 թվականի ՀՀ ԱԺ ընտրությունների և 2013 թվականի ՀՀ Նախագահի ընտրությունների ընթացքում քաղաքացիների քաղաքական (ընտրական) իրավունքների պաշտպանության ապահովումը: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերն ավելացել են 4.7%-ով:

2013 թվականին 2.8 մլրդ դրամ է տրամադրվել *դատախազության* դասի ծրագրերին՝ կազմելով նախատեսվածի 95.9%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն էապես չեն փոփոխվել:

Հատկացված միջոցներից 2.5 մլրդ դրամը (նախատեսվածի 95.4%-ը) տրամադրվել է ՀՀ դատախազության պահպանմանը: 2012 թվականի համեմատ նշված ծախսերն էական փոփոխություն չեն կրել: ՀՀ դատախազության պահուստային ֆոնդի հաշվին նախատեսված միջոցներն օգտագործվել են 99.6%-ով՝ կազմելով 59.1 մլն դրամ:

2013 թվականի պետական բյուջեից ՀՀ հատուկ քննչական ծառայության պահպանմանը տրամադրվել է 272.9 մլն դրամ (99.7%): Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 9.4%-ով՝ հիմնականում պայմանավորված աշխատավարձի ծախսերի աճով:

Հաշվետու տարում *քրեակադրորդական համակարգի* պահպանության ծախսերը կազմել են շուրջ 8.4 մլրդ դրամ (98.6%): 2012 թվականի համեմատ դրանք աճել են 15.3%-ով կամ 1.1 մլրդ դրամով՝ հիմնականում պայմանավորված աշխատանքի վարձատրության ծախսերի աճով:

Տնտեսական հարաբերություններ

« 2013 թվականի պետական բյուջեի ծախսերի 11.2%-ը տրամադրվել է տնտեսական հարաբերությունների բաժնին՝ կազմելով 128.3 մլրդ դրամ և 66.5%-ով ապահովելով ծրագրի կատարումը: Շեղումը հիմնականում պայմանավորված է արտաքին աջակցությամբ իրականացվող ծրագրերի կատարողականով: Հատկացված ֆինանսական միջոցների հիմնական մասն ուղղվել է վառելիքի և էներգետիկայի (49.8%), տրանսպորտի (29.5%) և գյուղատնտեսության, անտառային տնտեսության, ձկնորսության ու որսորդության (14.2%) բնագավառների ծրագրերի իրականացմանը:

Հաշվետու տարում ընդհանուր բնույթի տնտեսական, առևտրային և աշխատանքի գծով հարաբերությունների դասի ծախսերը կազմել են շուրջ 2.9 մլրդ դրամ՝ 96.7%-ով ապահովելով ծրագրի կատարումը և 19.2%-ով գերազանցելով նախորդ տարվա համապատասխան ցուցանիշը:

Դասում ընդգրկված են 13 ծրագրեր, որոնցից հետևյալ ութի գծով արձանագրվել է 100% կատարողական:

Հաշվետու տարում 93.1 մլն դրամ է տրամադրվել արտասահմանում առևտրային ներկայացուցչությունների պահպանմանը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 7.1%-ով կամ 6.2 մլն դրամով: Ծրագրի շրջանակներում իրականացվել են Առևտրի Համաշխարհային Կազմակերպությունում « Եվրասիական ներկայացուցչի (նստավայրը՝ Շվեյցարիայի Համադաշնություն, Ժնև) և Եվրամիության երկրներում « Կենտրոնական ներկայացուցչի (նստավայրը՝ Բելգիայի Թագավորություն, Բրյուսել) պահպանման ծախսերը:

Հիդրոոդերևութաբանության ծառայությունների ձեռքբերման ծախսերը կազմել են 594.3 մլն դրամ, որն օգտագործվել է «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի պետական ծառայություն» ՊՈԱԿ-ի կողմից հիդրոոդերևութաբանական դիտարկումների իրականացման նպատակով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 11.4%-ով կամ շուրջ 60.7 մլն դրամով՝ պայմանավորված նվազագույն աշխատավարձի բարձրացմամբ:

Տնտեսական գործունեության արդյունավետ վարման և աջակցման միջոցառումների իրականացման ծախսերը կազմել են 122.3 մլն դրամ: Ծրագիրն իրականացվում է «Ձարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ-ի կողմից: Ընկերության հիմնական նպատակն է օտարերկրյա ուղղակի ներդրումների ներգրավումը և արտահանման խթանումը, ինչպես նաև գործարար միջավայրի և տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի զարգացման խոչընդոտների ուսումնասիրությունը և դրանց վերացման ուղղությամբ առաջարկությունների ներկայացումը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 1.1%-ով կամ 1.3 մլն դրամով:

Հայաստանում փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության ծրագրին հատկացվել է շուրջ 150.8 մլն դրամ: ՓՄՁ սուբյեկտներին աջակցության 2013 թվականի ծրագրի

իրականացման համար, բացի ՀՀ 2013 թվականի պետական բյուջեից հատկացված գումարից, միջազգային և օտարերկրյա դոնոր կազմակերպությունների և տեղական ինքնակառավարման մարմինների հետ համագործակցության շրջանակներում ներգրավվել են լրացուցիչ ֆինանսական միջոցներ: ՓՄՁ սուբյեկտներին աջակցության 2013 թվականի ծրագրի շրջանակներում Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից ՓՄՁ սուբյեկտներին ֆինանսական և տեխնիկական աջակցության ուղղություններով բավարարվել է 17243 աջակցության հայտ. ընդ որում՝ աջակցություն ստացած ՓՄՁ սուբյեկտների 5.2%-ը գործում են Երևան քաղաքում, 94.8%-ը՝ ՀՀ մարզերում, առավելապես հեռավոր և սահմանամերձ գյուղական և քաղաքային համայնքներում: Նախորդ տարվա համեմատ այս ծախսերը գրեթե չեն փոփոխվել:

2013 թվականին «Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամի» (ՀԱՄՀ) կանոնադրական հիմնախնդիրների իրականացմանը պետական աջակցության ծախսերը կազմել են 261.3 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ այս ծախսերը գրեթե չեն փոփոխվել: Ծրագրի շրջանակներում Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամը մեծածավալ աշխատանքներ է իրականացրել Հայաստանի ազգային մրցունակության բարձրացման, Հայաստանի ներկայությունը միջազգային ասպարեզում խթանելու ուղղությամբ: Մասնավորապես՝ իրականացվել են հետևյալ միջոցառումները.

- Տաթևի վերածնունդ միջոցառման շրջանակներում իրականացվել է վանական համալիրի վերականգնման, համայնքային զարգացման և «Տաթևի վերածնունդ» բրենդի առաջնական աշխատանքներ: Տաթևի վանական համալիրի վերականգնողական աշխատանքներն արդյունավետ կազմակերպելու նպատակով նվիրաբերության պայմանագրեր են կնքվել «Տաթևի վերածնունդ հիմնադրամի» հետ: Մշակվել է «Տաթև» զբոսաշրջային կենտրոնի գլխավոր հատակագիծը, ինչպես նաև կենտրոնի ճարտարապետական և համայնքային դիզայնի նախագիծը:

- Առողջապահության ծրագրի շրջանակներում արդյունավետ ընթացք է ապահովվել ուռուցքաբանության գերազանցության հայկական կենտրոնի ստեղծման ուղղությամբ: Ամբողջովին կատարվել են սահմանված շինարարական, ճարտարապետական և տեխնիկական աշխատանքները, ներկրվել են ռադիոիզոտոպների արտադրության կենտրոնում տեղադրվելիք միջուկային բժշկության կարիքների համար պետության կողմից ձեռք բերված ցիկլոտրոնը և ախտորոշման սարքավորումները, հաստատվել է ուռուցքաբանության գերազանցության կենտրոնի ստեղծման նորացված ծրագիրը:

- Զբոսաշրջության շրջանակներում Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամը պատշաճ կերպով ներկայացրել է Հայաստանը (նաև Արցախը) մի շարք միջազգային զբոսաշրջային ցուցահանդեսների: ՀԱՄՀ պատվիրակությունը նաև մասնակցություն է ցուցաբերել Դուբայում «Արաբական զբոսաշրջային շուկա» միջազգային ցուցահանդեսին և «Օդանավակայանի

ցուցահանդես 2013» միջազգային ֆորումին, Զամբիայում և Զիմբաբվեում՝ «UNWTO»-ի 20-րդ Գլխավոր Ասամբլեայի նստաշրջանին, Լաս Վեգասում՝ «World Routes» միջազգային ֆորումին, ինչպես նաև Սեուլում՝ Մրցունակության համաշխարհային գագաթաժողովին և Մրցունակության խորհուրդների համաշխարհային դաշնության տարեկան համաժողովին: Կազմակերպվել է ՄԱԿ-ի Զբոսաշրջային համաշխարհային կազմակերպության (UNWTO) կողմից կազմակերպված «Մետաքսի ճանապարհի մարտահրավեր» բլոգերների միջազգային մրցույթի հաղթողների այցելությունը Հայաստան, կազմակերպվել է ՀԱՄՀ գործընկերների հետ համատեղ Ուկրաինայից 15 խոշորագույն և Հնդկաստանից 10 «MICE» զբոսաշրջային գործակալությունների այցելությունները Հայաստան: Պատրաստվել և միջազգային տարբեր հարթակներում տարածվել են Հայաստանը բնութագրող և գովազդային անգլերեն, ռուսերեն, ֆրանսերեն, իտալերեն, իսպաներեն, արաբերեն, գերմաներեն, ճապոներեն լեզուներով զբոսաշրջային տեղեկագրեր և քարտեզներ: ՀԱՄՀ գործընկերության շրջանակներում ստեղծվել են Արմավիրի, Սյունիքի և Շիրակի մարզերի տարածաշրջանային զբոսաշրջային տեղեկագրերը: Հայկական աշխարհի զբոսաշրջային արդյունքների խթանման համատեքստում տրվել է 3 մրցանակ: Լոս Անջելեսի միջազգային զբոսաշրջային ցուցահանդեսում Հայաստանի և Արցախի միասնական տաղավարը ճանաչվել է «Լավագույն նոր տաղավար» մրցանակի հաղթող: «UNWTO»-ի «Vettor Giusti» զբոսաշրջային պաստառների մրցույթում Հայաստանի «Քարերի սիմֆոնիա» պաստառը ճանաչվել է լավագույնը Եվրոպա կատեգորիայում՝ «UNWTO»-ի Եվրոպայի հանձնաժողովի 44 անդամ-երկրների շարքում: Հայաստանը հաղթող է ճանաչվել նաև «National Geographic Traveler» ամսագրի կողմից կազմակերպված լավագույն զբոսաշրջային ուղղության մրցույթի «Տարվա հայտնություն» անվանակարգում:

- Միջոցառման շրջանակներում կազմակերպվել են համագործակցության մի շարք միջոցառումներ Հայաստանի մրցունակության խթանման, զբոսաշրջության, առողջապահության ոլորտներում, ինչպես նաև Տաթևի վերածնունդ ծրագրի և օդային ազատականացման ծրագրի շրջանակներում: Մասնավորապես, ՀԱՄՀ և Մրցունակության խորհուրդների համաշխարհային դաշնության (GFCC) միջև ստորագրվել է փոխըմբռնման հուշագիր, որով ՀԱՄՀ-ն անդամագրվել է Դաշնությանը:

- Կրթության ծրագրի շրջանակներում հավաքագրվել և պատրաստվել է վերջին 3-5 տարիների ընթացքում իրականացված կրթական ծրագրերի մասին տեղեկատվությունը:

- Զանգվածային և հասարակության հետ կապեր: Այս միջոցառման շրջանակներում լրատվամիջոցների կազմակերպվել և աջակցություն է ցուցաբերվել լրագրողական-ճանաչողական 5 այցի, մասնավորապես՝ հեղինակավոր «National Geographic Россия» ամսագրի խմբագրակազմի,

«Միր» միջպետական հեռուստառադիոընկերության «13 минут с Македонской» զբոսաշրջային ծրագրի խմբագրակազմի, ռուսական հեղինակավոր «Россия 2» հեռուստաընկերության «Язь против еды» հաղորդաշարի նկարահանող խմբի, «ELLE», «Top Beauty», «The Good Housekeeping», «Aeroflot Premium», «Aeroflot», «In Style», «World of Impressions» ամսագրերի, «RATA-News» էլեկտրոնային օրաթերթի և «Komsomolskaya Pravda» թերթի «kp.ru» կայքի լրագրողների, «Hindustan Times Brunch» հանդեսի, «DNA» օրաթերթի, «Travel XP» հեռուստաալիքի, «Lonely Planet», «Business India» և «Outlook Traveller» ամսագրերի ներկայացուցիչների այցելությունները:

«ՀՀ հավատարմագրման համակարգի բարեփոխում և Հավաքագրման ազգային մարմնի ստեղծում» ծրագրով պետական աջակցության ծախսերը կազմել են շուրջ 14 մլն դրամ: Ծրագիրը սկսել է գործել 2013 թվականից:

ՀՀ արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությամբ նախատեսված միջոցառումների իրականացման պետական աջակցության համար տրամադրվել է շուրջ 463.9 մլն դրամ: Ծրագիրը սկսել է գործել 2013 թվականից: Այն ուղղված է արդյունաբերական արտադրանքի արտահանելի հատվածի ընդլայնմանը և արտահանման ներուժ ունեցող կազմակերպությունների կարողությունների զարգացմանը: Ծրագրի շրջանակներում մի շարք արդյունաբերական ձեռնարկություններ ստացել են պետական աջակցություն տարբեր ուղղություններով, ինչը դրական է ազդել նրանց արտահանման և արտադրության ծավալների աճի վրա, ինչպես նաև կազմակերպվել են մի շարք միջոցառումներ՝ մասնավորապես.

- հանրաճանաչ միջազգային արդյունաբերական ոլորտի կազմակերպությունների ներգրավման և մուտքի ապահովման միջոցառումների իրականացում, այդ թվում՝ ազատ տնտեսական գոտում, սփյուռքահայերի տեղեկատվական բազայի ստեղծում ենթածրագրի շրջանակներում 2013 թվականին կազմակերպվել է 3 ֆորում և 1 աշխատաժողով, որոնց մասնակցել են շուրջ 1550 շահառու: Հայ-իրաքյան գործարար ֆորումի շրջանակներում կազմակերպվել է նաև «Արտահանվող հայկական ապրանքներ» խորագրով ցուցահանդեսը, որին մասնակցել են 75 ընկերություններ՝ Արդյունաբերության զարգացման հիմնադրամի 100% աջակցությամբ: Սկսվել և իրականացման փուլում են գտնվում աշխարհում բարձր և միջին կառավարչական պաշտոններ զբաղեցնող առնվազն 250 սփյուռքահայ պաշտոնյաների տեղեկատվական բազայի ստեղծման աշխատանքները,

- «Արտադրական գործունեության վարկավորման սուբսիդավորում» ենթածրագրի շրջանակներում 2013 թվականին տրամադրվել է վարկի տոկոսադրույքի սուբսիդավորման աջակցություն ռազմավարությամբ ընտրված ոլորտների 11 ընկերությունների,

- «Շուկայական տեղեկատվության ապահովում, հայկական ապրանքների նպատակային շուկաներում առաջնդման գործունեության իրականացում, հայկական ապրանքների ներկայացում»

Ենթաձրագրի շրջանակներում 2013 թվականին իրականացվել է 3 նպատակային շուկաներում տեղական արտադրանքի առաջմղում ու ներկայացում՝ 23 ներկայացուցիչների մասնակցության ապահովմամբ: Արդյունաբերության զարգացման հիմնադրամի աջակցությամբ ստեղծվել է «Հայաստանի գինիներ» իրավաբանական անձանց միությունը: Սկսվել և իրականացման փուլում են գտնվում «Հայաստանի գինիներ» հայկական գինու բրենդի ստեղծման աշխատանքները: Հիմնադրամի աջակցությամբ կազմակերպվել են երկու գինեգործական վերնխաժներ: «Միջազգային սերտիֆիկացման համաֆինանսավորում» ենթաձրագրի շրջանակներում 2013 թվականին տրամադրվել է աջակցություն թվով 6 ընկերությունների 7 հայտի համար՝ դեղագործության, ճշգրիտ ճարտարագիտության և գինեգործության ոլորտներում, որոնք արտերկրում ստացել են դեղերի գրանցման վկայականներ, սերտիֆիկատներ և իրականացրել լաբորատոր փորձաքննություն,

- «Միջազգային ցուցահանդեսներին մասնակցության ապահովում» ենթաձրագրի շրջանակներում 2013 թվականին ցուցահանդեսներին մասնակցության աջակցություն է տրամադրվել 86 սուբյեկտի,

- «Արտասահմանյան դիստրիբյուտորների և այլ օժանդակ կառույցների ներկայացուցիչների այցելություններ Հայաստան և (կամ) արտերկիր, գործարար կապերի հաստատում» ենթաձրագրի շրջանակներում 2013 թվականին կազմակերպվել է արտահանմանն օժանդակող կառույցների/դիստրիբյուտորների 36 ներկայացուցիչների այցելություն Հայաստան,

- «Ուսումնական դասընթացների մշակման, կազմակերպման և իրականացման ֆինանսավորում» ենթաձրագրի շրջանակներում 2013 թվականին կազմակերպվել է 1 դասընթաց, 1 վարպետության դաս, որոնց մասնակցել են 35 շահառու: «Գյումրու մասնաճյուղի ինովացիոն ոլորտի կրթական ծրագրեր» ենթաձրագրի շրջանակներում կազմակերպվել է 9 դասընթաց, շահառուների թիվը՝ 42,

- «Արտահանմանն ուղղված արտադրատեսակների արտադրության ներուժի բացահայտմանն ուղղված հետազոտության իրականացում» ենթաձրագրի շրջանակներում սկսվել և իրականացման փուլում են գտնվում հետազոտության աշխատանքները,

- «Գյումրու մասնաճյուղի անշարժ գույքի կառավարման» ենթաձրագրի շրջանակներում 2013 թվականի վերջին ավարտվել են Գյումրու տեխնոլոգիական կենտրոնի հիմնանորոգման աշխատանքները,

- Հայաստանի Հանրապետության կառավարության Գյումրու տեխնոպարկի գործունեության իրականացման ծրագրի, ինչպես նաև Համաշխարհային Բանկի «Էլեկտրոնային հասարակության և մրցունակության համար նորարարություն» վարկային ծրագրի շրջանակում շարունակվում է իրականացվել Գյումրու տեխնոլոգիական կենտրոնի հիմնման ծրագիրը: 2013 թվականի

դեկտեմբերին ավարտվել են Գյումրու տեխնոլոգիական կենտրոնի հիմնական շենքի շինարարական և վերանորոգման աշխատանքները: Կենտրոնի աշխատանքային տարածքն իրենից ներկայացնելու է Գյումրու կենտրոնական հատվածում տեղակայված, միջազգային պահանջներին բավարարող 6000 ք.մ. տարածք՝ ժամանակակից ենթակառուցվածքներով, կահավորանքով և տեխնոլոգիական հագեցվածությամբ, ինչը յուրօրինակ հարթակ կհանդիսանա մեկ միջավայրում կրթական, հետազոտական, գործարար և ներդրումային արժեշտի ձևավորման համար:

« Էկոնոմիկայի նախարարության ներքո գործող տեսչական բարեփոխումների քարտուղարության պետական աջակցության ծախսերը կազմել են 10.7 մլն դրամ: Ծրագրի շրջանակներում կատարվել են մի շարք աշխատանքներ, որոնք ամրագրված են եղել « Կառավարության 2013 թվականի ծրագրով: Ծրագիրը սկսել է գործել 2013 թվականից:

99.9% կատարողական է արձանագրվել ստանդարտների մշակման ծառայությունների ծախսերի գծով, որոնք կազմել են շուրջ 14.3 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 3.2%-ով կամ 438.6 հազար դրամով, որը պայմանավորված է «Եկամտային հարկի մասին» « օրենքի կիրարկմամբ և որոշ ապրանքների ու ծառայությունների ձեռքբերման գների աճով:

99.8% կատարողական են ապահովել գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման ծախսերը՝ կազմելով շուրջ 266.3 մլն դրամ, որը հատկացվել է « Կենտրոնական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովին: Նախորդ տարվա համեմատ այս ծախսերն աճել են 9.2%-ով կամ 22.5 մլն դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է աշխատանքի վարձատրության ծախսերի աճով:

Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման ծախսերը (նախարարությունների աշխատակազմերի մասով) կազմել են 595.9 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 98.1%-ը: Միջոցներն ուղղվել են « Էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի պահպանմանը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 1.9%-ով կամ 11.5 մլն դրամով, որը հիմնականում պայմանավորված է նախարարության կարիքների համար ձեռք բերված ապրանքների և ծառայությունների քանակի նվազմամբ:

« Կառավարության տարում ընդհանուր բնույթի տնտեսական և առևտրային հարաբերությունների դասում գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման նպատակով 306.6 մլն դրամ օգտագործվել է « Էկոնոմիկայի նախարարության արտաբյուջետային միջոցներից՝ ապահովելով ծրագրի 82.9%-ը, ինչը պայմանավորված է որոշ մրցույթներ չկայանալու հանգամանքով: Նախորդ տարվա համեմատ

նշված ծախսերն աճել են 25.8%-ով կամ շուրջ 63 մլն դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է աշխատանքի վարձատրության և հիմնական միջոցների ձեռքբերման ծախսերի աճով:

2013 թվականին տեխնիկական կանոնակարգի պահանջների և չափագիտական կանոնների ու նորմերի պահպանման վերահսկողության պետական ծրագրի ծախսերը կազմել են 1 մլն դրամ կամ նախատեսվածի 4.2%-ը՝ պայմանավորված նրանով, որ փորձարկման լաբորատորիաների կողմից իրականացվել են նախատեսվածից ավելի քիչ փորձարկումներ՝ կապված մրցույթների հետաձգման հետ: Ծրագրի շրջանակներում ՀՀ էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի Շուկայի վերահսկողության պետական տեսչության կողմից իրականացվել են ստուգումներ 353 տնտեսվարող սուբյեկտներում: Ստուգված տնտեսվարող սուբյեկտներից 238-ում հայտնաբերվել են խախտումներ, որի համար խախտումներ թույլ տված պատասխանատու անձանց նկատմամբ կիրառվել է վարչական տուգանք, որից մի մասը մուտքագրվել է պետական բյուջե, մնացած մասը գտնվում է բռնագանձման տարբեր փուլերում: Հսկողություն է իրականացվել 70 մլն դրամի շրջանառությունը չգերազանցող 81 տնտեսվարող սուբյեկտների մոտ, որի արդյունքներով նշանակվել է վարչական տուգանք: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 66.3%-ով կամ 2 մլն դրամով, որը հիմնականում պայմանավորված է փորձարկումների քանակի նվազմամբ:

2013 թվականի ընթացքում *գյուղատնտեսության, անտառային տնտեսության, ձկնաբուծության և որսորդության* բնագավառներում ՀՀ պետական բյուջեի ծախսերը կազմել են շուրջ 18.2 մլրդ դրամ կամ ծրագրվածի 77.3%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է գյուղատնտեսության և ոռոգման բնագավառներում արտաքին աջակցությամբ իրականացվող վարկային ծրագրերի կատարողականով:

Հաշվետու տարում *գյուղատնտեսության* դասի ծախսերը կազմել են ավելի քան 9.3 մլրդ դրամ կամ ծրագրվածի 83.7%-ը: Նախորդ տարվա համեմատ գյուղատնտեսության դասի ծախսերն աճել են 2.5%-ով կամ 226.8 մլն դրամով:

Գյուղատնտեսության ոլորտին կատարված հատկացումների հաշվին իրականացվել են 26 ծրագրեր, այդ թվում՝ արտաքին աջակցությամբ ֆինանսավորվել են 4 վարկային և 6 դրամաշնորհային ծրագրեր:

Հաշվետու տարում գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի (ԳԶՄՀ) աջակցությամբ իրականացվող՝ «Շուկայավարման հնարավորություն ֆերմերներին» վարկային ծրագրի շրջանակներում ծախսվել է շուրջ 24.4 մլն դրամ, որից 22.3 մլն դրամը՝ վարկային միջոցներից, 2 մլն դրամը՝ ՀՀ կառավարության համաֆինանսավորման հաշվին: Նշված միջոցներն ուղղվել են ընթացիկ ծախսերին: Ծրագրի ծախսերը 2 անգամ գերազանցել են նախատեսված ցուցանիշը, ինչը պայմանավորված է նրանով, որ 2013 թվականին ծախսեր են կատարվել նաև նախորդ տարի հատկացված միջոցների հաշվին: Բացի նշված ընթացիկ ծախսերից, ևս 450 մլն

դրամի վարկային միջոցներ են հատկացվել «Արզնի մասմթերք» ընկերությանը՝ կաթնամթերքի վերամշակման նպատակով: Ծրագիրը 2013 թվականին ավարտվել է, և նախատեսված բոլոր աշխատանքներն իրականացվել են: Ծրագրի նպատակն էր բարելավել Հայաստանի Հանրապետության գյուղական աղքատ բնակչության սոցիալ-տնտեսական վիճակը: Ծրագրի խնդիրն էր աջակցել համեմատական տնտեսական առավելություններ ունեցող առաջնային արտադրողների և առավել բարենպաստ աշխատանքային հնարավորություններ փնտրող գյուղաբնակների հետ սերտ կապ ունեցող գյուղական ձեռնարկությունների աճին, տրամադրել ներդրումային գործիքներ և հարակից ֆինանսական միջոցներ, որոնք կբավարարեն գյուղական բաժնետիրական ֆինանսավորման պահանջարկը, և աջակցել Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական ոլորտի հետագա զարգացմանը, բարելավել Հայաստանի Հանրապետության գյուղական աղքատ բնակչության սոցիալ-տնտեսական վիճակը ենթակառուցվածքների վերականգման միջոցով: Ծրագիրն ունի 3 հիմնական բաղադրիչ՝ «Գյուղական ձեռնարկատիրության ֆինանսավորում», «Տնտեսապես հիմնավորված ենթակառուցվածքների վերականգնում» և «Ծրագրի վերլուծություն և կառավարում»: Առաջին բաղադրիչի խնդիրն է խթանել գյուղական մանրածավալ արտադրողների և ՓՄՁ-ների տնտեսական կայուն ակտիվության աճը՝ համապատասխան նորարարական ֆինանսական ծառայություններ տրամադրելու ճանապարհով: Բաղադրիչի նպատակն է հիմնել գյուղական բաժնետիրական հիմնադրամ, ՓՄՁ-ներին տրամադրել ներդրումային վարկեր և ֆերմերային տնտեսություններին՝ զարգացման վարկեր: «Տնտեսապես հիմնավորված ենթակառուցվածքների վերականգնում» բաղադրիչի խնդիրն է բարելավել հիմնական շահառու խմբի կենսամակարդակը և ներդրումային միջավայրը շահութաբեր ձեռնարկատիրության զարգացման և կայուն գյուղական տնտեսական աճի համար: Բաղադրիչի ներդրումները նպատակաուղղվել են սոցիալական ենթակառուցվածքների վերականգման ծրագրերին:

Նշված վարկային ծրագրին աջակցելու նպատակով ԳԶՄՀ-ի կողմից տրամադրված դրամաշնորհից օգտագործվել է 59.3 մլն դրամ, որից շուրջ 55.3 մլն դրամը՝ դրամաշնորհային միջոցներից, 4.1 մլն դրամը՝ ՀՀ կառավարության համաֆինանսավորման հաշվին: Ծրագրի ծախսերը 34.2%-ով գերազանցել են նախատեսված ցուցանիշը, ինչը պայմանավորված է ծրագրի փակման հետ կապված՝ դրամաշնորհի մնացորդն ամբողջությամբ օգտագործելու հանգամանքով:

Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի աջակցությամբ իրականացվող՝ «Գյուղական կարողությունների ստեղծում» վարկային ծրագրի շրջանակներում ծախսվել է շուրջ 359 մլն դրամ, որից 322.3 մլն դրամը՝ վարկային միջոցներից, 36.6 մլն դրամը՝ ՀՀ կառավարության համաֆինանսավորման հաշվին: Ծրագրի ծախսերը 44.2%-ով զիջել են նախատեսված ցուցանիշը, ինչը հիմնականում պայմանավորված է տեխնիկական առաջադրանքների և պայմանագրերի նախագծերի վերաբերյալ ԳԶՄՀ-ից համաձայնությունը ուշ ստանալու, ինչպես նաև այգիների

հիմնադրման և պայմանագրերի կնքման ձգձգումների հանգամանքով: Ծրագրի նպատակն է նվազեցնել աղքատությունը Հայաստանի Հանրապետության գյուղական տարածքներում: Ծրագրի խնդիրն է ստեղծել պտղի և ընկուզեղենի տնտեսապես կայուն արտադրություն, որը կապված կլինի գյուղական մանրածավալ արտադրող ֆերմերների հետ: Ծրագիրն ունի 3 հիմնական բաղադրիչ՝ «Աջակցություն պտղի և ընկուզեղենի արտադրությանը», «Գյուղական ենթակառուցվածքներ» և «Ծրագրի կառավարում»: Ծրագիրը հանդիսանում է ԳԶՄՀ-ի կողմից ֆինանսավորվող վեցերորդ ծրագիրը Հայաստանում և առաջինն է «Հայկական Միրգ» բաժնետիրական ընկերության ստեղծման գործում՝ աջակցելով գյուղական տարածքների աղքատության նվազեցմանը, որը նորարական է և՛ Հայաստանի, և՛ ԳԶՄՀ-ի համար: Ծրագրի շրջանակներում 2013 թվականի ընթացքում «Հայկական Միրգ» ԲԲԸ-ն իրականացրել է շինարարության և գյուղատնտեսական, տեխնիկական աջակցության, ուսուցման և խորհրդատվության աշխատանքներ, ձեռք են բերվել ապրանքներ, սարքավորումներ և տնկանյութեր:

Վերոհիշյալ վարկային ծրագրին աջակցելու նպատակով ԳԶՄՀ-ի աջակցությամբ իրականացվող դրամաշնորհային ծրագրի շրջանակներում օգտագործվել է շուրջ 83.7 մլն դրամ, որից 64.2 մլն դրամը՝ դրամաշնորհային միջոցների, 19.5 մլն դրամը՝ ՀՀ կառավարության համաֆինանսավորման հաշվին: Ծրագրի ծախսերի 108%-ով կատարումը պայմանավորված է դրամաշնորհի մնացորդն օգտագործելու հանգամանքով: Նշենք, որ ՀՀ կառավարության համաֆինանսավորման միջոցներն օգտագործվել են 100%-ով, իսկ դրամաշնորհային միջոցները գերազանցել են ծրագիրը 10.7%-ով, ինչը հիմնականում պայմանավորված է «Հայկական Միրգ» ԲԲԸ-ին աջակցություն ցուցաբերելու նպատակով մեկ լրացուցիչ մասնագետի ներգրավմամբ: Ծրագրի շրջանակներում «Հայկական Միրգ» ԲԲԸ-ն կնքել է պայմանագիր օտարերկրյա «Մակֆերսոն» ընկերության հետ, որը մատուցել է մասնագիտական խորհրդատվական ծառայություններ «Հայկական Միրգ» ԲԲԸ-ին:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության վարկային ծրագրի շրջանակներում ծախսվել է շուրջ 1.4 մլրդ դրամ կամ նախատեսվածի 82.7%-ը, որից 1.1 մլրդ դրամը՝ վարկային միջոցների, 288.7 մլն դրամը՝ ՀՀ կառավարության համաֆինանսավորման հաշվին: Ծրագրի շրջանակներում 1.3 մլրդ դրամով կատարվել են խորհրդատվական ծառայությունների, ուսուցումների, գործառնական ծախսերի՝ այդ թվում աշխատավարձի համար կատարված ծախսերը, 55.6 մլն դրամով ձեռք են բերվել լաբորատոր և այլ սարքավորումներ, 35.3 մլն դրամ ուղղվել է շինարարական աշխատանքներին: Ծրագրով համայնքներում աշխատանքներ և գնումներ կատարելու նախապայմաններից մեկն է համարվում համայնքների կողմից շինարարության գումարների 5%-ի և արտոգտագործողների սպառողական կոոպերատիվների կողմից ձեռքբերվող տեխնիկայի արժեքի

50%-ի համաֆինանսավորման միջոցների տրամադրումը: Այդ համաֆինանսավորման միջոցների ուշացմամբ է պայմանավորված բյուջեով նախատեսված և ծախսված գումարների տարբերությունը, որը նաև ուսուցման, խորհրդատվական ծառայությունների և գործառնական ծախսերի խնայողությունների արդյունք է: Բացի այդ, ծրագրի «Համայնքներում կենդանիների առողջությանն ուղղված ծառայություններ» ենթաբաղադրիչով նախատեսված էր անասնաբուժական սպասարկման կենտրոնների կառուցում, որն, ըստ կնքված պայմանագրերի, նախատեսված էր ավարտել 2013 թվականի վերջին: Կապված Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքում շինարարության համար նախատեսված հողատարածքը որպես պետական սեփականություն գրանցելու գործընթացը ձգձգվելու, ինչպես նաև եղանակային անբարենպաստ պայմանների հետ՝ շինարարական աշխատանքների կատարման ժամկետները երկարաձգվել են, և հետաձգվել է նաև կենտրոնների համար ձեռքբերվող ապրանքների վերջնական մատակարարումը:

Ծրագրի հիմնական նպատակն է աջակցել անասնապահական ուղղվածություն ունեցող համայնքներին արոտագտագործման/անասնապահական առավել մրցունակ և կայուն համակարգերի ստեղծման հարցում: Սա հնարավոր կլինի կաթնատվության և կենդանիների օրական քաշաճի ավելացմանը զուգահեռ անասնապահական մթերքի ծավալների մեծացման և որակի բարձրացման, արոտավայրերի վարձակալությունից համայնքի բյուջետային եկամուտների ավելացման միջոցով համայնքների արոտավայրերի կառավարման արդյունավետության բարձրացման և անասնապահությունից ստացվող զուտ եկամտի ավելացման միջոցով:

ՕՊԵԿ զարգացման միջազգային հիմնադրամի աջակցությամբ իրականացվող «Գյուղական կարողությունների ստեղծում» վարկային ծրագրի շրջանակներում ծախսվել է 2.3 մլրդ դրամ, որից 1.9 մլրդ դրամը՝ վարկային միջոցներից, 383.1 մլն դրամը՝ «Կառավարության համաֆինանսավորման հաշվին»: Ծրագրի ծախսերը 28.4%-ով զիջել են նախատեսված ցուցանիշը, ինչը հիմնականում պայմանավորված է նրանով, որ վարկային միջոցների մի մասի վճարումն իրականացվել է 2014 թվականին: Ծրագիրը նախատեսում է ներդրումներ կատարել գյուղական ենթակառուցվածքների ոլորտում գյուղական անապահով համայնքների բնակիչների կենսամակարդակը բարելավելու, տնտեսական աճ ապահովելու և տնտեսական ներուժի առավել արդյունավետ կիրառությանն օժանդակելու նպատակով: Ծրագրի շրջանակներում ներդրումներ են իրականացվել «Տավուշի, Արագածոտնի, Սյունիքի, Լոռու և Գեղարքունիքի մարզերում: Շինարարական պայմանագրերը կնքվել են թվով 5 շինարարական կազմակերպությունների հետ, շինարարական աշխատանքներն իրականացվել են բոլոր 32 շինարարական օբյեկտներում:

Դանիական թագավորության աջակցությամբ իրականացվող՝ «Շուկայավարման հնարավորություն ֆերմերներին» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում ծախսվել է շուրջ 230.6 մլն դրամ, որից 202.9 մլն դրամը՝ դրամաշնորհային միջոցների, 27.7 մլն դրամը՝ «

կառավարության համաֆինանսավորման հաշվին ապահովելով 91.1% կատարողական: Դրամաշնորհի փակման օրը սկզբնապես նախատեսվել էր 2013 թվականի դեկտեմբերի 31-ը, սակայն համաձայնագրում կատարված փոփոխությամբ այն երկարաձգվել է ևս մեկ տարով: Ծրագրի նպատակն է բարելավել Հայաստանի Հանրապետության գյուղական աղքատ բնակչության սոցիալ-տնտեսական վիճակը: Ծրագրի խնդիրն է նախաներդրումային, ներդրումային և հետներդրումային տեխնիկական օժանդակության տրամադրումը Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի (ՖՐԵԴԱ) միջոցով ֆինանսավորվող ձեռնարկություններին, ՖՐԵԴԱ-ին մասնագիտացված տեխնիկական օժանդակության ցուցաբերումը: 2013 թվականի ընթացքում ծրագրի շրջանակներում տեխնիկական օժանդակություն է ցուցաբերվել «Չիզ թաուն», «365 գրուպ», «Հարպրոդ», «Ակվատեխավտոմատիկա», «Փյունիկ», «Մեդրի պահածոների գործարան», «Արալեո», «ՍԻՍ նատուրալ» ՓԲԸ-ներին և գյուղատնտեսական ոլորտի հետ առնչվող այլ ընկերություններին:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող սննդի անվտանգության կարողությունների զարգացման դրամաշնորհային ծրագրի շրջանակներում 2013 թվականին ծախսվել է 31.3 մլն դրամ, որից 24.7 մլն դրամը՝ դրամաշնորհային միջոցներից, 6.6 մլն դրամը՝ ՀՀ կառավարության համաֆինանսավորման հաշվին: Ծրագրի ծախսերի 30.9%-ով կատարումը պայմանավորված է այն հանգամանքով, որ ծրագիրը ՀՀ պետական բյուջեում ընդգրկվել է 2013 թվականի ապրիլին, ինչի արդյունքում նախատեսված աշխատանքները սկսվել են ժամկետից ուշ: Ծրագիրն ուղղված է սննդամթերքի անվտանգության ոլորտի ինստիտուցիոնալ կարողությունների զարգացմանը: Ծրագրի նպատակն է աջակցել սննդամթերքի անվտանգության ապահովման ժամանակակից համակարգի ստեղծմանը՝ հիմնվելով միջազգային չափանիշների և լավագույն փորձի վրա: Աջակցությունը լինելու է շարունակական, որը նաև խթան կհանդիսանա սննդամթերքի անվտանգության ոլորտում հետագա բարեփոխումների իրականացման համար: Ծրագրի երեք հիմնական ուղղություններն են ՀՀ իրավական դաշտի բարելավումը՝ միջազգային և ԵՄ սննդամթերքի անվտանգության պահանջներին համապատասխանեցնելու նպատակով, պետական կառույցների աշխատակիցների համար անհրաժեշտ ուսուցումների մեթոդաբանության մշակումը և ռիսկերի ու տնտեսական վերլուծության կարողությունների զարգացումը՝ պետական կառույցների կողմից ազգային և միջազգային մակարդակով սննդամթերքի անվտանգության ոլորտում իրականացվող քաղաքականությունը և որոշումները ԵՄ Ազատ Առևտրի Համաձայնագրին օժանդակող ԱՀԿ/ՄՖՍ (սանիտարական և ֆիտոսանիտարական) սկզբունքներին համապատասխան ապահովելու նպատակով: Ծրագիրը նախատեսում է իրականացնել երեք բաղադրիչներով՝ «Սննդամթերքի անվտանգության ոլորտի ինստիտուցիոնալ կարողությունների զարգացում», «Տեխնիկական կարողությունների զարգացում» և «Թարգմանություն և աուդիտ»:

Սննդամթերքի անվտանգության ոլորտի ինստիտուցիոնալ կարողությունների հզորացման բաղադրիչով իրականացվել է սանիտարական և բուսասանիտարական (ՍԲՍ) ոլորտի օրենսդրության բարելավում՝ ՀՀ իրավական ակտերի մոտարկում Եվրամիության իրավական ակտերին: Կնքվել է պայմանագիր «ԱՄ Փարթնըրզ քանսալթինգ քամփնի» խորհրդատվական կազմակերպության հետ, որը պետք է իրականացնի այդ աշխատանքները մինչև 2015 թվականի երկրորդ եռամսյակ: Այս բաղադրիչի շրջանակներում կնքվել են նաև պայմանագրեր հաղորդակցության գծով միջազգային և տեղական խորհրդատուների հետ, որոնց ծառայությունները շարունակվում են 2014 թվականին: Տեխնիկական կարողությունների զարգացման բաղադրիչի շրջանակներում կնքվել է պայմանագիր տեղեկատվական տեխնոլոգիաների գծով միջազգային խորհրդատուի հետ, որի համաձայն առաջին փուլի ծառայությունները մատուցվել են 2013 թվականին, որոնց դիմաց վճարումը կատարվել է 2014 թվականին, իսկ ամբողջ ծառայությունների մատուցումը կավարտվի մինչև 2014 թվականի հունիսի 30-ը: Թարգմանության և աուդիտի բաղադրիչի շրջանակներում կնքվել է պայմանագիր երեք խորհրդատուների հետ թարգմանչական աշխատանքների համար, որոնք պետք է թարգմանեն գրավոր կամ բանավոր տվյալ ծրագրին առնչվող բոլոր փաստաթղթերը:

ՄԱԶԾ-ի կողմից իրականացվող Կենտրոնական Ասիայի, Հարավային Կովկասի և Արևմտյան ԱՊՀ երկրների համար (Հայաստան) առևտրի աջակցության նպատակով նախատեսված 101.4 մլն դրամ դրամաշնորհը չի օգտագործվել, ինչը պայմանավորված է նրանով, որ ծրագիրը ուշ է հաստատվել և ծրագրի իրականացման համար պայմանագրեր չեն կնքվել:

«Ճապոնիայի կառավարության կողմից իրականացվող «Դրամաշնորհային աջակցություն սակավ ապահով ֆերմերներին» ծրագրի շրջանակներում «Տնտեսական կառուցվածքային բարեփոխումներին աջակցություն» դրամաշնորհային ծրագրի գործընկերային հիմնադրամի կողմից հացահատիկային և կերային մշակաբույսերի արտադրության զարգացման նպատակով հատկացվել է շուրջ 615.9 մլն դրամ, որն ամբողջությամբ օգտագործվել է: ՀՀ գյուղատնտեսության նախարարության և «Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ-ի միջև կնքված դրամաշնորհային պայմանագրի համաձայն ՌԴ-ից ներկրվել է 700 տոննա գարնանացան գարի 9.5 տոննա եգիպտացորեն, 52.1 տոննա առվույտ և 360 տոննա կորնգան: Ծրագիրն իրականացվում է 2013 թվականից:

Հաշվետու տարում գյուղատնտեսության դասում ընդգրկված հետևյալ 10 ծրագրերի գծով արձանագրվել է 100% կատարողական:

Սերմերի որակի ստուգման ու պետական սորտափորձարկման միջոցառումների իրականացման նպատակով ծախսվել է 51.9 մլն դրամ: Ծրագրի շրջանակներում իրականացվել են սելեկցիոն նվաճումների հայտերի փորձաքննությունների, սերմերի որակի լաբորատոր հետազոտությունների և փաստաթղթավորման, բույսերի նոր սորտերի տեղեկագրերի

հրատարակման, ինչպես նաև բույսերի նոր սորտերի փորձարկումների աշխատանքներ: Լաբորատոր հետազոտությունների են ենթարկվել 16086.6 տոննա գյուղատնտեսական մշակաբույսերի սերմեր, որոնք ստացել են համապատասխան դասային գնահատում և փաստաթղթավորում: Ընդհանուր առմամբ հետազոտվել են հացահատիկային, հատիկաընդեղենային, բանջար-բոստանային, կերային, դեկորատիվ, անտառային բույսերի սերմեր և կարտոֆիլի տնկանյութ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 1.5 %-ով:

Գյուղատնտեսական կենդանիների արհեստական սերմնավորման ծախսերը կազմել են 5.1 մլն դրամ՝ նախորդ տարվա համեմատ նվազելով 10.9%-ով:

Հողերի ագրոքիմիական հետազոտության և բերրիության բարձրացման միջոցառումների ծախսերը կազմել են շուրջ 48.7 մլն դրամ: Ծրագրի շրջանակներում 2013 թվականին իրականացվել են գյուղատնտեսական մշակովի հողերի ագրոքիմիական դաշտային հետազոտություններ 171 համայնքներում, հետազոտված 106680 հեկտար տարածքից վերցված 35560 հողանմուշներում կատարվել են 89967 լաբորատոր փորձաքննություններ, որոշվել է ազոտի, ֆոսֆորի և կալիումի պարունակությունը հողի մեջ, կազմվել և համայնքներին են հանձնվել 171 ագրոքիմիական քարտեզներ և մշակաբույսերի պարարտացման երաշխավորագրեր: « Կառավարության 2010 թվականի հուլիսի 29-ի N97-Ն որոշմամբ հաստատված « 2010-2014 թվականների ցորենի և սերմնարտադրության զարգացման ծրագրի » իրականացման նպատակով 2013 թվականին փաստացի 135 շահառուների 2167 հեկտարից վերցված 705 նմուշից կատարվել է 1954 փորձաքննություն: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 1.1 %-ով:

« Կառավարությանն առընթեր ոստիկանության անասնաբուժական ոստիկանական դասակի կողմից կարանտինային սահմանափակումների իրականացման նպատակով տրամադրվել է 49.8 մլն դրամ: Միջոցներն ուղղվել են « օստիկանության հասարակական կարգի ապահովման վարչության կազմում ստեղծված ոստիկանության հատուկ դասակի պահպանությանը, որը համաճարակային բռնկումների ժամանակ գյուղատնտեսական կենդանիների հիվանդություններն օջախներում լուրջազգացնելու, ինչպես նաև դրանց հետագա տարածումները կանխելու նպատակով իրականացնում է կարանտինային սահմանափակումներ: Նշենք, որ տվյալ ծախսերը նախորդ տարվա համեմատ աճել են 24.1%-ով կամ 9.7 մլն դրամով՝ պայմանավորված իրականացվող աշխատանքների ծավալով:

Գյուղական խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման նպատակով կատարվել են 297.2 մլն դրամի ծախսեր: Ծրագրի շրջանակներում խորհրդատվական ծառայություններ մատուցող Գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոնների (ԳԱՄԿ-ների) և Գյուղատնտեսության աջակցության հանրապետական կենտրոնների (ԳԱՀԿ-ների) միջոցով ագրոտեխնիկական կանոններին և նոր տեխնոլոգիաներին համապատասխան գյուղատնտեսության վարման

նպատակով գյուղացիական տնտեսություններին մատուցվել են խորհրդատվական ծառայություններ՝ 1119 սեմինար, 872 դաշտային ուսուցման և 173 փորձացուցադրական աշխատանքների կազմակերպում, լրատվական և տեղեկատվական ծառայությունների մատուցում, 96 ռադիոհեռուստահաղորդում, 466 անուն տեղեկատվական թերթիկների տպագրում և տարածում՝ 115270 տպաքանակով, 158 համար թերթերի թողարկում՝ 209100 տպաքանակով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 1.4%-ով կամ 4.1 մլն դրամով:

Անասնաբուժասանիտարիայի, սննդամթերքի անվտանգության և բուսասանիտարիայի ոլորտներում ծառայությունների մատուցման ծախսերը կազմել են 123.5 մլն դրամ: Ծրագրի շրջանակներում նախատեսվել է իրականացնել 243656 հեկտար տարածքների դաշտային հետազոտություններ, հանրապետությունում բույսերի վնասակար օրգանիզմների տարածման արեալի և վնասվածության շեմերի ճշտում և մասնագիտական աջակցություն, ինչպես նաև համայնքներում հակահամաճարակային միջոցառումների ապահովում: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 1.1%-ով կամ շուրջ 1.4 մլն դրամով:

Գյուղատնտեսական կենդանիների հիվանդությունների լաբորատոր ախտորոշման և կենդանական ծագում ունեցող հումքի և նյութի փորձաքննության միջոցառումների իրականացման համար ծախսվել է 239.2 մլն դրամ: Ծրագրի նպատակն է կենդանիների վարակիչ հիվանդությունների համաճարակային վիճակի բարելավումը, մարդու և կենդանիների համար ընդհանուր հիվանդություններից բնակչության պահպանումը և անասնաբուժական տեսակետից բարձրորակ անասնապահական արտադրանքի ապահովումը: 2012 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 9.6%-ով կամ 21 մլն դրամով՝ պայմանավորված նվազագույն աշխատավարձի բարձրացմամբ:

Գյուղատնտեսական հողօգտագործողներին պետական աջակցության ծախսերը կազմել են 550 մլն դրամ: Ծրագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետությունում սերմնարտադրության ծրագրի զարգացման համար Ռուսաստանի Դաշնությունից ներկրվել է 440 տոննա աշնանացան ցորենի էլիտային վերարտադրության սերմացու և 20 տոննա աշնանացան ցորենի սուպեր էլիտային վերարտադրության սերմացու: Տեղական սերմարտադրողներից ձեռք է բերվել 60.4 տոննա և 1928698 կգ առաջին վերարտադրության և էլիտային վերարտադրության ցորենի սերմացու, որը բաշխվել է Հայաստանի Հանրապետության 7 մարզերի 126 շահառուների: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 7.9%-ով կամ կամ 46.9 մլն դրամով՝ պայմանավորված ներկրված սերմերի ծավալների նվազմամբ:

Սննդամթերքի լաբորատոր փորձաքննությունների ծախսերը կազմել են 10 մլն դրամ՝ պահպանվելով նախորդ տարվա մակարդակին: Ծրագրի շրջանակներում մրցույթի հաղթող են ճանաչվել «Հանրապետական անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական լաբորատոր

ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ը, «ՀՀ ԳԱԱ էկոլոգանոսֆերային հետազոտությունների կենտրոն» ՊՈԱԿ-ը և «Ստանդարտ դիալոգ» ՍՊԸ-ն:

Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծախսերը կազմել են շուրջ 634.5 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 9.8%-ով կամ 56.5 մլն դրամով՝ պայմանավորված նախորդ տարվա ընթացքում տրամադրված վարկերի տոկոսադրույքների մարումով:

Գյուղատնտեսության դասում ընդգրկված՝ գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման ծախսերը կազմել են շուրջ 501.1 մլն դրամ, որը հատկացվել է ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայությանը և ապահովել 94.2% կատարողական, որը պայմանավորված է քաղաքացիական ծառայողների թափուր պաշտոնների առկայության և գնումների գործընթացի ընթացքում առաջացած խնայողություններով: Նախորդ տարվա համեմատ այս ծախսերն աճել են 8.3%-ով կամ 38.4 մլն դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է աշխատանքի վարձատրության ծախսերի աճով:

Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման ծախսերը (նախարարությունների աշխատակազմերի մասով) կազմել են 311.9 մլն դրամ՝ ապահովելով 97.6% կատարողական՝ պայմանավորված տնտեսումներով: Միջոցները հատկացվել են ՀՀ գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի պահպանմանը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 4.1%-ով կամ 12.3 մլն դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է աշխատանքի վարձատրության և գործուղումների ծախսերի աճով, ինչպես նաև մատուցված ծառայությունների ծավալների և ձեռքբերված ապրանքների քանակների ավելացմամբ:

Բույսերի պաշտպանության միջոցառումների գծով ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի ծախսերը կազմել են շուրջ 97 մլն դրամ կամ նախատեսվածի 87.8%-ը: Շեղումը պայմանավորված է բուսասանիտարական վիճակի վերլուծության արդյունքում նախատեսվածից պակաս միջոցառումների անցկացմամբ, իսկ նախորդ տարվա համեմատ ծախսերի նվազումը պայմանավորված է 2013 թվականին բուսասանիտարական վիճակով և 2012 թվականին ձեռք բերված և պահեստավորված նյութերի օգտագործմամբ: Ծրագրի շրջանակներում գյուղատնտեսական մշակաբույսերի առավել վնասակար օրգանիզմների դեմ իրականացվել են մի շարք միջոցառումներ: Նշված գումարից 95 մլն դրամով (այդ թվում՝ 70 մլն դրամը ծախսվել է ավիացիոն ծառայությունների իրականացման համար) անտառի վնասակար օրգանիզմների (մկնանման կրծողներ, մորեխներ) դեմ պայքարելու նպատակով Արագածոտնի մարզի «Արագածոտնի անտառտնտեսություն», Վայոց ձորի մարզի «Վայոց ձորի անտառտնտեսություն»

Կոտայքի մարզի «Հրազդանի անտառտնտեսություն», Սյունիքի մարզի «Սյունիքի անտառտնտեսություն» «Կապանի անտառտնտեսություն» և «Սիսիանի անտառտնտեսություն» մասնաճյուղերի 8870 հեկտար անտառային տարածքների վրա իրականացվել են ավիացիոն քիմիական պայքարի միջոցառումներ: 1.9 մլն դրամով ձեռք է բերվել «Ցիպեր մաքսի» տեսակի բույսերի պաշտպանության միջատասպան միջոց համայքներին բաշխելու նպատակով: Համայնքների միջոցով մկնանման կրծողների դեմ պայքարի միջոցառումների բաղադրիչի շրջանակներում 2012 թվականին ձեռք բերված և պահեստավորված 7736.904 կգ ցինկի ֆոսֆիդ մկնասպան միջոցն անհատույց տրամադրվել է ՀՀ մարզպետարաններին և «Հայանտառ» ՊՈԱԿ-ի մասնաճյուղերին՝ 64474 հա առավել վարակված գյուղատնտեսական նշանակության հողատեսքերում մկնանման կրծողների դեմ քիմիական պայքարի միջոցառումներ իրականացնելու համար:

Բուսասանիտարական համակարգի բարելավման և մասնագիտական գիտելիքների բարձրացմանն աջակցության ծախսերը կազմել են շուրջ 5.8 մլն դրամ՝ ապահովելով 99.2% կատարողական: Միջոցները հատկացվել են Հայաստանի ազգային ագրարային համալսարանին: Ծրագրի նպատակն է ուսուցողական դասընթացների կազմակերպումը, որը կնպաստի մասնագիտական պատրաստվածության աստիճանի բարձրացմանը: 2012 թվականին ծրագրի շրջանակներում վերապատրաստվել են 42 աշխատակիցներ: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերը փոփոխություն չեն կրել:

ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության նյութական խրախուսման և համակարգի զարգացման ֆոնդի ծախսերը, որոնք իրականացվում են արտաբյուջետային միջոցների հաշվին, կազմել են շուրջ 173.2 մլն դրամ կամ ծրագրվածի 65%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է գնումների անվանացանկով նախատեսված ապրանքների և ծառայությունների մասնակի ձեռքբերմամբ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 2.5 անգամ կամ 105.2 մլն դրամով՝ հիմնականում պայմանավորված նրանով, որ ծրագրի 2012 թվականի նախահաշիվը հաստատվել էր ՀՀ կառավարության 2012 թվականի սեպտեմբերի 27-ի N 1243-Ն որոշմամբ, հետևաբար ծախսերը կատարվել էին երեք ամիսների համար:

Ներմուծվող սննդամթերքի և /կամ/ կենդանական ծագման մթերքի լաբորատոր փորձաքննության վճարների ծախսերը, որոնք իրականացվում են արտաբյուջետային միջոցների հաշվին, կազմել են 94.4 մլն դրամ կամ ծրագրվածի 81.3%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է ՀՀ փաստացի ներմուծված սննդամթերքի և /կամ/ կենդանական ծագման մթերքի՝ նախատեսվածից փոքր ծավալներով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են մոտ 3.8 անգամ կամ 69.4 մլն դրամով՝ հիմնականում պայմանավորված նրանով, որ ծրագրի 2012

թվականի նախահաշիվը հաստատվել էր ՀՀ կառավարության 2012 թվականի նոյեմբերի 1-ի N 1363-Ն որոշմամբ, հետևաբար ծախսերը կատարվել էին երկու ամիսների համար:

Գյուղատնտեսական կենդանիների պատվաստման ծախսերը կազմել են շուրջ 1.1 մլրդ դրամ՝ ապահովելով 98.4% կատարողական, որը պայմանավորված է տնտեսումներով: Նախորդ տարվա համեմատ գյուղատնտեսական կենդանիների պատվաստման ծախսերն աճել են 9.2%-ով կամ 91.8 մլն դրամով՝ հիմնականում պայմանավորված ձեռք բերված պատվաստանյութերի ծավալների աճով: Ծրագրի շրջանակներում նախատեսվել էր իրականացնել գյուղատնտեսական կենդանիների վարակիչ հիվանդությունների կանխարգելմանն ուղղված 11 հիվանդությունների նկատմամբ 9953769 հատ պատվաստումներ և հետազոտություններ: Նշված աշխատանքներն իրականացվել են անասնաբույժ մասնագետների կողմից ՀՀ 10 մարզերի 38 տարածաշրջաններում, փաստացի իրականացվել են 10689872 հատ պատվաստումներ և հետազոտություններ:

Հաշվետու տարում շուրջ 789 մլն դրամ է տրամադրվել *անտառային տնտեսության* դասին՝ ապահովելով 100% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված դասի ծախսերն աճել են 3.5%-ով կամ 26.3 մլն դրամով՝ պայմանավորված անտառպահպանական ծառայությունների ձեռքբերման ծախսերի աճով: 2013 թվականին անտառային տնտեսությանը կատարված հատկացումների հաշվին իրականացվել են երկու ծրագրեր, որոնցում մեծ տեսակարար կշիռ ունեն անտառպահպանական ծառայություններին կատարված հատկացումները: Նշված ծառայությունների ձեռքբերման համար նախատեսվել է շուրջ 734.5 մլն դրամ, որն ամբողջությամբ օգտագործվել է: Այն տրամադրվել է «Հայանտառ» ՊՈԱԿ-ին՝ որպես դրամաշնորհ, իր իրավասության ներքո գտնվող 344.2 հազար հեկտար տարածքների պահպանության աշխատանքների դիմաց վճարմանը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 3.6%-ով կամ 25.8 մլն դրամով՝ պայմանավորված նվազագույն աշխատավարձի բարձրացմամբ և իրականացվող աշխատանքների ծավալով:

Անտառային պետական մոնիթորինգի նպատակով նախատեսված 54.5 մլն դրամը նույնպես ամբողջությամբ օգտագործվել է, որը նախորդ տարվա համեմատ գրեթե չի փոփոխվել: Հատկացված գումարների հաշվին շուրջ 370 հազար հա անտառտնտեսություններում, ազգային պարկերում, արգելավայրերում իրականացվել են անտառպահպանության և անտառօգտագործման բնագավառում իրականացված աշխատանքների արդյունքների ուսումնասիրում, փայտանյութի սպառման շուկայի, մթերման և արտահանման, ապօրինի հատումների և դրա արդյունքում բնափայտի տեղափոխումների, իրացման վերաբերյալ տվյալների հավաքում, մշակում, վերլուծություն և գնահատում:

Հաշվետու տարում շուրջ 8.1 մլրդ դրամ տրամադրվել է *ռոռզման* դասի ծախսերին՝ կազմելով ծրագրվածի 69.5%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է ՀԲ աջակցությամբ իրականացվող

Ոռոգման համակարգերի արդյունավետության բարձրացման վարկային ծրագրի կատարողականով: Կատարված հատկացումների հաշվին իրականացվել են 9 ծրագրեր, այդ թվում՝ արտաքին աղբյուրներից ֆինանսավորվել են երկու վարկային և մեկ դրամաշնորհային ծրագիր:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող ոռոգման համակարգերի վերականգնման հրատապ վարկային ծրագրի լրացուցիչ ֆինանսավորման ծախսերը կազմել են շուրջ 1.2 մլրդ դրամ, որից 1 մլրդ դրամը՝ վարկային միջոցներից, 186.9 մլն դրամը՝ ՀՀ կառավարության համաֆինանսավորման հաշվին: Ծրագրի 3.5%-ով գերազանցումը պայմանավորված է փաստացի կատարված աշխատանքների ծավալներով: Ծրագիրն ավարտվել է 2013 թվականի հուլիսի 30-ին: 2013 թվականի ընթացքում իրականացվել են աշխատանքներ Մխչյանի, Դվինի, Շամիրամի առաջին և երկրորդ հերթերի, Ստորին Հրազդանի առաջին և երկրորդ հերթերի, Շիրակի, Նալբանդի, Բաժանարար 26 ջրանցքների վրա, թվով 19 համայնքներում իրականացվել են նաև ներտնտեսային ոռոգման ցանցերի շինարարական վերականգնողական աշխատանքներ:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Ոռոգման համակարգերի արդյունավետության բարձրացման վարկային ծրագրի շրջանակներում ծախսվել է շուրջ 709.4 մլն դրամ, որից 567.5 մլն դրամը՝ վարկային միջոցներից, 141.9 մլն դրամը՝ ՀՀ կառավարության համաֆինանսավորման հաշվին: Ծրագրի ծախսերի 18.4%-ով կատարումը պայմանավորված է կապալառուի հետ պայմանագիրը նախատեսված ժամկետից ուշ կնքելու հանգամանքով: Այն կնքվել է 2013 թվականի վերջում, որի հիման վրա վճարվել է կանխավճար: Ոռոգման համակարգերի արդյունավետության բարձրացման նպատակով 2013 թվականին Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև ստորագված փոխառության համաձայնագրի հիման վրա ծրագրի իրականացման համար տրամադրվել է 30.0 մլն ԱՄՆ դոլար գումար: Ծրագրի նպատակներն են կրճատել էլեկտրաէներգիայի սպառումը և բարելավել ոռոգման ջրի տեղափոխման արդյունավետությունն ընտրված ոռոգման համակարգերում, և բարելավել ոլորտին առնչվող կարևոր տեղեկատվության առկայությունը և հուսալիությունը՝ որոշում կայացնողների և այլ շահագրգիռ կողմերի համար: Ծրագիրը բաղկացած է 3 մասերից.

- ոռոգման համակարգի բարելավում՝ մեխանիկական ոռոգման փոխարկումը ինքնահոսի ջրու ինքնահոս համակարգի կառուցման միջոցով: Մեխանիկական եղանակով ստացած ջուր տեղափոխող հեռացնող և այլ ջրանցքների վիճակի բարելավում՝ տասներեք ընտրված պոմպակայանների հեռացնող ջրանցքների մոտ 52 կմ վերականգնման միջոցով:

- կառավարման տեղեկատվություն՝ տեխնիկական ուսումնասիրությունների իրականացում ոռոգման կազմակերպությունների շահագործման և պահպանման ու կապիտալ նորոգման կարիքները վերլուծելու և «Ջրառ» կազմակերպությունների և ԶՕԸ-ների տեխնիկական աուդիտ

իրականացնելու նպատակներով: Կարգավարական հսկողության և տվյալների ձեռքբերման համակարգի (SCADA) տեղադրում շուրջ յոթանասուն դիտակետում՝ մայր ջրանցքների և ջրառների ընտրված կետերի վրա:

- ծրագրի կառավարում և ԶՕԸ-ների աջակցություն՝ աջակցության տրամադրում ԾԻԳ-ին ծրագրի կառավարման, իրականացման, մոնիտորինգի և գնահատման աշխատանքներում՝ ապրանքների, խորհրդատվական ծառայությունների, այդ թվում՝ աուդիտի և գործառնական ծախսերի ապահովման միջոցով: Աջակցության տրամադրում ԶՕԸ-ների ղեկավարությանը, անձնակազմին և անդամներին, ուղղված նրանց տեխնիկական, գործառնական, ֆինանսական և կազմակերպչական կարողությունների և աշխատանքի բարելավմանը՝ խորհրդատվական ծառայությունների և ուսուցման միջոցով:

Ոռոգման համակարգերի բարելավման ծրագրի շրջանակներում 2013 թվականին սկսվել են Մեղրիի ինքնահոս ոռոգման համակարգի շինարարական աշխատանքները: Համաձայն կնքված պայմանագրի՝ 2013 թվականին փոխանցվել է կանխանճար: Աշխատանքները կրում են շարունակական բնույթ և իրականացվելու են 2014 թվականին:

Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող Կապսի ջրամբարի վերականգնման դրամաշնորհային ծրագրի շրջանակներում ծախսվել է 77.9 մլն դրամ, որն ամբողջությամբ օգտագործվել է դրամաշնորհային միջոցներից: Ծրագրի ծախսերը 54.3%-ով զիջել են նախատեսված ցուցանիշը, ինչը հիմնականում պայմանավորված է ուսումնասիրությունների նպատակով խորհրդատուի հետ պայմանագրի նախատեսված ժամկետից ուշ կնքելու հանգամանքով: Նշենք, որ պայմանագիրը կնքվել է 2013 թվականի վերջում, որի հիման վրա վճարվել է կանխավճար: Ծրագրի նպատակն է իրականացնել գոյություն ունեցող ոռոգման համակարգերի համալիր տեխնիկա-տնտեսական հիմնավորման ուսումնասիրություններ Կապսի ջրամբարի գյուղատնտեսական հողերի վրա՝ ջրի մատչելիության բարելավման և արդյունավետ ոռոգման տեխնոլոգիաների ներդրման միջոցով արտադրության ավելացման ընդունելի հայեցակարգ մշակելու համար: Կապսի ջրամբարի և ինքնահոս համակարգի կառուցման դրամաշնորհային ծրագիրը ուժի մեջ է մտել 2013 թվականին: Համաձայն կնքված խորհրդատվական պայմանագրի՝ 2013 թվականին վճարվել է կանխանճար, իսկ աշխատանքները նախատեսվել է իրականացվել 2014 թվականին:

Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող Գյուղական համայնքների ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի նպատակով նախատեսված շուրջ 340.9 մլն դրամ դրամաշնորհը չի օգտագործվել, ինչը պայմանավորված է ուսումնասիրությունների նպատակով խորհրդատուի հետ պայմանագիրը նախատեսված ժամկետից ուշ՝ 2014 թվականի հունվար ամսին կնքելու հանգամանքով: Հայաստանի Հանրապետության

գյուղական մոտ 560 համայնքների ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի բարելավումը « կառավարության կողմից ընդգրկվել է գերակա խնդիրների ցանկում և գերմանական KfW բանկի ծրագրերի շրջանակներում տրամադրվել է 500 հազար եվրո դրամաշնորհ՝ այս բնակավայրերում առաջին անգամ լայնածավալ ուսումնասիրություններ իրականացնելու համար: Ուսումնասիրությունների նպատակն է գտնել ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի շահագործման և պահպանման ինստիտուցիոնալ լուծումները, հստակեցնել իրավական դաշտի փոփոխությունների ուղղությունները, ինչպես նաև իրականացնել անհրաժեշտ ներդրումների գնահատումն ու առաջնահերթության սահմանումը: Ուսումնասիրությունների արդյունքում նախատեսվում է մեկնարկել նշված համայնքներում ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի բարելավմանն ուղղված ներդրումային ծրագրերը:

2013 թվականին ամբողջությամբ տրամադրվել է ոռոգման ծառայություններ մատուցող ընկերություններին նախատեսված շուրջ 4.5 մլրդ դրամ աջակցությունը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերի 13.5%-ով աճը պայմանավորված է էլեկտրաէներգիայի գների բարձրացմամբ: 2013 թվականին ծառայություններ են մատուցվել 42 ջրօգտագործողների ընկերությունների: Համակարգի հետագա զարգացման և ջրօգտագործողների ընկերությունների՝ որպես կենսունակ հաստատությունների կայացման հարցում միջնաժամկետ հեռանկարում մեծ դեր է վերագրվում պետական օժանդակությանը, որի անմիջական դրսևորումներից է պետական ֆինանսական աջակցությունը: Ոռոգման համակարգին պետական ֆինանսական աջակցության շրջանակների հստակեցումը և տրամադրման մեխանիզմների բարեփոխումն է՛լ ավելի են կարևորվում աղքատության հաղթահարման միջոցառումների համատեքստում՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ոռոգման ջրի կանոնավոր հասանելիությունը զգալիորեն նվազեցնում է աղքատության ռիսկը գյուղական բնակավայրերում: Զրոգտագործողների ընկերություններին պետական ֆինանսական աջակցության բարեփոխումների հիմնական նպատակներն են ջրօգտագործողներին աջակցությունն ու մասնակցային կառավարման ամրապնդումը, ջրօգտագործողների ընկերությունների գործունեության արդյունավետության բարձրացումն ու ինքնաձախսաձածկման մակարդակի աստիճանական ավելացումը, ոռոգման ջրի կորուստների կրճատումը, ինչպես նաև պետական ծախսերի կանխատեսելիության ու բաշխման արդյունավետության աճը:

Կոլեկտորադրենաժային ցանցի պահպանման և շահագործման, գրունտային ջրերի մակարդակների և որակի որոշման աշխատանքների իրականացման համար 2013 թվականի պետական բյուջեից ծախսվել է շուրջ 95 մլն դրամ (100%): Ծրագրի շրջանակներում ոռոգելի հողերի մելիորատիվ վիճակի բարելավման նպատակով միջոցառումների մշակման համար իրականացվել է

1067.418 կմ ընդհանուր երկարությամբ բաց կոլեկտորադրենաժային ցանցերի պահպանում և շահագործում: 2012 թվականի համեմատ նշված ծախսերը գրեթե փոփոխություն չեն կրել:

Ոռոգում ջրառ իրականացնող կազմակերպություններին տրամադրվել է 578.9 մլն դրամի ֆինանսական աջակցություն, որը կատարվել է 100%-ով: Վերջինիս հիմնական նպատակն է ոռոգում ջրառ իրականացնող կազմակերպությունների վնասների փոխհատուցման արդյունքում կազմակերպությունների տեխնիկական և ֆինանսական կայունության ապահովումը, որը թույլ կտա կազմակերպություններին ապահովել կնքված պայմանագրերով ոռոգման ջրի մատակարարումը և ստանձնած պայմանագրային պարտավորությունների կատարումը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն էական փոփոխություն չեն կրել:

ՀՀ 2013 թվականի պետական բյուջեից ոռոգման համակարգերի հիմնանորոգմանն ուղղվել է 697.4 մլն դրամ՝ ապահովելով 99.6% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 23.5%-ով՝ հիմնականում պամանավորված շինարարական աշխատանքների ծավալների կրճատմամբ:

Կոլեկտորադրենաժային ցանցերի մաքրման և ընթացիկ նորոգման համար տրամադրվել է շուրջ 221.4 մլն դրամ կամ նախատեսվածի 98.4%-ը: Շեղումը պայմանավորված է ցանցերի մաքրման և ընթացիկ նորոգման համար կնքված պայմանագրերով ծառայությունների ավելի ցածր գնով մատուցմամբ: 2013 թվականին նախատեսվել էր իրականացնել կոլեկտորադրենաժային ցանցերի մաքրման և նորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում, կոլեկտորադրենաժային ցանցերի մաքրում և նորոգում, դրանց մաքրման և նորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողություն, ինչպես նաև տեխնիկական վիճակի պահպանում և շահագործում: Տարվա ընթացքում հանրապետության 4 մարզերի (Արարատի, Արմավիրի, Լոռու և Գեղարքունիքի) 34 համայնքներում կատարվել են 140.8 կմ երկարությամբ կոլեկտորադրենաժային ցանցերի մաքրման և նորոգման աշխատանքներ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 7.9%-ով կամ 16.2 մլն դրամով՝ հիմնականում պայմանավորված նախատեսված աշխատանքների ծավալների ավելացմամբ:

Ջրատեխնիկական կառույցների ուսումնասիրությունների ծախսերը կազմել են շուրջ 10.7 մլն դրամ կամ ծրագրի 96.5%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է որոշակի ծառայությունների և նյութական արժեքների ձեռքբերման ծախսերի տնտեսումներով: 2012 թվականի համեմատ նշված ծախսերն էական փոփոխության չեն ենթարկվել:

Վստելիքի և էներգետիկայի բնագավառի ծախսերը 2013 թվականին կազմել են շուրջ 64 մլրդ դրամ՝ ապահովելով 91.2% կատարողական: Վերջինս հիմնականում պայմանավորված է Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող Որոտանի հիդրոէլեկտրակայանների համալիրի վերականգնման վարկային ծրագրի կատարողականով:

Հաշվետու տարում նավթամթերք և բնական գազի դասի ծախսերը կատարվել են նախատեսված 99.3%-ով՝ կազմելով 62.9 մլրդ դրամ, որը հատկացվել է «Հայրուսգազարդ» ՓԲԸ-ին մատակարարված գազի արժեքի փոխհատուցման նպատակով:

Միջուկային վառելիքի դասի ծախսերը կազմել են շուրջ 199.7 մլն դրամ, որը հատկացվել է ՀՀ կառավարությանն առընթեր միջուկային անվտանգության կարգավորման կոմիտեի պահպանմանը՝ ապահովելով 97.4% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 3.8%-ով կամ 7.2 մլն դրամով:

2013 թվականին վառելիքի այլ տեսակների դասի ծախսերը կազմել են շուրջ 245.5 մլն դրամ՝ կազմելով ծրագրվածի 25.2%-ը, որը հիմնականում պայմանավորված է Իրանի Իսլամական Հանրապետության աջակցությամբ իրականացվող Հայաստանի Հանրապետությունում՝ Իրանի հետ սահմանամերձ բնակավայրերի գազի բաշխման ցանցի կառուցման դրամաշնորհային ծրագրի կատարողականով: Կատարված հատկացումների հաշվին ֆինանսավորվել են արտաքին աջակցությամբ իրականացվող երկու դրամաշնորհային ծրագրեր:

Մասնավորապես՝ Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող էներգախնայողության դրամաշնորհային ծրագրի շրջանակներում ծախսվել է 223.6 մլն դրամ, որից 197.6 մլն դրամը՝ դրամաշնորհային միջոցներից, 26 մլն դրամը՝ ՀՀ կառավարության համաֆինանսավորման հաշվին: Ծրագրի ծախսերի 71.6%-ով կատարումը պայմանավորված է նրանով, որ որոշ պայմանագրեր կնքվել են նախատեսվածից ցածր արժեքով, որոշ պայմանագրերի կնքումը հետաձգվել է և վճարումների մի մասն իրականացվել է 2014 թվականին: Ծրագրի դրամաշնորհի համաձայնագիրը ՀՀ-ի և Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև ստորագրվել է 2012 թվականի ապրիլի 20-ին: Ծրագիրն ուժի մեջ է մտել 2012 թվականի օգոստոսի 10-ին: 2012 թվականից ՀՀ կառավարությունը Համաշխարհային բանկի օժանդակությամբ ձեռնամուխ է եղել էներգախնայողության ծրագրի իրականացմանը: Ծրագիրն ուղղված է հանրային նշանակության օբյեկտներում (դպրոցներ, այլ ուսումնական հաստատություններ, մանկապարտեզներ, հիվանդանոցներ, վարչական շենքեր, մշակույթի տներ, բնակավայրերի արտաքին լուսավորություն և այլն) էներգախնայողական միջոցառումներ իրականացնելուն: Ծրագրի զարգացման նպատակն է՝ կրճատել սոցիալական և հանրային նշանակության այլ կառույցների էներգասպառման մակարդակը: Գլխավ քննապահական նպատակն է՝ կրճատել ջերմոցային գազերի արտանետումները պետական ոլորտում էներգախնայողության մեջ ներդրումների համար արգելքների վերացման միջոցով: Ծրագիրն ունի 2 հիմնական բաղադրիչ՝ «էներգախնայողական ներդրումներ հանրային օբյեկտներում» և «Ծրագրի տեխնիկական աջակցություն»: Առաջին բաղադրիչի շրջանակներում էներգախնայողության ներդրումներ են կատարվելու սոցիալական և հանրային նշանակության այլ օբյեկտներում, օրինակ՝ դպրոցներում, մանկապարտեզներում,

հիվանդանոցներում, վարչական շենքերում, փողոցային լուսավորությունում: Երկրորդ բաղադրիչի շրջանակներում վերացվելու են էներգախնայողության ներուժի իրացման առկա խոչընդոտները և ստեղծվելու է նպաստավոր միջավայր պետական հատվածում էներգախնայողության համար: 2013 թվականին առաջին բաղադրիչի շրջանակներում կնքվել են էներգախնայողության միջոցառումների իրականացման պայմանագրեր թվով 13 օբյեկտների համար: Երկրորդ բաղադրիչի շրջանակներում թվով 6 անհատ խորհրդատուների հետ կնքվել են խորհրդատվական ծառայությունների պայմանագրեր:

Իրանի Իսլամական Հանրապետության աջակցությամբ իրականացվող Հայաստանի Հանրապետությունում՝ Իրանի հետ սահմանամերձ բնակավայրերի գազի բաշխման ցանցի կառուցման դրամաշնորհային ծրագրի շրջանակներում ծախսվել է շուրջ 21.9 մլն դրամ, որն ամբողջությամբ օգտագործվել է ՀՀ կառավարության համաֆինանսավորման հաշվին: Ծրագրի ծախսերի 3.3%-ով կատարումը հիմնականում պայմանավորված է կապալառուի կողմից 2013 թվականին նախատեսվածից քիչ սարքեր և սարքավորումների մատակարարմամբ՝ ելնելով եղանակային անբարենպաստ պայմաններից: Ծրագիրը կնպաստի բազմաթիվ բնակարանների, առողջապահական, կրթական, մշակութային և այլ հաստատությունների էկոլոգիապես մաքուր վառելիքի օգտագործմանը և ջեռուցմանը, գազի առկայությունը կնպաստի նաև անտառահատումների, էկոլոգիայի և դրանից բխող խնդիրների լուծմանը:

Հաշվետու տարում *էլեկտրաէներգիայի* դասի ծախսերը կազմել են 600.2 մլն դրամ՝ ապահովելով 10.7% կատարողական: Շեղումը հիմնականում պայմանավորված է Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող Որոտանի հիդրոէլեկտրակայանների համալիրի վերականգնման վարկային ծրագրի կատարողականով:

2013 թվականին շուրջ 462.2 մլն դրամ է տրամադրվել գործադիր իշխանության, պետական կառավարման մարմինների պահպանման (նախարարությունների աշխատակազմերի մասով) համար օգտագործված միջոցները՝ ապահովելով ծրագրի 98.6%-ը, որը հիմնականում պայմանավորված է տնտեսումներով: Միջոցները հատկացվել են ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության աշխատակազմի պահպանմանը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 6.6%-ով կամ 28.8 մլն դրամով, որը հիմնականում պայմանավորված է աշխատանքի վարձատրության ծախսերի աճով:

Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող Որոտանի հիդրոէլեկտրակայանների համալիրի վերականգնման վարկային ծրագրի շրջանակներում ծախսվել է 35.9 մլն դրամ, որից 22.9 մլն դրամը՝ վարկային միջոցներից, 13 մլն դրամը՝ կառավարության համաֆինանսավորման հաշվին: Ծրագրի ծախսերի 0.7% կատարողականը պայմանավորված է նրանով, որ նախատեսված էր վճարում կատարել ծրագրի խորհրդատուին՝ ծրագրի գլխավոր

կապալառուի ընտրության միջազգային մրցույթի փաստաթղթերի մշակման և համապատասխան հաշվետվությունների ներկայացման համար, ինչպես նաև վճարում կատարել ծրագրի գլխավոր կապալառուին՝ որպես կանխավճար, մինչդեռ իրականացվել է գլխավոր կապալառուի ընտրության նախատրակավորման գործընթացը, և գլխավոր կապալառուի ընտրության մրցութային փաստաթղթերի հաստատման գործընթացը 2013 թվականին չի ավարտվել: Ծրագրի նպատակն է վերականգնել Որոտանի հիդրոէլեկտրակայանների համալիրի Տաթև, Շամբ և Սպանդարյան հիդրոէլեկտրակայանների հիմնական սարքավորումների ու սարքերի նախագծային հզորություններն ու պայմանները: Ծրագրով նախատեսվում է կայանների մաշված, հնացած սարքավորումները փոխարինել նոր, արդիական, միջազգային ստանդարտներին ու նորմերին համապատասխան սարքավորումներով: Փոխարինվող, տեղադրվող սարքերն ու սարքավորումներն իրենց տեխնիկատնտեսական չափորոշիչներով գերազանցում են շահագործման մեջ գտնվող նմանատիպ սարքերի ու սարքավորումների չափորոշիչները: Վերազինման արդյունքում կբարձրանա համակարգի կայաններում արտադրված էլեկտրաէներգիայի քանակն ու որակը, ինչպես նաև նրանց աշխատանքի հուսալիությունը: 2013 թվականի ընթացքում վճարումներ են կատարվել խորհրդատուին՝ որպես կանխավճար, ինչպես նաև կատարած ծառայությունների և ոչ ռեզիդենտի շահութահարկի դիմաց:

Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող էլեկտրաէներգիայի տեղափոխման սեկտորի վերակառուցման վարկային ծրագրի շրջանակներում ծախսվել է շուրջ 102.2 մլն դրամ, որն ամբողջությամբ օգտագործվել է վարկային միջոցներից՝ ապահովելով 100% կատարողական: Ծրագրի նպատակն է բարձրացնել էլեկտրաէներգետիկական համակարգի հուսալիությունը, ինչպես նաև ապահովել էլեկտրաէներգիայի անխափան մատակարարում: Ծրագրի շրջանակներում կատարվել են «Վանաձոր-1» 110 կՎ ենթակայանի բաց բաշխիչ սարքավորման մասնակի վերակառուցման, ինչպես նաև «Գյումրի», «Լոռի», «Գուգարք 1, 2», «Նորադուգ», «Լիճք» օդային գծերի վրա տեղադրված արգելափակիչները և գտիչները նորով փոխարինելու աշխատանքները, որոնք ամբողջությամբ ավարտվել են 2010 թվականի սեպտեմբեր ամսին: Ծրագրի գլխավոր կապալառուի կողմից պայմանագրի համաձայն երկու տարի իրականացվել է ենթակայանի երաշխիքային սպասարկում: Ծրագրով նախատեսվել էր «Վանաձոր-1» ենթակայանի վերջնական ընդունման սերտիֆիկատի դիմաց միանվագ վճարել կապալառուին՝ որպես երաշխիքային գումար:

Հաշվետու տարում լեռնարդյունահանման, արդյունաբերության և շինարարության ոլորտներին պետական բյուջեից հատկացվել էր շուրջ 6.1 մլն դրամ, որն ամբողջությամբ օգտագործվել է և ուղղվել ընդերքի մասին տեղեկատվության տրամադրման ծառայություններին: Ծրագրի շրջանակներում իրականացվում են ՀՀ ընդերքի պահպանման, հաշվառման և գրանցման,

դրա վերաբերյալ ճշգրիտ տեղեկատվության տրամադրման աշխատանքներ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 1.6%-ով:

2013 թվականին *տրանսպորտի* բնագավառում ՀՀ պետական բյուջեի ծախսերը կազմել են շուրջ 37.9 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրի կատարումը 50.1%-ով: Ծրագրից շեղումը հիմնականում պայմանավորված է արտաքին աջակցությամբ իրականացվող ծրագրերի կատարողականով:

Ճանապարհային տրանսպորտի դասի ծախսերը կազմել են 31.3 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրի 45.5%-ը: Կատարված հատկացումների հաշվին իրականացվել են 13 ծրագրեր, որոնցից վեցը վարկային ծրագրեր են:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող կենսական նշանակության ճանապարհացանցի բարելավման վարկային ծրագրի շրջանակներում ծախսվել է շուրջ 6.5 մլրդ դրամ, որից 5.2 մլրդ դրամը՝ վարկային միջոցներից, 1.3 մլրդ դրամը՝ ՀՀ կառավարության համաֆինանսավորման հաշվին: Ծախսերի 80.3% կատարողականը պայմանավորված է նախատեսված աշխատանքներն ուշ սկսելու հանգամանքով: Նշենք, որ ծրագրով նախատեսվում էր, որ վարկային համաձայնագիրը կստորագրվի 2012 թվականի դեկտեմբերին և ուժի մեջ կմտնի 2013 թվականի առաջին եռամսյակում: Սակայն վարկային համաձայնագիրը ստորագրվեց 2013 թվականի փետրվարի 11-ին և ուժի մեջ մտավ հուլիսի 15-ին, ինչի արդյունքում 2013 թվականին նախատեսված աշխատանքները սկսվեցին նախատեսված ժամկետից ավելի ուշ: Ծրագրի շրջանակներում կնքվել են ՀՀ վեց մարզերում գտնվող 73 կմ ընդհանուր երկարությամբ ճանապարհահատվածների հիմնանորոգման աշխատանքների գծով 7 պայմանագրեր:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող կենսական նշանակության ճանապարհների բարելավման երկրորդ լրացուցիչ ֆինանսավորման վարկային ծրագրի շրջանակներում ծախսվել է շուրջ 1.9 մլրդ դրամ, որից 1.5 մլրդ դրամը՝ վարկային միջոցներից, 389.2 մլն դրամը՝ ՀՀ կառավարության համաֆինանսավորման հաշվին: Ծրագրի գծով նախատեսված ծախսերը կատարվել են 82.8%-ով, որը հիմնականում պայմանավորված է 2012 թվականի ծրագրի գերազանցման արդյունքում 2013 թվականի բյուջեով նախատեսված շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգման գծով առաջացած խնայողություններով: Ծրագրի շրջանակներում ավարտվել են 2012 թվականին մեկնարկած 35.97 կմ ընդհանուր երկարությամբ ճանապարհահատվածների հիմնանորոգման աշխատանքներ: Տնտեսումների հաշվին հիմնանորոգվել է լրացուցիչ 4.2 կմ ճանապարհ, իրականացվել է նաև շինարարական աշխատանքների տեխնիկական հսկողություն և ծրագրի ֆինանսական աուդիտ:

Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող Հյուսիս-հարավ տրանսպորտային միջանցքի զարգացման վարկային ծրագրի շրջանակներում նախատեսված 11.9 մլրդ դրամի դիմաց ծախսվել է 407.4 մլն դրամ, որից 310.2 մլն դրամը՝ վարկային միջոցներից, 97.2

մլն դրամը՝ « կառավարության համաֆինանսավորման հաշվին: Ծրագրի 3.4% կատարողականը պայմանավորված է շինարարական աշխատանքների փաստացի կատարողականով: Վարկային շրջանակներում ծախսը կատարվել է շինարարական աշխատանքների կատարողականի, խորհրդատվական ծառայությունների ու հարկերի վճարների դիմաց: 2013 թվականի դեկտեմբեր ամսվա դրությամբ կատարված են Տրանշ 1-ի (Արտաշատ – Երևան, Երևան – Աշտարակ) ճանապարհի աջակողմյան հատվածի շուրջ 25 կմ-ի բետոնացման աշխատանքները: Մասնավորապես, Տրանշ 1-ի Հատված 2-ում (Երևան-Արտաշատ) ավտոճանապարհի ձախակողմյան հատվածում իրականացվել են շուրջ 15750մ բետոնյա ծածկի տեղադրման աշխատանքներ, իսկ Հատված 3-ում (Երևան-Աշտարակ) ավտոճանապարհի աջակողմյան հատվածում՝ 8270մ բետոնյա ծածկի տեղադրման աշխատանքները: Վերոնշյալ հատվածում դեռևս ավարտված չեն կարանների (ճաքերի) լցումը և մակերևույթի հարթության չափագրման աշխատանքները: Համապատասխան կատարողական ակտերը ներկայացված են տեխնիկական հսկողություն իրականացնող խորհրդատուին հաստատման և գտնվում են ստուգման գործընթացում: Քանի որ պայմանագրով Տրանշ 1-ի գծով նախատեսված աշխատանքները տեխնիկական առումով բերված չեն ավարտուն վիճակի, համապատասխան վճարումները դեռևս կատարված չեն:

Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող Հյուսիս-հարավ տրանսպորտային միջանցքի զարգացման ծրագրի 2-րդ տրանշի շրջանակներում ծախսվել է ավելի քան 7.9 մլրդ դրամ, որից 7.6 մլրդ դրամը՝ վարկային միջոցներից, 290.7 մլն դրամը՝ « կառավարության համաֆինանսավորման հաշվին: Ծրագրի 27.1% կատարողականը պայմանավորված է պայմանագիրը ժամկետից ուշ կնքելու հետ կապված՝ նախատեսված շինարարական աշխատանքներն ավելի ուշ սկսելու հանգամանքով:

Ասիական բանկի աջակցությամբ իրականացվող քաղաքային ենթակառուցվածքների և քաղաքի կայուն զարգացման ներդրումային ծրագրի (Երևան համայնքի ղեկավարին պետության կողմից պատվիրակված լիազորության) շրջանակներում ծախսվել է 1.1 մլրդ դրամ, որից 851 մլն դրամը՝ վարկային միջոցներից, 241.2 մլն դրամը՝ « կառավարության համաֆինանսավորման հաշվին: Ծրագրի ծախսերի 30.3% կատարողականը պայմանավորված է խորհրդատվական ընկերությունների ընտրության, նախագծման, հողի օտարման և տարաբնակեցման շրջանակների փաստաթղթի հաստատմանն առնչվող առանձին սկզբունքային հարցերի վերաբերյալ առկա անհամաձայնությունների, հողերի օտարման և տարաբնակեցման ծրագրի կազմման և փոխհատուցումների վճարման ժամկետների հետաձգմամբ: Ծրագրի շրջանակներում կատարվել են խորհրդատվական ծառայությունների համար վճարումներ, հողի օտարման և տարաբնակեցման աշխատանքներ և վճարվել է աշխատավարձ:

Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող ՀՀ պետական սահմանի «Բագրատաշեն» անցման կետի կամրջի վերակառուցման վարկային ծրագրի ծախսերը կատարվել են նախատեսված ծավալով՝ կազմելով շուրջ 7.2 մլն դրամ, որն օգտագործվել է ՀՀ կառավարության համաֆինանսավորման միջոցներից: Նշված ծրագիրը նախատեսվել է Բագրատաշենի սահմանային հսկողության անցակետի տարածքում նոր կամրջի կառուցման աշխատանքներն իրականացնելու նպատակով: Միջոցներն օգտագործվել են աշխատավարձի վճարման, գործուղման ծախսերի, խորհրդատվական ծառայությունների և որոշ ներկայացուցչական ծախսերի ուղղություններով:

Հաշվետու տարում տրանսպորտի բնագավառում ընդգրկված՝ «Համայնքների բյուջեներին նպատակային հատկացումների՝ սուբվենցիաների տրամադրում» ծրագրի գծով արձանագրվել է 100% կատարողական՝ կազմելով շուրջ 3.3 մլրդ դրամ, որն օգտագործվել է Երևան քաղաքի փողոցների ընթացիկ նորոգման և ճաքալցման աշխատանքների համար: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը չեն փոփոխվել:

«Տրանսպորտային փոխադրումներ» ՊՈԱԿ-ին պետական աջակցության ծախսերը կազմել են շուրջ 26.4 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Հատկացված միջոցներով հաշվետու տարվա ընթացքում «Տրանսպորտային փոխադրումներ» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվել են Հայաստանի Հանրապետության միասնական երթուղային ցանցի մշակման և զարգացման, ուղևորահոսքի մշտական ուսումնասիրության, անվճար երթևեկության վկայականների պատրաստման և տրամադրման, միջպետական բեռնափոխադրումների թույլտվությունների բլանկների պատրաստման և կանոնադրությամբ նախատեսված այլ գործառնություններ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 2.6%-ով կամ 5.4 մլն դրամով, ինչը պայմանավորված է 2012 թվականի հունիս ամսից տախոգրաֆի քարտերի տրամադրման և մաքսագերծման աշխատանքների կատարման պարտականություններից ազատելու հանգամանքով:

2013 թվականին ավտոճանապարհների պահպանման և շահագործման ծախսերը կազմել են շուրջ 5.5 մլրդ դրամ՝ ապահովելով նախատեսված ծախսերի 99.6%-ը: Ծրագրի շրջանակներում իրականացվել են պետական նշանակության ավտոճանապարհների պահպանման ու շահագործման աշխատանքներ, այդ թվում՝ միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընթացիկ և ձմեռային պահպանություն, միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների նշագծում, մետաղական արգելափակոցների պահպանում և վնասված հատվածների վերականգնում, արհեստական կառույցների պահպանություն և շահագործում: Նախորդ տարվա համեմատ ավտոճանապարհների պահպանման և շահագործման ծախսերն էական փոփոխություն չեն կրել:

Հաշվետու տարվա պետական բյուջեից 3.8 մլրդ դրամ է տրամադրվել պետական նշանակության ավտոճանապարհների հիմնանորոգմանը՝ ապահովելով նախատեսված ծախսերի 97.7%-ը: Ծրագրի շրջանակներում իրականացվել են 32.9 կմ երկարության ճանապարհահատվածների հիմնանորոգման, ինչպես նաև նախագծային և հեղինակային հսկողության ու շինարարական աշխատանքների հետ կապված տեխնիկական հսկողության աշխատանքներ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 28.3%-ով կամ 1.5 մլրդ դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է նրանով, որ 2012 թվականի ընթացքում իրականացվել էին հրատապ հիմնանորոգում պահանջող ճանապարհաշինական աշխատանքներ, ինչպես նաև վճարումներ էին կատարվել 2011 թվականին իրականացված աշխատանքների դիմաց:

Մարզային նշանակության ավտոճանապարհների ձմեռային պահպանման, ընթացիկ պահպանման և շահագործման նպատակով ՀՀ 2013 թվականի պետական բյուջեից տրամադրվել է 737.9 մլն դրամ՝ ապահովելով նախատեսված ծախսերի 97.1%-ը: Ծրագրի շրջանակներում ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ պահպանման, շահագործման և ձմեռային պահպանության ուղղություններով աշխատանքներ են կատարվել հանրապետության բոլոր մարզերում: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 7.4%-ով կամ 59.1 մլն դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է աշխատանքների ծավալների նվազմամբ:

Հաշվետու տարում տրանսպորտային օբյեկտների հիմնանորոգման ծախսերը կատարվել են 99.6%-ով՝ կազմելով 116.6 մլն դրամ: Ծրագրի շրջանակներում իրականացվել են թվով 6 տրանսպորտային օբյեկտների նորոգման աշխատանքներ, այդ թվում՝ Քուչակ գյուղի կամրջի ծածկի վերականգնման աշխատանքներ, իրականացվել են նաև տեխնիկական հսկողության աշխատանքներ: Նախորդ տարվա համեմատ տրանսպորտային օբյեկտների հիմնանորոգման ծախսերն աճել են 5.8%-ով կամ 6.4 մլն դրամով՝ պայմանավորված հիմնանորոգման ենթակա օբյեկտների քանակի ավելացմամբ:

Հաշվետու տարում ՀՀ-ում հսկիչ սարքերի (թվային տախոգրաֆի) համակարգի ստեղծման և ներդրման ծախսերը կազմել են շուրջ 25.2 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 95.4%-ը, ինչը պայմանավորված է եվրոյի նախատեսվածից ավելի ցածր փոխարժեքով: Ծրագրի շրջանակներում իրականացվել են բեռնատար տրանսպորտային միջոցների վրա հսկիչ սարքերի (թվային տախոգրաֆ) համակարգի անընդհատ և անխափան աշխատանքները, տրամադրվել է 43 տախոգրաֆի քարտ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 26.2%-ով կամ 5.2 մլն դրամով, որը պայմանավորված է 2011 թվականին 2012 թվականի համար 7982.9 եվրո կանխավճարի վճարման հանգամանքով:

Հաշվետու ժամանակահատվածում երկաթուղային տրանսպորտի դասի ծախսերը կազմել են 372.6 մլն դրամ և ապահովել 96.4% կատարողական: Շեղումը հիմնականում պայմանավորված է ՀՀ

տարածքում ՌԴ զորամիավորումների հասցեով երկաթուղային փոխադրումների սպասարկման և մատուցվող ծառայությունների ծախսերի փոխհատուցման նպատակով նախատեսված միջոցները չօգտագործելու հանգամանքով: Նախորդ տարվա համեմատ նշված դասի ծախսերն աճել են 95.9%-ով կամ 182.4 մլն դրամով, որը պայմանավորված է «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ին ուղևորափոխադրումներից ստացված վնասի դիմաց տրամադրված սուբսիդիայի աճով:

Նշված գումարից ավելի քան 328.8 մլն դրամը տրամադրվել է «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ին՝ որպես սուբսիդիա ուղևորափոխադրումներից ստացված վնասի դիմաց, որը կատարվել է նախատեսված ծավալով: ՀՀ և «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ի միջև կնքված կոնցեսիոն պայմանագրի համաձայն կոնցեդենտը սուբսիդավորում է (մասնակի փոխհատուցում է) համաձայնեցված ծավալներով և ուղղություններով ուղևորափոխադրումների կոնցեսիոնների տարեկան վնասը՝ անկախ աուդիտորի կողմից այդ վնասների հաստատված հաշվարկների ներկայացման պարագայում: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերի 2.1 անգամ կամ 173.8 մլն դրամով աճը պայմանավորված է ներդրումների ծավալի ավելացման հետևանքով ուղևորափոխադրումներից ստացված վնասի ավելացմամբ:

Հաշվետու տարում շուրջ 43.8 մլն դրամի սուբսիդիա է հատկացվել «Երկաթուղու շինարարություն» ՓԲԸ-ին՝ կազմելով ծրագրված հատկացումների 99.7%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 24.4%-ով կամ 8.6 մլն դրամով, որը պայմանավորված է աշխատանքների ծավալների ավելացմամբ: Ծրագրի շրջանակներում 2013 թվականի հունվարի 18-ին ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության, «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ և «ՌԱՍԻԱ» ՖԶԷ-ի միջև քննարկվել և կնքվել է Փոխըմբռնման Հուշագիր՝ երկու երկրները իրար կապող երկաթուղու տեխնիկատնտեսական հիմնավորման, նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման, նախագծման, կառուցման և շինարարության նախապատրաստական փուլի վերաբերյալ: 2013 թվականից 18 ամսվա ընթացքում կողմերը համագործակցելու են տեխնիկական, առևտրային, տնտեսական, սոցիալական, բնապահպանական, ինչպես նաև իրագործելիությանը և նախագծմանը վերաբերող այլ տեղեկատվության փոխանակման հարցում, որպեսզի Կոնցեսիոններին հնարավորություն ընձեռվի կազմել Հայաստանի Հարավային երկաթուղու իրագործելիության լիարժեք ուսումնասիրություն: Ծրագրի իրականացման նպատակով ավարտվել է տեխնիկատնտեսական հիմնավորման նախապատրաստումը և «ՌԱՍԻԱ» ՖԶԷ-ի կողմից ներկայացված երկաթգծի շինարարության ծրագրի նախագիծը: Ներկայացված տարբերակով ծրագրի ինքնաձախսաձածկումը կտևի մոտ 24 տարի՝ 3.5 մլրդ դոլար արժողությամբ, իսկ երկաթգծի շինարարությունը տևելու է 6 տարի: Երկաթգիծը, որի երկարությունը Գագարին-Գավառ հատվածի հետ միասին կազմելու է 305 կմ, պետք է ունենա 19.6 կմ ընդհանուր երկարությամբ 86 կամուրջ և 102.3 կմ ընդհանուր երկարությամբ 60 թունել:

2013 թվականին 13.7 մլն դրամ էր նախատեսվել ՀՀ տարածքում ՌԴ զորամիավորումների հասցեով երկաթուղային փոխադրումների սպասարկման և մատուցվող ծառայությունների ծախսերի փոխհատուցման նպատակով, որը, սակայն, չի օգտագործվել:

2013 թվականին *օդային տրանսպորտի* գծով պետական բյուջեի ծախսերում արձանագրվել է 70.2% կատարողական՝ կազմելով շուրջ 533 մլն դրամ: Շեղումը հիմնականում առաջացել է ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության արտաբյուջետային միջոցներով իրականացվող ծախսերի գծով, որոնք 43%-ով զիջել են ծրագիրը՝ կազմելով 277.7 մլն դրամ, որը պայմանավորված է այն հանգամանքով, որ անհատ անձանց և կազմակերպություններին, հիմնականում՝ մշակույթի բնագավառի ներկայացուցիչներին, բարեգործական նպատակով նախատեսված օգնությունները նախատեսվածից պակաս են կազմել, ինչպես նաև նախատեսվածից քիչ միջոցներ են հատկացվել «Ավիաուսումնական կենտրոն» ՓԲԸ-ին ուսումնավարժանքային թոփքների համար: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 34%-ով կամ 70.5 մլն դրամով՝ հիմնականում պայմանավորված ընթացիկ դրամաշնորհների աճով և տրանսպորտային սարքավորումների գծով կատարված ծախսերով, որոնց գծով նախորդ տարի միջոցներ չէին տրամադրվել:

Ավելի քան 135.1 մլն դրամ է ծախսվել ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պահպանման համար՝ ապահովելով ծրագրի 95.8%-ը, որը տնտեսումների արդյունք է: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 4.2%-ով կամ 5.4 մլն դրամով՝ պայմանավորված աշխատավարձի և պարգևատրման ֆոնդի գծով ծախսերի ավելացմամբ:

Հաշվետու տարում մարդասիրական բեռներ փոխադրող օտարերկրյա օդանավերի աէրոնավիգացիոն սպասարկման, թոփք-վայրէջքի, օդանավերի կանգառի և վերգետնյա սպասարկումների ու մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման ծախսերը կազմել են շուրջ 10 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: 2013 թվականի ընթացքում ծրագրի շրջանակներում իրականացվել է հինգ չվերթ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 3.6 անգամ կամ 7.2 մլն դրամով՝ պայմանավորված նրանով, որ 2012 թվականի ընթացքում ծրագրի շրջանակներում իրականացվել էր երկու չվերթ:

ՀՀ օդանավակայաններում ՌԴ զորամիավորումների օդանավերի սպասարկման և մատուցվող ծառայությունների դիմաց փոխհատուցման ծախսերը կազմել են շուրջ 110.2 մլն դրամ՝ ապահովելով 91% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 19%-ով կամ 17.6 մլն դրամով:

2013 թվականին *խողովակաշարային և այլ տրանսպորտի* գծով պետական բյուջեի ծախսերը կազմել են շուրջ 5.7 մլրդ դրամ՝ ապահովելով 100.4% կատարողական: Կատարված հատկացումների

հաշվին իրականացվել են 5 ծրագրեր, որոնցից երկուսը՝ վարկային և մեկը՝ դրամաշնորհային ծրագրեր են: Նշենք, որ դասում ընդգրկված բոլոր ծրագրերը կատարվել են նախատեսված ամբողջ ծավալով, իսկ Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող Երևանի մետրոպոլիտենի վերակառուցման երկրորդ վարկային ծրագրի գծով արձանագրվել 101.6% կատարողական: Նշված վարկային ծրագրի շրջանակներում ծախսվել է ավելի քան 1.5 մլրդ դրամ, որն ամբողջությամբ օգտագործվել է վարկային միջոցներից: Ծրագրի շրջանակներում կատարվել են թվով 8 վագոնների արդիականացման աշխատանքներ:

Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող Երևանի մետրոպոլիտենի վերակառուցման վարկային ծրագրի շրջանակներում ծախսվել է 624.7 մլն դրամ, որից 551.3 մլն դրամը՝ վարկային միջոցներից, 73.4 մլն դրամը՝ ՀՀ կառավարության համաֆինանսավորման հաշվին: Ծրագրի շրջանակներում կատարվել են գծային տնտեսության բարելավման աշխատանքներ:

Եվրոպական միության հարևանության ներդրումային ծրագրի աջակցությամբ իրականացվող Երևանի մետրոպոլիտենի վերակառուցման դրամաշնորհային ծրագրի շրջանակներում ծախսվել է շուրջ 624.2 մլն դրամ, որից 551.3 մլն դրամը՝ դրամաշնորհային միջոցներից, 72.8 մլն դրամը՝ ՀՀ կառավարության համաֆինանսավորման հաշվին: Ծրագրի շրջանակներում կատարվել են նախորդ տարի սկսված ջրահեռացման պոմպային համակարգերի արդիականացման ավարտական աշխատանքները:

Շուրջ 2.5 մլրդ դրամ սուբսիդիա է տրամադրվել Երևանի մետրոպոլիտենի աշխատանքների կազմակերպման բնագավառում պետության կողմից համայնքի ղեկավարին պատվիրակված լիազորությունների իրականացման նպատակով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 22.6%-ով կամ 454.3 մլն դրամով, որը հիմնականում պայմանավորված է «Եկամտային հարկի մասին», «Ավելացված արժեքի հարկի մասին» և «Նվազագույն աշխատավարձի մասին» ՀՀ օրենքների փոփոխությունների կիրարկմամբ, էլեկտրաէներգիայի և գազի սակագների բարձրացմամբ, ինչպես նաև վարկային պարտավորությունների և դրանց տոկոսների մարմամբ:

Ավելի քան 408.4 մլն դրամի սուբվենցիա է տրամադրվել Երևանի քաղաքապետարանին՝ վերգետնյա էլեկտրատրանսպորտով ուղևորափոխադրման ծառայությունների շրջանակներում: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերն աճել են 30.3%-ով կամ 94.9 մլն դրամով՝ հիմնականում պայմանավորված աշխատավարձերի, հոսանքի և գազի սակագների աճով:

2013 թվականին *կապի* ոլորտում ՀՀ պետական բյուջեից հատկացվել է 379.1 մլն դրամ, որն ամբողջությամբ ծախսվել է և ուղղվել հեռահաղորդակցության ու կապի կանոնակարգման ծառայությունների ձեռքբերմանը: Ծրագրի շրջանակներում իրականացվել են ՀՀ հաճախականությունների բաշխումների աղյուսակի կազմման, ռադիոէթերի մոնիթորինգի,

ռադիոէլեկտրոնային միջոցների և բարձր հաճախականության սարքավորումների տեղադրման, փորձաքննության և չափումների անցկացման, կապի շինարարական աշխատանքների տեխնիկական նորմերին համապատասխանության ընդունման, եթերի խանգարման աղբյուրների հայտնաբերման և վերացման գործառույթները: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 1.7%-ով կամ 6.3 մլն դրամով՝ պայմանավորված «Եկամտային հարկի մասին» և «Նվազագույն աշխատավարձի մասին» ՀՀ օրենքների կիրարկման, ինչպես նաև էլեկտրաէներգիայի և գազի սակագների բարձրացման արդյունքում գործառնական ծախսերի ավելացմամբ:

2013 թվականի ընթացքում «Այլ բնագավառներ» խմբի ծախսերը կազմել են 46 մլն դրամ՝ ապահովելով 92% կատարողական: Միջոցներն ուղղվել են զբոսաշրջության աջակցության ծառայություններին: Ծրագրից շեղումը պայմանավորված է նախատեսվածից ավելի ցածր գներով ապրանքների և ծառայությունների ձեռքբերման հանգամանքով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 2.2%-ով կամ 1 մլն դրամով:

2013 թվականի ընթացքում *տնտեսական հարաբերությունների գծով հեղափոխական և նախագծային աշխատանքների* շրջանակներում ՀՀ պետական բյուջեի ծախսերը կազմել են շուրջ 118.3 մլն դրամ՝ 100%-ով ապահովելով ծրագրի կատարումը: Նախորդ տարվա համեմատ նշված խմբի ծախսերն աճել են 28.7%-ով կամ 26.4 մլն դրամով, որը հիմնականում պայմանավորված է պետական կարիքների համար ապրանքների, աշխատանքների (ծառայությունների) կողմնորոշիչ գների մեթոդաբանական, վերլուծական և տեղեկատվական ծառայությունների ծախսերի աճով:

Խմբում ընդգրկված են 2 ծրագրեր: Մասնավորապես՝ տեխնիկական անվտանգության կանոնակարգման ծառայություններին հաշվետու տարում ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է 43.3 մլն դրամ: Ծրագիրն իրականացվում է «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից, որի գործունեությունն ուղղված է «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով տեխնաձին վթարների կանխարգելմանը, դրանց հետևանքների վերացմանը, նման վթարների հետևանքով հասարակությանը և տնտեսությանը հասցվող վնասների ռիսկի նվազեցմանը, ինչպես նաև բնակչության և շրջակա միջավայրի պաշտպանությանը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 3.6%-ով կամ 1.5 մլն դրամով՝ պայմանավորված նվազագույն աշխատավարձի դրույքաչափի բարձրացմամբ:

Պետական կարիքների համար ապրանքների, աշխատանքների (ծառայությունների) կողմնորոշիչ գների մեթոդաբանական, վերլուծական և տեղեկատվական ծառայությունների ծախսերը կազմել են ավելի քան 74.9 մլն դրամ: Ծրագիրը նախատեսված է պետական կարիքների համար ապրանքների շուկայական գների ամենամսյա տեղեկագրերի հրապարակման, ՀՀ տարածքում տնտեսության ոլորտների կարիքների համար ապրանքների գների գնագոյացման և

հեռանկարային զարգացման ծրագրերի պետական քաղաքականության մշակման աշխատանքներին միջազգային կազմակերպությունների և դոնոր երկրների հետ համատեղ իր իրավասության սահմաններում տնտեսության ոլորտների կարիքների համար ապրանքների գնագոյացման ծրագրերի մշակման և իրականացման, պետական պատվերի շրջանակներում տնտեսության ոլորտների ծրագրերի իրականացման, գործող գներով տնտեսության ոլորտներում ապրանքների և աշխատանքների արժեքի հաշվարկման կարգի մշակման արդյունավետ իրականացմանը: Նշված ծախսերը նախորդ տարվա համեմատ աճել են 49.7%-ով կամ շուրջ 24.9 մլն դրամով:

2013 թվականին այլ դասերին չպատկանող տնտեսական հարաբերությունների գծով փաստացի ցուցանիշը կազմել է շուրջ 4.9 մլրդ դրամ կամ նախատեսվածի 24.3%-ը: Մասնավորապես՝ խմբում ընդգրկված ծրագրերի գծով կատարվել են 6.4 մլրդ դրամի ծախսեր, իսկ ոչ ֆինանսական ակտիվների օտարումից ստացվել է 1.6 մլրդ դրամ: Ծրագրից շեղումը հիմնականում պայմանավորված է այլ նպատակային վարկային ծրագրերի գծով նախատեսված շուրջ 13.5 մլրդ դրամի միջոցները չօգտագործելու հանգամանքով, ինչպես նաև Բելգիական ՔԵՅ ԲԻ ՍԻ ԷՆ ՎԻ բանկի աջակցությամբ իրականացվող ռադիոհեռուստացիաների արտադրության արտադրամասի ստեղծման և Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի երրորդ ծրագրի երրորդ լրացուցիչ ֆինանսավորման վարկային ծրագրերի կատարողականով: Նախորդ տարվա համեմատ այլ դասերին չպատկանող տնտեսական հարաբերությունների գծով ծախսերն աճել են 17.5%-ով՝ հիմնականում պայմանավորված ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքերի նվազմամբ և արտաքին աջակցությամբ իրականացվող ծախսերի աճով: Հաշվետու տարում տվյալ խմբում կատարված հատկացումների հաշվին իրականացվել են 11 ծրագրեր, որոնցից երեքը վարկային ծրագրեր են:

Խմբում ընդգրկված երկու վարկային ծրագրերն իրականացվել են Համաշխարհային բանկի աջակցությամբ: Մասնավորապես՝ Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի երրորդ վարկային ծրագրի երրորդ լրացուցիչ ֆինանսավորման ծրագրի շրջանակներում կատարվել են 27 մլն դրամի ծախսեր, որից 26 մլն դրամը՝ վարկային միջոցներից, 1 մլն դրամը՝ «Կառավարության համաֆինանսավորման հաշվին» ապահովելով 100% կատարողական: Ծրագիրն ավարտվել է 2012 թվականին, և նշված միջոցները վճարվել են որպես երաշխիք՝ նախորդ տարվա ընթացքում կատարված աշխատանքների համար:

Նշված վարկային ծրագրի երրորդ լրացուցիչ ֆինանսավորման ծրագրի շրջանակներում կատարվել են 2.7 մլրդ դրամի ծախսեր, որից 2.1 մլրդ դրամը՝ վարկային միջոցներից, 581.5 մլն դրամը՝ կառավարության համաֆինանսավորման հաշվին: Նախատեսված ծախսերը կատարվել են 80.7%-ով: Ծրագրի կատարողականը պայմանավորված է շինարարական աշխատանքները

նախատեսվածից ուշ սկսելու հանգամանքով: Ծրագրի շրջանակներում սկսվել են շինարարական աշխատանքները 22 օբյեկտներում, ավարտվել՝ 19 օբյեկտներում, դպրոցների և մանկապարտեզների համար ձեռք են բերվել կահույք, համակարգիչներ և գրասենյակային սարքավորումներ, մշակվել է 22 նոր նախագիծ, բոլոր ընթացող շինարարական աշխատանքները վերահսկվել են տեխնիկական վերահսկիչների կողմից, ֆինանսավորվել են գրասենյակի գործառնական ծախսերը:

Բելգիական Քեյ Բի Սի Էն Վի բանկի աջակցությամբ իրականացվող ռադիոհիդրոտոպների արտադրության արտադրամասի ստեղծման վարկային ծրագրի շրջանակներում ծախսվել է 545.8 մլն դրամ, որից 522.5 մլն դրամը՝ վարկային միջոցներից, 23.3 մլն դրամը՝ « Կառավարության համաֆինանսավորման հաշվին: Ծրագրի ծախսերի 37.1%-ով կատարումը պայմանավորված է նրանով, որ ոչ բոլոր սարքավորումներն են ստացվել 2013 թվականի ընթացքում, դրանց մի մասը ներկրվել է 2014 թվականի հունվար-փետրվար ամիսներին: Ծրագիրը նախատեսվում է ավարտել 2014 թվականի ընթացքում: Նշված վարկային ծրագրի շրջանակներում նախատեսված էր 2013 թվականի ընթացքում Բելգիայից ձեռք բերել և « Կերմուծել ռադիոհիդրոտոպների արտադրության արտադրամասի ստեղծման համար անհրաժեշտ սարքավորումները, իսկ համաֆինանսավորման միջոցները նախատեսված էին ներմուծվող սարքավորումների մաքսազերծման ծախսերի համար:

Մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայության գծով նախատեսված 298.5 մլն դրամն ամբողջությամբ օգտագործվել է: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 12%-ով կամ 32 մլն դրամով, որը պայմանավորված է նվազագույն աշխատավարձի դրույքաչափի բարձրացմամբ:

Պետական ռեզերվների գործակալության համակարգի հիմնարկների պահպանման ծախսերը ևս ամբողջությամբ կատարվել են՝ կազմելով շուրջ 160.5 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 4.3%-ով:

Հաշվետու տարում նյութական ռեսուրսների « Կետական պահուստի ձևավորման ու պահպանման ծախսերը կազմել են շուրջ 25 մլն դրամ կամ նախատեսվածի 97.2%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 2.8%-ով:

Շուրջ 346.9 մլն դրամ են կազմել գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման (նախարարությունների աշխատակազմերի մասով) ծախսերը՝ 95.1%-ով ապահովելով ծրագրի կատարումը: Շեղումը պայմանավորված է տնտեսումներով: Միջոցները հատկացվել են « Կորանսպորտի և կապի նախարարության աշխատակազմի պահպանմանը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 1.6%-ով կամ 5.5 մլն դրամով:

Պետական պահուստից նյութական արժեքների թարմացման, փոխարինման, փոխառման և ապամրագրման գործառնությունների գծով 2013 թվականին ոչ ֆինանսական ակտիվների օտարումից ստացվել են շուրջ 3.5 մլն դրամ արտաբյուջետային միջոցներ, և օգտագործվել է 16.3 մլն դրամ՝ նախատեսված 22.8 մլն դրամի դիմաց:

Ծախսերի այս խմբում ներառվել են «ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն կատարված հատկացումները: ՀՀ պետական բյուջեից առանց սահմանափակման իրականացվել են շուրջ 2.3 մլրդ դրամի ծախսեր: Նշված գումարից 1.3 մլրդ դրամը կազմել են պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների կանոնադրական կապիտալում պետական մասնակցության նվազեցման ճանապարհով ակտիվների կազմից գույք առանձնացնելիս գույքն ստացող պետական կառավարչական հիմնարկի կողմից մատակարարին վճարման ենթակա ԱԱՀ-ի պարտավորության կատարման գծով ծախսերը, 996.9 մլն դրամը՝ ՀՀ պետական կառավարման մարմինների կողմից դատարան տրվող հայցադիմումների, դիմումների և գանգատների, դատարանների վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ բողոքների, ինչպես նաև դատարանի կողմից տրված փաստաթղթերի պատճենների տրամադրման ծախսերը:

Շրջակա միջավայրի պաշտպանություն

2013 թվականին շրջակա միջավայրի պաշտպանության բնագավառում ՀՀ պետական բյուջեի ծախսերը կազմել են 4.6 մլրդ դրամ կամ ծրագրով նախատեսվածի 81.6%-ը: Ցածր կատարողականը հիմնականում պայմանավորված է Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի (ՎՋԵԲ) աջակցությամբ իրականացվող Կոտայքի մարզի կոշտ թափոնների վերամշակման վարկային ծրագիրը չկատարելու հանգամանքով, քանի որ վարկային համաձայնագիրը չի կնքվել: Նախորդ տարվա համեմատ 2013 թվականի ծախսերը նվազել են 34.6%-ով կամ 2.4 մլրդ դրամով՝ հիմնականում պայմանավորված 2012 թվականին Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող՝ Սևանա լճի բնապահպանական դրամաշնորհային և վարկային ծրագրերի ավարտով:

Հաշվետու տարում *աղբահանության* գծով կատարված ծախսերը կազմել են 31.2 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 2.9% կատարողական: Շեղումը պայմանավորված է, ինչպես արդեն նշվել է, Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող Կոտայքի մարզի կոշտ թափոնների վերամշակման վարկային ծրագիրը չկատարելու հանգամանքով: Նշված 31.2 մլն դրամը հատկացվել է ռադիոակտիվ թափոնների վնասազերծման ծառայություններին՝ ապահովելով 100% կատարողական: Ծրագրի շրջանակներում կատարված աշխատանքների նպատակն է միջուկային և ճառագայթային անվտանգության նորմերի ու կանոնների պահպանմամբ ռադիոակտիվ թափոնների կենտրոնացված փոխադրումը, ուսումնասիրումը, վնասազերծումը, պահպանումը և թաղումը՝ ըստ առաջացված և հայտնաբերված թափոնների, ինչպես նաև մարդկանց և շրջակա միջավայրի պաշտպանությունը իոնացնող ճառագայթման վնասակար ազդեցությունից: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 10.7%-ով:

2013 թվականին *օդի աղտոտման դեմ պայքարի* դասի ծրագրերին ուղղվել է շուրջ 129.4 մլն դրամ՝ 100%-ով կատարելով տարեկան ծրագիրը: Հատկացված գումարից 11.8 մլն դրամը տրամադրվել է «Թափոնների ուսումնասիրության կենտրոն» ՊՈԱԿ-ին, որն իրականացրել է թափոնների պետական կադաստրի ստեղծման և վարման, թափոնների գոյացման, վերամշակման, օգտագործման օբյեկտների և հեռացման վայրերի ռեստորների ստեղծման աշխատանքներ, մաքուր տեխնոլոգիաների բաժանմունքի ստեղծում, շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա վտանգավոր քիմիական նյութերի և թափոնների անբարենպաստ ազդեցության ուսումնասիրում: Նախորդ տարվա համեմատ նշված ծրագրի ծախսերն ավելացել են 1.1%-ով:

Ջրային օբյեկտների և օդային ավազանի աղտոտվածության վիճակի մոնիթորինգի իրականացմանն ուղղվել է 117.6 մլն դրամ՝ 4.7%-ով գերազանցելով նախատեսված ցուցանիշը: Ծրագրի շրջանակներում 2013 թվականին ՀՀ բնապահպանության նախարարության «Շրջակա

միջավայրի վրա ներգործության մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվել է մթնոլորտային օդի գետնամերձ շերտի մոնիթորինգ հանրապետության 15 բնակավայրերում 3 տարբեր մեթոդներով՝ ավտոմատ, պասիվ և շուրջօրյա ակտիվ նմուշառման դիտարկումներ՝ ապահովելով մթնոլորտային օդի մոնիթորինգի եռաշերտ հիբրիդային դիտացանցը: Մայրաքաղաքում ավտոմատ դիտակայանների թիվը հասել է 5-ի, որտեղ ավտոմատ սարքավորումների միջոցով անընդմեջ ռեժիմով չափվում են օդում ծծմբի երկօքսիդի, ազոտի երկօքսիդի, գետնամերձ օզոնի և ածխածնի մոնօքսիդի պարունակությունները: Հանրապետության օդի որակի մոնիթորինգային համակարգն ընդարձակելու նպատակով հանրապետության վերը թվարկված 15 բնակավայրերում տեղադրվել են նաև թվով 242 պասիվ նմուշառման դիտակետեր: Միջազգային համագործակցությունների շրջանակներում օդի որակի մոնիթորինգի ծրագրին զուգահեռ գործում է նաև Եվրոպայի Մոնիթորինգի և Գնահատման Ծրագրի (EMEP) «Եվրոպայի մեծ հեռավորությունների վրա անդրսահմանային աղտոտիչների տարածման դիտարկումներ և գնահատում» Նորվեգիայի Հանրապետության հետ համատեղ ծրագիրը, որի շրջանակներում Ամբերդում կառուցվել և 2008 թվականից սկսած գործում է օդի որակի և տեղումների քիմիական կազմի հսկողության միջազգային ավտոմատ կայանը: 2013 թվականին EMEP -ի ծրագրի շրջանակներում նախատեսված էր որոշել 23932 ցուցանիշ, ընդհանուր առմամբ որոշվել է 25182 ցուցանիշ կամ նախատեսված քանակից 5.2%-ով ավելի:

Նախորդ տարվա համեմատ օդի աղտոտման դեմ պայքարի դասի ծախսերն ավելացել են 4.4%-ով՝ հիմնականում պայմանավորված ջրային օբյեկտների և օդային ավազանի աղտոտվածության վիճակի մոնիթորինգի ծախսերի աճով:

Կենսաբազմազանության և բնության պաշտպանության դասի ծրագրերին ուղղվել է 3.1 մլրդ դրամ՝ 102.1%-ով կատարելով տարեկան ծրագիրը: Ծրագրի գերազանցումը պայմանավորված է Աբու-Դաբիի Զարգացման հիմնադրամի աջակցությամբ իրականացվող Արփա-Սևան թունելի հիմնանորոգման վարկային ծրագրի կատարողականով: Նախորդ տարվա համեմատ կենսաբազմազանության և բնության պաշտպանության խմբի ծախսերում արձանագրվել է ծախսերի 43%-ով նվազում՝ հիմնականում պայմանավորված ՎՋԵԲ աջակցությամբ իրականացվող Սևանա լճի բնապահպանական դրամաշնորհային և վարկային ծրագրերի ավարտով:

2013 թվականին ձկան պաշարների համալրման ծառայությունների ծախսերը կատարվել են նախատեսված ամբողջ ծավալով՝ կազմելով 60 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերը գրեթե չեն փոփոխվել: Ծրագրի շրջանակներում 2013 թվականին Սևանա լիճ է բաց թողնվել շուրջ 366.7 հազ. հատ մանրածուկ:

Սևանա լճի ջրածածկ անտառատնկարկների մաքրման ծառայություններին ուղղվել է 125.4 մլն դրամ՝ 100%-ով կատարելով ծրագիրը:

Սևանա լճում և նրա ջրահավաք ավազանում ձկան և խեցգետնի պաշարների հաշվառման ծախսերը կազմել են 6.6 մլն դրամ՝ արձանագրելով 99.6% կատարողական: Ծրագրի շրջանակներում 2013 թվականին Սևանա լճում իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

- Սևանա լճի ջրահավաք ավազանի գետերում ձկնատեսակների և խեցգետնի վերաբերյալ առկա գիտական տեղեկատվության հավաքում, վերլուծություն, ամփոփում,
- գետերում ձկնատեսակների և խեցգետնի հաշվառման, գույքագրման, ձկնապաշարների որոշման միջազգային փորձի ուսումնասիրում, մեթոդաբանության գնահատում, ընտրված մեթոդաբանության հիմնավորում,
- բնական ձվադրավայրերի վերականգնման միջազգային փորձի ուսումնասիրում, մեթոդաբանության գնահատում, ընտրված մեթոդաբանության հիմնավորում,
- Սևանա լճի ջրահավաք ավազանի գետերում էնդեմիկ ձկնատեսակների կենսաբանական տվյալների, բնական ձվադրավայրերի ուսումնասիրություն, դրանց առկա վիճակի գնահատում, վերականգնման ուղիների մշակում և էկոլոգիական ու տնտեսական հիմնավորում:

Նախորդ տարվա համեմատ նշված ծրագրի ծախսերը նվազել են 11.4%-ով:

2013 թվականին «Սևան» ազգային պարկի պահպանության, պարկում գիտական ուսումնասիրությունների, անտառտնտեսական աշխատանքների իրականացման համար նախատեսված 232.5 մլն դրամն ամբողջությամբ օգտագործվել է: Ծրագրի շրջանակներում իրականացվել են «Սևան» ազգային պարկի պահպանությանը և տարածքների արդյունավետ օգտագործմանը նպատակաուղղված միջոցառումներ և ծրագրեր: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 29.9%-ով կամ 53.5 մլն դրամով՝ կապված նվազագույն աշխատավարձի, էլեկտրաէներգիայի և գազի սակագների բարձրացման հետ:

«Դիլիջան» ազգային պարկի պահպանության, պարկում գիտական ուսումնասիրությունների, անտառտնտեսական աշխատանքների իրականացման համար պետական բյուջեով նախատեսված 78.4 մլն դրամը նույնպես ամբողջությամբ օգտագործվել է: Ծրագրի շրջանակներում իրականացվել են «Դիլիջան» ազգային պարկի պահպանությանը և տարածքների արդյունավետ օգտագործմանը նպատակաուղղված, ինչպես նաև գիտական ուսումնասիրությունների գծով համապատասխան միջոցառումներ և ծրագրեր: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 2.3%-ով:

«Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի տնօրինության ներքո գտնվող ԲՀՊ (բնության հատուկ պահպանվող) տարածքների պահպանության, տարածքներում գիտական ուսումնասիրությունների, անտառտնտեսական աշխատանքների կատարման ծառայությունների գծով հատկացվել է 81 մլն դրամ, որն ամբողջությամբ օգտագործվել է: 2013 թվականին «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի տնօրինման ներքո գտնվող ԲՀՊ տարածքներում կատարվել են ծրագրային աշխատանքներ, այդ թվում՝ «Էրեբունի» պետական արգելոցի և «Որդան

կարմիր» պետական արգելավայրի, «Ջրվեժ» անտառապարկի և 4 դենդրոպարկերի տարածքներում պահպանության, անտառտնտեսական և գիտահետազոտական աշխատանքներ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 7.5%-ով՝ կապված նվազագույն աշխատավարձի, էլեկտրաէներգիայի և գազի սակագների բարձրացման հետ:

«Շիկահող» պետական արգելոցի, «Սոսիների պուրակ» ու «Զանգեզուր» պետական արգելավայրերի պահպանության, գիտական ուսումնասիրությունների, անտառտնտեսական աշխատանքների կատարման ծառայությունների համար նախատեսված 52.6 մլն դրամի ծախսերն ամբողջությամբ կատարվել են: Ծրագրի շրջանակներում իրականացվել են պահպանության աշխատանքներ, այդ թվում՝ հրդեհավտանգ տեղամասերում և հատվածներում իրականացվել են հակահրդեհային ճանապարհների շինարարության և ընթացիկ վերանորոգման աշխատանքներ, իսկ «Սոսու պուրակ» պետական արգելավայրում 2013 թվականի ձմռանը հավաքվել են 75 կգ սոսու սերմեր, կատարվել են մաքրման և սանիտարական խնամքի աշխատանքներ 20 հա-ի վրա, տնկանյութի աճեցման նպատակով իրականացվել է ցանքս տնկարանի 600 քառ. մ մակերեսի վրա, ստացվել է 7500 տնկանյութ՝ նախատեսված 5000-ի փոխարեն: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 4.9%-ով՝ կապված նվազագույն աշխատավարձի և էլեկտրաէներգիայի սակագնի բարձրացման հետ:

«Խոսրովի անտառ» պետական արգելոցի պահպանության, գիտական ուսումնասիրությունների կատարման ծառայությունների իրականացման նպատակով հատկացվել է 79.1 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 100% կատարողական: Հաշվետու տարում «Խոսրովի անտառ» պետական արգելոցում պետական արգելավայրերում էկոտուրիզմի զարգացման նպատակով մշակվել և իրականացվել են համապատասխան ծրագրեր: Նախորդ տարվա համեմատ նշված ծրագրի ծախսերն աճել են 2.1%-ով՝ կապված նվազագույն աշխատավարձի և գազի սակագնի բարձրացման հետ:

Աբու-Դաբիի Զարգացման հիմնադրամի աջակցությամբ իրականացվող Արփա-Սևան թունելի հիմնանորոգման վարկային ծրագրի շրջանակներում իրականացվել են շուրջ 2.4 մլրդ դրամի ծախսեր, որից 633.5 մլն դրամը հատկացվել է վարկային միջոցներից, 1.7 մլրդ դրամը՝ ՀՀ կառավարության կողմից, ապահովելով ծրագրի 102.8% կատարողական: Ծրագրի գերազանցումը պայմանավորված է կատարված փաստացի աշխատանքների ծավալով, ինչպես նաև այն հանգամանքով, որ 2012 թվականի տարեվերջին ներկայացված մասհանման հայտի հիման վրա ֆինանսավորումը ստացվել է 2013 թվականի տարեսկզբին: 2013 թվականին նախատեսված աշխատանքները կատարվել են ամբողջությամբ:

ՀՀ-ի և Աբու Դաբիի զարգացման հիմնադրամի միջև Արփա-Սևան թունելի վերականգնման ծրագրի ֆինանսավորման վարկային համաձայնագիրը կնքվել է 2007 թվականի դեկտեմբերի 12-ին:

Ծրագրի իրականացման ժամկետ է սահմանված մինչև 2017 թվականի դեկտեմբերի 31-ը: Ծրագրի նպատակն է գետերից ջրի մակարդակի բարձրացման և բնապահպանական կայունության պահպանման նպատակով Սևանա լիճ ջուր տեղափոխող 48 կմ երկարությամբ Արփա-Սևան հիդրոհամակարգային որոշ հատվածների վերականգնումը, վերանորոգումը և շինարարությունը: 2013 թվականի ընթացքում իրականացվել են 343.4 գծմ երեսակների վերանորոգման, 4429.1 քմ տորկրետ լցամղման և 65.67 քմ տրանսֆորմային խորշերի կառուցման աշխատանքներ:

«Արևիկ» ազգային պարկի պահպանության, պարկում գիտական ուսումնասիրությունների, անտառտնտեսական աշխատանքների կատարման ծառայություններին հատկացվել է 24 մլն դրամ, որն ամբողջությամբ օգտագործվել է: Ծրագրի շրջանակներում իրականացվել են ՀՀ բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանության, այդ տարածքներում գիտական ուսումնասիրությունների և անտառտնտեսական աշխատանքների գծով 2013 թվականի պետական պատվերով ծրագրավորված միջոցառումները: Նախորդ տարվա համեմատ նշված ծրագրի ծախսերն աճել են 7%-ով՝ կապված նվազագույն աշխատավարձի և գազի սակագնի բարձրացման հետ:

«Արփի լիճ» ազգային պարկի պահպանության ծառայություններին հատկացվել է շուրջ 11.3 մլն դրամ, որն ամբողջությամբ օգտագործվել է: Ծրագրի շրջանակներում իրականացվել են ՀՀ բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանության, այդ տարածքներում գիտական ուսումնասիրությունների և անտառտնտեսական աշխատանքների գծով 2013 թվականին ծրագրված միջոցառումները: Մասնավորապես՝ 2013 թվականին «Արփի լիճ» ազգային պարկ ՊՈԱԿ-ը կազմակերպել և իրականացրել է ՊՈԱԿ-ի գույքային իրավունքների պետական գրանցման աշխատանքները: Բանակցություններ են տարվել լիցենզավորված կադաստրային քարտեզագրում իրականացնող կազմակերպությունների հետ, ինչը բավականին ժամանակատար գործընթաց է: Արդյունքում պայմանավորվածություն է ձեռք բերվել 15 համայնքներում ավելի քան 420 լոտը միավորել 7 լոտի, և շուրջ 11.0 մլն դրամի փոխարեն այդ աշխատանքները իրականացնել ընդամենը 995.0 հազ.դրամով (մեկ լոտի գրանցման հասցեի միայն պետական տուրքը կազմում է 26.0 հազար դրամ, առանց քարտեզագրման աշխատանքների և քարտեզագրական բազային նյութերի ձեռքբերման): Նախորդ տարվա համեմատ նշված ծրագրի ծախսերն աճել են 13.3%-ով՝ կապված նվազագույն աշխատավարձի և գազի սակագնի բարձրացման հետ:

«Զիկատար» պետական արգելավայրի պահպանության, գիտական ուսումնասիրությունների կատարման ծառայությունների նպատակով նախատեսված 15.2 մլն դրամի ծախսերն ամբողջությամբ կատարվել են: «Զիկատար» բնապահպանական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից 2013 թվականին իրականացվել են.

- «Զիկատար» պետական արգելավայրի տարածքում բնական էկոհամակարգերի, լանդշաֆտային և կենսաբանական բազմազանության, բնության ժառանգության գիտական ուսումնասիրության, պահպանության, պաշտպանության, հաշվառման, գույքագրման, մոնիթորինգի, բնության տարեգրության վարման, ինչպես նաև պետական արգելավայրի բնական պաշարների օգտագործման ապահովումը, անտառչինական աշխատանքների իրականացումը,
 - անտառ-էկոլոգիական գիտափորձարարական ուսումնասիրությունների իրականացումը,
 - անտառային պաշարների տեղեկատվական բանկի ստեղծումը,
 - կենսաբազմազանության պահպանման նպատակով արժեքավոր և հազվագյուտ տեսակների հավաքածուների կազմումը,
 - անտառգիտասփյուռ աշխատանքներ, անտառտնտեսության բնագավառի համար կադրերի վերապատրաստումը, ուսումնաարտադրական պրակտիկայի կազմակերպումը:

Կովկասի տարածաշրջանային բնապահպանական կենտրոնի հայաստանյան մասնաճյուղի գրասենյակի վարձակալության ծառայությունների նպատակով նախատեսված 6.8 մլն դրամի ծախսերն ամբողջությամբ կատարվել են: ՀՀ բնապահպանության նախարարության և «Կովկասի տարածաշրջանային բնապահպանական կենտրոն» հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղի միջև կնքված պայմանագրի համաձայն իրականացվել են մասնաճյուղի գրասենյակի վարձակալության և կոմունալ ծառայությունների վճարման ծախսերը: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերը չեն փոփոխվել:

Այլ դասերին չպատկանող շրջակա միջավայրի պաշտպանության դասի ծախսերը հաշվետու տարում կազմել են շուրջ 1.3 մլրդ դրամ կամ ծրագրվածի 95%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է նպատակային դրամաշնորհային ծրագրերի կատարողականով: Նախորդ տարվա համեմատ տվյալ դասի ծախսերը նվազել են 4.7%-ով, ինչը պայմանավորված է Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող Հարավային Կովկասի տարածաշրջանում բնապահպանական դրամաշնորհային ծրագրի ծախսերի կրճատմամբ և ՀՀ բնապահպանության նախարարության արտաբյուջետային միջոցների հաշվին իրականացվող «Բնապահպանական նպատակային ֆոնդ» ծրագրի շրջանակներում 2013 թվականին ծախսեր չնախատեսելու հանգամանքով:

Տվյալ դասում ընդգրկված գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման (նախարարությունների աշխատակազմերի մասով) ծախսերը կազմել են 854.3 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 99%-ը: Միջոցները հատկացվել են ՀՀ բնապահպանության նախարարության պահպանմանը: Նախորդ տարվա համեմատ այս ծախսերն աճել 3.7%-ով կամ 30.7 մլն դրամով՝ հիմնականում պայմանավորված աշխատանքի վարձատրության ծախսերի աճով:

«Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի համաձայն բնապահպանական ծրագրերի իրականացման համար ՀՀ համայնքներին տրամադրվել է 315.8 մլն դրամ սուբվենցիա կամ ծրագրվածի 98.2%-ը: ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի կատարման շրջանակներում բնապահպանական ծրագրերի իրականացման համար սուբվենցիաներ են հատկացվել 11 համայնքների: Հատկացումների աճը 2012 թվականի համեմատ կազմել է 16.3% կամ 44.3 մլն դրամ, որը պայմանավորված է բնապահպանական ծրագրերի քանակի և դրանց ֆինանսավորման ծավալների աճով:

Բնապահպանական ոլորտի գծով վերլուծական տեղեկատվական ծառայությունների իրականացման նպատակով պետական բյուջեից տրամադրվել է ավելի քան 17.1 մլն դրամ ապահովելով ծրագրի 100% կատարողական: Ծրագրի շրջանակներում ապահովվել է ՀՀ բնապահպանության նախարարության տեղային համակարգչային ցանցի և առկա համակարգչային տեխնիկայի ծրագրային ու տեխնիկական սպասարկումը և վերանորոգումը: Նախորդ տարվա համեմատ բնապահպանական ոլորտի գծով վերլուծական տեղեկատվական ծառայությունների ծախսերն աճել են 1.2%-ով:

Հայաստանի Հանրապետության տարածքի ստորերկրյա քաղցրահամ ջրերի հիդրոերկրաբանական մոնիթորինգի ծառայություններին 2013 թվականին ՀՀ պետական բյուջեից հատկացվել է 19 մլն դրամ՝ ամբողջությամբ կատարելով ծրագրային ցուցանիշը: «Հիդրոերկրաբանական մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից 2013 թվականի ընթացքում կատարվել է մոնիթորինգ 6 ջրավազանային կառավարման տարածքների ազգային դիտողական ցանցում ընդգրկված ստորերկրյա ջրաղբյուրների 70 դիտակետերում: Հաշվետու տարում իրականացվել են մշտադիտարկումներ ստորերկրյա ջրերի ծախսի, ջերմաստիճանի և մակարդակի (ճնշման) վրա: Աշխատանքների և նրանցից ստացված արդյունքների հիման վրա կատարվել են համապատասխան վերլուծություններ: Նախորդ տարվա համեմատ նշված ծրագրի ծախսերն աճել են 4.2%-ով:

Հաշվետու տարում 30.1 մլն դրամ է տրամադրվել ՀՀ բնապահպանության նախարարության «Ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի պահպանման ծրագրի շրջանակներում, որը կատարվել է 97.5%-ով՝ հիմնականում պայմանավորված թափուր հաստիքների առկայությամբ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 2.8%-ով:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Հայաստանում անապատացման դեմ պայքարի ազգային միջոցառումների ծրագրի ներդաշնակեցման և ազգային հաշվետվության դրամաշնորհային ծրագրի ծախսերը կազմել են 1.6 մլն դրամ կամ ծրագրի 18.7%-ը: Ցածր կատարողականը պայմանավորված է նրանով, որ կատարվել է գնումների պլանի փոփոխություն և գործողությունների մի մասի տեղափոխում 2014 թվական:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Ազգային կենսաբազմազանության ռազմավարության և գործողությունների ծրագրի վերանայման և կոնվենցիայի ներկայացվելիք՝ Հայաստանում կենսաբանական բազմազանության մասին 5-րդ ազգային հաշվետվության կազմման դրամաշնորհային ծրագրի ծախսերը կազմել են 900 հազ. դրամ կամ ծրագրի 8.9%-ը: Ցածր կատարողականը պայմանավորված է նրանով, որ մրցույթը վերահայտարարվել է, և որոշ գործողություններ տեղափոխվել են 2014 թվական:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Օժանդակության ինստիտուցիոնալ կարողությունների զարգացմանը՝ հանքարդյունաբերության ոլորտում բնապահպանական կառավարումը, ներառումը և թափանցիկությունն ապահովելու նպատակով ԻԶՀ-ի դրամաշնորհային ծրագիրը կատարվել է 10.1%-ով կամ 1.4 մլն դրամի չափով: Ցածր կատարողականը պայմանավորված է Համաշխարհային բանկի հետ մրցութային փաթեթի մաս կազմող տեխնիկական առաջադրանքի համաձայնեցման երկարաձգմամբ:

Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող Հարավային Կովկասի տարածաշրջանում բնապահպանական դրամաշնորհային ծրագրի ծախսերը կազմել են 52.5 մլն դրամ կամ նախատեսվածի 68.4%-ը: Ֆինանսավորումն ամբողջությամբ տրամադրվել է դրամաշնորհային միջոցների հաշվին: ՀՀ կառավարության համաֆինանսավորման հաշվին նախատեսված աշխատանքներն ամբողջությամբ կատարվել են, որոնց դիմաց վճարումը տեղափոխվել է 2014 թվական: Ծրագրի դրամաշնորհի մասով 74,2%-ով կատարումը պայմանավորված է նրանով, որ ծրագրի կատարումը երկարաձգվել է մինչև 2014 թվական: Ծրագրի շրջանակներում շարունակվել է Հայաստանի Աշոցքի տարածաշրջանում պահպանվող տարածքների ստեղծման ծրագրի իրականացումը:

Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություններ

2013 թվականին բնակարանային շինարարության և կոմունալ ծառայությունների բնագավառին ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է 21.7 մլրդ դրամ՝ կազմելով ծրագրի 79.9%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է ջրամատակարարման ոլորտում արտաքին աջակցությամբ իրականացվող որոշ ծրագրերի կատարողականով: Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայությունների բաժնի ծախսերը 51.9%-ով կամ 7.4 մլրդ դրամով գերազանցել են նախորդ տարվա ցուցանիշը՝ հիմնականում պայմանավորված արտաքին աջակցությամբ իրականացվող ծրագրերի շրջանակներում կատարված ծախսերի աճով:

Հաշվետու ժամանակահատվածում 129.7 մլն դրամ տրամադրվել է *բնակարանային շինարարության* ոլորտին՝ անավարտ շինարարության բնակշինարարական կոոպերատիվների փայտատերերի ներդրած միջոցների դիմաց պետական օգնության նպատակով, որը կատարվել է 86.5%-ով: Նախորդ տարվա համեմատ բնակարանային շինարարության խմբի ծախսերը նվազել են 35.1%-ով կամ 70.3 մլրդ դրամով:

Բաժնի ծախսերի 88.3%-ն ուղղվել է *ջրամատակարարման* խմբի ծրագրերի ֆինանսավորմանը: Նշված ծախսերը կազմել են շուրջ 19.2 մլրդ դրամ կամ տարեկան ծրագրի 78%-ը:

Հաշվետու տարում 127.9 մլն դրամ է տրամադրվել ջրային տնտեսության ոլորտում «Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման» ծրագրի շրջանակներում, որը հատկացվել է ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի պահպանմանը: Նշված ծախսերի ծրագիրը կատարվել է 94.7%-ով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն էական փոփոխություն չեն կրել:

«Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի խմելու ջրի մատակարարման ծառայությունների արդյունքում առաջացող ֆինանսական ճեղքվածքի սուբսիդավորման նպատակով նախատեսված շուրջ 1.5 մլրդ դրամն ամբողջությամբ տրամադրվել է: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 38%-ով կամ 409.1 մլն դրամով, ինչը մասամբ պայմանավորված է նրանով, որ «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի կողմից իրականացվել է Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացված Սևանա լճի բնապահպանական վարկային ծրագրով տրամադրված վարկի մայր գումարի մարում, որը 2013 թվականին կազմել է 343.9 մլն դրամ:

Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող ՀՀ Շիրակի մարզի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերականգնման դրամաշնորհային ծրագրի գծով օգտագործվել է շուրջ 841.9 մլն դրամ (դրամաշնորհային միջոցներից՝ 556 մլն դրամ, ՀՀ կառավարության համաֆինանսավորման հաշվին՝ 285.9 մլն դրամ)՝ 34.7%-ով գերազանցելով

ծրագրային ցուցանիշը: Շեղումը պայմանավորված է նրանով, որ փաստացի կատարված աշխատանքները նախատեսվածից ավել են եղել: Ծրագրի միջոցներն ուղղված են « Ծիրակի մարզի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերականգնմանը: 2013 թվականին վարկային ծրագրի 2-րդ փուլի շրջանակներում Ծիրակի մարզի մի շարք համայնքներում կառուցվել են շուրջ 20000 գծմ ջրագծեր և իրականացվել են մոտ 900 տնային միացումներ: « Ծիրակի մարզի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերականգնման ծրագրով կնքված պայմանագրերի հիման վրա իրականացվող աշխատանքները համարվում են վարկային միջոցների 1-ին և 2-րդ փուլերի շարունակական մաս:

2013 թվականին խմելու ջրի մատակարարման ծառայությունների սուբսիդավորման նպատակով պետական բյուջեից տրամադրվել է 255.3 մլն դրամ՝ 100%-ով ապահովելով ծրագրված ցուցանիշը: « 2013 թվականի պետական բյուջեի ֆինանսավորումն ուղղվել է «Նոր Ակունք» ՓԲԸ-ին Գերմանիայի զարգացման վարկերի բանկի կողմից տրամադրված վարկի մայր գումարի մարմանը: 2012 թվականի նկատմամբ նշված ծախսերն աճել են 9.4%-ով:

Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող՝ « Ծիրակի, « Լոռու և « Արմավիրի մարզերի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգի մասնավոր կառավարման հայեցակարգերի ներդրման դրամաշնորհային ծրագրի շրջանակներում օգտագործվել է 793.9 մլն դրամ կամ նախատեսվածից 38.9%-ով ավելի: Ծրագրի գերազանցումը պայմանավորված է նրանով, որ 2012 թվականի տարեվերջի ներկայացված մասհանման հայտի գումարի վճարումը կատարվել է 2013 թվականին: 2013 թվականի ընթացքում մատուցված ծառայությունների դիմաց KFW բանկի կողմից համաձայն մասհանման հայտերի վճարվել է 608.4 մլն դրամ, իսկ « Կառավարության համաֆինանսավորման միջոցներից՝ ԱԱՀ-ի և շահութահարկի առաջացած պարտավորությունների դիմաց՝ 185.5 մլն դրամ:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող համայնքային ջրամատակարարման և ջրահեռացման երրորդ վարկային ծրագրի շրջանակներում կատարվել են շուրջ 2.4 մլրդ դրամի ծախսեր (վարկային միջոցներից՝ շուրջ 2 մլրդ դրամ, « Կառավարության համաֆինանսավորման հաշվին՝ 400 մլն դրամ)՝ 62.1%-ով ապահովելով նախատեսված ցուցանիշը: Շեղումը պայմանավորված է նրանով, որ պայամագրերը կնքվել են 2013 թվականի տարեվերջին, և վճարվել են միայն նախատեսված կանխավճարները: Ծրագրի աշխատանքների կատարման հիմնական փուլը սկսվել է 2013 թվականին: Այս ծրագիրը արդյունավետ է ճանաչվել 23.06.2012 թվականին, որի հիման վրա կատարվել են որոշակի նախապատրաստական աշխատանքներ, մասնավորապես «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի մասնավոր կառավարչի ամսական վճարումները, նախագծային փաթեթի ձեռքբերումը: Շինարարական աշխատանքների պայամագրերը կնքվել են 2013 թվականի տարեվերջին, որի հիման վրա վճարվել են նախատեսված կանխավճարները:

Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող « Շիրակի (Գյումրու) մարզի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերականգնման ծրագրի երկրորդ փուլի շրջանակներում կատարվել են շուրջ 3.4 մլրդ դրամի ծախսեր (վարկային միջոցներից՝ 1.5 մլրդ դրամ, «Կառավարության համաֆինանսավորման հաշվին՝ 1.9 մլրդ դրամ)՝ 78.2%-ով կատարելով նախատեսված ցուցանիշը: Շեղումը պայմանավորված է նրանով, որ Գյումրին մշակութային քաղաք հռչակելու և աշխատանքային գրաֆիկներում փոփոխություններ կատարելու և ասֆալտապատման աշխատանքները տեղական գործող ստանդարտներին համապատասխանեցնելու հետևանքով աշխատանքների իրականացումը հետաձգվել է, ինչպես նաև դեկտեմբեր ամսվա համար վճարման ներկայացված 111.6 հազար եվրո գումարի չափով կատարողական ակտի դիմաց վճարումը ստացվել է 2014 թվականի հունվարին: Ծրագրի երկրորդ փուլի աշխատանքներն սկսվել են 2010 թվականի սեպտեմբեր ամսից, որը համարվում է Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող « Շիրակի մարզի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերականգնման վարկային ծրագրի շարունակությունը: 2013 թվականին կառուցվել են Գյումրի քաղաքի 202000 գծմ ջրագծեր և իրականացվել են 4400 տնային միացումներ: « Շիրակի մարզի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերականգնման ծրագրով կնքված պայմանագրերի հիման վրա իրականացվող աշխատանքները համարվում են վարկային միջոցների 1-ին և 2-րդ փուլերի շարունակական մաս:

Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող՝ «Լոռու (Վանաձորի) մարզի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերականգնման վարկային ծրագրի երկրորդ փուլի շրջանակներում կատարվել են շուրջ 2.1 մլրդ դրամի ծախսեր (վարկային միջոցներից՝ 984.2 մլն դրամ, «Կառավարության համաֆինանսավորման հաշվին՝ շուրջ 1.1 մլրդ դրամ), որոնք ապահովել են ծրագրի 79.1%-ը: Շեղումը պայմանավորված է նրանով, որ դեկտեմբեր ամսվա համար վճարման ներկայացված 180.5 հազար եվրո գումարի չափով կատարողական ակտի դիմաց վճարումը ստացվել է 2014 թվականի հունվարին: Ծրագրի երկրորդ փուլն ուժի մեջ է մտել 2010 թվականի սեպտեմբեր ամսից և համարվում է Գերմանիայի զարգացման վարկային բանկի աջակցությամբ իրականացվող՝ «Լոռու մարզի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերականգնման դրամաշնորհային ծրագրի շարունակությունը: 2013 թվականին վերանորոգվել են Վանաձոր քաղաքի խմելու ջրի բաշխիչ ցանցերը, տեղադրվել են 50 հատ հակահրդեհային և ջրթող հիդրանտներ, կառուցվել են 24000 գծմ ջրագծեր, 7 փականային հորեր, իրականացվել է մոտ 4000 գծմ ասֆալտի ծածկույթի վերականգնում, կառուցվել են 330 գծմ կոյուղագծեր և տեղադրվել են 24 հատ կոյուղու դիտահորեր: Աշխատանքների կատարման ընթացքում անհրաժեշտություն է առաջացել կատարել նախագծային փոփոխություններ,

մասնավորապես՝ մետաղյա խողովակները պոլիէթիլենային խողովակներով փոխարինելու համաձայնեցման, ինչպես նաև նախագծով նախատեսված ասֆալտապատման աշխատանքների համապատասխանեցումը տեղական գործող ստանդարտներին: Եղանակային պայմանների հետևանքով հետաձգվել էին մեծածավալ աշխատանքներ ասֆալտապատման մասով:

Ֆրանսիայի Հանրապետության կառավարության աջակցությամբ իրականացվող՝ Երևանի ջրամատակարարման և ջրահեռացման ծրագրին տրամադրվող տեխնիկական աջակցության վարկային ծրագրի գծով 2013 թվականին նախատեսված միջոցներն ամբողջությամբ օգտագործվել են՝ կազմելով 661.1 մլն դրամ: Ծրագրի շրջանակներում կատարվել են «Աէրացիա» կեղտաջրերի մաքրման կայանի վերականգնման գծով (առաջնային մաքրում և տիղմի խտացում) նախագծման և մրցութային փաթեթի նախապատրաստման աշխատանքներ, Երևան քաղաքի ջրամատակարարման ու ջրահեռացման ծրագրերի գծով աշխատանքների նախագծման, մրցութային փաթեթի նախապատրաստման և մրցույթի հայտարարման աշխատանքներ:

Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող ջրամատակարարման և ջրահեռացման վարկային ծրագրի երկրորդ փուլի շրջանակներում ծախսվել է ավելի քան 3.2 մլրդ դրամ (վարկային միջոցներից՝ 2.7 մլրդ դրամ, ՀՀ կառավարության համաֆինանսավորման հաշվին՝ 524.6 մլն դրամ)՝ կազմելով ծրագրի 65.5%-ը: Ցածր կատարողականը պայմանավորված է նրանով, որ շինարարական աշխատանքների պայմանագրերը կնքվել են միջազգային մրցույթի արդյունքում, ինչը պահանջում է երկար ժամանակ: Պայմանագրերի հիման վրա վճարվել են նախատեսված կանխավճարներ և այն աշխատանքները, որոնք չեն իրականացվել 2013 թվականի ընթացքում, տեղափոխվել են 2014 թվական: Հաշվետու տարվա ընթացքում ծրագրի շրջանակներում կնքվել են շինարարական աշխատանքների պայմանագրեր Արմավիրի, Արարատի, Կոտայքի և Լոռու մարզերի 5 քաղաքների և 33 գյուղերի ջրամատակարարման համակարգերի բարելավման նպատակով: Աշխատանքների իրականացման նպատակով 2013 թվականին առաջնահերթ ձեռք են բերվել մեքենա-սարքավորումներ և ապրանքներ (էքսկավատորներ, լողացող փականներ, խողովակներ և այլն):

Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող Հայաստանի փոքր համայնքների ջրային վարկային ծրագրի շրջանակներում ծախսվել է շուրջ 3.5 մլրդ դրամ, որը 2.4 անգամ գերազանցել է նախատեսված ցուցանիշը՝ պայմանավորված նրանով, որ 2013 թվականին շուրջ 2 մլրդ դրամ վճարվել է որպես կանխավճար 2014 թվականին կատարվելիք աշխատանքների համար: Ծրագրի շրջանակներում կապալառուների հետ կնքվել են շինարարական աշխատանքների իրականացման պայմանագրեր, որոնց համաձայն իրականացման փուլում են գտնվում Աբովյան, Բյուրեղավան, Սևան, Գավառ, Դիլիջան, Իջևան, Մարտունի, Սպիտակ,

Ախթալա, Տաշիր, Ճամբարակ, Կապան քաղաքների, Սարուխան, Ազատամուտ և այլ համայնքների ջրամատակարարման և ջրահեռացման ցանցերի բարելավման աշխատանքները:

Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող Հայաստանի փոքր համայնքների ջրային ծրագրի դրամաշնորհային ծրագրի շրջանակներում ծախսվել է շուրջ 316.3 մլն դրամ կամ ծրագրվածից 21.4%-ով ավելի: Վերջինս պայմանավորված է նրանով, որ նշված գումարում ներառված են նաև 2012 թվականին ներկայացված հայտերի դիմաց վճարումները:

Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող Հայաստանի փոքր համայնքների ջրային ծրագրի շրջանակներում կատարվել են 65.2 մլն դրամի ծախսեր՝ 4.6%-ով կատարելով նախատեսված ցուցանիշը: Միջոցներն օգտագործվել են ՀՀ կառավարության համաֆինանսավորման հաշվին՝ կազմելով նախատեսված ցուցանիշի 27.6%-ը, իսկ նախատեսված 1.2 մլրդ դրամ վարկային միջոցները չեն օգտագործվել: Ծրագրի կատարողականը պայմանավորված է նրանով, որ ծրագրի ենթավարկային պայմանագիրը ստորագրվել է 17.12.2013թ., որի հետևանքով կատարվելիք աշխատանքները տեղափոխվել են 2014 թվական:

Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող ջրային ոլորտի ուսումնասիրության դրամաշնորհային ծրագրի շրջանակներում 2013 թվականին կատարվել են 96.9 մլն դրամի ծախսեր՝ 74.7%-ով ապահովելով տարեկան ծրագրային ցուցանիշը: Ցածր կատարողականը պայմանավորված է նրանով, որ վճարումների մասով հաստատումները ստացվել են 2014 թվականին, որի հիման վրա առաջացած հարկային պարտավորությունները կկատարվեն 2014 թվականի ընթացքում: Ծրագրի նպատակն է Հայաստանի Հանրապետությունում ջրային ոլորտի կառավարման առկա իրավիճակի, այդ թվում՝ ոլորտի կառավարման ու համակարգի միասնական հաշվառման խորացված վերլուծությունը, ներառյալ դրա հետագա զարգացման հեռանկարների ուսումնասիրությունը: Ոլորտի վերլուծությունը և դրա հիմնական խնդիրները պետք է վերաբերեն գործառնական բնութագրերին՝ ընդգրկելով ինստիտուցիոնալ, ֆինանսական և սոցիալ-տնտեսական բնագավառները:

Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող ջրամատակարարման և ջրահեռացման վարկային ծրագրի շրջանակներում նախատեսվել են 12.1 մլն դրամի ծախսեր, որոնք ամբողջությամբ կատարվել են: Ծրագիրն ավարտվել է 2012 թվականի դեկտեմբերի 30-ին:

Եվրամիության աջակցությամբ իրականացվող Հայաստանի փոքր համայնքների ջրային ծրագրի դրամաշնորհային ծրագիրը և Հայաստանի փոքր համայնքների ջրային (դոնորային ֆինանսավորման) դրամաշնորհային ծրագիրը չեն կատարվել՝ պայմանավորված նրանով, որ առաջին ծրագրի պայմանագրերը կնքվել են տարեվերջին, որի պատճառով աշխատանքների իրականացումը նախատեսվել է 2014 թվականից, իսկ երկրորդ ծրագրի իրականացումը կասեցվել է:

2013 թվականին պետական բյուջեի ծախսերի՝ *փողոցների լուսավորման* խմբում համայնքների բյուջեներին նպատակային հատկացումների՝ սուբվենցիաների տրամադրման համար նախատեսված 1.8 մլրդ դրամն ամբողջությամբ օգտագործվել է: Միջոցներն ուղղվել են Երևան քաղաքի արտաքին լուսավորության ցանցի շահագործման և պահպանման աշխատանքների իրականացմանը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն ավելացել են 8.1%-ով՝ պայմանավորված էլեկտրաէներգիայի սակագնի բարձրացմամբ:

Այլ դասերին *չպատկանող բնակարանային շինարարության և կոմունալ ծառայությունների* բնագավառին ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է շուրջ 572.6 մլն դրամ՝ կազմելով ծրագրի 94.8%-ը: Նախորդ տարվա համեմատ խմբի ծախսերն աճել են 20.6%-ով:

Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման (նախարարությունների աշխատակազմերի մասով) ծրագրի շրջանակներում կատարվել են 393.2 մլն դրամի ծախսեր՝ 95.6%-ով ապահովելով տարեկան ծրագրային հատկացումները: Միջոցները հատկացվել են ՀՀ քաղաքաշինության նախարարության աշխատակազմի պահպանմանը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 2.7%-ով:

Հաշվետու տարում ավելի քան 179.3 մլն դրամ է տրամադրվել ՀՀ քաղաքաշինության նախարարության «Ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի պահպանման նպատակով, որից 162.3 մլն դրամը հատկացվել է պետական բյուջեի, 17.1 մլն դրամը՝ ՀՀ քաղաքաշինության նախարարության արտաբյուջետային միջոցների հաշվին: Նշված ծրագրերը կատարվել են համապատասխանաբար 92.8%-ով և 96,5%-ով, ինչը պայմանավորված է գնումների արդյունքում առաջացած տնտեսումներով:

Առողջապահություն

2013 թվականին ՀՀ պետական բյուջեի միջոցներով *առողջապահության* ոլորտում կատարվել են շուրջ 64.4 մլրդ դրամ ծախսեր՝ ապահովելով ծրագրի 89.6%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է արտաքին աջակցությամբ իրականացվող ծրագրերի կատարողականով:

Բաժնի ծախսերի 42.3%-ն ուղղվել է հիվանդանոցային ծառայությունների, 36.2%-ը՝ արտահիվանդանոցային ծառայությունների, 12.3%-ը՝ այլ դասերին չպատկանող առողջապահական ծրագրերի, 5%-ը՝ հանրային առողջապահական ծառայությունների ֆինանսավորմանը և 4.2%-ը՝ բժշկական ապրանքների, սարքերի և սարքավորումների ձեռքբերմանը: 2012 թվականի համեմատ առողջապահության ոլորտի ծախսերն էապես չեն փոփոխվել:

Հաշվետու տարում դեղագործական ապրանքների ձեռքբերման ծախսերը կազմել են շուրջ 2.7 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրի 92.8% կատարողական:

Ամբուլատոր-պոլիկլինիկական, հիվանդանոցային բուժօգնություն ստացողներին և հատուկ խմբերում ընդգրկված ֆիզիկական անձանց դեղորայքի տրամադրման նպատակով ծախսվել է շուրջ 2.7 մլրդ դրամ՝ 92.9%-ով ապահովելով ծրագիրը: Միջոցներն օգտագործվել են սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկված ազգաբնակչությանը դեղորայքով ապահովելու նպատակով: 2012 թվականի համեմատ նշված ծախսերը նվազել են 26.8%-ով:

Պետական պահպանության ծառայությանը դեղորայքի տրամադրման նպատակով հատկացվել է 581.2 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 52.1% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 32.1%-ով:

2013 թվականի պետական բյուջեից *արտահիվանդանոցային ծառայությունների* ձեռքբերմանը տրամադրվել է շուրջ 23.3 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրի 99.3%-ով կատարում: Արտահիվանդանոցային ծառայությունների ծախսերի 35.4%-ը կամ շուրջ 8.2 մլրդ դրամը կազմել են ընդհանուր բնույթի, 25.4%-ը կամ շուրջ 5.9 մլրդ դրամը՝ մասնագիտացված բժշկական, 3.5%-ը կամ 817.5 մլն դրամը՝ ստոմատոլոգիական և 35.6%-ը կամ 8.3 մլրդ դրամը՝ պարաբժշկական ծառայությունների ծախսերը:

Արտահիվանդանոցային ծառայությունների խմբում ընդգրկված *ընդհանուր բնույթի բժշկական ծառայությունների* դասի ծախսերը կատարվել են գրեթե ամբողջությամբ՝ 99.7%-ով, և կազմել 8.2 մլրդ դրամ: Միջոցներն ուղղվել են բնակչության առողջության առաջնային պահպանմանը: Ծրագրի շրջանակներում տեղամասային թերապևտի, տեղամասային մանկաբույժի, ընտանեկան բժշկի, բուժամանկաբարձական կետերի քույրերի, դպրոցների աշակերտներին սպասարկող քույրերի կողմից բժշկական օգնություն և սպասարկում է իրականացվել հանրապետության ամբողջ ազգաբնակչությանը, ՀՀ կառավարության համապատասխան որոշումներով հաստատված

բնակչության խմբերին անվճար և արտոնյալ պայմաններով տրամադրվել է 1.1 մլրդ դրամ ընդհանուր արժեքով դեղորայք: 2012 թվականի համեմատ նշված ծախսերը նվազել են 1.2%-ով կամ 98.6 մլն դրամով:

Ավելի քան 5.9 մլրդ դրամ է օգտագործվել մասնագիտացված բժշկական ծառայությունների ձեռքբերման նպատակով՝ 99.5%-ով ապահովվելով ծրագրային ցուցանիշը և 2.7%-ով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը:

Բարձր ռիսկի խմբերում ընդգրկված բնակչության մոտ հիվանդությունների հայտնաբերման, առողջության գնահատման և բուժման ծառայությունների համար օգտագործվել է 198 մլն դրամ, որը կատարվել է նախատեսված ամբողջ ծավալով: Ծրագրի շրջանակներում բուժօգնություն է մատուցվել շուրջ 1700 հաշմանդամ երեխաների՝ նախորդ տարվա 1500-ի դիմաց: Նախորդ տարվա համեմատ այս ծախսերն աճել են 14.4%-ով:

Հեմոդիալիզի անցկացման ծառայությունների ծախսերը 2013 թվականին կազմել են ավելի քան 1.6 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրի 99.6% կատարողական: Այս ծրագրով պետության կողմից երաշխավորված անվճար հիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում 2013 թվականին իրականացվել է 90.9 հազար սեանս՝ 2012 թվականի 84.6 հազար սեանսի դիմաց: Ծախսերի աճը նախորդ տարվա համեմատ կազմել է 8% կամ 122.2 մլն դրամ:

Մանկաբարձագինեկոլոգիական բժշկական օգնության ծառայություններին 2013 թվականի պետական բյուջեից տրամադրվել է ավելի քան 1.2 մլրդ դրամ՝ 99.1%-ով ապահովելով ծրագրային ցուցանիշը: Ծրագրի շրջանակներում նախաձեռնության և հետձեռնության հսկողություն է իրականացվել հանրապետության շուրջ 49.3 հազար հղիների նկատմամբ՝ նախորդ տարվա 49.7 հազարի փոխարեն, ինչպես նաև բուժօգնություն են ստացել գինեկոլոգիական հիվանդություններով կանայք: 2012 թվականի համեմատ նշված ծախսերը նվազել են 0.7%-ով կամ 8.4 մլն դրամով:

Սպորտային բժշկության և հակադոպինգային հսկողության ծառայություններին տրամադրվել է 72.9 մլն դրամ պետական աջակցություն՝ ամբողջովին ապահովելով նախատեսված ծավալը, որն ուղղվել է «Սպորտային բժշկության և հակադոպինգային հսկողության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ին: Նախորդ տարվա համեմատ այս ծախսերն աճել են 2.1%-ով, ինչը պայմանավորված է նվազագույն աշխատավարձի աճով:

Նեղ մասնագիտացված բժշկական օգնության ծառայությունների ձեռքբերմանը հատկացվել է 2.6 մլրդ դրամ՝ 99.5%-ով կատարելով ծրագրային ցուցանիշը: Ծրագրի շրջանակներում բուժօգնություն է մատուցվել հանրապետության ամբողջ բնակչությանը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 1%-ով կամ 25.7 մլն դրամով:

Շարունակական հսկողություն պահանջող և առանձին հիվանդությունների բուժման ծառայություններին տրամադրվել է շուրջ 141.6 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 99.7%

կատարողական: Այս ծրագրով պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում 2012 թվականի 8.8 հազար հիվանդի դիմաց 2013 թվականին բուժօգնություն է ստացել 8.1 հազար հիվանդ, որը պայմանավորված է առանձին կազմակերպություններում բուժօգնության դեպքերի՝ նախատեսվածից փոքր քանակով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը գրեթե չեն փոփոխվել:

Ստոմատոլոգիական ծառայությունների դասում ընդգրկված են 2 ծրագրեր՝ «Ստոմատոլոգիական բժշկական օգնության ծառայություններ» և «Երեխաների ստոմատոլոգիական առաջնային կանխարգելման ծառայություններ», որոնց շրջանակներում օգտագործվել է 817.5 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 97.6%-ը: Մասնավորապես՝ 742.6 մլն դրամ տրամադրվել է ստոմատոլոգիական բժշկական օգնության ծառայությունների ֆինանսավորմանը՝ ապահովելով ծրագրի 98.9%-ը և 1%-ով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը: Ծրագրի շրջանակներում բուժօգնության դեպքերի քանակը կազմել է 279.6 հազար՝ նախորդ տարվա 283.5 հազարի դիմաց:

Երեխաների ստոմատոլոգիական առաջնային կանխարգելման ծառայությունների ծախսերը կազմել են շուրջ 74.9 մլն դրամ՝ ապահովելով 86.6% կատարողական, որը պայմանավորված է բուժօգնության դեպքերի քանակով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 6.9%-ով: Ծրագրի շրջանակներում հետազոտվել են 62.4 հազար երեխաներ՝ 2012 թվականի 67.0 հազարի դիմաց, որը պայմանավորված է 6 և 12 տարեկան երեխաների թվաքանակի նվազմամբ: Նախորդ տարվա համեմատ ստոմատոլոգիական ծառայությունների դասի ծախսերն ընդհանուր առմամբ չեն փոփոխվել:

Պարաբժշկական ծառայությունների շրջանակներում օգտագործվել է 8.3 մլրդ դրամ՝ կազմելով նախատեսվածի 99%-ը: Մասնավորապես՝ շուրջ 3 մլրդ դրամ տրամադրվել է շտապ բժշկական օգնության ծառայությունների ֆինանսավորմանը՝ կազմելով նախատեսվածի 99.6%-ը: Ծրագրի շրջանակներում պետության կողմից երաշխավորված անվճար բուժօգնության և սպասարկման շրջանակներում 2013 թվականին սպասարկվել է 456.5 հազար կանչ՝ 2012 թվականի 428.4 հազարի փոխարեն: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 1.4%-ով:

Լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտությունների ծախսերը կազմել են շուրջ 2.8 մլրդ դրամ կամ նախատեսվածի 99.4%-ը: Ծրագրի շրջանակներում 2013 թվականին իրականացվել է 4.0 մլն հետազոտություն՝ 2012 թվականին 3.9 մլն հետազոտության դիմաց: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 0.8%-ով:

Զորակոչային և նախագորակոչային տարիքի անձանց փորձաքննության և բժշկական օգնության ծառայությունների գծով 2013 թվականի պետական բյուջեի ծախսերը կազմել են ավելի քան 2.6 մլրդ դրամ կամ նախատեսվածի 97.9%-ը: Ծրագրի շրջանակներում բժիշկ-մասնագետների կողմից մատուցվել են 15-17 տարեկան պատանիների առողջության առաջնային պահպանման և

շարունակական հսկողության ծառայություններ, ապահովվել է զինկոմիսարիատներին կից բժշկական հանձնաժողովներում ընդգրկված բժիշկ-փորձագետների և բուժքույրերի աշխատավարձերի վճարումը, ինչպես նաև նշված տարիքի անձանց փորձաքննության նպատակով հիվանդանոցային բուժհաստատություններ ուղեգրման ճանապարհածախսի փոխհատուցումը: 2012 թվականի համեմատ նշված ծախսերն ավելացել են 0.9%-ով կամ շուրջ 23 մլն դրամով:

Հաշվետու տարում ՀՀ պետական բյուջեի *հիվանդանոցային ծառայությունների* ձեռքբերման ծախսերը կազմել են 27.2 մլրդ դրամ՝ 99.8%-ով ապահովելով ծրագրի կատարումը: Հիվանդանոցային ծառայությունների ծախսերի 50%-ը կամ 13.6 մլրդ դրամը կազմել են մոր և մանկան բժշկական ծառայությունների, 26.5%-ը կամ 7.2 մլրդ դրամը՝ մասնագիտացված հիվանդանոցային ծառայությունների, 23.5%-ը կամ 6.4 մլրդ դրամը՝ ընդհանուր բնույթի հիվանդանոցային ծառայությունների ծախսերը:

Ընդհանուր բնույթի հիվանդանոցային ծառայությունների դասում ընդգրկված՝ անհետաձգելի բժշկական օգնության ծախսերը կազմել են շուրջ 2.1 մլրդ դրամ՝ 99.7%-ով կատարելով ծրագրային ցուցանիշը: Ծրագրով պետության կողմից երաշխավորված անվճար հիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում 2012 թվականի 23.7 հազար հիվանդի դիմաց 2013 թվականին բուժօգնություն է ստացել 22.3 հազար հիվանդ: 2012 թվականի համեմատ նշված ծախսերը նվազել են 3%-ով:

Հաշվետու տարում պետական բյուջեից ավելի քան 4.3 մլրդ դրամ է տրամադրվել բնակչության սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկվածներին տրամադրվող բժշկական օգնության ֆինանսավորմանը՝ 99.9%-ով ապահովելով ծրագրի կատարումը: Այս ծրագրով պետության կողմից երաշխավորված անվճար հիվանդանոցային բժշկական օգնության շրջանակներում 2013 թվականին բուժօգնություն է ստացել 46.0 հազար հիվանդ՝ 2012 թվականի 45.9 հազարի դիմաց: 2012 թվականի համեմատ նշված ծախսերը նվազել են 0.8%-ով կամ 34.1 մլն դրամով:

Հաշվետու տարում 7.2 մլրդ դրամ է օգտագործվել *մասնագիտացված հիվանդանոցային ծառայությունների* ձեռքբերման նպատակով՝ ապահովելով նախատեսվածի 99.6%-ը: Տվյալ դասի շրջանակներում ֆինանսավորվել է 7 ծրագիր:

Տուբերկուլյոզի բժշկական օգնության ծառայությունների ծախսերը կազմել են ավելի քան 1.2 մլրդ դրամ՝ 99.7%-ով ապահովելով ծրագրի կատարումը: Եթե 2012 թվականին ծրագրի շրջանակներում բուժօգնություն էր ստացել 6.2 հազար հիվանդ, ապա 2013 թվականին հիվանդների թիվը կազմել է 5.9 հազար: Նախորդ տարվա համեմատ այս ծրագրի գծով ծախսերը նվազել են 1.4%-ով:

Աղիքային և այլ ինֆեկցիոն հիվանդությունների բժշկական օգնության ծառայությունների ձեռքբերման նպատակով 2013 թվականի բյուջեից տրամադրվել է ավելի քան 1.1 մլրդ դրամ՝ կազմելով նախատեսվածի 99.7%-ը: Ծրագրի շրջանակներում 2013 թվականին բուժօգնություն է ստացել 10.8 հազար հիվանդ՝ 2012 թվականի 11.5 հազարի դիմաց: 2012 թվականի համեմատ տվյալ ծախսերը նվազել են 0.3%-ով:

Սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունների բժշկական օգնության ծառայությունների գծով պետական բյուջեից տրամադրվել է 169.1 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 99.9%-ը: Ծրագրի շրջանակներում բուժօգնություն է ստացել 1.0 հազար հիվանդ՝ 2012 թվականի 1.3 հազարի փոխարեն: Նախորդ տարվա համեմատ այս ծրագրի գծով ծախսերը չեն փոփոխվել:

Հոգեկան և նարկոլոգիական հիվանդների բժշկական օգնության ծառայություններին ՀՀ պետական բյուջեից հատկացվել էր շուրջ 1.9 մլրդ դրամ՝ կազմելով նախատեսվածի 99.8%-ը: Ծրագրի շրջանակներում բուժօգնություն է ստացել 6.4 հազար հիվանդ՝ 2012 թվականի 6.2 հազարի փոխարեն: 2012 թվականի համեմատ այս ծախսերը նվազել են 1.3%-ով՝ պայմանավորված ծառայության միջին գնի նվազմամբ:

Զորակոչային և նախազորակոչային տարիքի անձանց բժշկական օգնության և փորձաքննության ծառայությունների ձեռքբերման նպատակով ծախսվել է 1.2 մլրդ դրամ՝ 98.9%-ով ապահովելով ծրագրի կատարումը: Ծրագրի շրջանակներում բուժօգնություն է ստացել 56.2 հազար հիվանդ՝ 2012 թվականի 64.7 հազարի փոխարեն: Նախորդ տարվա համեմատ այս ծախսերն աճել են 3.4%-ով:

Ուռուցքաբանական և արյունաբանական հիվանդությունների բժշկական օգնության ծառայությունների ծախսերը կատարվել են 100%-ով՝ կազմելով ավելի քան 1 մլրդ դրամ: Նշված ծրագրով պետության կողմից երաշխավորված անվճար հիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում նախորդ տարվա 12 հազար հիվանդի փոխարեն 2013 թվականին բուժօգնություն են ստացել 11.5 հազար հիվանդ: 2012 թվականի համեմատ տվյալ ծախսերն աճել են 1.1%-ով:

Վերականգնողական բժշկական օգնության ծառայություններին ուղղվել է ավելի քան 562.4 մլն դրամ՝ ամբողջովին ապահովելով նախատեսված ծավալը: Ծրագրի շրջանակներում բուժօգնություն է ստացել 4.1 հազար հիվանդ՝ 2012 թվականի 4.0 հազարի փոխարեն: 2013 թվականին ավելի մեծ թվով հիվանդների սպասարկումն ապահովվել է բուժօգնության միջին գնի նվազման հաշվին: Նախորդ տարվա համեմատ այս ծախսերը գրեթե փոփոխություն չեն կրել:

Հաշվետու տարում թրաֆիքինգի զոհերին բժշկական օգնության ծառայությունների գծով նախատեսված 2.2 մլն դրամի միջոցները չեն օգտագործվել՝ դեպքերի բացակայության պատճառով:

Մոր և մանկան բժշկական ծառայությունների դասի շրջանակներում իրականացվել են 3 ծրագրեր, որոնց ծախսերը կատարվել են 99.8%-ով՝ կազմելով 13.6 մլրդ դրամ: 2012 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 1.5%-ով:

Հաշվետու տարում 6.5 մլրդ դրամ է տրամադրվել մանկաբարձական բժշկական օգնության ծառայությունների ձեռքբերմանը՝ 99.9%-ով ապահովելով նախատեսված ցուցանիշը: Այս ծրագրով պետության կողմից երաշխավորված անվճար հիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում 2012 թվականի 60.6 հազար դեպքի դիմաց 2013 թվականին արձանագրվել է 60.2 հազար դեպք: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 1.4%-ով:

Գինեկոլոգիական հիվանդությունների բժշկական օգնության ծառայություններին ուղղվել է շուրջ 355.7 մլն դրամ կամ նախատեսվածի 96.9%-ը: Այս ծրագրով պետության կողմից երաշխավորված անվճար հիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում 2012 թվականի 5.0 հազար դեպքի դիմաց 2013 թվականին արձանագրվել է 5.1 հազար դեպք: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 2.4%-ով՝ պայմանավորված ծառայության միջին գնի նվազմամբ:

Երեխաներին բժշկական օգնության ծառայությունների ծախսերը կազմել են շուրջ 6.8 մլրդ դրամ՝ 99.9%-ով ապահովելով նախատեսվածը: Պետության կողմից երաշխավորված անվճար բուժօգնության և սպասարկման շրջանակներում 2013 թվականին բուժօգնություն են ստացել 56.3 հազար հիվանդ՝ 2012 թվականի 52.2 հազարի փոխարեն: 2013 թվականին ավելի մեծ թվով հիվանդների սպասարկումն ապահովվել է բուժօգնության միջին գնի նվազման հաշվին: 2012 թվականի համեմատ նշված ծախսերն ավելացել են 1.8%-ով:

2013 թվականին պետական բյուջեից ավելի քան 3.2 մլրդ դրամ է օգտագործվել *հանրային առողջապահական ծառայությունների ձեռքբերման նպատակով*՝ ապահովելով ծրագրի 99.7% կատարողական: Տվյալ խմբի շրջանակներում կատարվել են 8 ծրագրեր:

Նշված խմբի ծախսերում մեծ տեսակարար կշիռ ունեն հիգիենիկ և հակահամաճարակային փորձագիտական ծառայությունների գծով տրամադրված միջոցները, որոնք կազմել են շուրջ 1.9 մլրդ դրամ կամ նախատեսվածի 100%-ը: Ծրագրի նպատակն էր 2013 թվականին ապահովել.

- Հայաստանի Հանրապետության տարածքում հիգիենիկ և հակահամաճարակային պետական հսկողության միջոցառումների իրականացումը,
- ինֆեկցիոն հիվանդությունների ու թունավորումների կանխարգելման նպատակով հիգիենիկ և հակահամաճարակային միջոցառումների կազմակերպումը,
- բնակչության առողջության վրա շրջակա միջավայրի գործոնների ազդեցության սոցիալ-հիգիենիկ ուսումնասիրությունների կազմակերպումը,

- բնակչության հիգիենիկ և համաճարակային անվտանգության ապահովման կազմակերպական-մեթոդական կանոնակարգումը,

- հիգիենիկ-համաճարակաբանական նորմերի և կանոնների պատշաճ համակարգի ստեղծումը,

- բնակչության հիգիենիկ և բժշկական գիտելիքների մակարդակի բարձրացումը:

Ծրագրի շրջանակներում հակահամաճարակային միջոցառումների իրականացման նպատակով կատարվել են 4239.8 հազար փորձագիտական լաբորատոր ախտորոշիչ հետազոտություններ՝ 2012 թվականի 2991.1 հազարի փոխարեն: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 3.7%-ով՝ պայմանավորված նվազագույն աշխատավարձի բարձրացմամբ:

Հաշվետու տարում հիգիենիկ հակահամաճարակային ծառայությունների ձեռքբերմանը տրամադրվել է 204.9 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Ծրագրի շրջանակներում ինֆեկցիոն հիվանդությունների հաշվառման և դրանց նվազեցմանն ուղղված միջոցառումների իրականացման նպատակով կատարվել են 1244.3 հազար լաբորատոր ախտորոշիչ հետազոտություններ՝ 2012 թվականի 1285.7 հազարի դիմաց: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 5.9%-ով:

2013 թվականին ավելի քան 234.3 մլն դրամ է տրամադրվել հատուկ վտանգավոր վարակների կանխարգելման ծառայությունների ֆինանսավորմանը, որը կատարվել է 100%-ով: Ծրագրի շրջանակներում իրականացվել են հանրապետության տարածքում ժանտախտի, խոլերայի, տուլարեմիայի և այլ հատուկ վտանգավոր վարակների հայտնաբերման և կանխարգելման աշխատանքներ: Նախորդ տարվա համեմատ այս ծախսերն աճել են 2.4%-ով՝ պայմանավորված նվազագույն աշխատավարձի բարձրացմամբ:

ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման և բուժօգնության ծառայությունների շրջանակներում օգտագործվել է ավելի քան 116.1 մլն դրամ՝ ամբողջովին ապահովելով նախատեսված ծավալը: Ծրագրի շրջանակներում իրականացվել են ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման, ախտորոշման, բուժման, հիվանդների դիսպանսերային հսկողության և քարոզչության աշխատանքներ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 2.8%-ով:

Ամբողջությամբ օգտագործվել են վարակիչ հիվանդությունների օջախների ախտահանման ծառայությունների համար նախատեսված միջոցները, որոնք կազմել են 63.7 մլն դրամ: Ծրագրի շրջանակներում իրականացվել են վարակիչ հիվանդությունների օջախների ախտահանման աշխատանքներ՝ մարդու օրգանիզմի վրա շրջակա միջավայրի վնասակար և վտանգավոր գործոնների ազդեցության բացառման և նվազեցման նպատակով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 5%-ով՝ պայմանավորված նվազագույն աշխատավարձի բարձրացմամբ:

Արյան հավաքագրման ծառայությունների ծախսերը կազմել են շուրջ 217.4 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Ծրագրի շրջանակներում ապահովվել է արյան փոխներարկման կայանների պահպանումը, որոնց ֆունկցիոնալ խնդիրն է արյան հավաքագրումը, բաց թողումը և բուժկանխարգելիչ հիմնարկներին արյունով ու դրա բաղադրիչներով ապահովումը Հայաստանի տասը մարզերում: Երևան քաղաքը սպասարկում է «Ռ.Յոյանի անվ. արյունաբանության կենտրոն» ՓԲԸ-ն: Կենտրոնի առաջնային խնդիրներից են դիսպանսեր հսկողության տակ գտնվող արյան չարորակ հիվանդություններով տառապող հիվանդների ամբուլատոր հետազոտումը և բուժումը, արյան փոխներարկման կայանների կողմից կատարվող աշխատանքների արտագնա ստուգումը և մեթոդական օգնությունը, ինչպես նաև հղի կանանց հակառեզուս իմունոգլոբուլինի ապահովումը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 2.9%-ով՝ պայմանավորված նվազագույն աշխատավարձի բարձրացմամբ:

Իմունականխարգելման ազգային ծրագրին տրամադրվել է 465 մլն դրամ՝ ամբողջությամբ ապահովելով նախատեսված ծավալը: Ծրագրի շրջանակներում ազգաբնակչության համար ձեռք են բերվել պատվաստանյութեր և ներարկիչներ կարմրուկի, խոզուկի և այլ վարակիչ հիվանդությունների կանխարգելման համար: 2013 թվականին նախորդ տարվա համեմատ նվազել է դոնոր կազմակերպությունների աջակցությունը, և ավելացել՝ ՀՀ պետական բյուջեի միջոցներով պատվաստանյութերի ձեռքբերման ծավալը: Դրանով է բացատրվում նախորդ տարվա համեմատ ծրագրի շրջանակներում կատարված ծախսերի 37.4%-ով աճը:

Ծխելու դեմ պայքարի և շրջակա միջավայրի պահպանության պետական ծրագրի շրջանակներում ծախսվել է շուրջ 49.7 մլն դրամ՝ 82.9%-ով ապահովելով նախատեսված ցուցանիշը, որը պայմանավորված է միջոցների տնտեսմամբ: Ծրագրի շրջանակներում անցկացվել են մի շարք դրամաշնորհային մրցույթներ, որոնց միջոցով Երևան քաղաքում և ՀՀ մարզերում ֆլեշմոբերի, դասախոսությունների, հեռուստատեսությամբ հեռարձակվող հաղորդումների և այլ միջոցառումների անցկացման միջոցով իրազեկվել է ծխելու և դրա վնասակար ազդեցությունների, անչափահասների շրջանում ծխելու վտանգի, առողջ ապրելակերպ վարելու վերաբերյալ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 50.3%-ով:

Այլ դասերին չպատկանող առողջապահական ծախսերի խմբի շրջանակներում հաշվետու տարվա ընթացքում իրականացվել են ավելի քան 7.9 մլրդ դրամի ծախսեր, որոնց կատարողականը կազմել է 53.1%: Ծրագրից շեղումը հիմնականում առաջացել է Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելման և վերահսկման ծրագրի և առողջապահական համակարգի արդիականացման երկրորդ ծրագրի լրացուցիչ ֆինանսավորման ծրագրի գծով:

2013 թվականին պետական բյուջեից 40.1 մլն դրամ է տրամադրվել հանրապետությունից դուրս բուժման ուղեգրված հիվանդների ճանապարհաձախսի փոխհատուցման նպատակով՝ ապահովելով ծրագրի 99.4% կատարողական: Ծրագրի շրջանակներում այն հիվանդները, որոնց ախտորոշումը հնարավոր չէ կատարել հանրապետությունում, ուղեկցողով գործուղվում են Մոսկվա կամ ԱՊՀ երկրներ՝ ախտորոշման և հետագա բուժում նշանակելու համար: Մեկ հիվանդի ճանապարհաձախսը ուղեկցողով գնալու և վերադառնալու համար կազմում է միջին հաշվով 400 հազար դրամ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն ավելացել են 0.8%-ով: 2013 թվականին մեկնածների թիվը կազմել է 222՝ նախորդ տարվա 188-ի դիմաց:

Դժվարամատչելի ախտորոշիչ հետազոտությունների շրջանակներում ծախսվել է 410.5 մլն դրամ՝ կազմելով ծրագրի 100%-ը: Այն ուղղվել է սոցիալապես անապահով խավի հիվանդների՝ յուրահատուկ, բացառիկ բուժսարքավորումներով և տեխնոլոգիաներով անվճար ախտորոշիչ 27213 հետազոտությունների իրականացմանը՝ 2012 թվականի 29078 դիմաց: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 8.9%-ով:

Ամբողջությամբ ֆինանսավորվել են դեղաքաղաքականությունից բխող փորձագիտական և մեթոդաբանական ծառայությունները, որոնց տրամադրվել է 20.7 մլն դրամ: Ծրագրի շրջանակներում իրականացվել են մարդասիրական կարգով ներմուծվող դեղերի և «որբ դեղերի» ցանկում ընդգրկված դեղերի պետական գրանցման նպատակով փորձաքննություններ, հոգեմետ և հսկվող դեղերի պահանջարկի հաշվարկ և այլ ծառայություններ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 3.6%-ով:

Դատաբժշկական և գենետիկ ծառայությունների ձեռքբերման համար 2013 թվականի պետական բյուջեից տրամադրվել է շուրջ 340.2 մլն դրամ՝ ամբողջությամբ կատարելով ծրագիրը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը գրեթե չեն փոփոխվել:

«Պաթանատոմիական ծառայություններ» ծրագրի գծով ՀՀ պետական բյուջեի ծախսերը ևս նախատեսված ծավալով կատարվել են՝ կազմելով շուրջ 39.5 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 3.2%-ով՝ պայմանավորված նվազագույն աշխատավարձի բարձրացմամբ: Ծրագրի շրջանակներում իրականացվել է մանկական մահերի և հիվանդությունների պատճառների բացահայտում՝ մանկամահացության մակարդակը նվազեցնելու նպատակով:

Հաշմանդամ և կարիքավոր երեխաների՝ օրթեզներով և կորսետներով ապահովման ծառայությունների ծախսերը հաշվետու տարում կազմել են շուրջ 81.8 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Ծրագրի հատկացումներն ուղղվում են հենաշարժական խնդիրներով հիվանդ երեխաների բուժմանը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 6.4%-ով: Ծրագրի շրջանակներում 2013 թվականին պատրաստվել է 1595 օրթեզ և կորսետ՝ յուրաքանչյուրը համապատասխանաբար 50 հազ. և 80 հազ. դրամ արժեքով՝ 2012 թվականի 1700-ի դիմաց:

Շուրջ 75.5 մլն դրամ է տրամադրվել առողջապահության համակարգի գործունեության հանրային իրազեկման ծառայություններին՝ ապահովելով 94.4% կատարողական: Ծրագրի շրջանակներում իրականացվել է բժշկական վիճակագրության և բժշկասանիտարական տեղեկատվության հավաքագրում և վերլուծություն: ՀՀ առողջապահության նախարարությունում և ամբողջ համակարգում շարունակվել են ներդրվել համակարգչային տեխնոլոգիաներ և ցանցեր: Ներդրվել են նաև առողջապահական տեղեկատվական համակարգեր և ինտերնետային կապ: Առողջապահության համակարգի գործունեության զանգվածային տեղեկատվության, բնակչության լայն շրջանակներում հավաստի բժշկական գիտելիքների տարածման համար տպագրվում է հանրամատչելի գրույցների հավելված: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերն էական փոփոխություն չեն կրել:

Մասնագիտական, խորհրդատվական և կազմակերպամեթոդական աջակցության ծառայություններին տրամադրվել է 221.2 մլն դրամ՝ ապահովելով 99.9% կատարողական: Միջոցներն ուղղվել են 2012 թվականի Առողջապահության ազգային հաշիվների զեկույցի կազմման ծառայությունների ձեռք բերմանը, Հայաստանի առողջապահության արդյունավետության գնահատման 2012 թվականի տարեկան զեկույցի կազմման ծառայությունների ձեռքբերմանը, 2013 թվականի կլինիկական, բժշկատնտեսագիտական ստանդարտի մշակման ծառայությունների ձեռքբերմանը, պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման, ֆինանսավորման մեխանիզմների բարելավման նպատակով նորմատիվ փաստաթղթի մշակման ծառայությունների ձեռքբերմանը, սիրտ-անոթային, սպինալ և պրոֆեսիոնալ հիվանդություններով, շաքարային դիաբետով, ասթմայով տառապող հիվանդներին, ինչպես նաև ուրոլոգներին և նեֆրոլոգներին ուռուցքաբանական, նարկոլոգիական, մաշկավեներական, հոգեբուժական և հակատուբերկուլյոզային ծառայությունների գծով կազմակերպչամեթոդական օգնությանը: 2012 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 72.3%-ով՝ պայմանավորված կազմամեթոդական օգնության ծավալի ավելացմամբ:

Խմբում ընդգրկված այլ բուժօգնության և սպասարկման գծով ծառայությունները ֆինանսավորվել են ամբողջությամբ՝ կազմելով 15 մլն դրամ և պահպանվելով նախորդ տարվա մակարդակին: Ծրագրի շրջանակներում մատուցվում են հանրապետության բարձրաստիճան պաշտոնյաների բուժօգնության և սպասարկման ծառայություններ:

Մարդասիրական օգնության կարգով ստացվող դեղերի և դեղագործական արտադրանքի ստացման, մաքսագերծման և բաշխման ծառայությունները ևս ամբողջությամբ ֆինանսավորվել են՝ կազմելով 40.8 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 2.1%-ով:

Ամբողջությամբ ֆինանսավորվել են նաև տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային ծրագրի համակարգման ծառայությունները, որոնց տրամադրվել է 93.8 մլն դրամ: Ծրագրի շրջանակներում

մատուցվել են տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային ծրագրի պահպանման աջակցության ծառայություններ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն ավելացել են 2%-ով:

« Գարգալին առողջապահական կազմակերպությունների բժշկ-մասնագետների ժամանակավոր ուղեգրման ծախսերի փոխհատուցման նպատակով պետական բյուջեից տրամադրվել է շուրջ 18.8 մլն դրամ՝ ապահովելով 37.3% կատարողական՝ կապված բժշկ-մասնագետների մարզ ուղեգրման նվազ ցանկության հետ: Ծրագրի շրջանակներում 2013 թվականին « Գարգալեր են ուղեգրվել 12 բժշկ-մասնագետ՝ 22 ամիս տևողությամբ՝ նախորդ տարվա 72 ամսվա փոխարեն: Արդյունքում նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերը նվազել են 26.3%-ով:

« Բ աջակցությամբ իրականացվող առողջապահական համակարգի արդիականացման երկրորդ վարկային ծրագրի լրացուցիչ ֆինանսավորման ծրագրի շրջանակներում ծախսվել է ավելի քան 2.6 մլրդ դրամ, որը կատարվել է 56.8%-ով: Ծրագրին կառավարությունը մասնակցություն է ցուցաբերել 630.5 մլն դրամի չափով, իսկ վարկային միջոցների հաշվին ծախսերը կազմել են շուրջ 2.0 մլրդ դրամ: Շեղումը պայմանավորված է հետևյալ հանգամանքներով.

- Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոնի կառուցման համար հայտարարված շինարարական աշխատանքներն իրականացնող կապալառու կազմակերպության ընտրության միջազգային մրցույթում հաղթող չի ճանաչվել՝ գնառաջարկների բարձր լինելու պատճառով (մասնակիցների կողմից առաջարկված նվազագույն գինը շուրջ 60%-ով գերազանցում էր վարկային ծրագրի գնումների պլանով նախատեսված արժեքը): « Բ հետ համաձայնեցումից հետո 06.08.13թ. կնքվեց շինարարական աշխատանքների պայմանագիր, որի արդյունքում շինարարական աշխատանքների մի մասի իրականացումը տեղափոխվեց 2014 թվական:

- Կապանի բժշկական կենտրոնի (ԲԿ) վերանորոգման նպատակով շինարարական աշխատանքների իրականացման պայմանագիրը կնքվել է 15.05.2013թ.: Վերանորոգման աշխատանքները նախատեսված ժամկետներում իրականացնելիս ի հայտ եկան մի շարք խոչընդոտներ. ԲԿ թերապևտիկ մասնաշենքի քանդման աշխատանքների ընթացքում պարզ դարձավ, որ իրականում շենքի կոնստրուկտիվ համակարգը չի համապատասխանում նախագծային փուլում տրված շենքի տեխնիկական վիճակի մասին սեյսմիկ եզրակացությանը: Նշված փաստը հնարավոր չէր կանխատեսել մինչև շենքի քանդման աշխատանքների իրականացումը: Արդյունքում անհրաժեշտություն առաջացավ իրականացնել կրկնակի սեյսմիկ եզրակացություն, ինչի հիման վրա մշակվեցին շենքի փոփոխված նախագծային փաստաթղթեր, համաձայն որոնց նախատեսվեցին ուժեղացման աշխատանքներ: Նշված ընթացակարգերը « Սյունիքի մարզի Կապանի ԲԿ վերանորոգման շինարարական աշխատանքները ուշացրեցին շուրջ 2 ամսով: Արդյունքում 2013 թվականին պլանավորված շինարարական աշխատանքների մի մասի իրականացումը

տեղափոխվեց 2014 թվական:

- Բերդի, Կապանի և Մեղրու բժշկական կենտրոնների համար նախատեսված էր 2013 թվականին ձեռք բերել բժշկական սարքավորումներ և կահույք: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Բերդի ԲԿ վերանորոգման շինարարական աշխատանքների ավարտը նախատեսվում է 2014 թվականին, իսկ Կապանի ԲԿ վերանորոգման և Մեղրու ԲԿ կառուցման համար շինարարական աշխատանքների ավարտը՝ 2015 թվականին, 2013 թվականին ապրանքները ձեռք բերելու և պահեստավորելու փոխարեն առավել նպատակահարմար է գտնվել նշված բժշկական կենտրոնների համար բժշկական սարքավորումները և կահույքը ձեռք բերել ԲԿ-ներում տարվող շինարարական աշխատանքների ավարտից հետո: Թերակատարումները պայմանավորված են նաև նրանով, որ վարկային ծրագրի շրջանակներում 2013 թվականին հայտարարված մրցույթների և կնքված պայմանագրերի շրջանակներում առաջացել են մի շարք տնտեսումներ՝ կապված մրցութային փուլում նախահաշվային գնից ավելի ցածր առաջարկի, բժշկական սարքավորումների և ԲԿ-ների շենքերի վերանորոգման կամ կառուցման նպատակով կնքված պայմանագրերի շրջանակներում առաջացած տնտեսումների հետ:

ՀԲ աջակցությամբ իրականացվող առողջապահական համակարգի արդիականացման երկրորդ վարկային ծրագրի լրացուցիչ ֆինանսավորման ծրագրի շրջանակներում 2013 թվականի ընթացքում իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

1. Ընտանեկան բժշկության զարգացում: ՀՀ Արմավիրի մարզի՝ Աղավնատուն, Սարդարապատ, Բաղրամյան, Արարատի մարզի՝ Նոր Խարբերդ, Նորաբաց, Սայաթ-Նովա, Կոտայքի մարզի՝ Վերին Պտղնի, Սուլակ, Ակունք, Լեռնանիստ, Գեղարքունիքի մարզի՝ Լիճք, Վարդաձոր և Լոռու մարզի Ախթալա համայնքներում կառուցվել և շահագործման են հանձնվել նոր ամբուլատորիաներ: Ավարտվել են 2012թ. սեպտեմբերին մեկնարկած Երևանի Էրեբունի բժշկական քոլեջի ընտանեկան բուժքրոյության ամբիոնի վերակառուցման աշխատանքները:

2. Հիվանդանոցային համակարգի օպտիմալացում և արդիականացում: Տարածաշրջանային հիվանդանոցների, պոլիկլինիկաների և ծննդատների միավորման արդյունքում մարզերում ստեղծվել են բժշկական կենտրոններ, միավորվել են կրկնվող, միանման գործառույթներ իրականացնող և թերբեռնված ծառայությունները, օտարվել են չօգտագործվող կամ անարդյունավետ օգտագործվող տարածքները: Հաշվետու ժամանակահատվածում տվյալ բաղադրիչի շրջանակներում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

- շարունակվել են ՀՀ Տավուշի մարզի Բերդի բժշկական կենտրոնի պոլիկլինիկական և ինֆեկցիոն մասնաշենքերի վերանորոգման և կցակառուցյի կառուցման շինարարական աշխատանքները,

- ավարտվել են ՀՀ Կոտայքի մարզի Աբովյանի բժշկական կենտրոնի հիմնանորոգման աշխատանքները: Տարեվերջին մեկնարկել և ներկայում ավարտին է մոտենում վերոնշյալ կենտրոնի բժշկական սարքավորումներով, կահույքով և պարագաներով հագեցման գործընթացը,

- գործնականում ավարտվել են ՀՀ Լոռու մարզի Ալավերդու բժշկական կենտրոնի հիվանդանոցային մասնաշենքի պոլիկլինիկական հատվածի հիմնանորոգման աշխատանքները: Ավարտին է մոտենում նաև վերոնշյալ կենտրոնի՝ բժշկական սարքավորումներով, կահույքով և պարագաներով հագեցման գործընթացը,

- ընթանում են ՀՀ Սյունիքի մարզի Կապանի բժշկական կենտրոնի վերակառուցման աշխատանքները:

- ընթացքի մեջ են գտնվում Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոնի կառուցման աշխատանքները, որոնց ավարտը նախատեսված է 2015 թվականին:

- Առողջապահական համակարգի արդիականացում վարկային ծրագրի շրջանակներում խնայված միջոցների հաշվին ընդգրկվել են ՀՀ Գեղարքունիքի մարզի Ճամբարակի առողջության կենտրոնի արդիականացման աշխատանքները,

- Հաշվետու ժամանակահատվածում Գորիսի և Գավառի նորակառույց բժշկական կենտրոնների համար ձեռք են բերվել անհրաժեշտ սարքավորումներ,

- ավարտվել են ՀՀ Գեղարքունիքի մարզի Ճամբարակի ԲԿ առողջության կենտրոնի հիմնանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքները:

ՀԲ աջակցությամբ իրականացվող Ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելման և վերահսկման վարկային ծրագրի շրջանակներում ծախսվել է 837.6 մլն դրամ, որը կատարվել է 15.6%-ով: Համաշխարհային բանկի կողմից ծրագիրն էֆեկտիվ է ճանաչվել 2013 թվականի հուլիսի 22-ին: Ծրագրին կառավարությունը մասնակցություն է ցուցաբերել 167.5 մլն դրամի չափով, իսկ վարկային միջոցները կազմել են շուրջ 670.1 մլն դրամ: Ծրագիրը մեկնարկել է 2013 թվականին, նպատակն է՝ բարելավել մոր և մանկան առողջության պահպանման ծառայությունները և առողջության առաջնային պահպանման (ԱԱՊ) օղակում ընտրված ոչ վարակիչ հիվանդությունների վաղ հայտնաբերումը և վերահսկումը, ինչպես նաև ծրագրում ընդգրկված հիվանդանոցներում առողջապահական ծառայությունների որակը և արդյունավետությունը: 2013 թվականին վարկային ծրագրի շրջանակներում՝

- ավարտվել է ՀՀ Շիրակի մարզի Գյումրու նորակառույց և Երևանի քաղաքապետարանի Նորք-Մարաշ բժշկական կենտրոնների համար նախատեսված անգիոգրաֆիկ սարքերի ձեռքբերման գործընթացը: Սարքավորումները տեղադրվել և շահագործվում են: Այսպիսով, կատարվել է ՀՀ կառավարության գերակա խնդիրներից մեկը՝ ՀՀ Շիրակի մարզում սրտային ինվազիվ վիրաբուժության ծառայության հիմնումը,

- մեկնարկել է ծրագրում ընդգրկված Վանաձորի բժշկական կենտրոնի ծննդատան մասնաշենքի կառուցման գործընթացը,

- Վանաձորի բժշկական կենտրոնի կառուցման կապալառու կազմակերպության ընտրության նպատակով՝ հայտարարվել էր միջազգային մրցույթ, որը գտնվում է գնահատման փուլում:

Ծրագրի շրջանակներում իրականացվել են նաև խորհրդատվական աշխատանքներ, որոնց նախապատրաստման ուղղությամբ իրականացվել են հետևյալ գործընթացները.

- մշակվել և շահագրգիռ կողմերի համաձայնությանն է ներկայացվել Ուռուցքաբանության գերազանցության կենտրոնի ճառագայթային բուժման մասնաշենքի նախագծման և սարքավորումներով հագեցման առաջադրանքը՝ վերջինների տեխնիկական մասնագրերով,

- 2013 թվականի երկրորդ կիսամյակի ընթացքում իրականացվել են Հայաստանում ոսկրածուծի և ցողունային բջիջների փոխպատվաստման ու բարձր դեղաչափային քիմիաթերապիայի բաժանմունքի ստեղծման նախապատրաստական աշխատանքները: Մասնավորապես՝ ՀԲ հետ բանակցությունների ընթացքում համաձայնեցվել է աշխատանքների ձևաչափը և որոշվել օգտվել միջազգային խորհրդատուի ծառայություններից՝ աշխատանքներն առավել արդյունավետ կազմակերպելու նպատակով: Մշակվել է անհատ միջազգային փորձագետի աշխատանքների նկարագիրը, որը հաստատվել է ՀԲ կողմից:

ԱՄՆ Հիվանդությունների կանխարգելման և վերահսկման կենտրոնի կողմից իրականացվող սեզոնային գրիպի համաճարակաբանական ցանցի հիմնման և արձագանքման դրամաշնորհային ծրագրի շրջանակներում ծախսվել է շուրջ 117.8 մլն դրամ, որը կատարվել է 80.2%-ով:

ՀԲ աջակցությամբ իրականացվող «Հիվանդությունների կանխարգելման և վերահսկման ծրագրի շրջանակներում առողջապահության կատարողականի վրա հիմնված ֆինանսավորման ծրագրի նախապատրաստման համար» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում ծախսվել է 51.6 մլն դրամ, որը կատարվել է 58.7%-ով: Ծրագրին կառավարությունը մասնակցություն է ցուցաբերել 2.4 մլն դրամի չափով, իսկ դրամաշնորհային միջոցները կազմել են 49.2 մլն դրամ: Դրամաշնորհային համաձայնագիրը հաստատվել է 2013 թվականի հուլիսի 2-ին: Ցածր կատարողականը պայմանավորված է մի շարք աշխատանքներ 2014 թվական տեղափոխելու հանգամանքով: Մասնավորապես՝ երկարացվել են ՀՀ ԱՆ առողջապահության ազգային ինստիտուտի հետ «Ոչ վարակիչ հիվանդությունների (ՈՎՀ) և Մոր և մանկան առողջության (ՄՄԱ) ուղեցույցների և կրթական նյութերի/ձեռնարկների մշակում» հանձնարարականի և «Փոքր և միջին բիզնես» ՈԱԿ-ի հետ «Հայաստանի ԱԱՊ օղակում կատարողականի վրա հիմնված ֆինանսավորման (ԿՀՖ) մեխանիզմի ներկա իրավիճակի գնահատում և ԿՀՖ-ի իրականացման համար անհրաժեշտ փաստաթղթերի և կանոնակարգերի մշակում և ԿՀՖ-ի բաղադրիչի արդյունքների ստուգում» հանձնարարականի իրականացման ժամկետները: ՀՀ ԱՆ պետական առողջապահական

գործակալության կարողություններն ամրապնդելու համար նախատեսվում է համակարգչային սարքավորումների տրամադրում, որոնց մատակարարման պայմանագիրը կնքվել է 2014 թվականին:

ՀԲ աջակցությամբ իրականացվող առողջապահական համակարգի արդիականացման երկրորդ վարկային ծրագրի շրջանակներում ծախսվել են 3 մլն դրամ վարկային միջոցներ (100%), որը վճարվել է «Սոս Աուդիտ» ՍՊԸ-ին՝ «Առողջապահական համակարգի արդիականացում» վարկային ծրագրի 2012 թվականի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար: Ծրագիրն ավարտվել է 2012 թվականի դեկտեմբերի 31-ին:

Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման ծրագրի շրջանակներում իրականացվել է ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի պահպանումը, որի ծախսերը կազմել են 1.1 մլրդ դրամ՝ ապահովելով 99.1% կատարողական: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերն աճել են 8.8%-ով՝ պայմանավորված աշխատավարձի, էներգետիկ ծառայությունների, տրանսպորտային նյութերի ձեռք բերման և գործուղումների ծախսերի ավելացմամբ: 2013 թվականին ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատանքի տեսչությունն ընդգրկվել է ՀՀ առողջապահության նախարարության պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչության կազմում:

Արտաբյուջետային միջոցների հաշվին իրականացվող՝ ՀՀ-ում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցության շրջանակներում ծախսվել է ավելի քան 512 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 84.6%-ը: Ծրագրից շեղումը հիմնականում պայմանավորված է տնտեսումներով: Ծրագրի շրջանակներում 2013 թվականին իրականացվել են հետևյալ միջոցառումները՝

- ՄԻԱՎ-ի ախտորոշման համար թեստ-հավաքածուների և հակառետրովիրուսային բուժման նպատակով դեղամիջոցների ձեռքբերում (124 մլն ՀՀ դրամ),
- օպորտունիստական վարակների բուժման նպատակով դեղամիջոցների, ախտորոշիչ նյութերի և լաբորատոր ծախսանյութերի ձեռքբերում (132 մլն ՀՀ դրամ),
- ՄԻԱՎ/ՁԻԱՀ վարակի վերաբերյալ դասընթացների կազմակերպում,
- ներուժի զարգացման նպատակով սեմինար-վարժանքների կազմակերպում,
- ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության աշխատակիցների կողմից 9 քրեակատարողական հիմնարկներում կրթական միջոցառումների, ՄԻԱՎ-ի նկատմամբ խորհրդատվության և հետազոտության իրականացում,
- Հոգեբուժական բժշկական կենտրոնի նարկոլոգիական դիսպանսերում, Լոռու մարզային հոգեոնյարդաբանական դիսպանսերում, ինչպես նաև 7 քրեակատարողական հիմնարկներում մեթադոնային փոխարինող բուժման ծրագրի իրականացում,

- մեթադոնային փոխարինող բուժման համար դեղորայքի ձեռքբերում (78 մլն ՀՀ դրամ),
- ՄԻԱՎ-ի վերաբերյալ խորհրդատվության և հետազոտության (ԽՀ) կետերին և լաբորատորիաներին տեխնիկական աջակցության տրամադրում,
- ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի վերաբերյալ համաճարակաբանական հետազոտությունների իրականացում,
- մոնիթորինգի և գնահատման ազգային միասնական համակարգի հզորացում,
- ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոնի 3-րդ և 4-րդ հարկերում տեղադրված բուժական և ախտորոշիչ բաժանմունքների վերանորոգման աշխատանքներ (5 մլն ՀՀ դրամ):

Ծրագրի շրջանակներում 2013 թվականին ավելի քան 46000 հղիների շրջանում իրականացվել է ՄԻԱՎ վարակի վերաբերյալ հետազոտություն, 579 հիվանդ ստացել է հակառետրովիրուսային բուժում, 301 ներարկային թմրամիջոցներ գործածողներ ստացել են մեթադոնային փոխարինող բուժում, 2267 դատապարտյալ ստացել են ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման մինիմալ փաթեթը: Իրականացվել է 204 բուժաշխատողների, 11 լաբորատոր մասնագետների և 13 պետական և ոչ պետական ոլորտի աշխատողների վերապատրաստում:

ՀՀ առողջապահության նախարարության արտաբյուջետային միջոցների հաշվին իրականացվող՝ «Առողջապահության համակարգի հզորացում» ծրագրի շրջանակներում 2013 թվականին ծախսվել է 119.7 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 83.3%-ը, որը հիմնականում պայմանավորված է տնտեսումներով: Ծրագրի շրջանակներում իրականացվել են հետևյալ միջոցառումները.

- «Ակադեմիկոս Ս. Ավդաբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի կողմից վերանայվել և լրամշակվել են ազգային առողջապահական տեղեկատվական համակարգի հաշվետվական և հաշվառման ձևերը,
- «Պացիենտների իրավունքների պաշտպանության կենտրոն» ՀԿ-ն շարունակել է ծառայություններ մատուցել պալիատիվ/ամոքիչ խնամքի ոլորտում, իրականացվել են պալիատիվ խնամքի փորձարարական աշխատանքները պիլոտային տեղամասերում, կազմակերպվել են պալիատիվ խնամքի դասընթացներ բժիշկների և բուժքույրերի համար,
- «Պրոֆ. Ռ. Յոլյանի անվան արյունաբանական կենտրոն» ՓԲԸ-ի միջոցով մշակվել են «Մարդու արյան և դրա բաղադրամասերի դոնորության և փոխներարկումային օգնության մասին» օրենքից բխող ենթաօրենսդրական կարգերը, շարունակվել են արյան անվարձահատույց դոնորությունը խրախուսող կրթական նյութերի մշակումը և բաշխումը, կազմակերպվել է արյան անվարձահատույց դոնորությունը խրախուսող քարոզարշավ,
- «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի միջոցով կազմակերպվել են բնակչության շրջանում հակաբիոտիկների ռացիոնալ կիրառմանը նվիրված քարոզարշավ և դեղերի կողմնակի ազդեցության հայտագրման հզորացմանը նվիրված

հանդիպումներ, ինչպես նաև համաձայն ԱՀԿ-ի դասակարգմանը ստեղծվել է հակամանրէային դեղերի կիրառման վերաբերյալ տվյալների բազա:

2013 թվականի ընթացքում ձեռք են բերվել և բաշխվել են՝ արյան բաղադրամասերի տեղափոխման արկղ/կոնտեյներ-սառնարան (6 հատ), արյան հավաքագրման կշեռք-ճոճանակ (5 հատ), արյան բաղադրամասերի ավտոմատ էքստրակտոր (2 հատ), բժշկական ծախսանյութեր:

ՀՀ առողջապահության նախարարության արտաբյուջետային միջոցների հաշվին իրականացվող՝ «Հանուն պատվաստումների և իմունիզացիայի» միջազգային դաշինքի աջակցությամբ իրականացվող առողջապահության համակարգի հզորացում» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում ծախսվել է շուրջ 14.5 մլն դրամ՝ կազմելով նախատեսված ծախսերի 44.5%-ը, որը պայմանավորված է տեղեկատվական ծառայությունների ձեռքբերման համար հայտարարված մրցույթը չկայանալու և պնևմակոկային պատվաստումների ներդրման դասընթացների առաջին փուլը Առողջապահության համաշխարհային կազմակերպության կողմից ֆինանսավորվելու հանգամանքներով: Ծրագրի շրջանակներում իրականացվել են պնևմակոկային պատվաստումների ներդրման դասընթացներ, խորհրդակցությունների կազմակերպում և իրականացում, մարզերի բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում իմունականխարգելման գործընթացի մոնիթորինգ, իմունականխարգելման գործընթացում կիրառվող հաշվետվական ձևաթղթերի, բուժքույրերի համար պատվաստումների պլանավորման մատյանների, ծնողների համար իրազեկման նյութերի, կանխարգելիչ պատվաստումների վկայականի, հակացուցումների, կանխարգելիչ պատվաստումների ազգային օրացույցի, ինչպես նաև անվտանգ պատվաստումների վերաբերյալ պաստառների տպագրման աշխատանքներ:

Արտաբյուջետային միջոցների հաշվին իրականացվող՝ Տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային ծրագրի ուժեղացման և դեղակայուն տուբերկուլյոզի կառավարման ընդլայնման ծրագրին տրամադրվել է շուրջ 1.1 մլրդ դրամ՝ կազմելով նախատեսվածի 83.8%-ը: Շեղումը հիմնականում առաջացել է միջոցների տնտեսման արդյունքում: Հաշվետու տարվա ընթացքում ծրագրի շրջանակներում ներմուծվել է անհրաժեշտ քանակով հակատուբերկուլյոզային դեղորայք, «Հայկական կարմիր խաչի ընկերություն» հասարակական կազմակերպության և «Տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային գրասենյակ» ՊՈԱԿ-ի հետ կնքվել են դրամաշնորհային պայմանագրեր և իրականացվել են հետևյալ միջոցառումները.

- տուբերկուլյոզով հիվանդներին տրամադրվել է սոցիալական աջակցություն՝ սննդային և հիգիենիկ փաթեթների տեսքով,
- ծայրահեղ կարիքավոր տուբերկուլյոզով հիվանդներին ձմռան 3.5 ամիսների համար տրամադրվել է ջեռուցման ծախսերի փոխհատուցում,

• Հանրապետական տուբերկույրոզային դիսպանսերում բուժվող հիվանդներին տրամադրվել են թարմ սննդի փաթեթներ,

• ուղղակիորեն վերահսկվող բուժման ռազմավարության շրջանակներում դեղորայքի ընդունումը բուժաշխատողի ներկայությամբ կազմակերպելու նպատակով հիվանդներին կամ բուժաշխատողներին տրամադրվել է տրանսպորտային ծախսերի փոխհատուցում,

• տուբերկույրոզի ազգային գրասենյակի աշխատանքների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով տրամադրվել է լրացուցիչ ֆինանսական աջակցություն, գրասենյակի աշխատակիցների կողմից իրականացվել են ստուգայցեր տուբերկույրոզային հաստատություններ, ներդրվել է տուբերկույրոզային ծառայությունների կառավարման (ETB) էլեկտրոնային ծրագիրը, իրականացվել են մասնագետների վերապատրաստման դասընթացներ տուբերկույրոզի ոլորտում,

• գնվել են լաբորատոր և վարակի վերահսկման պարագաներ,

• պերիֆերիկ լաբորատորիաներից իրականացվել է խորխի նմուշների տեղափոխում ազգային ռեֆերենս լաբորատորիա, ինչպես նաև վերազգային ռեֆերենս լաբորատորիա, որը գտնվում է Գերմանիայի Բորստել քաղաքում:

ՀՀ առողջապահության նախարարության արտաբյուջետային միջոցների հաշվին իրականացվող՝ «Աջակցություն շտապ բուժօգնության ծառայություններին» ԱՄՆ ՄԶԳ դրամաշնորհային ծրագրին տրամադրվել է շուրջ 90.4 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 58.4%-ը: Շեղումը կապված է ծրագրի նախահաշիվը ուշ հաստատվելու հետ: Միջոցներն ուղղվել են գրասենյակի պահպանմանը, ձեռք են բերվել գրասենյակային կահույք և համակարգչային տեխնիկա:

Հանգիստ, մշակույթ և կրոն

2013 թվականին ՀՀ պետական բյուջեից *հանգստի, մշակույթի և կրոնի* ոլորտի ծրագրերի իրականացմանը տրամադրվել է 18.6 մլրդ դրամ՝ կազմելով նախատեսված ծախսերի 101.3%-ը: Ծրագրի գերազանցումը պայմանավորված է ավստրիական «Վագներ Բիրո Ստեյջ Սիստեմս» ընկերության կողմից Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ակադեմիական թատրոնի և Ա. Խաչատրյանի անվան համերգասրահի դահլիճների տեխնիկական վերազինման ծրագրի կատարողականով: Նախորդ տարվա համեմատ մշակույթի ոլորտի ծախսերի 18.3%-ով անկումը հիմնականում պայմանավորված է արվեստի բնագավառի ծախսերի նվազմամբ:

Հաշվետու տարվա ընթացքում *հանգստի և սպորտի* ծառայություններին տրամադրվել է շուրջ 1.6 մլրդ դրամ՝ 99.6%-ով ապահովելով տարեկան ծրագիրը: Նախորդ տարվա համեմատ խմբի ծախսերն աճել են 8%-ով՝ հիմնականում պայմանավորված «Լավագույն մարզական ընտանիք» մրցույթի անցկացման և Եվրոպայի երիտասարդության օլիմպիական փառատոններին մասնակցության ապահովման ծախսերի աճով:

2013 թվականին ՀՀ առաջնություններին և միջազգային միջոցառումներին մասնակցության ապահովման համար մարզիկների նախապատրաստման և առաջնությունների անցկացման ծրագրով նախատեսված միջոցները նպատակաուղղվել են միջոցառումների քանակի ավելացմանը և որակի բարձրացմանը, մարզիկների բժշկական հետազոտման աշխատանքների բարելավմանը, մարզաձևերի ՀՀ ազգային հավաքական թիմերը երիտասարդ հեռանկարային մարզիկներով համալրմանը և օլիմպիական վարկանիշային միջազգային մրցումներին նախապատրաստմանը: Այս ծրագրի գծով 2013 թվականին տրամադրվել է 929.7 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Ծրագրի շրջանակներում հաշվետու տարում անցկացվել են Հայաստանի Հանրապետության 92 առաջնություններ, որոնց մասնակցել է 9640 մարզիկ: Աշխարհի, Եվրոպայի առաջնություններին, գավաթի խաղարկություններին և միջազգային մրցաշարերին նախապատրաստվելու նպատակով ՀՀ հավաքական թիմերում ընդգրկված մարզիկների համար կազմակերպվել են 122 ուսումնամարզական հավաքներ, որոնց մասնակցել է 2900 մարդ: ՀՀ հավաքական թիմերում ընդգրկված 1900 մարզիկ մասնակցել են աշխարհի, Եվրոպայի առաջնությունների 156 մրցաշարերի: Նախորդ տարվա համեմատ ՀՀ առաջնություններին և միջազգային միջոցառումներին մասնակցության ապահովման համար մարզիկների նախապատրաստման և առաջնությունների անցկացման ծախսերն աճել են 5.1%-ով, ինչը պայմանավորված է միջազգային միջոցառումների անդամավճարների և գների աճով:

2013 թվականին շախմատիստների պատրաստման նպատակով 57.4 մլն դրամ է տրամադրվել «Հայաստանի շախմատային ակադեմիա» հիմնադրամին: Միջոցներն օգտագործվել են

նախատեսված ողջ ծավալով և նախորդ տարվա համեմատ աճել են 3.5%-ով: Հիմնադրամի նպատակներն ու խնդիրներն են Հայաստանի ամբողջ տարածքում տաղանդաշատ երեխաների բացահայտումը, նրանց անվճար կրթումը, միջազգային մրցաշարերի և միջոցառումների կազմակերպման շնորհիվ շախմատի մասսայականացումը:

Նախատեսված ողջ ծավալով իրականացվել են նաև հետևյալ 8 ծրագրերը:

Միջազգային մարզական միջոցառումների հաղթողներին և մրցանակակիրներին դրամական մրցանակների հանձնման նպատակով պետական աջակցությունը կազմել է 50 մլն դրամ և նախորդ տարվա համեմատ փոփոխություն չի կրել: Ծրագրի շրջանակներում դրամական մրցանակներ են հանձնվել օլիմպիական խաղերում, աշխարհի, Եվրոպայի առաջնություններում և գավաթի խաղարկություններում հաղթած մարզիկներին, նրանց անձնական մարզիչներին, հավաքականի գլխավոր մարզիչներին, երկրորդ մարզիչներին, բժիշկներին և մարզադպրոցներին:

Հաշմանդամային սպորտին առնչվող ծառայություններին պետական աջակցությունը կազմել է 9 մլն դրամ: Նշված ծախսերը նախորդ տարվա համեմատ աճել են 9.7%-ով, ինչը պայմանավորված է 2012 թվականին նախատեսված մեկ միջոցառումը չանցկացնելու հանգամանքով: Ծրագրի շրջանակներում աջակցություն է ցուցաբերվել 4 հասարակական կազմակերպությունների, իրականացված միջոցառումներին մասնակցել են 328 հաշմանդամ մարզիկներ:

Նավամոդելային սպորտի զարգացման նպատակով տրամադրվել է 5.5 մլն դրամ: 2013 թվականին Ֆրանսիայում կայացած նավամոդելային սպորտի աշխարհի առաջնությանը մասնակցելու համար պատրաստվել են «Նավիգա» համաաշխարհային կազմակերպության պահանջներին համապատասխան մրցունակ մոդելներ, որոնք առաջնությանը շահել են արծաթե ու բրոնզե մեդալներ: Կազմակերպվել են աշխարհի առաջնության նախապատրաստական ուսումնամարզական հավաքներ, փորձարկումներ, մարզումներ: Տվյալ ծախսերը նախորդ տարվա համեմատ փոփոխություն չեն կրել:

Հավաքական թիմերի ավագ մարզիչների վարձատրության և աշխարհի չեմպիոններին թոշակի հատկացման նպատակով «ՀՀ հավաքական թիմերի կենտրոն» ՓԲԸ-ին տրամադրվել է 26 մլն դրամ պետական աջակցություն: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը գրեթե չեն փոփոխվել:

Եվրախորհրդի սպորտի մասին համաձայնագրին անդամակցության նպատակով տրամադրվել է 3.7 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 7%-ով՝ պայմանավորված արտարժույթի փոխարժեքի աճով:

Հակադոպինգային համաաշխարհային գործակալությանն անդամակցելու նպատակով ՀՀ 2013 թվականի պետական բյուջեից տրամադրվել է շուրջ 3.1 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 7%-ով՝ պայմանավորված արտարժույթի փոխարժեքի աճով:

Օլիմպիական խաղերում, աշխարհի և Եվրոպայի առաջնություններում բարձր արդյունքների հասած ՀՀ հավաքական թիմերի մարզիկներին և նրանց մարզիչներին ՀՀ նախագահի անվանական թոշակ հատկացնելու նպատակով տրամադրվել է 150 մլն դրամ՝ պահպանվելով նախորդ տարվա մակարդակին:

Բուլղարիայում կայանալիք խուլերի ամառային օլիմպիադային մասնակցության ապահովման նպատակով տրամադրվել է 7.9 մլն դրամ: Տվյալ ծրագիրը ֆինանսավորվում է 2013 թվականից:

Եվրոպայի երիտասարդության օլիմպիական փառատոններին մասնակցության ապահովմանը տրամադրվել է 61.8 մլն դրամ՝ կազմելով ծրագրի 96.9%-ը: Ծրագիրն անցկացվում է երկու տարին մեկ անգամ:

Նախագորակոչային և զորակոչային տարիքի երիտասարդության հանրապետական ռազմամարզական խաղերի անցկացման նպատակով տրամադրվել է շուրջ 7 մլն դրամ՝ կազմելով ծրագրի 99.9%-ը: Խաղերն անցկացվել են 4 փուլով, մասնակցել են հանրակրթական դպրոցների աշակերտներ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը գրեթե չեն փոփոխվել:

Ուսանողական մարզական միջոցառումներին տրամադրվել է 22.4 մլն դրամ՝ կազմելով ծրագրի 97.5%-ը: Հայաստանի ուսանողական մարզական պատվիրակությունը մասնակցել է 27-րդ համաշխարհային ունիվերսիադային 10 մարզաձևում՝ շահելով 10 մեդալ՝ 1 ոսկե, 5 արծաթե և 4 բրոնզե: Նշված ծրագիրն անցկացվում է 2 տարին մեկ անգամ:

ՀՀ մարզերում և ԼՂՀ-ում հանրապետական մարզական փառատոնի անցկացման ծախսերը կազմել են 6.9 մլն դրամ կամ ծրագրի 99.3%-ը, որը նախորդ տարվա համեմատ գրեթե չի փոփոխվել: Փառատոնն անցկացվել է ՀՀ 48 քաղաքային համայնքներում և ԼՂՀ-ի Ստեփանակերտ քաղաքում, որին մասնակցել է 20000-ից ավելի մարդ:

ՀՀ նախագահի մրցանակի համար «Լավագույն մարզական ընտանիք» մրցույթի անցկացման նպատակով տրամադրվել է 153.8 մլն դրամ՝ կազմելով ծրագրի 98.7%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 133.1%-ով, ինչը պայմանավորված է մասնակիցների մեկ տարիքային խմբի ավելացմամբ:

Մանկապատանեկան սպորտի մասսայականացման միջոցառումների իրականացման նպատակով հատկացվել է 7.3 մլն դրամ՝ կազմելով ծրագրի 91.6%-ը: Ծրագրի նպատակը մանկապատանեկան սպորտի, մասնավորապես ֆուտբոլի մասսայականացումն է, որի շրջանակներում կազմակերպվել են 3 փուլով դասընթացներ՝ մարզիչների և ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչների համար: Ծրագրին մասնակցել են 180 մարզիկներ և հանրակրթական դպրոցների ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչներ՝ ՀՀ տարբեր մարզերից: 2012 թվականի համեմատ նշված ծախսերը նվազել են 8.4%-ով, ինչն առաջացել է տրանսպորտային ծախսերի տնտեսման արդյունքում:

ՀՀ հավաքական թիմերին մարզահագուստով և մարզահանդերձանքով ապահովման նպատակով տրամադրվել է 51.9 մլն դրամ՝ կազմելով ծրագրի 97.9%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 36.5%-ով, որը գների աճի և միջազգային ստանդարտների համապատասխանեցնելու արդյունք է:

Հաշվետու տարում ՀՀ պետական բյուջեից 10.5 մլրդ դրամ տրամադրվել է *մշակութային ծառայությունների* խմբի ծրագրերի ֆինանսավորմանը՝ կազմելով նախատեսվածի 103.2%-ը: 2012 թվականի համեմատ մշակութային ծառայությունների ծախսերը նվազել են 30.5%-ով՝ հիմնականում պայմանավորված արվեստի, մասնավորապես՝ ավստրիական «Վագներ Բիրո Ստեյջ Սիստեմս» ընկերության կողմից Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ակադեմիական թատրոնի և Ա. Խաչատրյանի անվան համերգասրահի դահլիճների տեխնիկական վերազինման և «Հայկական տպագրության 500-ամյակ» և «Երևանը՝ 2012 թվականին գրքի համաշխարհային մայրաքաղաք» միջոցառումների իրականացման ծախսերի նվազմամբ:

Հաշվետու տարում շուրջ 1.2 մլրդ դրամ ուղղվել է *գրադարանների* դասի ֆինանսավորմանը, որն իրականացվել է 99.8%-ով: Նախորդ տարվա համեմատ գրադարաններին պետական բյուջեից տրամադրված միջոցներն ավելացել են 6.7%-ով՝ հիմնականում պայմանավորված գրադարաններին պետական աջակցության աճով:

2013 թվականին 1.2 մլրդ դրամ ուղղվել է 16 գրադարանային ծառայություններին: Հաշվետու տարում գրադարանների գործունեության առաջնային ուղղություններն են համարվել նրանց գործունեության պայմանների բարելավումն ու մշակութային ժառանգության պահպանության ապահովումը, տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման գործընթացների իրականացումը, գրադարանային հավաքածուների պետական հաշվառման աշխատանքները: Տեղեկատվության և ծառայությունների մատչելիության ապահովման ուղղությամբ նորացվել են գրադարաններից օգտվողներին տրամադրվող էլեկտրոնային-տեղեկատվական աղբյուրները: Հաշվետու տարում մշակութային ծառայությունների մատչելիությունն ապահովելու նպատակով «Բիբլիոթեկա» շրջիկ գրադարան-ավտոմեքենան շրջել է ՀՀ Արագածոտնի մարզի քաղաքային և գյուղական համայնքներում՝ բնակչության գրադարանային տեղեկատվական սպասարկման ծառայություն իրականացնելու և գրադարանային հավաքածուները համալրելու նպատակով: «Արև» տեղեկատվական հաղորդակցման ծրագրի շրջանակներում կոյր և թույլ տեսնող անձանց հնարավորություն տրվեց համակարգչի միջոցով տառերն ու թվերը «կարդալ» լսողական խորհրդանշանների միջոցով: Տեղեկատվական հաղորդակցման այս ծրագիրը 2013 թվականին ներդրվել է Տավուշի մարզային գրադարանում: «Հայաստանյան գրադարանների միացյալ ավտոմատացված ցանց» ծրագրի շրջանակներում մասնակից 12 գրադարանների կողմից համահավաք քարտարանների տվյալների շտեմարանում շարունակվել են մուտքագրվել

մատենագիտական գրառումներ: Նախորդ տարվա համեմատ գրադարաններին պետական աջակցությունն ավելացել է 7%-ով՝ հիմնականում պայմանավորված նվազագույն աշխատավարձի, էլեկտրաէներգիայի և գազի սակագների բարձրացմամբ:

2013 թվականին հրատարակությունների գրանցման, հաշվառման և մատենագիտական ծառայությունների մատուցման համար պետական բյուջեից Հայաստանի ազգային գրապալատին տրամադրվել է 59.4 մլն դրամ, որն իրականացվել է նախատեսված ծավալով: Ծրագրով նախատեսված հատկացումներն ուղղվել են ազգային և համաշխարհային մշակութային ժառանգության մաս հանդիսացող՝ ՀՀ-ում ու արտերկրում լույս տեսած և լույս տեսնող հրատարակությունների անձեռնմխելի ֆոնդերի պահպանման, մատենագիտական տեղեկույթով ապահովման, գիտության զարգացման և հանրության կրթական մակարդակի բարձրացման խնդիրների իրագործմանը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 1.7%-ով:

2013 թվականին *թանգարանների և ցուցասրահների* դասի ծրագրերին ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է ավելի քան 1.7 մլրդ դրամ, որն ամբողջությամբ օգտագործվել է: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 3.6%-ով:

Նշված միջոցներից 1.5 մլրդ դրամը տրամադրվել է թանգարանային ծառայությունների և ցուցահանդեսների ֆինանսավորմանը: Թանգարանների գործունեության առաջնային ուղղություններն են համարվել թանգարանային առարկաների և հավաքածուների պահպանությունը, հանրահոշակումը, բացառիկ ցուցանմուշների կրկնատիպերի պատրաստումը, թանգարանային առարկաների կոնսերվացումը և վերականգնումը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 3.6%-ով կամ 53.8 մլն դրամով՝ հիմնականում պայմանավորված նվազագույն աշխատավարձի, էլեկտրաէներգիայի և գազի սակագների բարձրացմամբ:

Թանգարաններին և ցուցասրահներին աջակցության նպատակով Հայաստանի Հանրապետության համայնքային բյուջեներին տրամադրվել են 199.9 մլն դրամ սուբվենցիաներ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 3.2%-ով:

ՀՀ 2013 թվականի պետական բյուջեից 35.8 մլն դրամ է տրամադրվել *մշակույթի տների, ակումբների և կենտրոնների* ֆինանսավորմանը, որն իրականացվել է ամբողջությամբ: Նախորդ տարվա համեմատ տվյալ դասի ծախսերը նվազել են 94.7%-ով՝ պայմանավորված նախորդ տարի տվյալ դասում ընդգրկված մշակութային օբյեկտների շինարարության և հիմնանորոգման ծրագրերի ավարտով:

Նշված 35.8 մլն դրամն ուղղվել է համայնքային մշակույթի և ազատ ժամանցի կազմակերպմանը: Ծախսերն իրականացվել են նախատեսված ծավալով և 3.8%-ով գերազանցել նախորդ տարվա ցուցանիշը՝ պայմանավորված նվազագույն աշխատավարձի, էլեկտրաէներգիայի և գազի սակագների բարձրացմամբ: Ծրագիրն իրականացվել է Ստեփանավանի մշակույթի և

Ժամանցի կենտրոնի գործունեության խթանման, մշակութային միջոցառումների և ժամանցի կազմակերպման, մշակույթի զարգացման, հասարակության հոգևոր պահանջների բավարարման, համայնքի բնակչությանը մշակութային կյանքին հաղորդակից դարձնելու նպատակով:

Այլ մշակութային կազմակերպությունների դասին ՀՀ 2013 թվականի պետական բյուջեից տրամադրվել է 651.8 մլն դրամ, որը կազմել է ծրագրի 100%-ը: 2012 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 2.3%-ով:

390.5 մլն դրամ տրամադրվել է Հայաստանի Ազգային արխիվի սուբսիդավորմանը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 3.4%-ով՝ պայմանավորված նվազագույն աշխատավարձի, էլեկտրաէներգիայի և գազի սակագների բարձրացմամբ:

«Մշակութային արժեքների փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ին 2013 թվականի պետական բյուջեից տրամադրվել է 31.6 մլն դրամ աջակցություն: Ծրագրի նպատակը մշակութային արժեքների փորձագիտական ուսումնասիրության, մշակութային արժեքների և մշակութային նշանակության առարկաների մշակութաբանական ու արվեստաբանական փորձաքննության իրականացումն է: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 3.6%-ով:

2013 թվականին տվյալ դասում ՀՀ համայնքային բյուջեներին սուբսիդիաների տրամադրման շրջանակներում ՀՀ պետական բյուջեով նախատեսված 197.2 մլն դրամն ամբողջությամբ ուղղվել է Երևանի կենդանաբանական այգու սուբսիդավորմանը, որը նախորդ տարվա համեմատ էական փոփոխություն չի կրել:

Հայրենիք-սիյուռք գործակցության ծրագրերի իրականացման նպատակով ՀՀ 2013 թվականի պետական բյուջեից տրամադրվել է 32.6 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 2.4%-ով:

Արվեստի բնագավառի ծրագրերի ֆինանսավորմանը ՀՀ 2013 թվականի պետական բյուջեից տրամադրվել է 5.9 մլրդ դրամ՝ ապահովելով տարեկան ծրագրի 105.9% կատարողական: Ծրագրի գերազանցումը պայմանավորված է ավստրիական «Վագներ Բիրո Ստեյջ Սիստեմս» ընկերության կողմից Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ակադեմիական թատրոնի և Ա. Խաչատրյանի անվան համերգասրահի դահլիճների տեխնիկական վերազինման նպատակով օգտագործված միջոցների բարձր ցուցանիշով: 2012 թվականի համեմատ արվեստի բնագավառում պետական բյուջեի ծախսերը նվազել են 41.2%-ով, ինչը հիմնականում պայմանավորված է վերոհիշյալ վարկային ծրագրի և «Հայկական տպագրության 500-ամյակ» և «Երևանը՝ 2012 թվականին գրքի համաշխարհային մայրաքաղաք» միջոցառումների իրականացման ծախսերի նվազմամբ:

Օպերային և բալետային արվեստի ներկայացումներին աջակցության նպատակով Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնին հաշվետու

տարում տրամադրվել է 708.8 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական և 4%-ով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը՝ հիմնականում պայմանավորված աշխատավարձի, էլեկտրաէներգիայի և գազի սակագների բարձրացմամբ:

Ամբողջությամբ տրամադրվել է նաև Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնի համար նախատեսված սուբսիդիան՝ կազմելով 267.3 մլն դրամ: Ծրագիրն իրականացվել է ազգային թատերարվեստի ավանդույթների պահպանման, տարածման և զարգացման, թատերարվեստի բնագավառում հանդիսատեսի հոգևոր պահանջների ձևավորման և բավարարման, դասական և ժամանակակից լավագույն դրամատիկական ստեղծագործությունների բեմադրման նպատակով: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերն աճել են 2.2%-ով:

Մշակութային միջոցառումների իրականացմանը տրամադրվել է 1.4 մլրդ դրամ՝ կազմելով ծրագրի 99.6%-ը: Ժամանակակից արվեստի զարգացման գործում 2013 թվականին առաջնահերթություն է համարվել երիտասարդ ստեղծագործական ներուժի ներգրավումը, նոր մրցունակ մշակութային արտադրանքի ստեղծումը, հայ ժամանակակից ստեղծագործություններով խաղացանկերի և երկացանկերի համալրումը, սփյուռքահայ արվեստագետների ներգրավումը Հայաստանի մշակութային դաշտ: Առանձնակի կարևորվել է դեբյուտային գործընթացներին պետական աջակցության ապահովումը՝ արվեստի տարբեր ոլորտներում երիտասարդ ստեղծագործական ներուժի հայտնաբերման, խթանման, մշակութային կյանքում նրանց ներգրավման և ժամանակակից մտածողության խրախուսման, ինչպես նաև սերնդափոխության շարունակականության ապահովման նպատակով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 18.7%-ով՝ հիմնականում պայմանավորված միջոցառումների թվաքանակի աճով:

Օտարերկրյա պետություններում հայալեզու թատերական ներկայացումներին աջակցության շրջանակներում Թբիլիսիի Պ. Ադամյանի անվան թատրոնին հատկացվել է 20 մլն դրամ, որն ամբողջությամբ օգտագործվել է և պահպանվել է նախորդ տարվա մակարդակին:

«Ժողովրդական» պատվավոր կոչման արժանացած անձանց ամենամսյա պատվովճարների համար օգտագործվել է 36.7 մլն դրամ, որը կազմել է նախատեսվածի 78.1%-ը: Տնտեսումը պայմանավորված է որոշ արվեստագետների կողմից ամենամսյա պատվովճար ստանալու իրենց իրավունքը չիրացնելու, ինչպես նաև պատվովճարը միանվագ (մի քանի ամիսը մեկ անգամ) ստանալու հանգամանքներով: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերը նվազել են 3.5%-ով՝ պայմանավորված պատվովճար ստացողների փաստացի թվաքանակի կրճատմամբ: «Ժողովրդական» պատվավոր կոչման արժանացած անձանց ամենամսյա պատվովճարի վճարման ծառայությունների համար տրամադրվել է 230 հազ. դրամ, որը կազմել է նախատեսված ծախսերի 48.9%-ը և 8.9%-ով զիջել նախորդ տարվա ցուցանիշը: Միջոցների տնտեսումը պայմանավորված է

ծրագրի ցածր կատարողականով, ինչպես նաև վճարումների ծառայության տոկոսադրույքի նվազմամբ (շահառուները ներգրավվում են անկանխիկ վճարումների համակարգ):

2013 թվականին ավստրիական «Վագներ Բիրո Ստեյջ Սիստեմս» ընկերության կողմից Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ակադեմիական թատրոնի և Ա. Խաչատրյանի անվան համերգասրահի դահլիճների տեխնիկական վերազինման նպատակով հատկացվել է 901.4 մլն դրամ՝ կազմելով ծրագրվածի 161.8%-ը, որը պայմանավորված է արտարժույթի փոխարժեքի աճով: Նշված գումարից 763.8 մլն դրամն օգտագործվել է վարկային միջոցներից, 137.6 մլն դրամը՝ կառավարության համաֆինանսավորման հաշվին: Ծրագրի շրջանակներում 2013 թվականին ավարտվել են Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի տեխնիկական վերազինման աշխատանքները:

Հայաստանի Հանրապետության համայնքային բյուջեներին սուբվենցիաների տրամադրման ծրագրի շրջանակներում 245.5 մլն դրամ է հատկացվել թատերական ներկայացումների սուբսիդավորմանը, որն ամբողջությամբ օգտագործվել է: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 4%-ով՝ հիմնականում պայմանավորված աշխատավարձերի, էլեկտրաէներգիայի և գազի սակագների բարձրացմամբ:

Թատերական ներկայացումների ծախսերը կազմել են 1.1 մլրդ դրամ, որոնք օգտագործվել են նախատեսված ողջ ծավալով: Ծրագիրն ուղղվել է թատերարվեստի զարգացմանն ու տարածմանը, թատերարվեստին հաղորդակցմանը, թատերարվեստի վերաբերյալ տեղեկույթի ապահովմանը, ինչպես նաև նոր գաղափարների ու արժեքների տարածմանը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 7.4%-ով: Հատկացումների ավելացումն ուղղվել է նվազագույն աշխատավարձի ապահովմանը, սակագների բարձրացմամբ պայմանավորված էլեկտրաէներգիայի և գազի ծախսերի ավելացմանը:

2013 թվականին երաժշտարվեստի և պարարվեստի համերգների ծրագրի շրջանակներում նախատեսված 1 մլրդ դրամն ամբողջությամբ օգտագործվել է: Ծրագիրն ուղղվել է երաժշտարվեստի և պարարվեստի պահպանմանը, զարգացմանն ու տարածմանը, երաժշտադրամատիկական, երաժշտական կատարողական, երգի-պարի արվեստին հաղորդակցմանը, երաժշտարվեստի ու պարարվեստի վերաբերյալ տեղեկույթի ապահովմանը, ինչպես նաև նոր գաղափարների ու արժեքների տարածմանը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 2.7%-ով, որն ուղղվել է նվազագույն աշխատավարձի ապահովմանը, սակագների բարձրացմամբ պայմանավորված էլեկտրաէներգիայի և գազի ծախսերի ավելացմանը:

2013 թվականին թատրոններում ներդրումների համար նախատեսված 9.1 մլն դրամն ամբողջությամբ օգտագործվել է և ուղղվել 4 թատրոններում հեռահաղորդակցական համակարգերի հավաքակցմանը, 2 թատրոններում հակահրդեհային անվտանգության համակարգի

վերանորոգմանը և 1 թատրոնում ջեռուցման, գազամատակարարման, օդի լավորակման համակարգերի հավաքակցմանը:

Հայ մշակույթի միջազգային կենտրոններին նախատեսված 26.2 մլն դրամ աջակցությունն ամբողջությամբ տրամադրվել է: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն էական փոփոխության չեն ենթարկվել:

Տարածքային համագործակցության և համահայկական մշակութային ծրագրերի իրականացմանը տրամադրվել է 38.6 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 100%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 114%-ով՝ պայմանավորված միջոցառումների քանակի աճով: Ծրագրի նպատակն է տարածքային համագործակցության և մշակութային միջոցառումների իրականացումը, որոնց արդյունքում լուծվում են մի շարք հայապահպանական խնդիրներ: Մասնավորապես՝ իրականացվում են հայ համայնքների հետ համագործակցության ծրագրեր և միջոցառումներ:

«Հայկական տպագրության 500-ամյակ» և «Երևանը՝ 2012 թվականին գրքի համաշխարհային մայրաքաղաք» միջոցառումների իրականացման նպատակով հատկացվել է 87.6 մլն դրամ, որն օգտագործվել է 99.9%-ով: Ծրագրի շրջանակներում իրականացվել են հետևյալ միջոցառումները.

- «Երևանը՝ 2012 թվականին գրքի համաշխարհային մայրաքաղաք» ծրագրի հանդիսավոր փակում,
- մասնակցություն «Բանգկոկը՝ 2013 թվականի գրքի համաշխարհային մայրաքաղաք» ծրագրին,
- մասնակցություն Բոլոնիայի միջազգային մանկական տոնավաճառին,
- «Գրական տապան 2013» փառատոն,
- «Իմ անձնական գրադարանը» հեռուստատեսային ծրագիր:

Ներդրումները «Ալ.Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն» ՊՈԱԿ-ում կազմել են 5.7 մլն դրամ: Ծրագրի հատկացումներն ուղղվել են «Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն» ՊՈԱԿ-ում հեռահաղորդակցական համակարգերի հավաքակցմանը:

«Սայաթ-Նովայի 300-ամյակին նվիրված միջազգային փառատոն ծրագրի հատկացումները ամբողջությամբ օգտագործվել են՝ կազմելով 6.2 մլն դրամ:

ՀՀ 2013 թվականի պետական բյուջեից կինեմատոգրաֆիայի բնագավառին տրամադրվել է 636 մլն դրամ, որը կազմել է նախատեսված ծախսերի 100%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն էական փոփոխության չեն ենթարկվել:

Կինոնկարների արտադրությանը տրամադրվել է 454 մլն դրամ: Կինոարվեստի բնագավառում Հայաստանի Հանրապետության պետական քաղաքականության ռազմավարությունը

պայմանավորված է կինոարվեստի՝ որպես տեսալսողական հաղորդակցության տեսակի պահպանման, տարածման և զարգացման, կինոարտադրությունն ապահովող տեխնոլոգիայի մշտական կատարելագործման, միջազգային կինոփառատոններին և կինոշուկաներին Հայաստանի Հանրապետության մասնակցության ապահովմամբ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը գրեթե չեն փոփոխվել:

Ազգային կինոծրագրերի իրականացման համար հատկացումներն ուղղվել են Հայաստանի Ազգային կինոկենտրոնի գործունեության ապահովմանը: 2013 թվականին այդ ուղղությամբ բյուջետային ծախսերը կազմել են 137.7 մլն դրամ՝ 2.2%-ով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը: Հատկացումների ավելացումն ուղղվել է սակագների բարձրացմամբ պայմանավորված էլեկտրաէներգիայի և գազի ծախսերի ավելացմանը:

Հաշվետու տարում 7.2 մլն դրամ է տրամադրվել կինո-ֆոտո-ֆոնո հավաքածուի պահպանման ծառայություններին: Ծրագրի շրջանակներում 2013 թվականին վերականգնվել է 2 ֆիլմ, իրականացվել է 6 ֆիլմի թվայնացում: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը չեն փոփոխվել:

Փաստավավերագրական կինոծրագրերը ֆինանսավորվել են 37.1 մլն դրամի չափով: Հատկացված միջոցների հաշվին ապահովվել է «Փաստավավերագրական ֆիլմերի «Հայկ» կինոստուդիա» ՊՈԱԿ-ի գործունեությունը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 25.1%-ով՝ պայմանավորված այն հանգամանքով, որ 2012 թվականին «Հայկ» կինոստուդիայում ներդրվել էր ջեռուցման համակարգ:

Հուշարձանների և մշակութային արժեքների վերականգնման ու պահպանման դասին ՀՀ 2013 թվականի պետական բյուջեից տրամադրվել է 353.4 մլն դրամ կամ ծրագրային ցուցանիշի 99.4%-ը: Նախորդ տարվա համեմատ տվյալ դասի ծախսերը գրեթե չեն փոփոխվել:

Մասնավորապես՝ 4 մլն դրամ պետական աջակցություն է տրամադրվել Թբիլիսիում գտնվող հայ գրողների պանթեոնի պահպանման նպատակով՝ կազմելով նախատեսված հատկացումների 100%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը չեն փոփոխվել:

«Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոն» ՊՈԱԿ-ին տրամադրվել է 69 մլն դրամ, որը կազմում է նախատեսված ծախսերի 100%-ը: Ծրագրի նպատակներն են պատմամշակութային հուշարձանների ուսումնասիրումը, վավերագրումը, պահպանական փաստաթղթերի փաթեթի ստեղծումը և դրանց շնորհիվ հուշարձանների պահպանության ապահովումն ու հետագա սերունդներին փոխանցումը: Հաշվետու տարվա ընթացքում իրականացվել են նախատեսված 400 հուշարձանների պահպանական գոտիների նախագծման և թողարկման, 2000 հուշարձանների հաշվառման և ցուցակագրման, 250 հուշարձանի հաշվառման և վկայագրման, ինչպես նաև հայկական պատմամշակութային ժառանգության գիտատեղեկատու շտեմարանի 390 վավերագրերի կազմման և թվայնացման

աշխատանքներ: Պատմամշակութային ժառանգության վերաբերյալ հանրությանն իրազեկելու նպատակով հրատարակության է պատրաստվել «Հուշարձան» տարեգրքի 9-րդ հատորը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 1.7%-ով:

Հուշարձանների տեխնիկական վիճակի մոնիթորինգի նպատակով տրամադրվել է 8.3 մլն դրամ կամ նախատեսվածի 100%-ը: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերը փոփոխության չեն ենթարկվել: Հաշվետու տարում իրականացվել է 25 հուշարձանի տեխնիկական վիճակի մոնիթորինգ:

Հայկական պատմամշակութային հուշարձանների վավերագրմանը տրամադրվել է 60 մլն դրամ աջակցություն՝ կազմելով նախատեսվածի 100%-ը և պահպանվելով նախորդ տարվա մակարդակին: ՀՀ մշակույթի նախարարության պատվերով ծրագիրն իրականացվել է «Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող» ՀԿ-ի կողմից, որը հաշվետու տարվա ընթացքում իրականացրել է 470 պատմամշակութային հուշարձանի վավերագրում:

Հուշարձանների ամրակայման, նորոգման և վերականգնման աշխատանքների իրականացմանը տրամադրվել է 212 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 98.9%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը գրեթե չեն փոփոխվել: Հուշարձանների պահպանության բնագավառում իրականացվող գործընթացները նպատակաուղղված են եղել պատմամշակութային հուշարձանների հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, վերականգնման և օգտագործման գործում առկա հիմնախնդիրների բացահայտմանն ու դրանց լուծմանը: Ծրագրի շրջանակներում իրականացվել են 15 հուշարձանի վերականգնման, 8 հուշարձանի հրատապ ուսումնասիրման, ամրակայման և վերականգնման, 4 նախագծային աշխատանքներ, 4 հուշարձանի պեղումների կատարում:

2013 թվականին *նաղիոս և հեռուստանաղիոսադրողումների հեռարձակման և հրատարակչական ծառայությունների* ծախսերը կազմել են 5.3 մլրդ դրամ կամ նախատեսվածի 99.5%-ը: Նախորդ տարվա համեմատ տվյալ խմբի ծախսերն ավելացել են 6.2%-ով:

Հաշվետու տարում *հեռուստանաղիոսադրողումների* դասի գծով պետական բյուջեի ծախսերը կազմել են 3.9 մլրդ դրամ կամ նախատեսվածի 99.5%-ը: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերը աճել են 5.5%-ով՝ հիմնականում պայմանավորված տնտեսական վերլուծությունների և հրատարակչական, տեղեկատվական ու տպագրական ծառայությունների հատկացումների աճով:

Հատկացումների գերակշիռ մասը՝ ավելի քան 2.3 մլրդ դրամ (100%), հեռուստատեսային ծառայությունների ծրագրի շրջանակներում հեռուստանաղիոսադրողումների պատրաստման և հեռարձակման նպատակով տրամադրվել է «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ին՝ որպես դրամաշնորհ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն էապես չեն փոփոխվել:

Ոլորտի պետական կառավարման մարմինների՝ Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի և Հայաստանի հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի պահպանմանը տրամադրվել է 313.4 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 99.8%-ը և 2.1%-ով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը:

Հաշվետու տարում ռադիոձառայությունների շրջանակներում 648.9 մլն դրամ (100%) դրամաշնորհ է տրամադրվել «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» ՓԲԸ-ին՝ ռադիոհաղորդումների պատրաստման և հեռարձակման նպատակով, որը նախորդ տարվա համեմատ աճել է 2.6%-ով:

Ռադիոհեռուստատեսային հաղորդումների պատրաստման և հեռարձակման նպատակով 25.6 մլն դրամ է տրամադրվել «Շիրակի հանրային հեռուստառադիո» ՓԲԸ-ին, որը կազմել է նախատեսվածի 100%-ը և 4.4%-ով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը՝ հիմնականում պայմանավորված աշխատավարձի, գազի և էլեկտրաէներգիայի սակագների բարձրացմամբ:

ԱՊՀ երկրներում հեռուստառադիոծրագրերի հեռարձակման ծրագիրը նախատեսված է հեռուստառադիոհաղորդումների միջոցով ԱՊՀ երկրներում տեղեկույթ տարածելու և ստանալու համար: Այս ծրագիրը հնարավորություն է տալիս ԱՊՀ երկրներում ծանոթանալ Հայաստանի մշակութային, քաղաքական և տնտեսական կյանքին: Նշված ծրագրի գծով հաշվետու տարվա պետական բյուջեի ծախսերը կազմել են 109 մլն դրամ, որն ամբողջությամբ ծախսվել է և նախորդ տարվա համեմատ աճել 10%-ով՝ հիմնականում պայմանավորված եթերային ժամերի ավելացմամբ:

Հասարակական կարծիքի ուսումնասիրման նպատակով «Հասարակական կարծիքի ուսումնասիրման կենտրոն» ՓԲԸ-ին հատկացվել է 8.2 մլն դրամի պետական աջակցություն (100%), որը նախորդ տարվա համեմատ աճել է 2.2%-ով:

2013 թվականի պետական բյուջեից 191.2 մլն դրամ պետական աջակցություն է հատկացվել «Տնտեսական բարեփոխումների վերլուծական տեղեկատվական կենտրոն» ՊՈԱԿ-ին, որը կատարվել է 100%-ով և նախորդ տարվա համեմատ աճել է 134.6%-ով՝ պայմանավորված աշխատանքների ծավալների աճով՝ կատարվել են ՀՀ կառավարության գործունեության և արձանագրված արդյունքների վերլուծությունների, ուսումնասիրությունների իրականացման և հեռուստատեսությամբ մշտական լրահոսի կազմակերպման աշխատանքներ: 2013 թվականի ընթացքում ծրագրի շրջանակներում իրականացվել են հետևյալ հիմնական աշխատանքները.

- Հեռուստահաղորդումներ. «Հրապարակում» հաղորդաշար: Տարվա ընթացքում պատրաստվել է 120 հաղորդում: Հաղորդումների գլխավոր թեմաներն են եղել տարբեր ոլորտներում իրականացվող բարեփոխումները՝ տնտեսության իրական հատված, գործարար միջավայր, կենսաթոշակային բարեփոխումներ, հարկային նոր քաղաքականություն, արդյունաբերության զարգացման ռազմավարություն և այլն:

• Ինտերնետային կայքի սպասարկում: Իրականացվել է ՀՀ կառավարության ինտերնետային կայքի՝ gov.am սպասարկումը:

• Տպագիր նյութերի հրատարակում: Հաշվետու ժամանակաշրջանում իրականացվել է ՀՀ կառավարության գործունեությունն արտացոլող 2 անվանում տպագիր նյութերի հրատարակություն 5600 օրինակ ընդհանուր տպաքանակով:

• ԶԼՄ հրապարակումներ: ՀՀ կառավարության գործունեության, իրականացվող բարեփոխումների ընթացքի, սպասվող և առկա արդյունքների վերաբերյալ հրապարակվել են 186 միավոր հոդված, մեկնաբանություն, վերլուծություն և այլ բնույթի հրապարակումներ:

• Տեսահոլովակների պատրաստում: Պատրաստվել են ՀՀ կառավարության իրականացրած բարեփոխումները ներկայացնող անիմացիոն հոլովակներ՝ նվիրված գյուղատնտեսության զարգացման ծրագրերին, առողջապահության պետպատվերի ընդլայնմանը, պետավտոտեսչության և ԱՊՊԱ համակարգի բարեփոխումներին, քաղաքացիներին մատուցվող ծառայություններին, ճանապարհաշինության բնագավառի ձեռքբերումներին՝ ընդամենը 5 անիմացիոն տեսահոլովակ, յուրաքանչյուրը միջինը 30 վրկ. տևողությամբ:

• Տեսահոլովակների ցուցադրության կազմակերպում: Տեղեկատվական 5 տեսահոլովակները 40 օր հեռարձակվել են համապետական սփռում ունեցող չորս հեռուստաալիքներով:

• Տեղեկատվական նյութերի քարոզարշավ:

• Հեռուստաթերում լրահոսի կազմակերպում: 2013 թվականի մայիս-դեկտեմբեր ամիսների ընթացքում Հեռուստալրահոսի կազմակերպման աշխատանքային խումբն ապահովել է Ա-թիվի հեռուստաալիքի օրական 2 թողարկումների համար նախատեսված հեռուստառեպորտաժների, տեղեկատվական և վերլուծական նյութերի նկարահանման, մոնտաժման բոլոր աշխատանքները, օրվա իրադարձությունների հետ միաժամանակ օպերատիվ և անաչառ ներկայացնելով ՀՀ կառավարության գործունեությունը, բարեփոխումների ընթացքն ու արդյունքները, կառավարության որոշումների, գերակա խնդիրների իրականացման ուղղությամբ նախարարությունների և գերատեսչությունների աշխատանքային արդյունքները:

Հաշվետու տարվա պետական բյուջեից 59.7 մլն դրամ տրամադրվել է գնումների հրապարակայնության ապահովմանը, որը կազմել է նախատեսվածի 76.2%-ը և 48.3%-ով գերազանցել նախորդ տարվա ցուցանիշը: Ծախսերի կատարողականը պայմանավորված է այն հանգամանքով, որ գնման գործընթացի արդյունքում ծառայությունների մատուցման պայմանագիրը կնքվել է 2013 թվականի փետրվարին, որի արդյունքում ծառայությունները մատուցվել են 2013 փետրվարի 28-ից:

Հայաստան-Սփյուռք գործակցության թեմայով հեռուստահաղորդումների և տեսահոլովակների պատրաստման, հեռարձակման, ձեռքբերման և բազմացման նպատակով հաշվետու տարվա

պետական բյուջեից տրամադրվել է 52.6 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 100%-ը և 52%-ով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը: Ծրագրի շրջանակներում պատրաստվել են հայապահպանություն քարոզող ֆիլմաշարեր և տեսահոլովակներ սփյուռքի համայնքներին տրամադրելու և հեռարձակելու նպատակով: 2013 թվականին պատրաստվել է 104 հաղորդում և տեսահոլովակ՝ նախորդ տարվա 84-ի փոխարեն:

Նախատեսված ողջ ծավալով իրականացվել են հոգևոր-մշակութային հեռուստատեսային ծառայությունների ծախսերը՝ կազմելով 147.9 մլն դրամ, որոնք նախորդ տարվա համեմատ էական փոփոխության չեն ենթարկվել:

2013 թվականին ավելի քան 1 մլրդ դրամ են կազմել *հրատարակչությունների և խմբագրությունների* դասի ծախսերը՝ 99.3%-ով ապահովելով ծրագրի կատարումը: Նախորդ տարվա համեմատ հրատարակչությունների և խմբագրությունների ծախսերն աճել են 10.6%-ով՝ հիմնականում պայմանավորված հրատարակչական, տեղեկատվական և տպագրական ծառայությունների ծախսերի աճով:

Պետական մամուլի հրատարակմանը տրամադրվել է 69.8 մլն դրամ (100%), որը հատկացվել է «Հանրապետություն» ՓԲԸ-ին՝ «Հայաստանի Հանրապետություն» թերթի հրատարակման համար, և «Հայաստանի Հանրապետություն-Ռեսպուբլիկա Արմենիա» ՓԲԸ-ին՝ «Ռեսպուբլիկա Արմենիա» թերթի հրատարակման համար: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 1.4%-ով:

Գրականության հրատարակմանը տրամադրվել է 102 մլն դրամ (100%): Ծրագրի շրջանակներում 2013 թվականին հրատարակվել է 58 անուն գիրք՝ նախորդ տարվա 56-ի դիմաց: Տվյալ ծախսերը 10.4%-ով գերազանցել են նախորդ տարվա ցուցանիշը:

Գիտական ամսագրերի և մենագրությունների հրատարակմանը տրամադրվել է 63.1 մլն դրամ (100%), որը նախորդ տարվա համեմատ աճել է 2.4%-ով:

Տնտեսագիտական հրապարակումների շրջանակներում «Էկոնոմիկա» հանդես ՓԲԸ-ին տրամադրվել է 39.2 մլն դրամ կամ նախատեսվածի 100%-ը: 2012 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 1.5%-ով:

Ոչ պետական մամուլի հրատարակմանը տրամադրվել է 47.4 մլն դրամ (99.7%): Ծրագրի շրջանակներում պետական հոգաճություն է ցուցաբերվում ոչ պետական մամուլին, ինչի միջոցով բնակչությանը հնարավորություն է ընձեռվում տեղեկույթ ստանալու տեղերից: Պետական աջակցություն է ցուցաբերվում նաև ազգային փոքրամասնությունների լեզվով լույս տեսնող գրական և մշակութային մամուլին: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը գրեթե չեն փոփոխվել: 2013 թվականին հրատարակվել է 67 անուն թերթ և ամսագիր՝ նախորդ տարվա 69-ի համեմատ:

Մանկական, մանկապատանեկան թերթերի և ամսագրերի հրատարակմանը տրամադրվել է 41.2 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական և 3.7%-ով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը, ինչը հիմնականում պայմանավորված է նվազագույն աշխատավարձի բարձրացմամբ:

Հրատարակչական, տեղեկատվական և տպագրական ծառայությունների ձեռքբերման ծախսերը կազմել են 417.2 մլն դրամ կամ ծրագրվածի 99.3%-ը: Միջոցները տրամադրվել են ՀՀ արդարադատության և արտաքին գործերի նախարարություններին: Ծրագրի շրջանակներում իրականացվում են «Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր», «Հայաստանի Հանրապետության գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր», «Երևանի իրավական ակտերի տեղեկագիր», «Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր» (ռուսերեն) և «Քաղաքային ու գյուղական համայնքների նորմատիվ իրավական ակտերի ժողովածու» պարբերականների հրատարակման, քաղաքացիական կացության ակտերի գրանցման, իրավաբանական անձանց պետական գրանցման, «Առլիս» տեղեկատվական համակարգի պահպանման և շահագործման աշխատանքները, ինչպես նաև ՀՀ մուտքի վիզայի բլանկների ու միջազգային պայմանագրերի տպագրությունը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 23.1%-ով՝ պայմանավորված այն հանգամանքով, որ 2013 թվականին լրացուցիչ գումար է հատկացվել մուտքի վիզայի բլանկի և վերադարձի վկայականների տպագրության համար:

Վրաստանի հայալեզու լրատվամիջոցներին աջակցության շրջանակներում 10 մլն դրամ է հատկացվել «Վրաստան» թերթի հրատարակմանը, որն ամբողջությամբ օգտագործվել է: 2012 թվականի համեմատ նշված ծախսերը փոփոխություն չեն կրել:

Թարգմանչական ծառայությունների համար նախատեսված գումարն օգտագործվել է 99.9%-ով՝ կազմելով 122.3 մլն դրամ և նախորդ տարվա համեմատ աճելով 1.9%-ով: 2013 թվականին թարգմանվել է 10064 էջ՝ նախորդ տարվա 10058 էջի դիմաց:

Մասնավորեցվող պետական գույքի վերաբերյալ տեղեկությունների հրապարակմանը տրամադրվել է 148.1 հազ. դրամ: Տվյալ ծախսերը կատարվել են 3.8%-ով և 79.3%-ով զիջել նախորդ տարվա ցուցանիշը՝ պայմանավորված այն հանգամանքով, որ գույքի օտարման դեպքում մրցույթի անցկացման մասին ծանուցման հրապարակումն իրականացվել է ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության կայքում:

Գրականության հրատարակմանը տրամադրվել է 40 մլն դրամ աջակցություն (100%): Հատկացումների հաշվին հրատարակվել է 67 անուն գիրք՝ նախորդ տարվա 57-ի փոխարեն, և իրականացվել են 7 լազերային սկավառակի պատրաստման աշխատանքներ՝ նախորդ տարվա 8-ի փոխարեն: 2012 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 1.4%-ով:

Տեղեկատվական և ուսուցողական կայքերի մշակման և սպասարկման ծառայությունների ծախսերը կազմել են 33 մլն դրամ (100%): Միջոցները հատկացվել են «Հայերն այսօր» էլեկտրոնային

բազմալեզու օրաթերթի հրատարակման, էլեկտրոնային գրադարանի ստեղծման ու արևելահայերենից արևմտահայերեն և հակառակը փոխարկիչը համալրելու և սպասարկելու աշխատանքներին: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն ավելացել են 10.2%-ով, որը պայմանավորված է կայքը սպասարկելու և ավելի դինամիկ դարձնելու նպատակով լրացուցիչ աշխատակից ներգրավելու հանգամանքով:

Ուսումնական և հանրամատչելի գրականության հավաքագրման և սփյուռքի համայնքներին առաքման նպատակով հատկացվել է 10 մլն դրամ (100%): Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 25%-ով, որը պայմանավորված է այն հանգամանքով, որ 2012 թվականին գրականության որոշ մասը առաքվել էր ՀՀ սփյուռքի նախարարություն ժամանած հյուրերի միջոցով և ՀՀ Նախագահի օդանավով:

«Հայկական սփյուռք» տարեգրքի հրատարակման նպատակով օգտագործվել է 5.8 մլն դրամ կամ նախատեսվածի 100%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 15.8%-ով՝ պայմանավորված տարեգրքի հրատարակման գների նվազմամբ:

Գրական ժառանգության պահպանման և տարածման համար նախատեսված 25.2 մլն դրամի միջոցներն ամբողջությամբ օգտագործվել են: Նշված ծրագրի շրջանակներում ապահովվում է «Գրքի և հրատարակչական գործի կենտրոն» ՊՈԱԿ-ի գործունեությունը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 2%-ով:

Հաշվետու տարում *տեղեկատվության ձեռքբերման* գծով պետական բյուջեի ծախսերը կազմել են 370.8 մլն դրամ՝ 100%-ով ապահովելով նախատեսված հատկացումները: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերն աճել են 1.7 %-ով:

Տեղեկատվության ձեռքբերման, պահպանման և արխիվացման ծառայությունները մատուցվել են «Արմենպրես» ՓԲԸ-ի կողմից, որը տեղեկույթ է տրամադրել հանրապետության ԶԼՄ-ներին և արտերկրում գտնվող ՀՀ ղեսպանատներին: Այս նպատակով հատկացվել է 76.1 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 2.9%-ով:

Հանրային իրազեկման ապահովմանը տրամադրվել է 294.7 մլն դրամ, որն օգտագործվել է նախատեսված ծավալով: 2012 թվականի համեմատ նշված ծախսերն էական փոփոխության չեն ենթարկվել:

ՀՀ 2013 թվականի պետական բյուջեից 741.1 մլն դրամ է տրամադրվել *կրոնական և հասարակական այլ ծառայությունների* խմբի ծրագրերի ֆինանսավորմանը, որոնք կատարվել են 96.5%-ով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 2.9%-ով, ինչը հիմնականում պայմանավորված է պետական բյուջեից «Երիտասարդ ընտանիքին՝ մատչելի բնակարան» պետական նպատակային ծրագրի համաֆինանսավորման ծախսերի աճով:

602.6 մլն դրամ է տրամադրվել *երիտասարդական ծրագրերի* դասին, որոնք կատարվել են 98.4%-ով: Տվյալ դասի ծախսերից 255.9 մլն դրամն ուղղվել է «Երիտասարդական ծրագրեր»-ին՝ ապահովելով 99.4% կատարողական և գրեթե պահպանվելով նախորդ տարվա մակարդակին:

Երիտասարդական ծրագրերի շրջանակներում թրաֆիքինգի դեմ պայքարի միջոցառումներին տրամադրվել է 8 մլն դրամ կամ նախատեսվածի 100%-ը: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերը չեն փոփոխվել:

«Արի տուն» ծրագրի շրջանակներում Սփյուռքի երիտասարդության՝ Հայաստան ճանաչողական այցելությունների կազմակերպման նպատակով պետական բյուջեից տրամադրվել է 83.8 մլն դրամ՝ ապահովելով 98.6% կատարողական: Ծրագիրն իրենից ներկայացնում է 13-20 տարեկան սփյուռքահայ երիտասարդների 14-օրյա ճանաչողական շրջայցեր հայրենիքում: Երիտասարդները 10 օր բնակվում են հայ ընտանիքներում, 4 օր՝ ճամբարում: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 8.4%-ով՝ պայմանավորված Սիրիայում ռազմական գործողությունների հետևանքով 338 լրացուցիչ մասնակից հյուրընկալելու հանգամանքով: 2012 թվականի 912 մասնակցի դիմաց 2013 թվականին ծրագրին մասնակցել են 1250 երիտասարդ:

Հայաստանում ինտելեկտուալ խաղերի զարգացմանը տրամադրվել է 12 մլն դրամ աջակցություն՝ ապահովելով 100% կատարողական: 2012 թվականի համեմատ նշված ծախսերը փոփոխություն չեն կրել:

«Երիտասարդ ընտանիքին՝ մատչելի բնակարան» պետական նպատակային ծրագրի համաֆինանսավորման նպատակով նախատեսված միջոցներն օգտագործվել են 97.1%-ով՝ կազմելով 242.9 մլն դրամ:

«Քաղաքական կուսակցություններ, հասարակական կազմակերպություններ, արհմիություններ» դասի ծախսերը 2013 թվականին կազմել են 138.5 մլն դրամ՝ 88.9%-ով ապահովելով ծրագիրը և 22.9%-ով զիջել նախորդ տարվա ցուցանիշը: Ծախսերի անկումը հիմնականում պայմանավորված է ՀՀ Նախագահի աշխատակազմին հատկացված միջոցների կրճատմամբ, որը վերաբաշխվել է՝ ուղղվելով ՀՀ Արմավիրի մարզում կարկտահարությունից տուժած ընտանիքներին օգնության տրամադրմանը:

Այլ դասերին չչափարկանող հանգստի, մշակույթի և կրոնի դասի շրջանակներում տրամադրվել է 512.4 մլն դրամ աջակցություն՝ ապահովելով 96.4% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը գրեթե չեն փոփոխվել:

Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման (նախարարությունների աշխատակազմերի մասով) նպատակով տրամադրվել է 435.1 մլն դրամ, որը կազմել է ծրագրվածի 96.8%-ը: Միջոցները հատկացվել են ՀՀ մշակույթի ու ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունների

աշխատակազմերի պահպանմանը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը գրեթե չեն փոփոխվել:

«Ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի պահպանման նպատակով տրամադրվել է 77.3 մլն դրամ, որը կազմել է ծրագրվածի 94.6%-ը: Միջոցներն ուղղվել են ՀՀ մշակույթի ու ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունների՝ ծրագրերի իրականացման գրասենյակների պահպանմանը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը գրեթե չեն փոփոխվել:

Կրթություն

2013 թվականի կրթության բնագավառում ՀՀ պետական բյուջեի ծախսերը կազմել են շուրջ 103.1 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրի 96.9% կատարողական: Ծրագրից շեղումը հիմնականում առաջացել է կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայությունների ծախսերում: 2012 թվականի համեմատ կրթության բնագավառի ծախսերն աճել են 0.3%-ով կամ 311.2 մլն դրամով:

Հաշվետու տարում կրթության ծախսերից շուրջ 23.7 մլրդ դրամն ուղղվել է նախադպրոցական և տարրական ընդհանուր կրթության, 48.2 մլրդ դրամը՝ միջնակարգ ընդհանուր կրթության ծրագրերին՝ գրեթե ամբողջովին ապահովելով նախատեսված ծավալը: Նշված ծախսերի տեսակարար կշիռը կրթության ընդհանուր ծախսերում կազմել է համապատասխանաբար 23% և 46.8%:

2013 թվականի պետական բյուջեից նախադպրոցական կրթությանը հատկացվել է 276.8 մլն դրամ՝ ապահովելով ծրագրային ցուցանիշի 98.8% կատարում և 82.5%-ով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը՝ հիմնականում պայմանավորված երեխաների թվաքանակի աճով: Ծրագիրը մեկնարկել է 2011 թվականից՝ ՀՀ Լոռու, Արարատի և Արագածոտնի մարզերում, և ուղղված է մանկապարտեզ չունեցող համայնքների ավագ տարիքի երեխաների կրթության կազմակերպմանը: 2012 թվականից այն ներդրվել է ՀՀ Արմավիրի, Գեղարքունիքի, Շիրակի, Սյունիքի և Վայոց Ձորի մարզերում, իսկ 2013 թվականից՝ նաև Տավուշի մարզում:

Հաշվետու տարում տարրական, հիմնական և միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթության բնագավառներում հանրակրթական ուսուցման ծախսերը կատարվել են 100%-ով՝ կազմելով շուրջ 65.6 մլրդ դրամ, որից 21.7 մլրդ դրամը կազմել են տարրական, 27.8 մլրդ դրամը՝ հիմնական ընդհանուր կրթության, 16.0 մլրդ դրամը՝ միջնակարգ ընդհանուր կրթության ծախսերը: Հանրակրթության համակարգում 2013 թվականին գործել է 1363 դպրոց 351.8 հազար աշակերտով (2012թ.՝ 1366 դպրոց և 362.4 հազար աշակերտ): Նախորդ տարվա համեմատ հանրակրթական ուսուցման ծախսերն աճել են 0.6%-ով՝ պայմանավորված նվազագույն աշխատավարձի բարձրացմամբ:

Երաժշտական դպրոցներում ուսուցմանը տրամադրվել է 272.6 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 100%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 1.1%-ով կամ 2.9 մլն դրամով: Շուրջ 7.9 մլն դրամ (100%) է կազմել երաժշտական դպրոցներում սովորողների կրթաթոշակը: Հատկացումների հաշվին ապահովվել է «Երևանի Չայկովսկու անվան միջնակարգ մասնագիտական երաժշտական դպրոց» ՊՈԱԿ-ի գործունեությունը: Նշված միջոցներն օգտագործվել են ամբողջությամբ և նախորդ տարվա համեմատ փոփոխություն չեն կրել:

2013 թվականին տարրական, հիմնական և միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթության բնագավառներում հատուկ կրթության ծախսերը կատարվել են 98.9%-ով՝ կազմելով 2.7 մլրդ դրամ, որից 891.6 մլն դրամը՝ տարրական, 1.3 մլրդ դրամը՝ հիմնական, 519.9 մլն դրամը՝ միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթության գծով: Հաշվետու տարում հատկացված միջոցներով գործել է 23 դպրոց 2.3 հազար աշակերտով՝ նախորդ տարվա 2.5 հազարի դիմաց: 2012 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 1.9%-ով կամ 20.6 մլն դրամով՝ պայմանավորված նվազագույն աշխատավարձի բարձրացմամբ:

Հաշվետու տարում տարրական, հիմնական և միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթության բնագավառներում մասնագիտացված հանրակրթական ուսուցման կազմակերպման համար ծախսվել է շուրջ 1.8 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրի 98%-ը: 2012 թվականի համեմատ նշված ծախսերը գրեթե չեն փոփոխվել: 2013 թվականին 13.4 մլն դրամ է տրամադրվել մասնագիտացված հանրակրթական հաստատությունների սաների կրթաթոշակների վճարմանը, որը նախատեսված ծավալով կատարվել է և նախորդ տարվա համեմատ փոփոխություն չի կրել:

2013 թվականին տարրական, հիմնական և միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթության բնագավառներում ներառական կրթության ծախսերը կատարվել են 99.6%-ով՝ կազմելով ավելի քան 1.2 մլրդ դրամ, որից 609.3 մլն դրամը՝ տարրական, 557.4 մլն դրամը՝ հիմնական ընդհանուր կրթության և 57 մլն դրամը՝ միջնակարգ ընդհանուր կրթության ծախսերն են: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 23.4%-ով՝ հիմնականում պայմանավորված աշակերտների թվաքանակի աճով:

Հիմնական և միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթության բնագավառներում ընդգրկված՝ երեկոյան ուսուցման ծրագրերի շրջանակներում ֆինանսավորվել են ՀՀ Շիրակի մարզի և Երևան քաղաքի երեկոյան դպրոցները, որոնց տրամադրվել է շուրջ 45.5 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 100%-ը, իսկ նախորդ տարվա համեմատ աճելով 3.8%-ով՝ պայմանավորված աշակերտների թվաքանակի աճով:

2013 թվականին նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության դասի ծախսերը կազմել են շուրջ 6.2 մլրդ դրամ կամ նախատեսված հատկացումների 98.9%-ը, որից 2.3 մլրդ դրամը՝ նախնական մասնագիտական (արհեստագործական), 3.9 մլրդ դրամը՝ միջին մասնագիտական կրթության ծախսերն են: Նշված դասերի գծով ծրագրված ցուցանիշները կատարվել են համապատասխանաբար 97.6%-ով և 99.7%-ով:

Հաշվետու տարում նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության ծրագրի շրջանակներում կատարվել են ավելի քան 1.9 մլրդ դրամ ծախսեր՝ ապահովելով 97.7% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 14.4%-ով, ինչը

հիմնականում պայմանավորված է նվազագույն աշխատավարձի և էլեկտրաէներգիայի ու գազի սակագների բարձրացմամբ: Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական հաստատություններում սովորող ուսանողներին տրամադրվել է 371.7 մլն դրամ կրթաթոշակ՝ 96.7%-ով ապահովելով նախատեսված հատկացումները: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 10.7%-ով՝ պայմանավորված կրթաթոշակ ստացող սովորողների թվի աճով:

2013 թվականին միջին մասնագիտական կրթության ոլորտում 3.5 մլրդ դրամ է տրամադրվել միջին մասնագիտական կրթության գծով ուսանողական նպաստների, ավելի քան 370.8 մլն դրամ՝ միջին մասնագիտական կրթություն ստացող ուսանողների կրթաթոշակների վճարմանը: Նշված ծրագրերը կատարվել են համապատասխանաբար 99.7%-ով և 98.9%-ով: 2012 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են համապատասխանաբար 15.8%-ով և 16.7%-ով՝ հիմնականում պայմանավորված աշակերտների թվաքանակի և նվազագույն աշխատավարձի աճով:

2013 թվականին ՀՀ պետական բյուջեից ավելի քան 7.9 մլրդ դրամ տրամադրվել է բարձրագույն կրթության բնագավառին, որից շուրջ 7.3 մլրդ դրամը բարձրագույն մասնագիտական կրթության ծախսերն են, 687.4 մլն դրամը՝ հետբուհական մասնագիտական կրթության ծախսերը: Բարձրագույն կրթության ծախսերի տարեկան ծրագիրն ապահովվել է 97.4%-ով, իսկ նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 3.9%-ով կամ 299.4 մլն դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է ուսանողների միջին տարեկան թվի աճով և նվազագույն աշխատավարձի բարձրացմամբ:

Բարձրագույն մասնագիտական կրթության բնագավառին կատարված հատկացումների հաշվին իրականացվել են երեք ծրագրեր, որոնցում մեծ տեսակարար կշիռ ունեն բարձրագույն մասնագիտական կրթության գծով ուսանողական նպաստների տրամադրման համար կատարված հատկացումները: Նշված ծախսերը ֆինանսավորվել են 100%-ով՝ կազմելով շուրջ 5.2 մլրդ դրամ: Բարձրագույն մասնագիտական կրթություն ստացող ուսանողների կրթաթոշակներին տրամադրվել է 931.8 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 100%-ը: Շուրջ 1.2 մլրդ դրամ են կազմել բարձրագույն մասնագիտական կրթության ծրագրի ծախսերը, որոնք կատարվել են 89.8%-ով և 5.3%-ով գերազանցել նախորդ տարվա ցուցանիշը:

Հաշվետու տարում հետբուհական մասնագիտական կրթության բնագավառի ծախսերը կատարվել են 90.1%-ով՝ կազմելով ավելի քան 687.4 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ հետբուհական մասնագիտական կրթության ծախսերն աճել են 5.4%-ով, ինչը պայմանավորված է հետբուհական մասնագիտական կրթության և գիտական կադրերի պատրաստման գծով նպաստների տրամադրման ծախսերի աճով: Մասնավորապես՝ 24.0 մլն դրամ տրամադրվել է գիտական կադրերի պատրաստման գծով նպաստներին, որը կատարվել է 48.8%-ով (պայմանավորված ասպիրանտների թվաքանակի նվազմամբ՝ կապված օտար լեզվի ընդունելության

քննությունը չհաղթահարելու հետ) և 37.2%-ով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը, ինչը պայմանավորված է այն հանգամանքով, որ ասպիրանտուրայի հավանական դիմորդների համար 2013 թվականի պետական բյուջեով նախատեսվել է որոշակի գումար՝ օտար լեզվի և «Համակարգչից օգտվելու հմտություններ» առարկայի նախապատրաստական դասընթացների և տարբերակված ստուգումների անցկացման համար:

Ասպիրանտական և դոկտորանտական կրթաթոշակների համար 2013 թվականի պետական բյուջեից տրամադրվել է շուրջ 35.2 մլն դրամ, որը կատարվել է 70.5%-ով: Շեղումը պայմանավորված է ասպիրանտների և դոկտորանտների թվաքանակի նվազմամբ, որի հետ կապված նշված ծախսերը նվազել են նաև նախորդ տարվա համեմատ՝ 6.5%-ով:

Սփյուռքագիտության ոլորտում գիտական կադրերի պատրաստման գծով տրամադրվել են 1.8 մլն դրամ նպաստներ, որոնք ֆինանսավորվել են 50%-ով: Նախորդ տարվա համեմատ ևս նշված ծախսերը նվազել են 50%-ով: Ծրագրի շրջանակներում 12 ուսանողների հատկացվել են ուսման վճարներ: Մինչ այժմ ՀՀ պետական բյուջեի հաշվին պատրաստվել է 39 սփյուռքագետ: Ծրագիրն ամբողջությամբ չի իրականացվել՝ պայմանավորված համապատասխան մասնագետների նկատմամբ ոչ բավարար պահանջարկով:

Հետբուհական մասնագիտական կրթության գծով նպաստների տրամադրման և հետբուհական մասնագիտական կրթություն ստացող ուսանողների կրթաթոշակի ծախսերը համապատասխանաբար կազմել են 456.4 մլն և 170.0 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի կատարումը 93.6%-ով և 98.2%-ով: Հետբուհական մասնագիտական կրթության գծով նպաստների տրամադրման ծրագրի կատարողականը պայմանավորված է վերապատրաստվող բժիշկների և բուժքույրերի հանրակացարանային ծախսերի համար նախատեսված միջոցների տնտեսմամբ: Նախորդ տարվա համեմատ նպաստների գծով ծախսերն ավելացել են 15.9%-ով՝ հիմնականում պայմանավորված նվազագույն աշխատավարձի աճով, իսկ կրթաթոշակի գծով ծախսերը նվազել են 14.8%-ով՝ պայմանավորված ասպիրանտների և դոկտորանտների թվաքանակի նվազմամբ:

Հաշվետու տարում ըստ մակարդակների չդասակարգվող կրթության խմբի ծախսերը կազմել են շուրջ 3.9 մլրդ դրամ կամ նախատեսվածի 98.8%-ը, որից 2.8 մլրդ դրամը արտադպրոցական դաստիարակության, 1.1 մլրդ դրամը՝ լրացուցիչ կրթության ծախսերն են: 2012 թվականի համեմատ ըստ մակարդակների չդասակարգվող կրթության ծախսերն աճել են 10.3%-ով կամ 364.4 մլն դրամով: Ընդ որում՝ 12.5%-ով կամ 314.2 մլն դրամով ավելացել են արտադպրոցական դաստիարակության, 4.9%-ով կամ 50.2 մլն դրամով՝ լրացուցիչ կրթության ծախսերը:

Արտադպրոցական դաստիարակությանը 2013 թվականի պետական բյուջեից տրամադրվել է 10 մլն դրամ աջակցություն՝ ամբողջությամբ ապահովելով նախատեսված ծավալը: Ծրագրի շրջանակներում անցակցվել են բոնուսավարձի, հունա-հռոմեական ըմբշամարտի, ազատ ոճի

ըմբշամարտի, սեղանի թենիսի հանրապետական մրցաշարեր, ձեռք է բերվել 800 օրինակ ուսուցողական ֆիլմաշար: 2012 թվականի համեմատ նշված ծախսերը չեն փոփոխվել:

Շուրջ 1.7 մլրդ դրամ է հատկացվել արտադարձական դաստիարակության ծրագրի ֆինանսավորմանը՝ ապահովելով 99.9% կատարողական: 2012 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 12.4%-ով՝ կապված նվազագույն աշխատավարձի և գազի ու էլեկտրաէներգիայի սակագների բարձրացմամբ:

Շախմատի մրցույթների պատրաստման ծառայություններին 2013 թվականի պետական բյուջեից տրամադրվել է 12.3 մլն դրամ՝ ապահովելով 98.9% կատարողական: 2012 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 8.7%-ով, որը նույնպես պայմանավորված է նվազագույն աշխատավարձի և գազի ու էլեկտրաէներգիայի սակագների բարձրացմամբ:

«Արտադարձական դաստիարակություն հասարակական կազմակերպությունների կողմից» ծրագրի համար նախատեսված շուրջ 489.6 մլն դրամն ամբողջությամբ օգտագործվել է: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերն աճել են 5.8%-ով՝ պայմանավորված նվազագույն աշխատավարձի և գազի ու էլեկտրաէներգիայի սակագների բարձրացմամբ:

Երաժշտական և արվեստի դպրոցներում ազգային, փողային և լարային նվագարանների գծով ուսուցման նպատակով 2013 թվականի պետական բյուջեից տրամադրվել է 227.9 մլն դրամ, որը կազմել է նախատեսվածի 99.4%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 5.1%-ով՝ պայմանավորված երաժշտական և արվեստի դպրոցներում ազգային, փողային և լարային նվագարանների գծով սովորող երեխաների ուսման վարձավճարների փոխհատուցման չափի փոփոխությամբ. այն 2013 թվականին կազմել է 10455 դրամ՝ 2012 թվականի 11040 դրամի դիմաց:

Արտադարձական դաստիարակության գծով ՀՀ համայնքային բյուջեներին սուբվենցիաների տրամադրման համար նախատեսվել է շուրջ 119.1 մլն դրամ, որն ամբողջությամբ օգտագործվել է: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 3.2%-ով՝ կապված երաժշտական դպրոցների համար ձեռք բերվող գործիքների թվի կրճատման հետ:

Երաժշտական և արվեստի դպրոցներում ուսումնամեթոդական աշխատանքներին տրամադրվել է շուրջ 51.7 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Ծրագրի շրջանակներում Մշակութային կրթության աջակցության հիմնադրամը Երևանի 1 և մարզային 10 ներկայացուցչություններով հանրապետության երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցների սաներին ու ուսուցիչներին նախատեսված 6400-ի դիմաց իրականացրել է 8185 մեթոդական օգնություն և վերապատրաստման դասալսումներ: Նախորդ տարվա համեմատ այս ծախսերը գրեթե փոփոխություն չեն կրել:

2013 թվականի պետական բյուջեով երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցների համար ուսումնական նոր ծրագրերի, դասագրքերի, մեթոդական ձեռնարկների մշակման և

հրատարակման համար նախատեսված 17.1 մլն դրամն ամբողջությամբ օգտագործվել է: Ծրագրի շրջանակներում 2013 թվականին տպագրվել են գեղարվեստական կրթության 24 անուն ուսումնական նոր ծրագրեր, դասագրքեր, մեթոդական ձեռնարկներ՝ նախորդ տարվա 26-ի դիմաց: Հրատարակված գրականության մի մասն անվճար տրամադրվել է հանրապետության մշակութային կրթօջախներին: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը փոփոխություն չեն կրել:

Արտադարձական դաստիարակության բնագավառում «Վինդսերֆինգ մարզաձևին առնչվող ծառայություններ» ծրագրի գծով նախատեսվել է 45.5 մլն դրամ, որն ամբողջությամբ օգտագործվել է: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 1.6%-ով:

ՀՀ մանկապատանեկան մարզադպրոցներին, մարզաձևերի ազգային ֆեդերացիաներին և այլ մարզական հասարակական կազմակերպություններին գույքով ապահովման նպատակով տրամադրվել է ավելի քան 94.1 մլն դրամ՝ ապահովելով 94.1% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 91.1%-ով:

Մանկապատանեկան մարզադպրոցներում աշխատող մարզիչ-մանկավարժների վերապատրաստման կազմակերպման նպատակով հատկացվել է 4.5 մլն դրամ կամ նախատեսվածի 81%-ը, որը տնտեսման արդյունք է: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 3.3%-ով՝ կապված հանրապետությունում նվազագույն աշխատավարձի բարձրացման հետ:

«Հակոբ Կոջոյան» կրթահամալիր» ՊՈԱԿ-ում արտադարձական դաստիարակության կազմակերպման նպատակով պետության կողմից համայնքի ղեկավարին պատվիրակված լիազորությունների իրականացման ֆինանսավորման համար նախատեսված 6.5 մլն դրամն ամբողջությամբ օգտագործվել է: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը գրեթե փոփոխություն չեն կրել:

Իրավախախտում կատարած անչափահասների գեղագիտական դաստիարակության ծրագրերի իրականացմանը աջակցության նպատակով 2013 թվականին տրամադրվել է 13.7 մլն դրամ՝ 97.6%-ով ապահովելով նախատեսված ցուցանիշը: Ծրագրով նախատեսված ուսուցումը կազմակերպվել է «Իրավախախտում կատարած անչափահասների հատուկ ստեղծագործական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 35.1%-ով՝ պայմանավորված այն հանգամանքով, որ 2012 թվականին ծրագիրը գործել է տարվա կեսից:

2013 թվականին պետական բյուջեից «Դպրոցահասակ երեխաների մասնակցություն դպրոցական խաղերին» ծրագրով նախատեսված 49.5 մլն դրամն ամբողջությամբ օգտագործվել է: Ծրագիրը ներդրվել է 2013 թվականից: Ծրագրի շրջանակներում 2014 թվականի համաշխարհային խաղերին (հանդբոլ, սեղանի թենիս, վոլեյբոլ, ֆուտ-զալ) մասնակցության համար վճարվել է հավաստման գումար, ՀՀ դպրոցականները մասնակցել են Չեխիայում կայացած թեթև աթլետիկայի

դպրոցականների առաջնությանը, Բրազիլիայում կայացած «Գիմնագիադա 2013» համաշխարհային խաղերին:

Երաժշտական և արվեստի դպրոցների համար երաժշտական գործիքների ձեռքբերման նպատակով նախատեսված շուրջ 19.6 մլն դրամն ամբողջությամբ օգտագործվել է: Ծրագիրը ներդրվել է 2013 թվականից: Ծրագրի հաշվին երաժշտական դպրոցների համար ձեռք է բերվել 16 տեսակի 73 երաժշտական գործիք:

2013 թվականին պետական բյուջեից շուրջ 1.1 մլրդ դրամ է տրամադրվել *լրացուցիչ կրթությանը*՝ կազմելով ծրագրված ցուցանիշի 96.8%-ը: Նախորդ տարվա համեմատ լրացուցիչ կրթության ծախսերն աճել են 4.9%-ով:

« քաղաքացիական ծառայողների վերապատրաստման գծով պետական պատվերի շրջանակներում 2013 թվականին օգտագործվել է ավելի քան 22.9 մլն դրամ՝ ապահովելով 89.6% կատարողական: Ծրագրից շեղումը պայմանավորված է մի շարք պատճառներով՝ օրենսդրությամբ չարգելված այլ միջոցների հաշվին վերապատրաստումներով (միջազգային կազմակերպությունների կողմից, վարկային և դրամաշնորհային ծրագրերով), օրենքով նախատեսված համապատասխան մարմիններում տեղի ունեցող վերակազմավորումներով, կադրերի հոսունությամբ (թափուր պաշտոններ): 2013 թվականի ընթացքում « պետական բյուջեի հաշվին վերապատրաստվել է 1919 քաղաքացիական ծառայող՝ նախորդ տարվա 2045-ի դիմաց: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 13.6%-ով:

«Հանրային հատվածի ֆինանսական ոլորտի մասնագետների վերապատրաստման ծառայություններ» ծրագրի շրջանակներում նախատեսված 85.7 մլն դրամն ամբողջությամբ օգտագործվել է: Ծրագիրն իրականացվում է «Ուսուցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից և նախատեսված է բյուջետային բարեփոխումների և պետական ֆինանսների կառավարման զարգացումների բնագավառում հանրային ծառայողների վերապատրաստման արդյունավետ իրականացման համար: Ծրագրի ծախսերը նախորդ տարվա համեմատ գրեթե չեն փոփոխվել:

Լրացուցիչ կրթության ուսուցման գծով պետական պատվերի գծով ծախսվել է ավելի քան 17.7 մլն դրամ՝ 99.9%-ով ապահովելով նախատեսված ծավալը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը չեն փոփոխվել: Գումարն օգտագործվել է դատախազների տարեկան լրացուցիչ վերապատրաստման համար:

« արդարադատության նախարարության հատուկ ծառայողների վերապատրաստման և հատուկ ուսուցման նպատակով ծախսվել է ավելի քան 354.0 մլն դրամ՝ 99.8%-ով ապահովելով նախատեսված ծավալը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 22.2%-ով: 2013 թվականին վերապատրաստվողների և հատուկ ուսուցում անցնողների թվաքանակը կազմել է 3125՝ 2012 թվականի 2570-ի դիմաց:

Հաշվետու տարում ընտրական հանձնաժողովների անդամների մասնագիտական դասընթացների կազմակերպման ծախսերը կազմել են 29.6 մլն դրամ կամ նախատեսվածի 66.4%-ը և 44.9%-ով զիջել են նախորդ տարվա ցուցանիշը: Ծրագիրը ֆինանսավորվել է դասընթացների համար դիմած քաղաքացիների խմբերի փաստացի թվի հիման վրա: 2013 թվականին ընտրական հանձնաժողովների անդամների մասնագիտական դասընթացների կազմակերպումն իրականացվել է նաև Ընտրական համակարգերի միջազգային հիմնադրամի կողմից:

Կադրերի պատրաստման և վերապատրաստման ծառայությունների գծով նախատեսված 80.3 մլն դրամն ամբողջությամբ օգտագործվել է: Նախորդ տարվա համեմատ ծախսերի աճը կազմել է 20.6%՝ կապված հանրապետությունում նվազագույն աշխատավարձի բարձրացման հետ:

Օտարերկրյա պետությունների ուսումնական հաստատություններ գործուղված փրկարարական ծառայողների ուսուցման ծախսերը կազմել են շուրջ 13.5 մլն դրամ՝ ապահովելով 95.5% կատարողական: Ծախսերը ներառում են ՌԴ ԱԻՆ քաղաքացիական պաշտպանության ակադեմիա գործուղված փրկարարական ծառայողների ճանապարհածախսը, կրթաթոշակը և բնակվարձը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 4.5%-ով:

ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի պետական ծառայողների վերապատրաստման նպատակով տրամադրվել է 599 հազար դրամ՝ ապահովելով 65.4% կատարողական: Շեղումը պայմանավորված է փաստացի վերապատրաստվածների՝ նախատեսվածից քիչ քանակով: Ծրագրի շրջանակներում վերապատրաստվել է 35 աշխատակից: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 4%-ով:

Հաշվետու տարում դատավորների, դատական ծառայողների, դատական կարգադրիչների վերապատրաստման ծառայություններին տրամադրվել է ավելի քան 176.6 մլն դրամ, որը կատարվել է 96.7%-ով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 11.7%-ով՝ պայմանավորված վերապատրաստվողների թվաքանակի աճով:

Ավելի քան 205.7 մլն դրամ է տրամադրվել «Վերապատրաստման ծառայություններ» ծրագրին՝ 95.2%-ով ապահովելով նախատեսված ցուցանիշը: Միջոցներն ուղղվել են ՀՀ դատախազության, ՀՀ հատուկ քննչական ծառայության, ՀՀ տարածքային կառավարման նախարարության, ՀՀ արտաքին գործերի նախարարության և Ազգային անվտանգության խորհրդի աշխատակիցների վերապատրաստմանը: Վերապատրաստման ծառայությունների ծախսերը նախորդ տարվա համեմատ նվազել են 3.2%-ով՝ կապված վերապատրաստվողների փաստացի թվաքանակի հետ:

«Մասնագիտական վերապատրաստում ստացող ունկնդիրների կրթաթոշակ» ծրագրի գծով նախատեսված շուրջ 5.9 մլն դրամն օգտագործվել է ամբողջությամբ: Ծրագիրը մեկնարկել է 2013 թվականից:

Լրացուցիչ կրթության դասում հարկային և մաքսային ծառայողների վերապատրաստման ծառայություններին տրամադրվել է 72.2 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 54.8%-ով:

2013 թվականի պետական բյուջեի կրթության ոլորտի ծախսերի 12.2%-ն ուղղվել է *կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայությունների* ֆինանսավորմանը: Նշված ծախսերը կազմել են ավելի քան 12.6 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրային հատկացումների 81.6%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է ՀԲ աջակցությամբ իրականացվող կրթության որակի և համապատասխանության երկրորդ ծրագրի կատարողականով: 2012 թվականի համեմատ կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայությունների ծախսերը նվազել են 13.3%-ով:

2013 թվականին սփյուռքի հայկական դպրոցների ուսուցիչների վերապատրաստման ծախսերը կազմել են շուրջ 4.1 մլն դրամ՝ ապահովելով 12.3% կատարողական: Ծրագրի շրջանակներում 2013 թվականին նախատեսված 175 ուսուցչի փոխարեն վերապատրաստվել են 149 սփյուռքահայ ուսուցիչներ (2012 թվականին՝ 127), քանի որ վերապատրաստման դասընթացներին չեն մասնակցել Վրաստանի և Սիրիայի ուսուցիչները: Տնտեսում է առաջացել նաև նախատեսված միջոցառումների մասով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 88.7%-ով:

Տվյալ խմբում ընդգրկված՝ կրթական օբյեկտների հիմնանորոգման ծախսերը կազմել են ավելի քան 3.6 մլրդ դրամ՝ 92.8%-ով ապահովելով ծրագրային ցուցանիշը: Ծրագրի շրջանակներում հիմնանորոգվել են 73 կրթական օբյեկտներ՝ նախորդ տարվա 98-ի դիմաց: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 12.1%-ով՝ պայմանավորված հիմնանորոգման աշխատանքների ծավալների կրճատմամբ:

Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների հիմնանորոգման ծախսերին տրամադրվել է շուրջ 30.5 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Ծրագրի շրջանակներում հիմնանորոգվել է մեկ միջին մասնագիտական կրթական օբյեկտ՝ 2012 թվականի 2 օբյեկտի դիմաց: Նախորդ տարվա համեմատ այս նպատակով կատարված բյուջետային ծախսերն աճել են 17.6%-ով:

Ուսանողներին զեղչային գներով հանրակացարանային պայմանների տրամադրման ծախսերը կատարվել են 69.3%-ով և կազմել շուրջ 24.3 մլն դրամ: Ծրագրից օգտվել է 200 ուսանող՝ նախատեսված 300-ի և նախորդ տարվա 247-ի դիմաց: Արդյունքում նախորդ տարվա համեմատ այս ծախսերը նվազել են 11.9%-ով:

Կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայությունների խմբում ընդգրկված՝ կրթական օբյեկտների շինարարությանը « 2013 թվականի պետական բյուջեից տրամադրվել է ավելի քան 1.5 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրի 97.7%-ը: Ծրագրի շրջանակներում հաշվետու տարում « քաղաքաշինության նախարարության կողմից կատարվել են շինարարական աշխատանքներ 12 կրթական օբյեկտներում՝ նախորդ տարվա 16 կրթական օբյեկտների դիմաց: Իսկ « Գեղարքունիքի

մարզպետարանի կողմից նախատեսված մեկ օբյեկտի գծով շինարարության ծախսերը թերակատարվել են եղանակային պայմանների պատճառով: Նախորդ տարվա համեմատ ծրագրի գծով բյուջետային ծախսերը նվազել են 9.3%-ով:

2013 թվականին շուրջ 165 մլն դրամ է տրամադրվել մարզական օբյեկտների շինարարությանը՝ ապահովելով 96.1% կատարողական: Ծրագրի շրջանակներում, ինչպես և 2012 թվականին, կառուցվել է 3 մարզադպրոց: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 1.7%-ով:

Ավագ դպրոցների շենքերի հիմնանորոգման ծախսերը կատարվել են 99.9%-ով և կազմել ավելի քան 416.4 մլն դրամ: Ծրագրի շրջանակներում կատարվել են 9 ավագ դպրոցների հիմնանորոգման աշխատանքներ՝ նախորդ տարվա 10-ի դիմաց: 2012 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 14%-ով:

Դպրոցականների ամառային հանգստի կազմակերպմանն ուղղվել է 238.7 մլն դրամ, ապահովելով 99.8% կատարողական: 2013 թվականին ծրագրի շրջանակներում, ինչպես և 2012 թվականին, կազմակերպվել է 3000 երեխայի ամառային հանգիստը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 0.8%-ով՝ կապված հանրապետությունում նվազագույն աշխատավարձի բարձրացմամբ:

Ավարտական փաստաթղթերի՝ գովասանագրերի, դասամատյանների, մեդալների, ծրարների, ուսումնական ծրագրերի, մանկավարժական պարբերականների և ուսումնադիտողական պարագաների ձեռքբերման նպատակով ծախսվել է 322.1 մլն դրամ՝ ապահովելով 98.5% կատարողական: Նախորդ տարվա համեմատ ծախսերը նվազել են 1.0%-ով՝ պայմանավորված 2013 թվականին ուսումնական ծրագրերի, մանկավարժական պարբերականների և ուսումնադիտողական պարագաների քիչ քանակությամբ ձեռքբերման հանգամանքով:

Տարրական դասարանների աշակերտներին անվճար դասագրքերով և ուսումնական գրականությամբ ապահովման ու ավագ դպրոցների դասագրքերի հրատարակման ծրագրի շրջանակներում « 2013 թվականի պետական բյուջեից կատարվել են շուրջ 754.1 մլն դրամի ծախսեր՝ 100%-ով ապահովելով ծրագրային ցուցանիշը: Նախորդ տարվա համեմատ այս ծախսերը նվազել են 1.4%-ով՝ պայմանավորված աշակերտների թվի նվազման հետ կապված ավելի քիչ քանակով դասագրքեր ձեռքբերելու հանգամանքով:

« Իեռավոր, սահմանամերձ, լեռնային և բարձր լեռնային բնակավայրերի պետական հանրակրթական դպրոցների մանկավարժներին փոխհատուցման նպատակով օգտագործվել է շուրջ 43.5 մլն դրամ՝ 68.8%-ով կատարելով ծրագիրը: Ծրագրի շրջանակներում գործուղված մանկավարժների թիվը կազմել է 270՝ նախատեսված 310-ի և նախորդ տարվա 272-ի դիմաց: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 5.2%-ով՝ պայմանավորված գործուղված մանկավարժների թվի նվազմամբ:

Հանրակրթական դպրոցների մանկավարժներին և դպրոցահասակ երեխաներին տրանսպորտային ծառայությունների մատուցման նպատակով տրամադրվել է շուրջ 54.8 մլն դրամ՝ ապահովելով 99.2% կատարողական: Ծրագրի շրջանակներում իրականացվել է Երևան քաղաքի և 7 մարզերի գյուղական բնակավայրերից մանկավարժների և դպրոցահասակ երեխաների տեղափոխումը: Նախորդ տարվա համեմատ այս ծախսերն աճել են 0.8%-ով:

Ռազմագիտության կաբինետների վերականգնման համար 2013 թվականի պետական բյուջեից տրամադրվել է 15.3 մլն դրամ, որը կատարվել է նախատեսված ծավալով: Ձեռք է բերվել ռազմաուսուցողական, ազգային հերոսների մասին, Արցախյան ազատամարտի մասին 7525 օրինակ DVD տեսասկավառակ: Նախորդ տարվա համեմատ այս ծախսերը մնացել են անփոփոխ:

Դպրոցականների հանրապետական սպարտակիադայի անցկացման համար տրամադրվել է 35 մլն դրամ, որը կատարվել է 100%-ով: Անց են կացվել ՀՀ անկախության 22-րդ տարեդարձին նվիրված դպրոցականների հանրապետական 22-րդ խաղերը 6 մարզաձևերից: Խաղերին մասնակցել է 2804 մասնակից՝ 2012 թվականի 2746-ի դիմաց: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը ևս չեն փոփոխվել:

Դպրոցականների օլիմպիադաների անցկացման ծախսերը կազմել են շուրջ 62.7 մլն դրամ՝ 100%-ով կատարելով ծրագիրը: 2013 թվականին անց են կացվել հանրապետության դպրոցականների առարկայական օլիմպիադաների հանրապետական փուլերը հանրակրթական 16 առարկաներից: Մասնակցել է 1468 դպրոցական՝ 2012 թվականի 1267-ի դիմաց: Հանրապետական փուլի հաղթող դպրոցականներից 30 լավագույնները մասնակցել են նաև միջազգային օլիմպիադաներին՝ 6 առարկաներից: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 50.8%-ով:

Համակարգչային և ինտերնետային կապի ծառայությունների ծախսերը հաշվետու տարում կազմել են ավելի քան 861.4 մլն դրամ, որոնք ամբողջությամբ կատարվել են: Ծրագիրն իրականացվել է 1396 դպրոցում՝ նախորդ տարվա 1401-ի դիմաց: Դպրոցների թվի նվազեցումը պայմանավորված է դպրոցների միավորմամբ: Նախորդ տարվա նկատմամբ նշված ծախսերն աճել են 22.9%-ով՝ պայմանավորված 457 դպրոցների սպասարկումը 2012 թվականի 3 ամսվա փոխարեն ամբողջ տարվա ընթացքում իրականացնելու հանգամանքով և էլեկտրաէներգիայի ու գազի սակագների բարձրացմամբ:

Ավելի քան 423.9 մլն դրամ տրամադրվել է գնահատման և թեստավորման ծառայություններին, որոնք մատուցվում են «Գնահատման և թեստավորման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից: Նախատեսված միջոցներն ամբողջությամբ օգտագործվել են, իսկ նախորդ տարվա համեմատ նվազել են 5%-ով՝ պայմանավորված 2013 թվականին ավարտական և միասնական քննություններ հանձնողների թվի կրճատմամբ: «Գնահատման և թեստավորման կենտրոնը» 2013

թվականին կազմակերպել և անց է կացրել հիմնական և լրացուցիչ փուլի պետական ավարտական և միասնական քննություններ: Հիմնական փուլի միասնական քննություններին մասնակցել է ընդհանուր առմամբ 14896 դիմորդ, իսկ լրացուցիչ փուլին՝ 1426 դիմորդ: Համաձայն պետական ավարտական և միասնական քննությունների ուղեցույցների՝ մշակվել, տպագրվել և անվճար հանրակրթական դպրոցներին են բաշխվել թեստերը և պատասխանների ձևաթղթերը, իրականացվել են նախապատրաստական աշխատանքներ, 2013 թվականին առաջին անգամ Երևանի Աջափնյակ և Դավիթաշեն համայնքներում փորձարկվել է դիմում-հայտերի հավաքագրման նոր՝ առցանց եղանակ, որի ընթացքում 603 դիմորդներ հայտագրվել են նոր համակարգով: Հանդիպումներ են կազմակերպվել «Հայոց լեզու և հայ գրականություն», «Անգլերեն», «Ֆրանսերեն» և «Կենսաբանություն» առարկաների շտեմարանների քննարկման նպատակով, որին մասնակցել են ավելի քան 250 մասնագետներ: Օգոստոս ամսից իրականացվել են 2014 թվականի պետական ավարտական և միասնական քննությունների շտեմարաններում զետեղվող առաջադրանքների թեստաբանական փորձաքննության աշխատանքներ: Վերապատրաստվել է ԳԹԿ 443 ներկայացուցիչ և քննական կենտրոնի ղեկավար, 114 միասնական քննության օպերատոր, ապրիլ-մայիս ամիսներին առաջին անգամ Երևանում և ՀՀ մարզերում իրականացվել է փորձնական միասնական քննություն «Հայոց լեզու և հայ գրականություն» առարկայից, որին մասնակցել է մոտ 4500 շրջանավարտ, մշակվել և տպագրվել են էքստեռն քննությունների առարկայական թեստեր, հրատարակվել է «Հանրակրթություն. գնահատում և թեստավորում» տեղեկատվական-վերլուծական հանդեսի 2 համար և այլ աշխատանքներ:

Հանրակրթությունում փորձարարական մանկավարժական ծրագրերի իրականացմանը տրամադրվել է 97.3 մլն դրամ, որն ամբողջությամբ օգտագործվել է: Ծրագրում ընդգրկված աշակերտների թիվը 2013 թվականին կազմել է ավելի քան 10000՝ 2012 թվականի 7275-ի դիմաց, մեծահասակների թիվը՝ ավելի քան 5000, հեղինակային կրթական ծրագրով մշակվել և վերամշակվել են ավելի քան 60 ծրագիր և դրանց իրականացման համար 100-ից ավելի ուսումնական նախագծեր, ուսուցման կազմակերպման 20-ից ավելի կարգեր, 201 սան ընդգրկվել է նախադպրոցական հեղինակային կրթության ծրագրում: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 2.5%-ով՝ պայմանավորված հանրապետությունում նվազագույն աշխատավարձի բարձրացմամբ:

Սփյուռքի հայկական կրթական հաստատություններին ուսումնական գրականության և օժանդակ նյութերի մշակման և տրամադրման համար 2013 թվականի պետական բյուջեից տրամադրվել է ավելի քան 76.8 մլն դրամ՝ ապահովելով նախատեսվածի 96%-ը: Հատկացված միջոցների հաշվին ձեռք է բերվել 51200 հատ դասագիրք (2012 թվականի 48984-ի դիմաց), ուսուցողական տետրեր, ուսուցողական խտասկավառակներ, բառարաններ, մշակվել են

մեթոդական նյութեր, այդ թվում՝ նաև արևմտահայերենով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 3%-ով՝ պայմանավորված 2013 թվականին կատարված ձեռքբերումների քանակի կրճատմամբ:

Շուրջ 17.8 մլն դրամ է տրամադրվել Ջավախքի դպրոցների համար գույքի ձեռքբերման նպատակով, որը կատարվել է 59.2%-ով: Տնտեսումն առաջացել է մրցույթների արդյունքում: 2012 թվականի համեմատ տվյալ ծախսերն աճել են 12.8%-ով՝ պայմանավորված տրամադրված գույքի ծավալի աճով:

2013 թվականի պետական բյուջեից հատուկ դպրոցների համար նախատեսված ծրագրերի, դասագրքերի, ձեռնարկների, ուսումնական այլ նյութերի մշակման և հրատարակման համար կատարվել են շուրջ 16 մլն դրամի ծախսեր՝ ապահովելով ծրագրված ցուցանիշի 99.9%-ը: Ծրագրի շրջանակներում մշակվել և տպագրվել են 4295 օրինակ 10 անուն ուսումնական այլ նյութեր (2012 թվականին՝ 4660), ձեռք են բերվել 2000 օրինակ բրայյան տետրեր: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը գրեթե չեն փոփոխվել:

2013 թվականին ակադեմիական փոխճանաչման և շարժունության ծառայությունների ծրագրին պետական բյուջեից նախատեսվել և տրամադրվել է շուրջ 42 մլն դրամ: Ծրագրի շրջանակներում մշակվել է 510 անուն փաստաթուղթ՝ նախորդ տարվա 960-ի դիմաց, տրամադրվել է 165 խորհրդատվական տեղեկանք: 2012 թվականի համեմատ մշակված փաստաթղթերի քանակի նվազումը պայմանավորված է Իրանի Իսլամական Հանրապետությունից եկող ուսանողների թվի կրճատմամբ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 0.7%-ով:

Բարձրագույն մասնագիտական կրթության գնահատման համակարգի բարեփոխումների շրջանակներում հաշվետու տարում ծախսվել է 140 մլն դրամ (100%): Նշված ծրագրի շրջանակներում իրականացվել են Բոլոնիայի գործընթացին հետամուտ խմբի, խորհրդի, տարբեր աշխատանքային բաղադրիչների շուրջ 25 հանդիպում, սպասարկվել է անգլալեզու բարձրագույն կրթության պորտալի սպասարկման կայքը, իրականացվել է ՀՀ ուսանողների սոցիալական կարիքների և Բոլոնիայի գործընթացի գնահատման հետազոտություն, վերախմբագրվել և վերահրատարակվել է HIGHER EDUCATION IN ARMENIA (անգլերեն) ուղեցույցը և այլն: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 55.6%-ով, ինչը պայմանավորված է այն հանգամանքով, որ Հայաստանը 2012 թվականի հուլիսի 1-ից ընտրվել է Բոլոնիայի գործընթացի շրջանակում հաջորդ նախարարական գագաթաժողովը և Քաղաքական ֆորումը հյուրընկալող երկիր:

Կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայությունների դասում ընդգրկված՝ մարզական օբյեկտների հիմնանորոգման համար հատկացվել է 159.3 մլն դրամ՝ ապահովելով ծրագրված ցուցանիշի 99.8%-ը: Ծրագրի շրջանակներում իրականացվել է Երևան քաղաքի «Տորք Անգեղ»

մարզական միության շենքի հիմնանորոգումը: 2012 թվականի համեմատ այս ծախսերն աճել են 144.5%-ով՝ պայմանավորված շինարարական աշխատանքների ծավալով:

Հաշվետու տարում պետական բյուջեից 496.2 մլն դրամ է տրամադրվել է կրթության բովանդակային և մեթոդական սպասարկման ու հանրապետության հանրակրթական դպրոցների ուսուցիչների վերապատրաստման ծրագրին, որն ամբողջությամբ օգտագործվել է: Վերապատրաստման դասընթացներին մասնակցած ունկնդիրների թիվը կազմել է 10031՝ 2012 թվականի 15454-ի դիմաց, մշակված և փորձագիտական եզրակացություն ստացած էջերի թիվը կազմել է 48001՝ 2012 թվականի 56524-ի դիմաց: 2012 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 1.0%-ով՝ պայմանավորված նվազագույն աշխատավարձի և գազի ու էլեկտրաէներգիայի սակագների բարձրացմամբ:

Երեխաների ֆիզիկական, մտավոր և (կամ) հոգեկան զարգացման առանձնահատկությունների բացահայտում և գնահատում» ծրագրի գծով « 2013 թվականի պետական բյուջեի ծախսերը կազմել են 174.9 մլն դրամ կամ նախատեսվածի 100%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 19.5%-ով՝ կապված նվազագույն աշխատավարձի բարձրացմամբ և երեխաների միջին տարեկան թվի աճով: 2013 թվականին կրթության առանձնահատուկ կարիք ունեցող երեխաների կրթության կարիքների գնահատման մասով երեխաների ճշտված միջին տարեկան թիվը կազմել է 150՝ 2012 թվականի 130-ի դիմաց:

2013 թվականի պետական բյուջեից նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության և ուսուցման բարեփոխումների ուղղությամբ կատարվել են ավելի քան 165.7 մլն դրամի ծախսեր, որը կազմում է նախատեսվածի 99.9%-ը: Ծրագրի շրջանակներում մշակվել են մի շարք մասնագիտությունների չափորոշիչներ, ուսումնական պլաններ և մոդուլային ծրագրեր, ուսումնական 13 ձեռնարկներ, վերապատրաստվել են հաստատությունների տնօրեններ, փոխտնօրեններ, մանկավարժներ, փորձագետներ, կատարվել են հետազոտական, բարեփոխումների արդյունքների գնահատման աշխատանքներ և այլն: 2012 թվականի համեմատ նշված ծախսերը գրեթե չեն փոփոխվել:

2013 թվականին 66.8 մլն դրամ է տրամադրվել մասնագիտական կրթության որակի ապահովման ծառայություններին, որոնք ամբողջությամբ օգտագործվել են: Ծրագիրն իրականացվում է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի կողմից: Հիմնադրամը հետապնդում է մասնագիտական կրթության ոլորտում ուսումնասիրություններ, վերլուծություն, խորհրդատվություն և գնահատում իրականացնելու նպատակներ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 1.6%-ով՝ պայմանավորված նվազագույն աշխատավարձի բարձրացմամբ:

2013 թվականի պետական բյուջեից միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում ներդրումների նպատակով օգտագործվել է 4.3 մլն դրամ, որը կատարվել է 96.2%-ով: Ծրագիրը սկսել է գործել 2013 թվականից:

2013 թվականին 120 մլն դրամ է տրամադրվել սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների դասագրքերի վարձավճարների փոխհատուցմանը, որոնք ամբողջությամբ օգտագործվել են և նախորդ տարվա համեմատ մնացել անփոփոխ: Ծրագրի շրջանակներում հանրապետության թվով 1343 դպրոցներին հատկացվել են միջոցներ սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների դասագրքերի վարձավճարների փոխհատուցման նպատակով:

2013 թվականին դասական երաժշտական բարձրագույն կրթության զարգացմանը տրամադրվել է ավելի քան 86.2 մլն դրամ կամ նախատեսվածի 100%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 84.8%-ով, ինչը հիմնականում պայմանավորված է երաժիշտների թվի աճով (2013 թվականին երիտասարդական նվագախմբի կազմում աշխատել են 131 երաժիշտներ՝ 2012 թվականի 94-ի փոխարեն) և հանրապետությունում նվազագույն աշխատավարձի փոփոխությամբ պայմանավորված՝ աշխատակիցների աշխատավարձերի բարձրացմամբ:

2013 թվականին ՀԲ աջակցությամբ իրականացվող Կրթության որակի և համապատասխանության երկրորդ վարկային ծրագրի շրջանակներում օգտագործվել է շուրջ 1.8 մլրդ դրամ կամ նախատեսվածի 44.5%-ը: Ծրագրին կառավարությունը մասնակցություն է ցուցաբերել 344.2 մլն դրամի չափով, իսկ վարկային միջոցները կազմել են ավելի քան 1.4 մլրդ դրամ: Ծրագրի «Հանրակրթության որակի բարելավում» ենթածրագրի շրջանակներում իրականացվել են աշխատանքներ հետևյալ բաղադրիչների գծով.

- Դպրոցին երեխաների պատրաստվածության մակարդակի բարձրացում և կրթության հավասար մեկնարկային հնարավորությունների ապահովում,
- Կրթության որակի հետագա բարելավում՝ ուսուցիչների վերապատրաստման և մասնագիտական զարգացման միջոցով,
 - Ուսումնական գործընթացում ՏՀՏ-ի ներդրում,
 - Աջակցություն ավագ դպրոցի բարեփոխումներին:

«Բոլոնիայի գործընթացի համատեքստում աջակցություն բարձրագույն կրթության բարեփոխումներին» ենթածրագրի շրջանակներում իրականացվել են աշխատանքներ հետևյալ բաղադրիչների գծով.

 - Որակի ապահովման ազգային համակարգի ստեղծում և ամրապնդում՝
 - Բարձրագույն կրթության որակի արտաքին գնահատման և ապահովման համակարգի ամրապնդման համար՝ փորձագիտական աջակցության տրամադրում Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնին (ՄԿՈԱՊԱԿ),

- ՄԿՈԱՊԱԿ-ի կողմից բուիերի 400 ներկայացուցիչների վերապատրաստում՝ որակի արտաքին և ներքին ապահովման մեխանիզմների շուրջ,

- ՄԿՈԱՊԱԿ-ի կողմից բուիերի ինստիտուցիոնալ փորձնական հավատարմագրում,

- որակի ապահովման ներբուիական համակարգի ներդրման նպատակով՝ պետական և ոչ պետական բուիերին դրամաշնորհների տրամադրում,

- Մասնագիտական կրթության կառավարման տեղեկատվական տեղեկատվական համակարգի մշակում և ներդրում,

- Աջակցություն բարձրագույն կրթության կայուն ֆինանսական համակարգի ներդրմանը՝

- Աջակցություն նորարարությունների մրցակցային հիմնադրամի (ՆՄՀ) կողմից դրամաշնորհների տրամադրմանը բուիերին,

- Աջակցություն բարձրագույն մանկավարժական կրթության բարեփոխման ծրագրին՝

- Բարձրագույն մանկավարժական կրթության բարեփոխման նպատակով ՀՊՄՀ-ի և եվրոպական բուիի հետ համագործակցություն

- Լաբորատոր սարքավորումների գնում ՀՀ մանկավարժական կրթություն իրականացնող բուիերի համար:

Ուսուցիչների ատեստավորման գծով ծախսերը կազմել են շուրջ 2.3 մլն դրամ կամ ծրագրի 16.9%-ը: Ծախսերի ցածր կատարողականը պայմանավորված է տարածքային հանձնաժողովներում ընդգրկված՝ նախարարության աշխատակիցների թիվը նախատեսվածից պակաս լինելու արդյունքում գործուղման ծախսերի տնտեսմամբ: Սակայն նախորդ տարվա համեմատ տարածքային հանձնաժողովներում ընդգրկված աշխատակիցների թվաքանակն աճել է, ինչի արդյունքում ծախսերն ավելացել շուրջ 3 անգամ:

2013 թվականին «Հայ ասպետ» հեռուստամրցաշարի անցկացմանը պետական բյուջեից հատկացվել է 67.5 մլն դրամ, որն ամբողջությամբ օգտագործվել է: ՀՀ հանրային հեռուստաալիքով հեռարձակվող հեռուստամրցաշարին մասնակցել են թվով 81 դպրոցների 567 աշակերտներ: Կազմակերպվել է «Հայ ասպետյան ասպարեզ» հեռուստախաղը, որին մասնակցել է 40 պատանի: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը գրեթե չեն փոփոխվել:

Հալեպի համալսարանում հայոց լեզվի դասավանդման կազմակերպման համար նախատեսված շուրջ 4.9 մլն դրամը չի օգտագործվել՝ Սիրիայում պատերազմական իրավիճակի պատճառով: 2012 թվականին նշված ծրագրի ծախսերը կազմել էին 4.5 մլն դրամ:

Արտասահմանում սովորող ուսանողներին հաշվետու տարում հատկացվել է 100 մլն դրամ աջակցություն, որն ամբողջությամբ օգտագործվել է: 2012 թվականի համեմատ նշված ծախսերը փոփոխություն չեն կրել: Ծրագիրն իրականացվում է «Լույս» մշակութային, գիտական, կրթական հիմնադրամի կողմից, որի առաքելությունն է՝

- ստեղծել ու համախմբել առաջադեմ և ստեղծագործ մտածելակերպ ունեցող ուսանողների սերունդ՝ բազմապատկելով աշխարհի լավագույն համալսարաններ հաճախող հայ ուսանողների թիվը՝ նրանց տրամադրելով նյութական, մենթորական և այլ աջակցություն,

- ստեղծել ենթակառուցվածք, որն ի մի կբերի «Լույսի»-ի ուսանողների գիտելիքները, փորձառությունն ու կապերը, և կառաջարկի ծրագրեր, որոնք կօգնեն ուսումնական ձեռքբերումներից անցում կատարել իրական աշխարհի նվաճումներին՝ ի բարօրության Հայաստանի:

Ատեստավորման միջոցով որակավորում ստացած ուսուցիչների հավելավճարների տրամադրմանն ուղղվել է 9 մլն դրամ՝ կազմելով ծրագրի 22.8%-ը: Միջոցները չեն օգտագործվել տարակարգերի շնորհման համար իրականացված ատեստավորման արդյունքների հետ կապված. տարակարգ է շնորհվել ընդամենը 87 ուսուցչի՝ նախատեսված 186-ի և 2012 թվականի 19-ի դիմաց: 2012 թվականի համեմատ ծախսերն աճել են 4.6 անգամ:

Դպրոցահասակ երեխաներին սննդով ապահովման նպատակով նախատեսված 154.3 մլն դրամը չի օգտագործվել: Այն նախատեսված էր տրամադրել ՄԱԿ-ի պարենի համաշխարհային ծրագրի հայաստանյան գրասենյակին, սակայն միջոցները չեն փոխանցվել, քանի որ նախորդ տարվանից վերջինիս մոտ մնացել էր չիրացված գումար, որն էլ ծախսվել է 2013 թվականի ընթացքում: ՄԱԿ-ի պարենի ծրագրի շրջանակներում կազմակերպվել են դպրոցահասակ երեխաների սննդի փոխադրումները, որի արդյունքում շուրջ 50000 երեխա ապահովվել է սննդով: 2012 թվականին նշված ծախսերը կազմել էին 72.1 մլն դրամ:

2013 թվականին 10 մլն դրամ է տրամադրվել կրթական նոր տեխնոլոգիաների ներդրման ծրագրին: Ծրագիրը նպատակաուղղված է մշակելու տարատարիք ուսումնական խմբերում մաթեմատիկա առարկայի դասավանդման հայեցակարգային դրույթները, մշակելու և փորձարկելու ուսուցման կազմակերպման համար նախատեսված ուսումնադիդակտիկ նյութերը: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերը մնացել են անփոփոխ:

Բուխարեստի համալսարանում հայոց լեզվի դասավանդման կազմակերպմանը տրամադրվել է 1.7 մլն դրամ՝ ապահովելով 22.5% կատարողական: Ծրագրի շրջանակներում մեկ դասախոս իրականացրել է հայոց լեզվի դասավանդում Բուխարեստի համալսարանում: Դասախոսի վարձատրությունը, համաձայն պայմանագրի, կատարվել է փաստացի աշխատած ժամանակահատվածի համար, որի հետևանքով առաջացել է տնտեսում: 2012 թվականի համեմատ նշված ծախսերը նվազել են 55.1%-ով:

Կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայությունների դասում նախատեսված հետևյալ 7 ծրագրերի ֆինանսավորումը, որոնք սկսվել են 2013 թվականին, իրականացվել է ամբողջ ծավալով:

Սփյուռքագիտության ոլորտում գիտական կադրերի պատրաստման գծով նպաստների տրամադրմանը հատկացվել է 3.6 մլն դրամ: Ծրագրի շրջանակներում մեկ դասախոս իրականացրել է դասախոսություն սփյուռքագիտության ոլորտում Զալցբուրգի համալսարանում:

Աուտիզմ և զարգացման այլ խանգարումներ ունեցող երեխաների բուժման, վերականգնման, կրթության և զբաղվածության ապահովման ծրագրին տրամադրվել է 56.4 մլն դրամ: Ծրագրով նախատեսվել և իրականացվել են թվով 50 երեխայի կրթաբուժական ծառայություններ:

Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատությունների համար աստիճանակարգման և դասակարգման համակարգի մշակման ծրագրի գծով հատկացվել է շուրջ 6.5 մլն դրամ:

Հայաստանի Հանրապետության դպրոցներում ՏՀՏ կիրառման արդյունավետության բարձրացման նպատակով ՀՀ հանրակրթական համակարգում ՏՀՏ կիրառման մոնիթորինգի ազգային համակարգի ստեղծման և նոր հանրային քաղաքականության փաստաթղթի մշակման ծախսերը կազմել են շուրջ 6.1 մլն դրամ:

Երիտասարդ աստղագետների համար Անանիա Շիրակացու 1400-ամյակին նվիրված Բյուրականի միջազգային ամառային դպրոցի կազմակերպման նպատակով ՅՈՒՆԵՍԿՈ-ի կողմից տրամադրված միջոցների հաշվին ծախսվել է շուրջ 6.1 մլն դրամ:

Քաղցրահամ ջրերի մոնիթորինգի և պահպանման գործում Ժամանակակից տեխնոլոգիաների կիրառման ծրագրի ծախսերը կազմել են 8.2 մլն դրամ:

ՄԱԶԾ-ի կողմից իրականացվող Մասնագիտական կրթության և ուսուցման (ՄԿՈԻ) հաստատությունների ենթակառուցվածքների բարելավման դրամաշնորհային ծրագրի շրջանակներում օգտագործվել է շուրջ 225 մլն դրամ: Ծրագրին կառավարությունը մասնակցություն է ցուցաբերել 22.5 մլն դրամի չափով, իսկ դրամաշնորհային միջոցները կազմել են 202.5 մլն դրամ: Ծրագիրը նպատակաուղղված է հաստատությունների համար տեխնիկական/լաբորատոր սարքավորումների/արհեստանոցների ձեռքբերմանը:

ՀԲ աջակցությամբ իրականացվող հանրակրթության բարելավման ծրագրի նախապատրաստման համար դրամաշնորհային ծրագրի շրջանակներում 2013 թվականին օգտագործվել է շուրջ 52.4 մլն դրամ կամ նախատեսվածի 59.3%-ը: Ծրագրին կառավարությունը մասնակցություն է ցուցաբերել 13.0 մլն դրամի չափով, իսկ դրամաշնորհային միջոցները կազմել են 39.4 մլն դրամ: Շեղումը պայմանավորված է ծրագիրը ուշ հաստատելու հանգամանքով: Ծրագիրը ներառում է.

- ավագ դպրոցներում կրթության որակի բարձրացման նպատակով քանակական և որակական գնահատման հետազոտության իրականացում,

- ավագ դպրոցներում վերանորոգման աշխատանքների նպատակով ենթակառուցվածքների կարիքների գնահատում և տեխնիկական հատկորոշիչների կազմում,
- նախադպրոցական տարիքի երեխաների պատրաստվածությունը դպրոց մուտք գործելու ծրագրի ընդլայնման և բնակչության խոցելի խմբերում առկա բացթողումների ուսումնասիրության նպատակով գործողությունների պլանի և առաջարկությունների մշակում,
- կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնի կարողությունների գնահատում և ՏՀՏ ուղեցույցի մշակում՝ հանրային ռիսկերի նոր ձևերի վերահսկողության և խորհրդատվության համար,
- նորարարությունների մրցակցային հիմնադրամի շրջանակներում առաջին փուլով դրամաշնորհների տրամադրման գործընթացի գնահատում,
- վերանորոգման ենթակա դպրոցների սոցիալական և բնապահպանական գնահատում:

2013 թվականին պետական բյուջեից շուրջ 560.6 մլն դրամ տրամադրվել է *այլ դասերին չպատկանող կրթության* բնագավառում գործադիր իշխանության պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի (471.6 մլն դրամ կամ ծրագրի 97%-ը) և ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի (շուրջ 89 մլն դրամ կամ ծրագրի 99.5%-ը) պահպանմանը: Տվյալ ծախսերի տարեկան ծրագիրը կատարվել է 97.4%-ով, իսկ 2012 թվականի համեմատ այս ծախսերն աճել են 6.2%-ով՝ պայմանավորված աշխատավարձերի բնականոն աճով և էլեկտրաէներգիայի սակագնի բարձրացմամբ:

Սոցիալական պաշտպանություն

ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի փաստացի ծախսերի 26%-ն ուղղվել է *սոցիալական պաշտպանության* ոլորտին: Կատարված հատկացումները կազմել են 297.4 մլրդ դրամ՝ ապահովելով 98.6% կատարողական: 2012 թվականի համեմատ սոցիալական պաշտպանության ծախսերն ավելացել են 1.9%-ով կամ 5.6 մլրդ դրամով:

Հաշվետու տարում 1.2 մլրդ դրամ տրամադրվել է *վարատողության և անաշխատունակության* խմբին՝ ապահովելով 99.1% կատարողական: Նշված ծախսերը 2012 թվականի համեմատ գրեթե չեն փոփոխվել:

Վարատողության դասին տրամադրվել է 185.2 մլն դրամ, որի կատարողականը կազմել է 98.5%: Նախորդ տարվա համեմատ աճել են 5.9%-ով՝ պայմանավորված աշխատողների աշխատանքային պարտականությունների կատարման հետ կապված խեղման, մասնագիտական հիվանդության և առողջության այլ վնասման հետևանքով պատճառված վնասի փոխհատուցման ծախսերի ավելացմամբ, որոնք կազմել են 82.9 մլն դրամ կամ նախատեսվածի 97.1%-ը: Նախորդ տարվա նկատմամբ նշված ծախսերի 14.3%-ով աճը պայմանավորված է նվազագույն աշխատավարձի աճի հանգամանքով:

Բժշկա-սոցիալական վերականգնման ծառայությունների շրջանակներում կատարված ծախսերը կազմել են 102.3 մլն դրամ (99.6%): Այս ծրագրի շրջանակներում հիմնականում իրականացվում է նախապրոթեզավորման և հետպրոթեզավորման, աշխատունակության վերականգնման կարիք ունեցող հաշմանդամ քաղաքացիների բուժումը: Ծրագրի շրջանակներում 2013 թվականին իրականացվել է 9 հիվանդությունների գծով 643 քաղաքացու բուժում: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերը գրեթե չեն փոփոխվել:

Անաշխատունակության դասին հատկացվել է ավելի քան 1 մլրդ դրամ՝ ապահովելով 99.2% կատարողական: Նախորդ տարվա համեմատ անաշխատունակության դասի ծախսերը նվազել են 3.1%-ով՝ հիմնականում պայմանավորված հաշմանդամներին սայլակներով և լսողական սարքերով ապահովման ծրագրի ծախսերի նվազմամբ:

Դպրոցն ավարտած, ինչպես նաև ուշ տարիքում տեսողությունը կորցրած հաշմանդամների համար հատուկ տառատեսակներով գրքերի տպագրության, տետրերի պատրաստման և «խոսող գրքերի» ձայնագրության ծառայությունների ձեռքբերման համար տրամադրվել է 10.5 մլն դրամ (99.9%): 2012 թվականի համեմատ այս ծախսերը փոփոխություն չեն կրել:

Հաշմանդամներին անվճար պրոթեզաօրթոպեդիկ պարագաներով, վերականգնման տեխնիկական միջոցներով ապահովման և դրանց վերանորոգման համար ծախսվել է 858.3 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Ծրագրի շրջանակներում ֆինանսավորվել են անվճար

բժշկական օգնության և սպասարկման իրավունք ունեցող հաշմանդամ քաղաքացիների համար գերմանական և հայրենական տեխնոլոգիաներով արտադրվող պրոթեզաօրթոպեդիկ պարագաների և վերականգնման տեխնիկական միջոցների պատրաստումը, վերանորոգումը, տրամադրվել են նաև ձայնաստեղծ սարքեր և աչքի պրոթեզներ: Նշված ծախսերը 2012 թվականի համեմատ գրեթե փոփոխություն չեն կրել:

Հոգեկան առողջության վերականգնման ծառայություններին հատկացվել է 64.6 մլն դրամ՝ ապահովելով 99% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նույնպես զգալի փոփոխություն չեն կրել: Ծրագրի շրջանակներում 6 հիվանդությունների գծով անվճար բժշկական օգնություն է տրամադրվել 339 հիվանդի:

Տեսողությունից հաշմանդամություն ունեցող անձանց «Արև» համակարգով ուսուցման ծրագիրը, որի համար նախատեսված էր 3.9 մլն դրամի հատկացում, չի իրականացվել, քանի որ մշակվել է նոր ռազմավարություն, և տեսողությունից հաշմանդամություն ունեցողներն ուսուցանվել են զբաղվածության համապատասխան ծրագրերի շրջանակներում:

Նախատեսված ծավալով օգտագործվել են մտավոր խնդիրներ ունեցող հաշմանդամ դեռահասների և երիտասարդներին սոցիալ-վերականգնողական ծառայություններ մատուցելու համար նախատեսված միջոցները՝ կազմելով 17.8 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 7.9%-ով՝ պայմանավորված նվազագույն ամսական աշխատավարձի աճով:

Հաշմանդամներին սայլակներով և լսողական սարքերով ապահովման նպատակով պետական բյուջեից տրամադրվել է 81.6 մլն դրամ կամ նախատեսվածի 98.7%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 25.9%-ով, որը պայմանավորված է սայլակի պահանջ ունեցող շահառուների պահանջը հումանիտար օգնության ճանապարհով բավարարելու հանգամանքով:

Տեսողությունից հաշմանդամություն ունեցող անձանց համակարգչային տեխնիկայով և այլ օժանդակ սարքերով ապահովելու համար տրամադրվել է 19.2 հազ. դրամ՝ նախատեսված 2.8 մլն դրամի փոխարեն, որը պայմանավորված է նոր ռազմավարության ընդունմամբ, ինչի արդյունքում տեսողությունից հաշմանդամություն ունեցողները համակարգչային տեխնիկայով և դրանց պահեստամասերով ապահովվել են զբաղվածության համապատասխան ծրագրերի շրջանակներում:

Ծերության դասի ծրագրերին հատկացվել է շուրջ 200 մլրդ դրամ՝ ապահովելով 99.8% կատարողական: 2012 թվականի համեմատ նշված ծախսերը գրեթե չեն փոփոխվել:

Տվյալ դասում ամենամեծ կշիռն ունեն աշխատանքային կենսաթոշակների ծախսերը, որոնք կազմել են 167.3 մլրդ դրամ և օգտագործվել են 99.9%-ով: 2012 թվականի համեմատ նշված ծախսերն էապես չեն փոփոխվել:

Սպայական անձնակազմի ու նրանց ընտանիքների անդամների կենսաթոշակների ծախսերը կազմել են 19.1 մլրդ դրամ կամ նախատեսվածի 99.9%-ը: 2012 թվականի համեմատ նշված ծախսերն

աճել են 3.7%-ով կամ 688.3 մլն դրամով, որը պայմանավորված է ուժային որոշ կառույցներում (հատկապես՝ ՀՀ գլխավոր դատախազություն, ՀՀ ոստիկանություն, ՀՀ արդարադատության նախարարության, Քրեակատարողական վարչություն) կենսաթոշակի նոր նշանակումների հանգամանքով:

Շարքային զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների կենսաթոշակային ապահովման ծախսերը կազմել են 1.1 մլրդ դրամ՝ ապահովելով 99.5% կատարողական: 2012 թվականի համեմատ նշված ծախսերը նվազել են 12%-ով կամ 150 մլն դրամով, որը բացատրվում է բացառապես Հայրենական մեծ պատերազմի հաշմանդամ և մասնակից կենսաթոշակառուների թվաքանակի կրճատման հանգամանքով:

Սոցիալական կենսաթոշակների ծախսերը կատարվել են 100%-ով և կազմել շուրջ 10.4 մլրդ դրամ: 2012 թվականի համեմատ դրանք աճել են 4.2%-ով կամ 422.1 մլրդ դրամով:

Նախատեսված ծավալով իրականացվել են նաև ՀՀ օրենքներով և կառավարության որոշումներով նշանակված կենսաթոշակների ծախսերը, որոնք կազմել են 366.5 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 8.3%-ով, որը պայմանավորված է դատավոր կենսաթոշակառուների թվաքանակի աճի, ինչպես նաև առանձին դատավորների կենսաթոշակների չափերի՝ դատական կարգով վերահաշվարկի հանգամանքով:

Տարեցների շուրջօրյա խնամքի իրականացման նպատակով ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայությանը հանձնված տարեցների տուն-ինտերնատ հանդիսացող ՊՈԱԿ-ներին պետական աջակցությունը կազմել է 1.4 մլրդ դրամ՝ ապահովելով 91.3% կատարողական: Ծախսերը նախորդ տարվա նկատմամբ նվազել են 5.1%-ով, որը պայմանավորված է շահառուների միջին տարեկան թվաքանակի նվազմամբ:

Տնային պայմաններում միայնակ տարեցների սոցիալական սպասարկման նպատակով նախատեսված հատկացումներն ամբողջությամբ օգտագործվել են՝ կազմելով 97.9 մլն դրամ: 2012 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 7.2%-ով՝ հիմնականում պայմանավորված աշխատավարձի, էլեկտրաէներգիայի և գազի սակագների բարձրացմամբ:

2013 թվականին հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց ցերեկային խնամքի նպատակով տրամադրվել է 12.5 մլն դրամ պետական աջակցություն, որը կատարվել է 78.6%-ով՝ պայմանավորված ընտանիքներում սպասարկվող անձանց փաստացի թվաքանակով: Դրանով պայմանավորված՝ տվյալ ծախսերը նվազել են նաև 2012 թվականի համեմատ՝ 9.8%-ով:

ՀՀ մարզերում միայնակ տարեցներին և հաշմանդամներին տնային պայմաններում և տարեցների ցերեկային խնամքի կենտրոններում սոցիալական սպասարկման նպատակով «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպությանը տրամադրվել է 159.6 մլն դրամ՝ կազմելով ծրագրի 97.4%-ը: Ծրագիրը նախատեսված է տնային պայմաններում և

տարեցների ցերեկային խնամքի կենտրոններում միայնակ տարեցների և հաշմանդամների սպասարկման, ինչպես նաև անապահով անձանց շաբաթվա աշխատանքային օրերին ճաշարաններում մեկ անգամ սննդի տրամադրման համար: Ծախսերը 2012 թվականի նկատմամբ աճել են 1.6%-ով՝ պայմանավորված նվազագույն ամսական աշխատավարձի աճով:

Նախատեսված ողջ ծավալով օգտագործվել են Վանաձորի տարեցների տանը խնամվողների շուրջօրյա խնամքի և սոցիալական սպասարկման ծրագրին հատկացված միջոցները, որոնք կազմել են 14.5 մլն դրամ: 2012 թվականի համեմատ նշված ծախսերը գրեթե չեն փոփոխվել:

2013 թվականին ՀՀ պետական բյուջեից «Հարազարդին կորցրած անձինք» խմբի շրջանակներում կատարված ծախսերը կազմել են ավելի քան 4.8 մլրդ դրամ՝ ապահովելով 98.5% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը գրեթե չեն փոփոխվել:

131.4 մլն դրամ են կազմել Հայաստանի զոհված ազգային հերոսի կամ Մարտական խաչ շքանշանով հետմահու պարգևատրված անձանց ընտանիքներին նպաստի վճարման ծախսերը, որոնք իրականացվել են 84.9%-ով՝ պայմանավորված շահառուների փաստացի թվաքանակով: 4 ընտանիքների կողմից չեն ներկայացվել պահանջվող փաստաթղթերը: Նշված ծախսերը նախորդ տարվա նկատմամբ գրեթե չեն փոփոխվել:

«Բնակչության զբաղվածության և գործազրկության դեպքում սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածով՝ գործազուրկների հուղարկավորման ծախսերի փոխհատուցման նպատակով նախատեսված նպաստի վճարումը կազմել է 3.6 մլն դրամ կամ ծրագրի 53.2%-ը: Նախորդ տարվա նկատմամբ նշված ծախսերը նվազել են 32.3%-ով:

Կենսաթոշակառուի մահվան դեպքում տրվող թաղման նպաստը կազմել է 4.7 մլրդ դրամ կամ նախատեսվածի 99%-ը: Ծախսերը նախորդ տարվա նկատմամբ գրեթե չեն փոփոխվել:

«Ընտանիքի անդամներ և զավակներ» խմբի ծախսերը հաշվետու տարում կազմել են 50.9 մլրդ դրամ՝ ապահովելով 99.4% կատարողական: Նախորդ տարվա համեմատ խմբի ծախսերն աճել են 8.1%-ով, որը հիմնականում պայմանավորված է հղիության և ծննդաբերության նպաստի և ընտանեկան նպաստի ու միանվագ դրամական օգնության ծախսերի աճով: Խմբի ծախսերի զգալի մասը՝ 34.6 մլրդ դրամ, տրամադրվել է ընտանեկան նպաստի և միանվագ դրամական օգնության ֆինանսավորմանը, որը կազմել է նախատեսվածի 100%-ը: Նախորդ տարվա համեմատ այս ծախսերն աճել են 4.5%-ով, որը պայմանավորված է 2013 թվականին նպաստառու ընտանիքների միջին թվաքանակի աճով: 2013 թվականին այն կազմել է 102570՝ 2012 թվականի 96309-ի դիմաց, իսկ նպաստի նվազագույն չափը մնացել է անփոփոխ՝ կազմելով 16000 դրամ:

ՀՀ պաշտպանության և փրկարարական ծառայության ժամանակ հաշմանդամ դարձած զինծառայողներին և զոհված (մահացած) զինծառայողների ու փրկարար ծառայողների ընտանիքներին հաշվետու տարում տրամադրվել են 83.5 մլն դրամ միանվագ սոցիալական

ապահովագրության վճարներ, որոնք կազմել են նախատեսվածի 82%-ը և 23.6%-ով զիջել նախորդ տարվա ցուցանիշը:

2013 թվականին մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստների գծով ծախսերը կազմել են 3 մլրդ դրամ կամ նախատեսվածի 98.5%-ը: 2012 թվականի համեմատ այս ծախսերն աճել են 1.5%-ով՝ պայմանավորված ծնելիության աճով:

« մանկատների շրջանավարտներին 2013 թվականին պետական բյուջեից տրամադրվել է 27.1 մլն դրամի աջակցություն և խորհրդատվություն, որը կատարվել է 91.5%-ով՝ պայմանավորված այն հանգամանքով, որ նախատեսված 17 շահառուների փոխարեն փաստացի մասնագիտական ուսուցման ծառայություններ են մատուցվել 12 շահառուի և 32 շահառուների փոխարեն բուժզննման ծառայություններ են մատուցվել 15 շահառուի: Նախորդ տարի նշված բաղադրիչների շրջանակներում շահառուների փաստացի թիվը կազմել էր համապատասխանաբար՝ 15 և 23: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 4.5%-ով՝ պայմանավորված շահառուների քանակի նվազմամբ:

Հղիության և ծննդաբերության նպաստի գծով ծախսերը կազմել են 5 մլրդ դրամ, որոնք կատարվել են 99.6%-ով: 2012 թվականի համեմատ այս ծախսերն աճել են 62.8%-ով, որը պայմանավորված է 2012 թվականի չորրորդ եռամսյակի պարտավորությունների մարումը 2013 թվականին կատարելու և նպաստառուների թվաքանակի և միջին նպաստների չափերի աճի հանգամանքներով (նվազագույն և միջին աշխատավարձի աճի հետ կապված):

Երեխայի ծննդյան միանվագ նպաստի վճարումը կազմել է 4.5 մլրդ դրամ, որը կատարվել է 99.9%-ով: 2012 թվականի նկատմամբ նշված ծախսերն էական փոփոխության չեն ենթարկվել:

2013 թվականին 98%-ով կատարվել է վարժական հավաքների և զինծառայության ու փրկարարական ծառայության ընթացքում մահացած (զոհված) զինծառայողների ու փրկարար ծառայողների հուղարկավորության, գերեզմանների բարեկարգման, տապանաքարերի պատրաստման և տեղադրման հետ կապված ծախսերի փոխհատուցումը, որը կազմել է 364.6 մլն դրամ՝ նախորդ տարվա 334.9 մլն դրամի դիմաց:

Երեխաների շուրջօրյա խնամքի իրականացման նպատակով երեխաների տուն-ինտերնատ հանդիսացող ՊՈԱԿ-ներին պետական աջակցության ծախսերը հաշվետու տարում կազմել են շուրջ 2 մլրդ դրամ կամ նախատեսվածի 95.6%-ը: Ծախսերը նախորդ տարվա նկատմամբ աճել են 18.3%-ով, որը պայմանավորված է նվազագույն ամսական աշխատավարձի, էլեկտրաէներգիայի և գազի սակագների բարձրացմամբ: Միաժամանակ, տեղի է ունեցել մանկատների բեռնաթափում՝ մանկատներում խնամվող երեխաներին ընտանիքներ վերադարձնելու արդյունքում: 2013 թվականին երեխաների տուն-ինտերնատներում փաստացի խնամվել է 719 երեխա՝ 2012 թվականի 754 երեխայի փոխարեն:

« Երեխաների շուրջօրյա խնամքի և պաշտպանություն իրականացնող հաստատություններում խնամվող երեխաներին ընտանիքներ վերադարձնելու (բեռնաթափման) ծառայությունների ձեռքբերման ծախսերը կատարվել են 93.3%-ով՝ կազմելով 11.5 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը գրեթե չեն փոփոխվել:

Ռիսկի գոտում հայտնված երեխաներին սոցիալական հոգաձության ծառայությունների ծախսերը կազմել են 205.6 մլն դրամ կամ նախատեսվածի 93.7%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 15.1%-ով, որը հիմնականում պայմանավորված է նվազագույն ամսական աշխատավարձի, էլեկտրաէներգիայի և գազի սակագների բարձրացմամբ:

« քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 05-1680 գործով 15.07.2005թ. վճռի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կողմից կերակրողին կորցնելու կապակցությամբ կրած վնասի փոխհատուցման ծախսերն ամբողջությամբ կատարվել են՝ կազմելով 1.1 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը չեն փոփոխվել:

Երեխաների գիշերօթիկ խնամքի և պաշտպանության ծառայություններին տրամադրվել է 916.2 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 92.3%-ով կատարում, որը պայմանավորված է 8 գիշերօթիկ հաստատությունների կողմից 800 շահառուի փոխարեն փաստացի տարեկան միջինը 766 շահառու խնամելու հանգամանքով: Իսկ փաստացի խնամվողների պակասը նախատեսվածի նկատմամբ պայմանավորված է շահառուների ժամանակավոր բացակայությամբ. շահառուների մեծ մասը հանգստյան օրերին գնում է տուն, կամ գտնվում է ճամբարներում և հանգստյան տներում: Տվյալ ծախսերը նախորդ տարվա համեմատ աճել են 1.4%-ով:

Երեխաների խնամքի ցերեկային կենտրոնների կողմից դժվար իրավիճակներում գտնվող երեխաների սոցիալական հոգաձության ծառայությունների շրջանակներում տրամադրվել է 51.8 մլն դրամ՝ ապահովելով ծրագրի 100%-ով կատարում: Սույն ծրագիրն իրականացվում է համաֆինանսավորման սկզբունքով, և ծրագիրն իրականացնող ՀԿ-ին « պետական բյուջեից հատկացվում են միայն աշխատավարձերն ու սոցիալական ապահովության վճարները: 2012 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 3.3%-ով՝ պայմանավորված նվազագույն ամսական աշխատավարձի բարձրացմամբ:

Հայաստանի Հանրապետությունում խնամատար ընտանիքի ինստիտուտի ներդրման ծառայությունների ծախսերը կազմել են 22.8 մլն դրամ՝ ապահովելով 72.7% կատարողական, որը պայմանավորված է խնամատար ընտանիք տեղափոխվող փաստացի երեխաների թվաքանակը նախատեսվածից 6 շահառուով պակաս լինելու հանգամանքով. 25 շահառուի փոխարեն ծրագրից օգտվել է 19 շահառու: Արդյունքում նշված ծախսերը 2012 թվականի նկատմամբ նվազել են 6.6%-ով:

« մանկատներում խնամվող դպրոցական տարիքի երեխաներին հաշվետու տարում տրամադրվել է 5 մլն դրամ աջակցություն կամ նախատեսվածի 80.7%-ը: Ծրագրի շրջանակներում

միջոցներ են հատկացվում դպրոցական տարիքի երեխաների գրպանի ծախսերի համար: Շեղումը պայմանավորված է 3 մանկատներում 217 երեխաների փոխարեն տարեկան միջին փաստացի 168 դպրոցահասակ երեխաների դրամական աջակցություն տրամադրելու հանգամանքով: Արդյունքում նշված ծախսերը նվազել են նաև 2012 թվականի նկատմամբ՝ 12.8%-ով:

« մանկատների շրջանավարտներին կրթաթոշակի և միանվագ դրամական օգնության տրամադրման ծախսերը կազմել են 1.3 մլն դրամ կամ նախատեսվածի 45.7%-ը՝ պայմանավորված կրթաթոշակ ստացող շահառուների փաստացի քանակով: 2013 թվականին կրթաթոշակ ստացող շահառուների թիվը նախատեսված 15-ի փոխարեն կազմել է 8, իսկ միանվագ դրամական օգնություն ստացողների թիվը նախատեսված 20-ի փոխարեն կազմել է 19: 2012 թվականի նկատմամբ ծախսերն աճել են 3.2%-ով:

Կենսաբանական ընտանիք տեղափոխված երեխաների ընտանիքներին դրամական օժանդակության փաթեթի տրամադրման ծախսերը կազմել են 9.7 մլն դրամ, որն իրականացվել է նախատեսված ծավալով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը մնացել են անփոփոխ:

« քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 07-3832 գործով 2007 թվականի նոյեմբերի 3-ի վճռի համաձայն Հայաստանի Հանրապետության կողմից կերակրողին կորցնելու կապակցությամբ կրած վնասի փոխհատուցումը կազմել է 2.2 մլն դրամ (100%): 2012 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 15.4%-ով:

« քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի գործերով վճիռների համաձայն կրած վնասների փոխհատուցումը ևս ամբողջությամբ կատարվել է՝ կազմելով 5.3 մլն դրամ: Նախորդ տարվա նկատմամբ նշված ծախսերն աճել են 20.3%-ով:

Անօթևան երեխաների համար ժամանակավոր օթևանի տրամադրման ծառայությունների ծախսերը կազմել են 35.6 մլն դրամ կամ տարեկան ծրագրի 96.3%-ը: 2012 թվականի համեմատ դրանք աճել են 66.5%-ով, որը հիմնականում պայմանավորված է նվազագույն ամսական աշխատավարձի բարձրացմամբ:

2013 թվականին պետական բյուջեից 2.3 մլրդ դրամ տրամադրվել է գործազրկության խմբի ծրագրերի ֆինանսավորմանը՝ կազմելով նախատեսվածի 97.9%-ը: 2012 թվականի նկատմամբ նշված ծախսերը նվազել են 18.3%-ով՝ հիմնականում պայմանավորված գործազրկության նպաստի ծախսերի կրճատմամբ:

Ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու նպատակով պետական գրանցման համար գործազուրկներին և աշխատանք փնտրող չգբաղված հաշմանդամներին տրամադրվել է 659 հազար դրամ ֆինանսական աջակցություն՝ կազմելով նախատեսվածի 26.4%-ը: Սույն ծրագրով 2013 թվականի « պետական բյուջեով նախատեսվել էր հատկացնել 2.5 մլն դրամ՝ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու նպատակով ՍՊԸ-ներ բացելու համար 150 գործազուրկի հաշվարկով,

սակայն փաստացի դիմել են 101 ձեռնարկատեր և 4 սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն: 2012 թվականի նկատմամբ նշված ծախսերը նվազել են 28.9%-ով:

Աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի ընդունելիս գործատուին աշխատավարձի մասնակի փոխհատուցման ծախսերը կազմել են 92.8 մլն դրամ կամ նախատեսվածի 89.5%-ը: Շեղումը պայմանավորված է ծրագրում ընդգրկված անձանց քանակով՝ նախատեսված 216 անձի փոխարեն ծրագրում ընդգրկվել է ամսական միջին հաշվով 241 անմրցունակ անձ: Նշված ծախսերը նախորդ տարվա նկատմամբ ավելացել են 8.8%-ով՝ պայմանավորված աշխատաշուկայում անմրցունակ անձանց թվի ավելացման հանգամանքով:

Ապահովագրական ստաժ չունեցող կամ մինչև մեկ տարվա ապահովագրական ստաժ ունեցող աշխատանք փնտրող չզբաղված հաշմանդամների մասնագիտական ուսուցման և աշխատանքային ունակությունների վերականգնման կազմակերպման նպատակով տրամադրվել է 9.8 մլն դրամ կամ նախատեսվածի 57.7%-ը: 2012 թվականի համեմատ տվյալ ծախսերը նվազել են 10%-ով: Նշված ցուցանիշները պայմանավորված են ուսուցման ծառայությունների ձեռքբերման ցածր գնով:

Երիտասարդների մասնագիտական կողմնորոշման և խորհրդատվական ծառայությունների գծով ծախսերը կազմել են 22.2 մլն դրամ՝ ապահովելով 90% կատարողական, որը պայմանավորված է տնտեսումներով: Ծրագրի շրջանակներում 2013 թվականին իրականացվել են կադրերի վերապատրաստման համար մատուցվող ծառայություններ, մատուցվող ծառայությունների գծով իրազեկման սեմինարներ, ուղեցույց ձեռնարկների մշակում: 2012 թվականի համեմատ նշված ծախսերն ավելացել են 12.5%-ով՝ պայմանավորված աշխատանքների ծավալի և բովանդակության փոփոխմամբ:

Գործազրկության նպաստի ծախսերի վճարմանն ուղղվել է 1.9 մլրդ դրամ, որը կատարվել է 99.6%-ով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 19.8%-ով կամ 481.3 մլն դրամով: Ծախսերի անկումը պայմանավորված է նպաստառուների թվաքանակի նվազմամբ: 2013 թվականին այս ծրագրում ընդգրկվել է ամսական միջին հաշվով 10090 գործազուրկ:

Գործազուրկների, աշխատաշուկայում անմրցունակ խմբերի և երկարամյա ծառայության ու արտոնյալ պայմաններով կենսաթոշակ ստացող աշխատանք փնտրող չզբաղված անձանց մասնագիտական ուսուցմանը տրամադրվել է 118 մլն դրամ: Ծախսերը կատարվել են 91.6%-ով և 29.9%-ով զիջել 2012 թվականի ցուցանիշը՝ պայմանավորված ծառայությունների գնման մրցակցային բանակցությունների արդյունքում կնքված պայմանագրերում ծառայությունների միավորի գները նախատեսվածից ցածր լինելու հանգամանքով:

Այլ վայր աշխատանքի գործուղվող գործազուրկների նյութական ծախսերի հատուցումը կազմել է 13.7 մլն դրամ կամ նախատեսվածի 88.7%-ը: Ծրագրի շրջանակներում նախատեսվել էր գործազուրկներին գործուղել Երևան քաղաքից «Վ մարզեր, սակայն հիմնականում գործուղումները

կատարվել են ՀՀ մարզերի ներսում, որի հետևանքով գումարները տնտեսվել են: Բացի այդ, 2013 թվականին նախատեսվել էր ծրագրում ընդգրկել 32 գործազուրկի, սակայն փաստացի ծրագրում ընդգրկվել է 29 գործազուրկ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 20.8%-ով:

Երկարամյա ծառայության և արտոնյալ պայմաններով կենսաթոշակ ստացող աշխատանք փնտրող չգրառված անձանց վերամասնագիտացման ծրագրին տրամադրվել է 706.1 հազար դրամ կամ նախատեսվածի 58.8%-ը: Ծրագրում նախատեսված էր ընդգրկել 8 անձ, որոնցից յուրաքանչյուրի հաշվով նախատեսվել էր 150 հազ. դրամ, սակայն փաստացի ծրագրում ընդգրկվել է 7 անձ՝ միջին հաշվով 120.1 հազ. դրամ ծախսով: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծրագրի ծախսերը նվազել են 16.1%-ով:

Աշխատաշուկայի հետազոտման և կանխատեսման աշխատանքների կազմակերպմանը պետական բյուջեից տրամադրվել է 5 մլն դրամ, որը կազմել է ծրագրվածի 100%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը գրեթե չեն փոփոխվել:

Թափուր աշխատատեղերի տոնավաճառի կազմակերպման ծառայությունների գծով տրամադրվել է 7.7 մլն դրամ, որն իրականացվել է նախատեսված ողջ ծավալով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 57.1%-ով՝ պայմանավորված նվազագույն ամսական աշխատավարձի բարձրացմամբ:

Աշխատանք փնտրող հաշմանդամների աշխատանքային վերականգնման, մասնագիտական վերապատրաստման և խորհրդատվության ծառայությունների ծախսերը հաշվետու տարում կազմել են 16.1 մլն դրամ կամ նախատեսվածի 98.7%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 2.3%-ով՝ պայմանավորված նվազագույն ամսական աշխատավարձի բարձրացմամբ:

Մասնագիտություն ունեցող, սակայն մասնագիտական աշխատանքային ստաժ չունեցող գործազուրկների աշխատանքային պրակտիկայի կազմակերպման համար տրամադրվել է 66.6 մլն դրամ՝ ապահովելով 97.2% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 8.7%-ով՝ պայմանավորված շահառուների թվաքանակի և նվազագույն ամսական աշխատավարձի աճով: 2013 թվականին ծրագրում ընդգրկվել է 305 անձ:

2013 թվականին կազմակերպություններում հաշմանդամների համար աշխատատեղերի հարմարեցման նպատակով տրամադրվել է 7.7 մլն դրամ՝ կազմելով նախատեսվածի 70.2%-ը: Շեղումը պայմանավորված է այն հանգամանքով, որ ծրագրի շրջանակներում նախատեսված 55 հաշմանդամի փոխարեն ծրագրից օգտվել է 52 հաշմանդամ: Միաժամանակ, ծրագրով յուրաքանչյուր հաշմանդամի համար ՀՀ պետական բյուջեով նախատեսված 200.0 հազ. դրամի փոխարեն փաստացի միջին ծախսը կազմել է 148.5 հազ. դրամ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 46.6%-ով՝ պայմանավորված հաշմանդամների թվաքանակի աճով:

«Բնակարանային ապահովում» խմբի ծրագրերին ՀՀ 2013 թվականի պետական բյուջեից տրամադրվել է 2.6 մլրդ դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 44.5%-ով՝ պայմանավորված այն հանգամանքով, որ 2012 թվականին Ռուսաստանի Դաշնության կողմից Հայաստանի Հանրապետությանը տրամադրված վարկային միջոցների հաշվին երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային ապահովման նպատակով ծախսվել էր շուրջ 4 մլրդ դրամ:

Չոհված (մահացած) և առաջին, երկրորդ և երրորդ կարգի հաշմանդամ զինծառայողների անօթևան ընտանիքների բնակարանով ապահովման և բնակարանային պայմանների բարելավման համար տրամադրվել է շուրջ 2 մլրդ դրամ, որը կատարվել է 100%-ով և նախորդ տարվա համեմատ աճել 4 անգամ:

Երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների համար բնակարանային շինարարություն իրականացնելու համար տրամադրվել է 641.1 մլն դրամ (99.9%): Ծրագրի շրջանակներում ավարտվել է ՀՀ Շիրակի մարզի ք. Մարալիկի թվով 9 կիսակառույց բնակելի շենքերի շինարարությունը: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերն աճել են 119.8%-ով:

Այլ դասերին չչափարկվող սոցիալական հատուկ արտոնությունների խմբում 2013 թվականի պետական բյուջեի ծախսերը կազմել են 9.5 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրի 99.4% կատարողական: Նախորդ տարվա նկատմամբ խմբի ծախսերը նվազել են 10.5%-ով՝ պայմանավորված «ՎՏԲ-Հայաստան» ՓԲԸ-ում ավանդատու հանդիսացող քաղաքացիների, որպես նախկին ԽՍՀՄ Խնայքանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 1993 թվականի հունիսի 10-ը ներդրված դրամական ավանդների դիմաց փոխհատուցման ծախսերի նվազմամբ:

2013 թվականի պետական բյուջեից վետերանների պատվովճարներին տրամադրվել է 523.2 մլն դրամ, որը կազմել է ծրագրի 93.2%-ը, իսկ նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերը նվազել են 20.3%-ով՝ պայմանավորված պատվովճար ստացողների թվաքանակի նվազման հանգամանքով:

Փախստականների սոցիալական խնդիրների լուծման միջոցառումներին տրամադրվել է 21 մլն դրամ, որը կատարվել է 100%-ով: Ծրագրի շրջանակներում հատկացվող գումարը նախատեսվում է փախստականներին պահելու հետևանքով կացարանների կրած վնասի փոխհատուցման համար: 2012 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 14.9%-ով, որը պայմանավորված է աշխատավարձերի բարձրացմամբ և էլեկտրաէներգիայի գների աճով:

Փախստականների կեցության խնդիրների լուծման նպատակով 2013 թվականին տրամադրվել է 18.7 մլն դրամ (100%), որի միջոցով իրականացվել է ժամանակավոր ապաստան հայցող փախստականների սպասարկումը՝ կացարանի, սննդի և այլ ծառայությունների տրամադրման միջոցով: 2012 թվականի համեմատ նշված ծախսերն ավելացել են 26.3%-ով՝ պայմանավորված դիմած փախստականների թվաքանակի աճով:

ՀՄՊ մասնակիցներին, ՀՄՊ և այլ պետություններում մարտական գործողությունների ընթացքում զոհված զինծառայողների ընտանիքներին տրվող և 25.11.1998թ. ՀՕ-258 օրենքի 34.1 հոդվածով սահմանված դրամական օգնության տրամադրումը կազմել է 8.3 մլրդ դրամ կամ նախատեսվածի 100%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը գրեթե չեն փոփոխվել:

51.4 մլն դրամի պետական աջակցություն է ցուցաբերվել «Երևանի թիվ 1 տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ին՝ անօթևան մարդկանց համար ժամանակավոր օթևանի տրամադրման նպատակով: Այս ծախսերը կատարվել են 84.6%-ով և նախորդ տարվա համեմատ նվազել 12.7%-ով, որը հիմնականում պայմանավորված է տնտեսումներով:

ՎՏԲ-Հայաստան ՓԲԸ-ում ավանդատու հանդիսացող քաղաքացիների՝ նախկին ԽՍՀՄ խնայքանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 1993 թվականի հունիսի 10-ը ներդրված դրամական ավանդների դիմաց փոխհատուցման ծախսերը կազմել են 577.5 մլրդ դրամ կամ նախատեսվածի 98%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 64.4%-ով, ինչը պայմանավորված է նրանով, որ 2013 թվականին ավանդների վերադարձման ցուցակներում ընդգրկված ավանդատուները ստացել են համապատասխան փոխհատուցումները:

Սոցիալական բնակարանային ֆոնդի սպասարկման ծառայություններին տրամադրվել է 29.2 մլն դրամ, որն իրականացվել է նախատեսված ծավալով: Ծրագրի իրականացումը սկսվել է 2012 թվականի 2-րդ կիսամյակից և 2012 թվականին ֆինանսավորվել է ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից:

Այլ դասերին չպատկանող սոցիալական պաշտպանության խմբի ծրագրերի գծով 2013 թվականի պետական բյուջեի ծախսերը կազմել են 26 մլրդ դրամ կամ նախատեսվածի 88.2%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողներին սոցիալական փաթեթով ապահովման համար նախատեսված միջոցների պակաս օգտագործմամբ: 2012 թվականի համեմատ խմբի ծախսերն ավելացել են 21.6%-ով կամ 4.6 մլրդ դրամով՝ հիմնականում պայմանավորված պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողներին սոցիալական փաթեթով ապահովման ծրագրի, ինչպես նաև Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Սոցիալական պաշտպանության ոլորտի կառավարման ծրագրի լրացուցիչ ֆինանսավորման ծրագրի ծախսերի ավելացմամբ:

Հաշվետու տարում 1.6 մլրդ դրամ են կազմել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայության և ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայության պահպանման ծախսերը, որոնք կատարվել են 94.8%-ով: Խնայողությունը հիմնականում պայմանավորված է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայության էներգետիկ և կապի ծառայությունների, գույքի և սարքավորումների վարձակալության, մեքենաների

և սարքավորումների ընթացիկ նորոգման ծախսերի գծով տնտեսումներով, որոնք հիմնականում առաջացել են ծառայության աշխատակազմի տարածքային 14 բաժիններն ինտեգրված տարածքներ տեղափոխելու արդյունքում: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը գրեթե չեն փոփոխվել:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի պահպանման ծախսերը կատարվել են 96.6%-ով և կազմել շուրջ 1.6 մլրդ դրամ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 3.7%-ով՝ հիմնականում պայմանավորված ՀՀ աշխատանքի տեսչությունը ՀՀ առողջապահության նախարարության պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչության հետ միավորելու հանգամանքով:

Հաշվետու տարում 273.9 մլն դրամ տրամադրվել է սոցիալական օգնության ծառայությունների գործունեության կազմակերպման բնագավառում պետության կողմից համայնքի ղեկավարին պատվիրակված լիազորությունների ֆինանսավորման նպատակով, որն իրականացվել է 98.4%-ով: 2012 թվականի նկատմամբ նշված ծախսերն աճել են 1.4%-ով:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող սոցիալական պաշտպանության ոլորտի կառավարման ծրագրի լրացուցիչ ֆինանսավորման ծրագրի շրջանակներում կատարվել են 1.6 մլրդ դրամի ծախսեր՝ կազմելով ծրագրվածի 96.8%-ը (վարկի միջոցներից՝ 1.4 մլրդ դրամ, իսկ ՀՀ կառավարության համաֆինանսավորման հաշվին՝ 250.1 մլն դրամ): Ծրագրի նպատակներն ուղղակիորեն կապված են մարդկային զարգացման խթանման և սոցիալական ապահովության համակարգերի ու հանրային հատվածի հիմնական գործառույթների բարելավման հետ: Ծրագիրը բաղկացած է հետևյալ բաղադրիչներից՝

- Ընդհանուր աջակցություն սոցիալական պաշտպանության ոլորտին,
- Աշխատանք և զբաղվածություն,
- Կենսաթոշակների վարչարարություն,
- Սոցիալական աջակցության վարչարարության բարելավում,
- Ծրագրի կառավարում:

2013 թվականին ծրագրի շահառուների, Համաշխարհային Բանկի և ՀՀ ՖՆ ԱՖԾԿԿ-ի մասնագետների կողմից մշակված գնումների ժամանակացուցի և այլ փաստաթղթերի հիման վրա իրականացվել են գնումների բնականոն ընթացքի համար անհրաժեշտ աշխատանքներ: Ծրագիրը ավարտվել է, և բոլոր նախատեսված աշխատանքներն իրականացվել են:

ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայության և ՄԱԿ-ի փախստականների գծով գերագույն հանձնակատարի Հայաստանյան գրասենյակի միջև կնքված ենթահամաձայնագրերի շրջանակներում հատկացվող ֆինանսական աջակցությունը կազմել է 10.9 մլն դրամ՝ ապահովելով 83.1% կատարողական և 28.9%-ով զիջելով նախորդ տարվա ցուցանիշը, որը տնտեսումների և նախատեսված գործուղումների չկայացման արդյունք է:

Այլ դասերին չպատկանող՝ սոցիալական պաշտպանությանը տրամադրող օժանդակ ծառայությունների դասի ծախսերը կազմել են 21 մլրդ դրամ կամ նախատեսվածի 86.5%-ը, որը հիմնականում պայմանավորված է պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողներին սոցիալական փաթեթով ապահովման համար նախատեսված միջոցների պակաս օգտագործմամբ: Սակայն նախորդ տարվա համեմատ վերջիններիս աճի արդյունքում նախորդ տարվա համեմատ տվյալ դասի ծախսերն ավելացել են 20.4%-ով:

2013 թվականին պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողներին սոցիալական փաթեթով ապահովման ծրագրին « պետական բյուջեից տրամադրվել է շուրջ 15 մլրդ դրամ՝ կազմելով նախատեսվածի 82.2%-ը, որը տնտեսման արդյունք է: Նշված ծախսերը 23.7%-ով գերազանցել են նախորդ տարվա ցուցանիշը՝ կապված սոցիալական փաթեթից օգտվող անձանց շրջանակի ընդլայնման հետ:

Սոցիալական աջակցության ծառայությունների ծրագրի շրջանակներում 538.8 մլն դրամ տրամադրվել է սոցիալական ապահովության առանձին ծրագրերի վճարման հետ կապված ծառայությունների ձեռքբերմանը՝ ապահովելով 98.9% կատարողական: Սույն ծրագրի շրջանակներում իրականացվում են բոլոր նպաստների և ավանդների վճարումների հետ կապված ծառայությունները: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը գրեթե չեն փոփոխվել:

Փախստականների և նրանց ընտանիքների վերաբերյալ տեղեկատվության կուտակման նպատակով տրամադրված 47.5 մլն դրամն օգտագործվել է «Համակարգչային կենտրոն» ՊՈԱԿ-ից փախստականների վերաբերյալ արխիվային տեղեկատվության ձեռքբերման նպատակով՝ ապահովելով 94.3% կատարողական: 2012 թվականի համեմատ նշված ծախսերն ավելացել են 8%-ով՝ պայմանավորված տարածքի վարձակալությամբ, ինչպես նաև աշխատանքի վարձատրության և էլեկտրաէներգիայի գների աճով:

Բժշկասոցիալական փորձաքննության (ԲՄՓ) ձևաթղթի տպագրության ծառայությունների ձեռքբերման և սոցիալական ծառայության տարածքային գործակալությունների (ՍԾՏԳ) ձևաթղթերի տպագրության ծառայությունների ձեռքբերման նպատակով տրամադրվել է համապատասխանաբար 3.3 մլն դրամ և 7.9 մլն դրամ: Նշված ծախսերը կատարվել են համապատասխանաբար 96.8%-ով և 99.4%-ով: 2012 թվականի համեմատ առաջին ծրագրի ծախսերը նվազել են 3.2%-ով, իսկ երկրորդի ծախսերն աճել են 30.8%-ով՝ հիմնականում կապված թղթի գնի աճի հետ:

Մեթոդաբանական ձեռնարկների մշակման, հետազոտությունների անցկացման և սոցիալական ապահովության ոլորտի կադրերի վերապատրաստման նպատակով պետական բյուջեից տրամադրվել է 85.9 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը գրեթե չեն փոփոխվել:

Կենսաթոշակային ապահովության դրամական օգնությունների, պատվովճարների և այլ ծրագրերի վճարման հետ կապված ծառայությունների իրականացմանը տրամադրվել է 1.5 մլրդ դրամ, որը կատարվել է 99.5%-ով: Նախորդ տարվա համեմատ դրանց 4.8%-ով անկումը պայմանավորված է անկանխիկ համակարգով սպասարկող շահառուների թվաքանակի աճով, որտեղ սպասարկման համար գանձվող վճարները ցածր են:

Հանրային իրազեկման միջոցառումների իրականացմանը տրամադրվել է 23.7 մլն դրամ, որը կատարվել է 91%-ով՝ պայմանավորված մրցույթի արդյունքում գնման ենթակա ապրանքների գների նվազմամբ, ինչպես նաև որոշակի տպագրական աշխատանքների գծով գնման պահանջ չլինելու հանգամանքով: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերն աճել են 15.9%-ով, ինչը պայմանավորված է նախորդ տարվա նկատմամբ գների ճշգրտմամբ:

2013 թվականին պետական բյուջեից ժամանակավոր անաշխատունակության դեպքում նպաստի վճարը կազմել է 3.4 մլրդ դրամ (100%): Նախորդ տարվա համեմատ այս ծախսերն ավելացել են 31.7%-ով, ինչը պայմանավորված է ոչ միայն նախորդ տարվա պարտավորությունները հաշվետու ժամանակահատվածում մարելու, այլև նպաստների միջին չափերի աճի հանգամանքներով (կապված նվազագույն և միջին աշխատավարձերի աճի հետ):

Ընտանեկան նպաստի և դրամական օգնության տրամադրման հետ կապված վարչարարական ծառայություններին տրամադրվել է 16.4 մլն դրամ, որը կատարվել է 85.9%-ով՝ հիմնականում պայմանավորված իրականացված սուուգումների արդյունքում նպաստառու ընտանիքների թվի նվազմամբ: Արդյունքում նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 3.9%-ով:

Անհատական (անձնավորված) հաշվառման «Պառնաս» համակարգչային համակարգի ծրագրային սպասարկման ապահովման ծառայությունների համար նախատեսված միջոցներն ամբողջությամբ օգտագործվել են՝ կազմելով 36 մլն դրամ: Այս ծախսերը նախորդ տարվա համեմատ փոփոխություն չեն կրել:

Ժամանակավոր անաշխատունակության թերթիկների տպագրության ծախսերը կազմել են 11 մլն դրամ, որը կատարվել է 51%-ով և 46.4%-ով զիջել նախորդ տարվա ցուցանիշը: Տնտեսումը պայմանավորված է ձևաթղթերի փաստացի թվաքանակի կարիքով:

Կենսաթոշակի նշանակման և վճարման համար անհրաժեշտ ձևաթղթերի տպագրությանը տրամադրվել է 666.6 հազ. դրամ՝ կազմելով նախատեսվածի 33.3%-ը և 63.4%-ով զիջելով նախորդ տարվա ցուցանիշը: Տնտեսումը պայմանավորված է ձևաթղթերի փաստացի պահանջով:

Թրաֆիքինգի զոհերին սոցիալ-հոգեբանական վերականգնողական ծառայությունների մատուցման նպատակով նախատեսված միջոցներն օգտագործվել են 100%-ով և կազմել 6.6 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ այս ծախսերը չեն փոփոխվել:

6.9 մլն դրամ է տրամադրվել գինվորական կենսաթոշակառուների տեղեկատվական համակարգի ներդրման, վարման, սպասարկման և տեղեկատվության տրամադրման ծառայություններին, որը կատարվել է 99.3%-ով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 41.5%-ով՝ պայմանավորված ծրագրի սպասարկման գծով իրականացվող աշխատանքների ծավալի նվազմամբ:

Սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների կրթական կարիքների գնահատման, դրանց համարժեք սոցիալական ծառայությունների տրամադրման ծախսերը կազմել են 698.7 հազ. դրամ՝ նախատեսված 4.6 մլն դրամի փոխարեն, որը պայմանավորված է այն հանգամանքով, որ ծրագիրը դեռևս գտնվում է քննարկման փուլում:

ՀՀ 2013 թվականի պետական բյուջեից սոցիալական պաշտպանության ոլորտի տեղեկատվական համակարգի սպասարկման (կատարելագործման), շահագործման և տեղեկատվության տրամադրման ծառայությունների ծրագրի շրջանակներում օգտագործվել է 267.2 մլն դրամ, որը կազմել է նախատեսվածի 99.7%-ը:

Կենսաթոշակառուների հաշվառման միասնական տեղեկատվական համակարգի սպասարկման ծառայությունների ձեռքբերման ծախսերն ամբողջությամբ կատարվել են՝ կազմելով 24 մլն դրամ: Նշված ծրագրի իրականացումը սկսվել է 2013 թվականից:

Նախատեսված ողջ ծավալով իրականացվել են նաև միջազգային կազմակերպություններից ստացված արտաբյուջետային դրամաշնորհների հաշվին իրականացվող՝ ընտանեկան բռնության զոհ դարձած կանանց տրամադրվող ծառայությունների բարելավման ծրագրի և կենսաթոշակային իրազեկման և ֆինանսական գրագիտության բարձրացման գործընթացին աջակցության համար նախատեսված ծախսերը, որոնք կազմել են համապատասխանաբար 7.6 մլն դրամ և 19.9 մլն դրամ:

Հիմնական բաժիններին չդասվող պահուստային ֆոնդեր

ՀՀ 2013 թվականի պետական բյուջեով նախատեսված ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից օգտագործվել է 43.2 մլրդ դրամ կամ նախատեսվածի 97.5%-ը: Տրամադրված միջոցներից շուրջ 29.6 մլրդ դրամն ուղղվել է ընթացիկ ծախսերին՝ կազմելով նախատեսվածի 98.2%-ը, 13.7 մլրդ դրամը՝ ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերին՝ ապահովելով 96.1% կատարողական: 2012 թվականի համեմատ ՀՀ կառավարության պահուստային ֆոնդի ծախսերն աճել են 3.1%-ով:

Հույժ գաղտնի

ՀՀ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՊԱԿԱՍՈՒՐԴԸ

ՀՀ 2013 թվականի պետական բյուջեն կատարվել է 71.5 մլրդ դրամ պակասուրդով՝ կազմելով ճշտված ծրագրով նախատեսված 184.4 մլրդ դրամի 38.8%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է արտաքին աջակցությամբ իրականացվող ծրագրերի կատարման հետ կապված՝ վարկային միջոցները պակաս ստանալու հանգամանքով, ինչպես նաև ներքին միջոցների հաշվին իրականացվող ծախսերի կատարողականով, որի արդյունքում պետական բյուջեի ներքին աղբյուրներում ելքերի ֆինանսավորմանն ուղղվող 2013 թվականի տարեսկզբի ազատ միջոցներից նախատեսված 10.6 մլրդ դրամ օգտագործելու փոխարեն այն ավելացել է 24.7 մլրդ դրամով: Նշենք, որ 2012 թվականին ՀՀ պետական բյուջեն կատարվել էր 59.9 մլրդ դրամ պակասուրդով, այսինքն՝ 2012 թվականի համեմատ պակասուրդի մեծությունն աճել է 19.4%-ով: Պակասուրդ/ՀՆԱ ցուցանիշը 2013 թվականին կազմել է 1.7%՝ կանխատեսված 2.6%-ի¹⁸ և 2012 թվականի 1.5%-ի դիմաց:

Հաշվետու տարվա ընթացքում պակասուրդի ֆինանսավորման ներքին աղբյուրները կազմել են -10.9 մլրդ դրամ՝ նախատեսված 19.2 մլրդ դրամի դիմաց: Նշենք, որ նախորդ տարի նշված ցուցանիշը կազմել էր 5.9 մլրդ դրամ:

Ներքին աղբյուրներում 18.6 մլրդ դրամ են կազմել փոխառու զուտ միջոցները: Մասնավորապես՝ 20.4 մլրդ դրամ են կազմել գանձապետական պարտատոմսերից զուտ մուտքերը՝ 110.9 մլրդ դրամ ծավալով պարտատոմսերի տեղաբաշխումից ստացված 104.1 մլրդ դրամ հասույթի և 83.7 մլրդ դրամ մարման փաստացի ցուցանիշների պարագայում: Արտարժույթային պետական պարտատոմսերի տեղաբաշխման հետ կապված՝ պետական (գանձապետական) պարտատոմսերի հաշվին 2013 թվականի պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորման ծրագրի 10.0 մլրդ դրամով կրճատման, մեկնարկող կենսաթոշակային բարեփոխումների, վերաֆինանսավորման տոկոսադրույքի մինչև 7.5% նվազման արդյունքում պետական (գանձապետական) պարտատոմսերի եկամտաբերությունը նվազեց 4-4.5 տոկոսային կետով: 2013 թվականի սկզբին ևս ՀՀ ֆինանսների նախարարությունը հրապարակեց պետական պարտատոմսերի տեղաբաշխումների օրացույցը՝ պարտատոմսերի շուկայի մասնակիցների համար ամբողջ տարվա կտրվածքով հստակեցնելով պարտատոմսերի տեղաբաշխման օրերը՝ ըստ ժամկետայնության: Թեև այս պարագայում նվազում է թողարկողի ճկունությունը՝ պարտատոմսերի շուկայում նպաստավոր պայմանների ժամանակ լրացուցիչ տեղաբաշխումների իրականացման առումով, մյուս կողմից հրապարակային և թափանցիկ գործելակերպը նպաստում է պարտատոմսերի շուկա նոր ներդրողների ներգրավմանը:

2013 թվականին շարունակվել են պետական խնայողական արժեկտրոնային պարտատոմսերի թողարկումներն՝ ընդհանուր 2.1 մլրդ դրամ ծավալով: Տեղաբաշխվել են 1,019.3 մլն դրամի

¹⁸ ՀՀ 2013 թվականի բյուջետային ուղերձում կանխատեսված ցուցանիշ:

պարտատոմսեր, որից մուտքը կազմել է 1,022.4 մլն դրամ: 2013 թվականին շարունակվել է նաև ՀՀ ներքին շահող փոխառության պարտատոմսերի հետգնման գործընթացը. հետգնումը կազմել է 1.5 մլն դրամ՝ կանխատեսված 2 մլն դրամի դիմաց:

2013 թվականին ներքին պետական պարտքը բնութագրող հիմնական ցուցանիշները հետևյալն են. շրջանառության մեջ եղած ներքին պարտքի եկամտաբերությունը կազմել է 13.96%՝ 2012 թվականի 13.58%-ի դիմաց, պարտքի ժամկետայնությունը՝ 1901 օր (2012թ.՝ 1713 օր), մարման բեռի բաշխվածությունը մինչև 2032 թվականն է: Տարեվերջին շրջանառության մեջ եղած ՀՀ պետական պարտատոմսերի ծավալն անվանական արժեքով կազմել է 274.2 մլրդ դրամ: Ընդ որում, շրջանառության մեջ գտնվող կարճաժամկետ պարտատոմսերի ծավալը կազմել է 22.9 մլրդ դրամ կամ 8.3% (2012թ.՝ 37.4 մլրդ դրամ կամ 15.0%), միջին ժամկետայնության պարտատոմսերինը՝ 147.4 մլրդ դրամ կամ 53.8% (2012թ.՝ 128.8 մլրդ դրամ կամ 51.6%), երկարաժամկետ պարտատոմսերինը՝ 102.8 մլրդ դրամ կամ 37.5% (2012թ.՝ 82.7 մլրդ դրամ կամ 33.1%), խնայողական պարտատոմսերինը՝ 1.1 մլրդ դրամ կամ 0.4% (2012թ.՝ 0.9 մլրդ դրամ կամ 0.3%):

Ներքին պետական պարտքն անվանական արժեքով կազմել է 279.6 մլրդ դրամ:

Մուրհակների մարման նպատակով կատարվել են շուրջ 229.1 մլն դրամի վճարումներ՝ ամբողջովին ապահովելով նախատեսված ծավալը: Ամբողջությամբ մարվել է նաև «ՎՏԲ-Հայաստան» ՓԲԸ-ից ստացված վարկի ծրագրված գումարը՝ կազմելով 1.6 մլրդ դրամ:

Հաշվետու տարվա պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորման աղբյուրներում ներքին ֆինանսական զուտ ակտիվները կազմել են -29.5 մլրդ դրամ՝ տարեկան ճշտված ծրագրով նախատեսված 877.3 մլն դրամի դիմաց:

2013 թվականին ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության և «Գազպրոմ» ԲԲԸ-ի միջև կնքված «Բաժնետոմսերի առուվաճառքի պայմանագրի» շրջանակներում «Գազպրոմ» ԲԲԸ-ից ստացված ավելի քան 63.3 մլրդ դրամ գումարը (ծրագրի 100%-ը) մուտքագրվել է ՀՀ պետական բյուջե՝ որպես բաժնետոմսերի և կապիտալում այլ մասնակցության իրացումից մուտքեր:

Բաժնետոմսերի և կապիտալում այլ մասնակցության ձեռքբերմանն ուղղվել է 3.8 մլրդ դրամ, որը կատարվել է տարեկան նախատեսված ծավալով: Նշված գումարից շուրջ 2 մլրդ դրամը հատկացվել է «Արտահանման ֆինանսավորման ապահովագրական կազմակերպություն» ՓԲԸ-ի, 1.8 մլրդ դրամ՝ «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ի, 3 մլն դրամ՝ «Ռադիոհաղորդումների արտադրության կենտրոն» ՓԲԸ-ի և 100 հազ. դրամ՝ Կենսաթոշակային երաշխիքային ֆոնդի կառավարման հիմնադրամի կապիտալում ներդրման նպատակով:

2013 թվականին ՀՀ ռեզիդենտներին պետական բյուջեից տրամադրվել են 42.9 մլրդ դրամի վարկեր՝ կազմելով նախատեսվածի 87.5%-ը: Նշված գումարից 1.8 մլրդ դրամը (նախատեսված չափով) տրամադրվել է Ռուսաստանի Դաշնության կողմից Հայաստանի Հանրապետությանը 2009

թվականին տրամադրված պետական վարկի միջոցներից, որից 1.2 մլրդ դրամը տրամադրվել է «ՓՄՁ ներդրումներ» ՈՒՎԿ» ՓԲԸ-ին, 599.3 մլն դրամ՝ «Ռադիոհեռուստայի արտադրության կենտրոն» ՓԲԸ-ին:

Շուրջ 4.2 մլրդ դրամի վարկային միջոցներ են տրամադրվել արտաքին աղբյուրներից ստացվող նպատակային միջոցների հաշվին իրականացվող ծրագրերի շրջանակներում՝ կազմելով ծրագրի 40.4%-ը, որից 2.4 մլրդ դրամը՝ Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող Գյումրի-2 ենթակայանի վերականգնման ծրագրի, 754.7 մլն դրամը՝ ՎՋՄԲ աջակցությամբ իրականացվող էլեկտրամատակարարման հուսալիության ծրագրի, շուրջ 555 մլն դրամը՝ Ճապոնիայի կառավարության աջակցությամբ իրականացվող Համակցված շոգեգազային ցիկլով էներգաբլոկի կառուցման ծրագրի, 450 մլն դրամը՝ Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի աջակցությամբ իրականացվող «Շուկայավարման հնարավորություն ֆերմերներին» ծրագրի շրջանակներում:

Բացի այդ, պետական բյուջեից ևս 10.2 մլրդ դրամ է հատկացվել «Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ» հիմնադրամին, 8.0 մլրդ դրամ՝ ՀՀ կենտրոնական բանկին, 3.9 մլրդ դրամը՝ «ՓՄՁ ներդրումներ» ՈՒՎԿ-ին, 2.9 մլրդ դրամ՝ «Բերրիություն» ԱՄ-ի Մասիսի շրջանային միավորում» ՍՊԸ-ին, 16.8 մլն դրամ՝ Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամին, 11.9 մլրդ դրամ՝ այլ վարկերի տրամադրմանը: Նշված միջոցները տրամադրվել են տարեկան ծրագրով նախատեսված ծավալով:

2013 թվականին ավելի քան 34.3 մլրդ դրամ է ստացվել տրամադրված ներքին վարկերի վերադարձից՝ կազմելով նախատեսվածի 100.6%-ը: Նշված գումարից 15.9 մլրդ դրամը մուտքագրվել է Ռուսաստանի Դաշնության հատկացրած վարկային միջոցների հաշվին տրամադրված վարկերի վերադարձից:

Հաշվետու տարում կայունացման դեպոզիտային հաշվի զուտ համալրումը կատարվել է 102.5%-ով և կազմել 55.5 մլրդ դրամ: Տարվա ընթացքում նշված հաշիվը համալրվել է 67.5 մլրդ դրամով, իսկ հաշվից օգտագործումը կազմել է շուրջ 12 մլրդ դրամ:

Շուրջ 250.2 մլն դրամով ավելացել է արտաբյուջետային միջոցների մնացորդը:

2013 թվականին պետական բյուջեի պակասուրդն արտաքին աղբյուրներից ֆինանսավորվել է շուրջ 82.5 մլրդ դրամով՝ կազմելով ծրագրված ցուցանիշի 49.9%-ը:

Արտաքին փոխառու միջոցներից բյուջեի պակասուրդի ֆինանսավորումը կազմել է ավելի քան 124.6 մլրդ դրամ կամ նախատեսվածի 60.6%-ը, որը հիմնականում պայմանավորված է արտաքին աջակցությամբ իրականացվող նպատակային ծրագրերի համար ստացված վարկերի ծավալով:

Տարվա ընթացքում արտաքին աղբյուրներից ստացվել են 91.1 մլրդ դրամի վարկային միջոցներ՝ կազմելով ծրագրված 172.4 մլրդ դրամի 52.9%-ը: Նշված գումարից 57.8 մլրդ դրամը

ստացվել է նպատակային վարկային ծրագրերի շրջանակներում՝ նախատեսված 143.2 մլրդ դրամի դիմաց: Բացի այդ, 16.6 մլրդ դրամ և 12.6 մլրդ դրամ է տրամադրվել համապատասխանաբար ԶՄԸ և ՎԶՄԲ կողմից՝ Զարգացման քաղաքականության ծրագրի շրջանակներում, 4.1 մլրդ դրամ՝ կին ձեռներեցիներին աջակցության ծրագրի շրջանակներում:

Արտաքին պարտավորությունների մարմանն ուղղվել է շուրջ 246.4 մլրդ դրամ, որից 195.7 մլրդ դրամը հատկացվել է Ռուսաստանի Դաշնության նկատմամբ պարտավորությունների մարմանը:

Հայաստանի Հանրապետությունը 2013 թվականի սեպտեմբերի 19-ին իրականացրել է արտարժույթային պետական պարտատոմսերի առաջին տեղաբաշխումը, որի ծավալը կազմել է 700 մլն ԱՄՆ դոլար: Տեղաբաշխումից մուտքերը կազմել են 690.2 մլն ԱՄՆ դոլար կամ 279.9 մլրդ դրամ, եկամտաբերությունը՝ 6.25%, ժամկետայնությունը՝ 7 տարի:

Արտարժույթային պետական պարտատոմսերի տեղաբաշխումից ստացված միջոցների օգտագործման ուղղություններն են՝

- Ռուսաստանի Դաշնության կողմից Հայաստանի Հանրապետությանը 2009 թվականին տրամադրված 500 մլն ԱՄՆ դոլարի պետական վարկի վաղաժամկետ մարում (178.7 մլրդ դրամ),
- 2013-2014 թվականներին պետական գանձապետական պարտատոմսերի հաշվին ՀՀ պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորման ծավալների կրճատում (2013 թվականին 10 մլրդ դրամ, 2014 թվականին՝ 19 մլրդ դրամ),
- վարկերի և փոխառությունների տրամադրում (32.0 մլրդ դրամ),
- բաժնետոմսերի և կապիտալում այլ մասնակցության ձեռքբերում՝ «Հայաստանի արտահանման ապահովագրական գործակալություն» ԱՓԲԸ-ի կապիտալում ներդրում (2.0 մլրդ դրամ),
- կայունացման դեպոզիտային հաշվի համալրում (զուտ, 38.3 մլրդ դրամ):

Արտաքին ֆինանսական ակտիվների գծով պակասուրդի ֆինանսավորման ծրագիրը կատարվել է 104%-ով՝ կազմելով 42.2 մլրդ դրամ: Մասնավորապես՝ ամբողջությամբ տրամադրվել է ԼՂՀ-ի միջպետական վարկը, որը կազմել է 39.3 մլրդ դրամ: Վրաստանի կողմից Հայաստանի նկատմամբ ունեցած վարկային պարտավորությունների գծով կատարվել է 352.9 մլն դրամի վճարում՝ ապահովելով նախատեսված ծավալը:

Միջազգային ֆինանսական կազմակերպություններին ՀՀ անդամակցության գծով պարտավորությունների կատարմանն ուղղվել է շուրջ 853.6 մլն դրամ կամ նախատեսվածի 96.6%-ը:

305.5 մլն դրամ է տրամադրվել «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կանոնադրական կապիտալի համալրման նպատակով, որը կատարվել է 29.8%-ով:

Հաշվետու տարում 2.1 մլրդ դրամով ավելացել է արտաքին աղբյուրներից ստացված վարկային և դրամաշնորհային միջոցների մնացորդը:

2013 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Հայաստանի Հանրապետության արտաքին պետական պարտքը կազմել է 1,581.6 մլրդ դրամ (3,899.1 մլն ԱՄՆ դոլար) կամ ՀՆԱ-ի 37.1%-ը՝ 2012 թվականի 1,509 մլրդ դրամի (3,739.1 մլն ԱՄՆ դոլարի) և 37.7%-ի դիմաց: Պարտքի հիմնական մասը՝ 3,390.8 մլն ԱՄՆ դոլարը, ՀՀ կառավարության պարտավորություններն են, 508.3 մլն ԱՄՆ դոլարը՝ Կենտրոնական բանկի վարկային պարտավորությունները:

Հաշվետու տարում ՀՀ արտաքին պետական պարտքի սպասարկումը կազմել է 861.3 մլն ԱՄՆ դոլար, որից 665.9 մլն ԱՄՆ դոլարը՝ կառավարության և 195.3 մլն դոլարը՝ ԿԲ պարտավորությունների գծով: Արտահանման նկատմամբ արտաքին պետական պարտքի սպասարկման հարաբերակցությունը կազմել է 30.8%՝ նախորդ տարվա 9.4%-ի դիմաց, իսկ պետական բյուջեի եկամուտների նկատմամբ՝ 32.9%՝ նախորդ տարվա 10.2%-ի դիմաց: 2013 թվականին ՀՀ արտաքին պետական պարտքի սպասարկում / արտահանում և ՀՀ արտաքին պետական պարտքի սպասարկում / պետական բյուջեի եկամուտներ ցուցանիշների աննախադեպ աճը պայմանավորված է ռուսական 500 մլն ԱՄՆ դոլար վարկի վաղաժամկետ մարումով. եթե չեզոքացնենք այդ գործոնի ազդեցությունը, ապա այդ ցուցանիշները կկազմեն համապատասխանաբար 14.5% և 15.5%: 2013 թվականի վերջի դրությամբ արտաքին պետական պարտքի զուտ ներկա արժեքի ցուցանիշն (ԶՆԱ) աճել է՝ 2012 թվականի 3407.3 մլն ԱՄՆ դոլարի դիմաց կազմելով 3740.8 մլն ԱՄՆ դոլար, աճել է նաև ԶՆԱ/ՀՆԱ հարաբերակցությունը՝ 2012 թվականի 34.2%-ի դիմաց կազմելով 35.9%, ինչպես նաև ԶՆԱ/արտահանում ցուցանիշը՝ 2012 թվականի 133.4%-ից հասնելով 133.6%-ի: